



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1816

1817

1818

1819

44

84

7-31

84

47-28  
F-31

ԱԼՊԵՐ ՏԵԼԲԻ

22

Printed in Yerevan

# ՄԱՐԳԻԶՈՒՀԻՆ



ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ՑԲԱՆՍԵՐԷՆԷ

Կ. Ս. ԻԻԹԻՃԵԱՆ

معارف نظارتك رخصتیه طبع اولمشدر  
۱۲ تشرین اول سنه ۹۹ نومرو ۶۹۶

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ս. ԻԻԹԻՃԵԱՆ

1883



10 03

2011

729

84

84

Մ Ա Ր Ք Ի Զ ՈՒ Զ Ի Ն

7-31

— Չէ՞ք գիտար անոր պատմութիւնն, ըսաւ Մորիս Ժանտրոն, ուրեմն պատմեմ ձեզ: Պ. Վոյս մէկ միլիոն երկու հարիւր հազար Ֆրանք կը թողու:

— Ուրեմն Պորսայի խաղերէն վլաժ չէ՞:

— Ի՞նչ կ'ըսէք. ամեն մարդ գիտէ որ նա մէկ բան մը կը սիրէր աշխարհի մէջ . . . իւր . . . բարեկամուհին . . . Տիկին Ռէբ: Տասն տարիէ ի վեր Նիսի մէջ երկու դրկից տուն կը բնակէին, և այս պատճառաւ «Անբաժանելիները» կը կոչուէին:

— Ուրեմն ինչո՞ւ բաժնուեցան այդ անբաժանելիներն, հարցուց քսանամեայ կապուտ աչուի գեղեցիկ կին մը:

Տանտիրուհին, Տիկին Վէրնիէ, ծիծաղը բռնելու համար չըթուներ խածաւ, և դէպի Մորիս ծռելով ըսաւ կամաց մը.

— Ստուգիւ անմեղ է:

Երիտասարդն ամենեւին չզայթեցաւ:

— Ինձ շատ դժուարին է պատասխանել Տիկին Քերսէնի, ըսաւ՝ գլխովը բարեւելով այն քսանամեայ մանկամարդուհին զոր Տիկին Վէրնիէ անմեղ կը գըտնէր: Այնչափ մեկնութիւններ կը պտըտին այդ անակրնկալ գժտութեան վրայ, որ չեմ համարձակիր անոնցմէ մին ընտրել: Ստոյգն այր է որ Պ. Վոյս աղաչեց իւր . . . բարեկամուհւոյն որ հաշտուի իրեն հետ, բայց Տիկին Ռէբ չհաճեցաւ: Այն ժամանակ Պ. Վոյս կտակ մ'ըրաւ և Տիկին Ռէբն իրեն կտակակատար կարգեց, յետոյ ատրճանակի հարուածով մ'ինքզինք սպաննեց:



1898  
399



— Պ. Ռէք ընդունե՞ց ժառանգութիւնը : հարցուց յաղթահասակ , նիհար և ճաղատ մարդ մը :

— Կատարելապէս , պատասխանեց Մորիս : Պ. Ռէք գործնական երիտասարդ մ'է : Մնաց որ ես չեմ մեղադրեր զայն . իւր կնոջ հետ հաշտուելուն վրայ մը խիթարուելու համար՝ առ նուազն վաթսուն հազար ֆրանք եկամուտ պէտք էր իրեն :

Յանկարծ դահլճին դուռը բացուեցաւ , և հրաշագեղ արարած մը , կէօթէի դիւցաղնուհիներուն պէս խարտեաշ , ներս մտաւ հանդարտ դէմքով , համարձակ նայուածքով , առանց նշմարել թուելու այն թեթեւքթմնջիւնը զոր իւր ներկայութիւնն յարոյց :

— Ի՞նչ է այս , Տիկին թրաքոֆը կ'ընդունի՞ք հիմա , հարցուց Մորիս կամաց մը Տիկին Վէրնիէի :

— Բէ՛հ , ո՞վ չընդունուիր այսօրուան օրս :

Յանկարծ լուծիւն տիրեց : Ամեն մարդ նոր եկողին կը նայէր : Կանանց մեծ մասին արհամարհոտ խոժոռութիւնէն դիւրաւ կը տեսնուէր որ սաստիկ նախանձութիւն կար տիկին թրաքոֆի դէմ : Տարօրինակ իրողութիւններ կը պատմէին անոր վրայ : Ըստ ոմանց , Հունգարացի գնչուներու խմբակէ մ'ելած էր , ըստ այլոց Լոնտրայի մէջ վատահամբաւ տեղ մը ճանչուած էր : Չրպարտութիւն թէ ճշմարտութիւն : Փարիզ այնչափ բարակը փնտռող չէ : Չամեն մարդ կը զրպարտէ և ոչ զոք կ'արհամարհէ : Պ. թրաքոֆ սարսափելի հարուստ էր : Դրամը հոտ չունի : Հերիք է որ մէկը միլիոնատէր լինի , ոչ ոք փոյթ վ'ընէ գիտնալու թէ ո՞վ է և ուստի՞ կուգայ : Մնաց որ , Ռուս մանկամարդուհոյն այցելութիւնն երկար չեղաւ : Տասն վայրկեան յետոյ մեկնեցաւ նոյն հանդարտ դէմքով , և նոյն անվեհեր նայուածքով , առանց հող ընելու իւր վրայ պտրտած անհաճոյ զրոյցները : Հազիւ դուրս ելած էր , խօսակցութիւնը վերստին սկսաւ աղսկալից կերպիւ , ձայ-

նարկութիւնը կը տեղային դժբաղդ Տիկին Վէրնիէի վրայ , որ չէր դիտեր ինչ պատասխան տար : Արդարեւ շատ մեղապարտ էր այդպիսի կնոջ մը հետ յարաբերութիւն կապելուն համար : Այդ կինն ոչ մի տեղ չընդունուիր , սիրելի՛ս , ո՞վ գիտէ ուստի՞ կուգան այդ թրաքոֆները : Ռուսիոյ դեսպանատունը փակուած է ազոնց : Փարիզի դահլճիները շատ շանցած՝ ոչ եւս հնարաւոր կը լինին , եթէ յարաբերութեանց այսչափ մեծ դիւրութիւն ցոյց տրուի :

Տիկին Ժանն Վէրնիէ երսունեւչորս տարու է : Գեղեցիկ , աշխոյժ , նրբամիտ և խայթող , բաւական չարամիտ , որպէս զի բարեմիտ լինելու անհաճոյ համբաւը չունենայ : Իւր դահլճիը վերջիններէն մին է խօսակցութեան համար : Կը սիրէ ընդունիլ մեծանուն և հանճարեղ մարդիկն : Ամեն բանէ առաջ կ'ուզէ որ մարդ չձանձրանայ իւր դահլճին մէջ , և կը հասնի այս նպատակին : Աստուած գիտէ թէ ինչ սուտեր կը խօսուին հոն և ինչ անհաւատալի պատմութիւններ կը հնարուին : Միջին հաշուով , օրը երկուտասանեակի մը չափ կանայք կը վատահամբաւին , բայց առանց չարակամութեան , ո՛հ , ո՛չ , այլ միայն կէս ժամ զբօսնյու զուարճութեան համար : Կրնակնին դարձնելնուն պէս , ոչ եւս կը խորհին անոնց վրայ : Տիկին Վէրնիէ շատ պիտի զարմանար եթէ իւր թեթեւ խօսքերուն համար զինքն յանդիմանէին : Ինչ որ իւր տան մէջ խօսուի , ընդհանրապէս լաւ է : Չարամտութեան վրայէն կը սահին կ'անցնին , առանց երբէք կենալու : Բամբասանաց և զրպարտութեան մէջ տեղն է այս . առաջինէն քիչ մ'աւելի , երկրորդէն քիչ մը պակաս : Բայց սատանան բան մը չկորսնցնելու ասով : Ասկէց զատ , տանը մտերիմներուն ամենն ալ զիրար կը ճանչէին . իրենք իրենցմով զատ աշխարհ մը կազմած էին աշխարհի մէջ : Այսօրուան օրս ընկերութիւնը գրեթէ բովանդակա-

պէս մանր կուսակցութիւններէ բաղկացեալ է, որք զիրար կը շօշափեն, առանց երբէք ձուլուելու: Այժմէ եան աշխարհը մեր մայրերուն ճանչած աշխարհը չէ, և երբոր մէկն այդ կուսակցութեանց միոյն յարեալ չէ, դիպուածով անոնց մէջ ինկած ժամանակ՝ ինքզինք անձանօթ աշխարհի մը մէջ կը գտնէ:

Սակայն Տիկին Թրաքոֆի այցելութենէն ծագած յուզումը քիչ քիչ կը հանդարտէր. նորատիպ գրքի կամ նորաձեւութեան կարգ անցած գայթակղութեան վրայ կը խօսէին: Տիկին Վէրնիէ ծածկաբար գաւաթ մը Մալակայի գինի կը խմցնէր Տիկին Քէրսէնի, յանկարծ դուռը նորէն բացուեցաւ, և երկու կանայք, մայր և աղջիկ, երեւցան վարագոյններուն աղօտ շրջանակին մէջ: Տիկին Վէրնիէ իսկոյն դիմաւորեց զանոնք:

— Ո՞րչափ ուրախ եմ ձեր գալուն համար, գոչեց մօրը ձեռքը սեղմելով:

Յետոյ, աղջկան երկու այտերն համբուրելով.

— Եթէ ձեր անունը Տիան (Անահիտ կամ Արտեմիս) չլինէր, ըսաւ, ձեր անունը պէտք էր փոխել և Տիան դնել: »

Օրիորդը ժպտեցաւ և ուղղակի Տիկին Քէրսէնի քով գնաց յանդիմանական ձայնիւ մ'ըսելով.

— Ինչպէս վերագարձե՞ր ես, ինչո՞ւ չիմացուցիր ինձ, անիրա՛ւ:

— Վասն զի կ'ուզէի յանկարծի բերել: Միտքս գրած էի որ այս իրիկուն ճաշի կոչեմ քեզ:

— Ան՛ի-Մարի և Ռիան վերստին իրար գտան, ալ մեզ հետ գործ չունին, ըսաւ Տիկին Վէրնիէ:

Յետոյ աղջկան մօրը դառնալով

— Պ. Տը Մօրէր ի՞նչպէս է:

— Շատ լաւ, սիրելի՛ տիկին, շնորհակալ եմ, ինձ

յանձնարարեց որ իւր յարգանքը ներկայեմ ձեզ: Գիտէք որ շատ կ'աշխատի և յոյժ քիչ դուրս կ'ելնէ:

— Բայց դուք ի՞նչպէս էք, երկու ամսէ ի վեր դուք ալ շատ չէք տեսնուիր:

— Մօրաքեռորդիներէս միոյն սուգը բռնած էինք, և խզելուս պատճառն այս է որ մեծ լուր մ'ունիմ բարեկամուհիներու տալու, և դուք ալ, ինչպէս գիտէք, լաւագոյն բարեկամներս էք:

— Մեծ լուր մը, պատասխանեց Տիկին Վէրնիէ զարմացմամբ և հետաքրքրութեամբ:

— Կ'ուզէի որ Տիանի մօտաւոր ամուսնութիւնը ծանուցանէի ձեզ:

— Իրա՛ւ. այս սիրուն աղջիկը կ'ամուսնանայ. ուր՞ և հետ: »

Տիկին Մօրէր կարմրեցաւ, կարծես թէ կը վարանէր սպասուած անունն արտասանելու: Հոն գրտնուող արք և կանայք լուին համաձայնութեամբ մը մունջ կը կենային: Ամուսնութիւն մը, զոր մարդ չէր իմացած. ի՞նչ բարեբաղդութիւն:

— Տիան՝ Թանարէ մարքիզին հետ կ'ամուսնանայ, ըսաւ Տիկին Մօրէր թեթեւապէս այլադեպ ձայնիւ:

Խոր լուութիւն յաջորդեց այս խօսքերուն: Գիւրաւ կը տեսնուէր որ ներկայ գտնուողներէն ոչ մին չէր կրնար զարմանքէն ուշաբերիլ: Տիկին Վէրնիէի համարձակութիւնն և ընկերական վարժութիւնը պէտք եղաւ Տիկին Մօրէրի խնդակցութիւն յայտնելու համար: Պատուասիրական անվերջանալի խօսքերու լաբիւրինթոսի մը մէջ մտաւ՝ առանց գիտնալու թէ ի՞նչպէս պիտի դուրս ելնէր. վերջապէս, խօսքին թելը մերթ կորսնցնելէ և մերթ գտնելէ յետոյ՝ սա հասարակ խօսքով կնքեց.

— Օ՛հ, այս սիրուն օրիորդին կ'ըղձանամ ամեն երջանկութիւն որում արժանի է: »

Միայն Տիկին Գէրսէն լուռ կը կենար . Մարքիզին անունը լսելուն պէս երեսին գոյնը նետեց . յետոյ Տիանի նայեցաւ այնչափ տխուր դէմքով մը , որ աղջիկը զարմացաւ : Բայց ժամանակ չունեցաւ պատճառն հարցնելու իւր բարեկամուհւոյն . վասն զի մայրն ոտք ելնելով՝ անոր ալ աչք ըրաւ որ ելնէ :

Ինչպէս Տիկին Թրաքոֆ , նոյնպէս և Տիկին և Օրիորդ Մորէր դուրս ելնելնուն պէս՝ աղմկալից խօսակցութիւն մ'սկսաւ : Բայց այս անգամ առաւել կարգ և պատշաճութիւն կար հարց-պատասխաններուն մէջ , նախ՝ Աննա-Մարիի պատճառաւ , որ Տիանի մտերիմն էր , երկրորդ՝ որովհետեւ յոյժ ուշագրաւ իրականութեան մ'առջեւ կը գտնուէին , վերջապէս Մորիս Ժանտրոն համառօտեց ընդհանուր կարծիքն ըսելով .

— Ես գիտեմ որ այս դէպքերը բաւական շատցած են , բայց դարձեալ զարմանք կը պատճառէ ինձ երբոր տեսնեմ որ աղջիկ մ'իւր մօրը տարփաւորին հետ կ'ամուսնանայ :

— Ի՛նչ , Մորիս , դուք միմիայն կը զարմանա՞ք , ես կը զայրանամ :

— Պ . Ժանտրոն և դուք , սիրելի տիկին , քիչ մը հեռի կ'երթաք թերեւս , ըսաւ Աննա Մարի վեհերոտ ձայնիւ . վասն զի վերջապէս ապացոյց մը չկայ թէ մարքիզը աիկին Մորէրի տարփաւորն է :

Ամենքն ալ խնդալ սկսան , իբր թէ տասնեւհինգ տարիէ ի վեր այդ կապակցութիւն հանրածանօթ չէր : Եւ որ աւելին է , արդի բարուց սրտաշարժ դիւրութեան շնորհիւ այդ կապակցութիւն ընդունուած և գրեթէ իբր օրինաւոր ճանչուած էր : Բայց մարքիզն և Քաթերին Մորէր ինքզինքնին չէին իսկ ծածկեր : Միշտ ի միասին կը տեսնուէին Պուլոյի ծառաստանին , թատրոնի և նուագահանգէսի մէջ , այնպէս որ հանճարեղ մարդ մը կ'ըսէր օր մը .

— Եթէ երբէք Մարքիզը բաժնուի Տիկին Մորէրէն , գայթակղութիւն մը կը լինի :

Փարիզ ունի այդ ներողամտութիւններն . ակամայ կը յարդէ ապօրէն սէրերը , զորս օրինաց անտեղութիւնը ծաղիկներու պէս կը բուսցնէ ամուսնութեան քով : Մէկուն հոտերէն մտիթարուելու համար յաճախ միւսին անուշահոտութիւնը պէտք է : Ընդհակառակն , բողբոլին անգուլթ է երբոր այդ կապակցութիւնը կը խզին մէկուն յողնելովը կամ միւսին յագենալովը : Իւր անտրամախոհութեան մէջ տրամաբան , գոնէ կ'ուզէ որ հաւատարիմ մնան իրենց անհաւատարմութեան :

Եւ ահա տես այժմ , որ մարքիզը տասնեւհինգ տարի մօրը տարփաւորը լինելէ յետոյ , անոր աղջկան ամուսին կը լինէր : Ստուգիւ , ինչպէս կ'ըսէր Մորիս , այս դէպքը նոր բան չէր . երբեմն այնպիսի տարօրինակ ամուսնութիւնք կը տեսնուին որ մարդ չկրնար հասկնալ , վասն զի ոչ ոք կրնայ մեկնել : Բայց վերջապէս այդ ամուսնութեան ծանուցումն ամենուն դայթակղութիւն և ցասում պիտի պատճառէ , և մինչեւ իսկ անտարբերները զայրոյթ պիտի կեղծեն :

Արդ , ազդեցութիւնը չկորսնցնելուն աներկբայ լինելու համար , Տիկին Վէրնիէ փութաց ծանուցանել զայն բոլոր իւր տունն եկողներուն : Եւ շատ մարդիկ եկան , վասն զի իւր շաքաթ օրերն յոյժ ցանկալի եղած էին : Վասն զի հոն լաւ կը խօսակցէին , առանց ծեքծեքման , այլ մտային մասնաւոր վայելչութեամբ : Այցելուք դիտէին որ ամեն անգամ հրապուրիչ լուր մը պիտի քաղէին : Վերջապէս հաճոյք կ'զգացուէր այս մեծ , քիչ մը մութ և խստերեւոյթ , բայց վերջին աստիճան վայելչազարդ և կատարեալ փարիզական դահլճին մէջ :

Ծաղկենկար սեւ սաթէնէ ծանր վարագոյրներ ,

հաստ և կակուղ գորգեր՝ որք քայլերուն գոփիւնը կը խեղդէին, ինչպէս խոշոր և միաձոյլ պատուհաններն ալ փողոցին ձայներն, աղաղակներն ու շփնդները կը մարէին : Քանի մը գեղարուեստական նիւթեր, ոչ բազմաթիւ, բայց առաջին աստիճանի արժէք ունեցող, բիւվիս տը Շավաննի ընտիր նկար մը, տանտիրուհւոյն պատկերը, լուրջ բայց գրաւիչ գեղեցկութեամբ, էլի Տըլոնէի վրձինէն ելած, և ասդին անդին ալ մանր մուկն արժէքաւոր զարդեր :

Եւ այս ամեն այցելուք կուգային, կ'երթային, խօսակցելով, բամբասելով, գաղտնիքներ յայտնելով : «Երբէք չպիտի հաւատայի» ներ . «Ո՛հ, ինչ որ ըսէք տեղն է, սիրելի՛սներ, ընդհատեալ մանր բայց սուր և արագապէս խեղդուած ծիծաղներով, շուտով զըսպուած ձայնարկութիւններով, և արծաթեայ մեծ ափսէի մը քով երթեւեկելով, որոյ վրայ դրուած էին արուրէ սամավարն և Սպանիոյ դինիի շիշերը : Մէկ խօսքով, գեղեցիկ փարիզուհւոյ մը ջր, սովորութիւն մը, ա՛յնչափ զօրեղապէս կապուած այժմու կանանց սրտին հետ, որ ամեն բան անոր կը զոհեն, մինչև իսկ իրենց երջանկութիւնը : Մի՛ հարցնէք բնաւ թէ ինչո՛ւ համար փարիզուհի մը, երբօր արկածներ ունի, նախամեծար կը համարի իւր ամուսնոյն (զոր չսիրեր) հետ ապրիլ, քան թէ ինքզինք առեւանգուտալ իւր տարփաւորին (զոր կը պաշտէ), անոր համար որ է՛ր ջր չկորսնցնէ : Իրիկուան մօտ Տիկին Վէրնիէի ակումբը քանի մ'անգամ նորոգուած էր, այնպէս որ առ նուազն յիսուն հօգի կրնային փարիզի մէջ ծաւալել Տիանի ամուսնութեան անհաւատալի լուրը : Միայն Մօրիս Ժանարոն, որ տանը մեծ մտերիմն էր, հոն մնացած էր : Սակայն ժամ վեցին միջոցները, Տիկին Վէրնիէի դահլիճը գրեթէ բոլորովին պարպուած էր . յանկարծ ներս մտաւ ազգականներէն մին, Պ.

Ֆօրէ, որ հանրապետութեան ընդհանուր դատախազ էր ի Մարսիլիա : Թէև Պ. Ֆօրէ քիչ անգամ փարիզ կուգար, բայց և այնպէս Տիկին Վէրնիէ Տիանի ամուսնութեան պատմութիւնն անոր ալ ըրաւ :

— Ի՛նչ կ'ելնէ այդ լուրը ձեր ազգականին պատմելէ, ըսաւ Մօրիս ծիծաղելով, Պ. Ֆօրէ Մարսիլիա կը բնակի, և վէպին դիւցազունքը չճանչեր :

Պ. Ֆօրէ ժպտեցաւ :

— Կը սխալիք Պարո՛ն, ըսաւ : Ես երբէք լսած չեմ թանտրէ մարքիզին անունը, բայց երկար ժամանակէ ի վեր կը ճանչեմ զՏիկին Մօրէր :

— Բէ՛հ, երկար ժամանակէ ի վեր :

— Գրեթէ քսան տարիէ ի վեր : Բաւական երկար ժամանակ է այս, ճշմարիտ չէ՞ :

— Սակայն, սիրելի՛ Ֆօրէս, ընդմիջեց Տիկին Ժան Վէրնիէ, դուք գաւառը կը բնակիք միշտ :

— Ես ալ գաւառի մէջ տեսակցած եմ Տիկին Մօրերի հետ : Այն ժամանակ Արիէժ կը բնակէր . ես դատաւորի օգնական էի և այն պաշտօնով գործ ունեցայ «Գեղանի ֆաթէրին Ժուվ» ի հետ, ինչպէս կը կոչէին զայն :

Տիկին Վէրնիէ ծափ զարկաւ . այս անգամ խօսողն աւելի կամ նուազ վաւերական իրողութիւն մ'ի լրոյ պատմող պարզ լրատու մը չէր, այլ դատաւոր մը՝ որ իւր աչօք տեսած էր և գիտէր :

— Կը յայտնեմ ձեզ, սիրելի՛ Ֆօրէս, ըսաւ ծիծաղելով, թէ այս տեղէն դուրս չպիտի ելնէք մինչեւ որ չպատմէք ձեր վէպը : Վասն զի անշուշտ վէպ մ'է, այնպէս չէ՞ :

— Անկէց աւելի է, կսկծալի եղերերգութիւն մ'է, կը ներէք ինձ եթէ պատմութիւնս քիչ մ'երկար լինի . դատաւարութեան սովորութիւնս երկարապատում լինելու կը դատապարտէ զիս . չեմ կրնար համառօտ խօսիլ :



— Ուզածնուդ չափ շատախօս եղիք . բաւական է որ գրաւիչ լինիք :

— Կը ջանամ : Նախ երկու խօսք Տիկին Մորէրի ազգատոհմին վրայ : Տիկին Մորէր Մարթինիքցի գաղթածին մ'է : Դեռ օրոցին մէջ եղած ժամանակ մայրը մեռած է : Հայրն ալ յետոյ խենդենարով մեռաւ . յիմարանոցի մը մէջ : Այն ժամանակ եկաւ Պօա բնակեցաւ պառաւ հօրաքեռ մը քով : Ըսի ձեզ թէ այն ժամանակ «Գեղանի Քաթերին Ժուլ» կը կոչէին զայն . և արդարեւ չէի տեսած աւելի չքնաղաղեղ արարած մը : Դժբաղդաբար , իւր ծնողք բան մը չէին թողած իրեն , և Արիէժցիք յոյժ գործնական մարդիկ լինելով հարստութեան յարգը գիտէին : Օժիտ չունենալով չէր կրնար դիւրաւ ամուսնանալ : Բաղմաթիւ տարփաւորք կը ներկայանային , բայց ամուսին՝ բնաւ : Թերեւս Քաթերինի պերճասիրական ճաշակն ալ կը վախցընէր իւր շուրջը գտնուող երիտասարդները : Վերջապէս իւր անուանակից սրբուհւոյն փեղոյրն հագնելու վրայ էր , պահապան գօրաց սպայ մը , որ արուզաւակով մ'այրի մնացած էր , մոլեգնապէս սիրահարեցաւ անոր : Ես քիչ ճանչեցի Սորպիէ հարիւրապետը . ուստի չեմ գիտեր թէ գործերն ինչպէս քայեցին , Միւս կողմէ , ժամանակն ալ կը տկարացնէ յիշողութիւնս : Երեք ամիս շարունակ քծնութենէ յետոյ հարիւրապետն ամուսնութիւն առաջարկեց և ընդունուեցաւ : Հարսնիքը մեծ հանդիսիւ կատարեցաւ , և . . .

— Ինչպէս , Տիկին Մորէր երկու անգամ ամուսնացած է , գոչեց Մորիս : Կ'երդնում որ Փարիզցիք տգէտ են :

— Պատմութեանս ամենէն հետաքրքրաշարժ կէտին մէջ կ'ընդմիջէք զիս , ըսաւ դատաւորը ժպտելով : Կը կրկնեմ խօսքս . լաւ ուշադրութիւն ըրէք , պարոն , դուք , սիրելի՛ մօրեղբօրորդիս : Հարսնիքը մեծ հան-

դիսիւ կատարեցաւ , և . . . հետեւեալ օրն երկու ամուսինք փոխադարձ հաճութեամբ բաժնուեցան իրարմէ :

— Այդ ձեր պատմածը կատակերգութիւն է . դուք եղերերդ կը խոստանայիք մեզ :

— Քիչ մը համբերութիւն . եղերերդը պիտի գայ : Կը հասկնաք որ մեծ աղմուկ ելաւ : Փարիզի մէջ այդ արկածին վրայ քսանեւչորս ժամ միայն կրնար խօսուիլ , իսկ մեր գաւառական փոքր քաղաքաց մէջ սարսափելի ձանձրոյթ կայ : Այս պատճառաւ գայթակղութիւնք երկար կը տեւեն : Ժողովուրդը խնայութիւն ի գործ կը դնէ , որպէս զի մէկ անգամով չսպառին , այնպէս որ վեց շաբաթ շարունակ Պ . և Տիկին Սորպիէով դբաղեցան , առանց հաշուելու տեսակ տեսակ անհաճոյ մեկնութիւններ , որոցմէ զուրկ մնալ չեն ուզեր : Խորհեցէք անգամ մը , այր մ' և կին մ' իրենց հարսանեաց հետեւեալ օրը կը բաժնուին իրարմէ . ինչ անակնկալ շահ :

Տիկին Վէրնիէ և Պ . Ժանարոն ոչ եւս կ'ընդմիջէին հանրապետութեան ընդհանուր դատախազը : Այս անգամ Պ . Պօրէ ինք կանգ առաւ իւր քով փոքրիկ սեղանի մը վրայ դրուած Մալակայի գաւաթն ըմպելով : Թերեւս տեսնելով որ իւր պատմութիւնն ազդեցութիւն կ'ընէր , ճարտար պատմիչներու պըրանօք կ'ուզէր զինքը փափաքելի ընել :

— Վերջը՛ , վերջը՛ , սիրելի Պ . Պօրէ , ըսաւ Տիկին Վէրնիէ անհամբերութեամբ :

— Գաւառաց մէջ , ըսաւ Պ . Պօրէ , անհնար է չեղոք կենալ : Փարիզի մէջ հեշտ բան է , ուր դիւրին է իրարու չհանդիպիլ . բայց Պօայի մէջ . . . ոմանք երկանը կողմը բռնեցին , ոմանք ալ կնոջը կողմը : Բնականաբար բոլոր երիտասարդք վերջինին կողմն էին :

Քաթերին բան մը չէր ըսեր այդ անակնկալ գրք-

տութեան պատճառներուն վրայ . այլ միայն մանր հա-  
ռաչներ կ'արձակէր , որք սարսափելի կերպիւ կ'ամ-  
բաստանէին հարիւրապետը : Պ. Սորպիէ ալ նմանա-  
պէս լուռ կը կենար : Սակայն երկու կամ երեք իրո-  
ղութիւնը հասարակաց համարումը չվերուցին անոր  
վրայէն : Պաշտօնէն հրաժարական տուած էր : Իւր  
գնդապետն , անշուշտ ծանօթ լինելով գաղտնիքին ,  
Փարիզ դիմեց և հրաժարականը չընդունուեցաւ : Գուն-  
դին սպաներն հրապարակաւ մեծ համակրութիւն ցոյց  
տուին իրենց պաշտօնակցին : Կարճ խօսելով , հանրա-  
կան կարծիքը վարանման մէջ էր երբոր սարսափելի  
դէպք մը պատահեցաւ , որ գաղտնիքն առաւել կը  
թանձրացնէր :

— Խոստացեալ եղերերդն է :

— Այո՛ : Ըսի ձեզ թէ հարիւրապետն իւր առա-  
ջին ամուսնութենէն որդի մ'ունէր Մաքսիմիլիէն ա-  
նուն : Առաւօտ մը , այս տղան , հօրը սենեակը մըտ-  
նելով մեռած գտաւ զայն անկողնին մէջ : Գիշերն ա-  
տըրճանակով ինքզինք սպաննած էր :

— Պ. Ֆօրէ նորէն կանգ առաւ , ի դժգոհութիւն  
իւր ունկնդրաց :

— Է՛յ , վերջը՞ , հարցուցին միանգամայն Տիկին  
Վէրնիէ և Մորիս Ժանտրոն :

— Վերջը՞ , արջափ : Տղան գնաց իւր մօրն ընտան-  
եաց քով . Սորպիէի այրի տիկինն ալ Ֆօայէն մեկնե-  
ցաւ , և այնուհետեւ մէկ մ'ալ խօսքը չսուեցաւ : Ես  
միայն թերեւս գիտեմ այսօր թէ վաղեմի ֆաթէրին  
Ժուլ՝ Տիկին Մորէր եղած է :

— Ինչ է այդ . լինցա՞ւ պատմութիւնը : Բայց ոչ ,  
սիրելի Պ. Ֆօրէ , այդ գաղտնեաց մեկնութիւնը պէտք  
է մեզ : Մանաւանդ որ քիչ մ'առաջ կը խոստովանէիք  
թէ այդ գործին խառնուած էիք , և դեռ չտեսայ ձեր  
երեւնալը :

— Դժբաղդաբար , սիրելի մօրեղբօրորդիս , ան-  
հնար է ինձ աւելի երկար խօսիլ ձեզ : Գատաւոր մը  
խոստովանահայր է երբեմն : Իւր գտած գաղտնիքնե-  
րը թաղուած պէտք է մնան իւր խղճին մէջ , երբոր  
արդարութեան շահը վտանգի՞ մէջ չլինի : Գոհ եղէք  
ձեզ պատմածովս , որ արդէն բաւական հետաքրքրա-  
շարժ է : Ճշմարտիւ , ընաւ մտքէս չէր կրնար անցնիլ ,  
որ այսօր «Գեղանի ֆաթէրին Ժուլ» ի խօսքը պիտի  
ընէի : Կը տեսնեմ որ սկսածին պէս կը շարունակէ .  
կը խաբէ իւր երկրորդ այրն , ինչպէս որ , անշուշտ ,  
խաբեց առաջինն , և վերջապէս իւր աղջիկն իւր տար-  
փաւորի՞ն տուաւ :

Տիկին Վէրնիէ չպնդեց այլ եւս . կը ճանչէր իւր  
հօրաքեռորդին : Պ. Ֆօրէ բարձրահասակ , և ախխառն  
մազերով , յստակ և պաղ աչօք մարդ մ'էր . հին ժա-  
մանակաց դատաւորներուն խստութիւնն ունէր : Եթէ  
Պ. Ֆօրէ իւր պարտքը համարէր լուել , ոչ մի մարդ-  
կային զօրութիւն կարող չէր խօսեցնել զայն : Մնաց  
որ , փարիզուհին բաւական բան իմացաւ : «Գեղանի  
ֆաթէրին Ժուլ» ի պատմութեան շնորհիւ դահլճական  
յաջողութեան մը փափուկ վայելքը պիտի ձեռք բերէր ,  
և այս ալ ոչ թէ Տիկին Մորէրի վրայ չարախօսելու  
բաղձանօք . ո՛հ , ո՛չ , քաւ լիցի : Բայց ի՞նչպէս պիտի  
դիմանար կատակերգութեամբ սկսած և անձնասպա-  
նութեամբ վերջացած արկած մ'ամեն կողմ հռչակելու  
բերկրութեան :

— Շատ գարմանալի բան , ըսաւ Տիկին Վէրնիէ :  
Այդ կին՝ վիպասանութեան դիւցազնուհի մ'է : Ամեն  
օր նորանօր բաներ կը լուին իւր վրայ : Վերջապէս  
այսօր գարմանաց օր մ'է . վասն զի այս ամուսնութիւն  
անհասկանալի է : Կ'ըսուէր թէ ֆաթէրին մոլեգնապէս  
սիրահարած էր Մարքիզին :

— Բէհ , պատասխանեց Մորիս անհոգաբար , թե-  
րեւս ձանձրացան իրարմէ :

— Սիրելիս , պատասխանեց Տիկին Վէրնիէ , կին  
մը քառասունն անցնելէ յետոյ կամովին չխզեր հին  
կապ մը , վասն զի գիտէ որ վերջինն է . ուստի և կը  
յարի անոր , ինչպէս բաղեղը կաղնիին :

— Կը չաղապատի ըսէ :

— Աւելի լաւ : Ուստի , նորէն կ'ըսեմ , այս ամուս-  
նութիւն բոլորովին անհասկանալի է : Ի՞նչ է ձեր  
կարծիքը , սիրելի հօրաքեռորդիս : Չեղ պէս փիլիսոս-  
փայ դատաւոր մը պէտք է որ լուծել գիտնայ մարդ-  
կային ամեն կրից առեղծուածը :

— Կը չողքորթէք զիս , սիրելիս , պատասխանեց  
Պ. Փօրէ իւր նուրբ և սկիպտիկեան ժպիտով : Ես տե-  
սականապէս միայն կը ճանչեմ այդ ձեր ըսած մարդ-  
կային կիրքերն . և տեսականը շատ հեռի է գործնա-  
կանէն : Սակայն երբեմն Տիկին Մորէրի վիճակին նման  
վիճակներու առջև դանուելով խորհած եմ այդ խնդրոյն  
վրայ : Ինձ համար , կինը նրբամիտ , խորամանկ , գիւ-  
րագրգիւ և յոյժ գիւրագրգամ էակ մ'է , որ տպա-  
ւորութիւնն ու զգացումը դիւրաւ կը շփոթէ իրարու  
հետ , ծայրայեղ թէ՛ բարւոյն և թէ՛ չարին մէջ : Երբէք  
հաւատարակչիւ , կարող ամենամեծ յանցանաց և ա-  
մենավսեմ անձնութիւններէն : Արդ՝ քանի կ'երթամ  
առաւել կը համոզուիմ թէ ամեն բան կրնայ սպասուիլ  
կինէ մը , երբոր տեսակ մը հոսանքի մէջ ինկած լինի .  
Օրինակի համար՝ քննենք Տիկին Մորէրի դէպքն , ո-  
րովհետեւ ան է մեզ զբաղեցնողն : Արդ՝ գիտե՞նք  
գործին պարագաները : Ինչ որ անհասկանալի կը թուի  
ձեզ , ընդհակառակն յոյժ գիւրահասկանալի է : Իւր  
տարփաւորը կը սիրէ , և դուք կը զարմանա՞ք որ աղ-  
ջիկը կուտայ անոր : Թերեւս ստիպուած է , թերեւս  
Պ. Թանարէ այդ ամուսնութիւնն երկար ժամանակէ

ի վեր պատրաստած էր , որպէս զի Պ. Մորէրի կաս-  
կածները փարատէ , որ կրնար յանկարծ արթննալ :  
Կը ժպտի՞ք երկուքդ ալ : Չեր ժպիտը կը նշանակէ թէ  
Պ. Մորէր կատարելապէս գիտէ գործը : Լաւ , թող  
այդպէս լինի . ասոր ալ հոգեբանական մեկնութիւն  
մը գտնենք : Տասնևհինգ տարուան կապակցութեան  
մը մէջ , սիրելի մօրեղբորորդիս , այնչափ սովորոյթ կը  
մտնէ , որչափ սէր : Գեղանի Քաթէրին ամեն օր մար-  
քիզը տեսնելու սովորած է . մերթ ընդ մերթ հայրին  
նայած ժամանակ , տեսնելով որ տարիները քանի կ'անց-  
նէին , իւր գեղեցկութեան թարմութիւնը կը պակսէր  
և աչերուն վրայ խորշումներ երեւան կ'երևէին , ըսած է  
ինքնիրեն թէ «որ մը զիս կը թողու և մէկ մ'ալ չեմ  
կրնար զինքը տեսնել» : Քիչ քիչ , առանց իսկ իւր գի-  
տութեան , հակած է փոփոխութեան մը գաղափա-  
րին , որ իրաց վիճակը կ'իտով չափ միայն պիտի փո-  
խէր : Անշուշտ ի սկզբան բարկացած , բողբօած , մերժած  
է , բայց մարքիզը բրտաբար նեղը լծած է զայն . «կամ  
կը հաճիք , կամ մէկ մ'ալ զիս չէք տեսներ» ըսած է :  
Խեղճ կինն յաղթուելով հաճեր է : Մտածեր է որ տար-  
փաւորը զոհելով փեսան կը պահէր : Աւելի լաւ էր կէսը  
կորուսանել՝ քան բոլորը : Իւր սէրը պիտի առժէր ,  
բայց իւր սովորոյթը չպիտի փաստուեր : Հիմա , ուրիշ  
բան մի՞ խնդրէք ինձմէ : Ահա կէս ժամ խօսեցայ , և  
բաւական է մէկ անգամի համար :

Երբոր իւր հօրաքեռորդին և Մորիս մեկնեցան ,  
Տիկին Վէրնիէ խօսկման մէջ մնաց : Կը ջանար վերլու-  
ծել Պ. Փօրէի խօսքերն , սկիպտիկեանի՝ բայց մարդ-  
կային սիրտն հետազօտող ճարտար փիլիսոփայի մը  
խօսքեր : Այս անողք հոգեբանութիւն կը հարուա-  
ծէր զայն իւր անցթութեամբն և բրտութեամբ : Դա-  
տաւորին խորհրդածութիւնները սարսափելի կերպիւ  
տրամաբանական կ'երեւէին իրեն : Պ. Փօրէ , բուն

կրից ներքին կողմերն ուսումնասիրելու, մարդ կոչուած մերենայն շարժող զսպանակները ճանչելու վարժուած, պէտք էր հաւատարմութեամբ վերակազմէր այս ընտանեկան ներքին թատրերգը: Տարակոյս չկար որ այդ տարփաւորին և տարփուհւոյն միջեւ մաքառում եղած էր, և տարփուհին յաղթուելով ընդունած էր յաղթող տարփաւորին պայմանները:

Բայց Տիկին Ժան Վէրնիէ բաւական հանճարեղ էր բարձրն և հեռին նայելու համար: Կը խորհէր դառնապէս թէ այս դայթակղական ամուսնութիւնն իմացող անձանց ամենն ալ, ինչպէս ինքն իսկ, գրեթէ բոլորովին աիկին Մորէրի վրայ կ'ըբաղէին, և բնաւ Արտեմիսի (Տիան) = Մին կը զարմանար, միւսը կը բարկանար, իւրաքանչիւրն իւր բնաւորութեան համեմատ դատելով, բայց ոչ ոք աղջկան վրայ կը ցաւէր: Տիկին Վէրնիէ վառարանին առկայծեալ բոցերուն առջև խոկուն նստած, կըսէր ինքնիրեն թէ այս մոռացման պատճառն անհատից անազորուն ինքնասիրութիւնն էր: Դէպքին կնճռոտ կողմը կը զուարթացնէր զամենքն, և ոչ ոք կը խորհէր խեղճ աղջիկն, որ բարոյապէս վաճառուած, հոգւով մարմնով մատնուած էր: Ինչ փոյթ էր այդ անձանց թէ Տիան Մորէր դժբաղդ պիտի լինէր կամ ոչ: Թերևս նա ալ կը սիրէր Մարքիզը: Եթէ չէր սիրեր, ոչ մէկուն փոյթն էր իմանալ թէ ինչո՞ւ կ'ամուսնանար անոր հետ. ինչ ճնշում, ինչ ստիպում կը կրէր: Առաւել հրապուրիչ է իրաց դայթակղական կողմը միայն տեսնել. ընդհակառակն շատ ձանձրալի է այլոց վրայ ցաւել: Ի բաց առեալ Տիկին Քէրսէն և թերևս Պ. Փօրէ, Տիկին Վէրնիէ կը խօստովանէր թէ իւր բարեկամներն այն օրն արդարև ինքնասէր միայն եղած էին: Անձնասէր չլինելու համար պէտք է բարեսիրտ կամ շատ վիշտ կրած լինել:

1800

1898

39

2

Տիկին Ժան Վէրնիէի խօսքը ճշմարիտ էր: Երբէք կին մը՝ օրիորդ Մորէրի չափ արժանացած չէր Տիան սիրուն անուան: Այդ մանկամարդուհին ողջախոհութեան արձանի մը կը նմանէր: Փոքր էր հասակաւ, բայց հազուադիւրս վայելչութիւն և ձևոց փափուկ նրբութիւն մ'ունէր, հին անդրիագործութեան կոյսի մը պէս, ամենագեղեցիկ ձեւներով ու ոտներով, վէլասքէզի աղջկան մը պէս թխաթոյր, այն փայլուն թուխն, որ լուսոյ քմահաճ խաղին ներքև կապոյտի կը փոխուի: Առաջին նայուածով կը զարնէր տեսնողն, և ուշադրութիւնն՝ անգամ մը սեւեռելէ յետոյ՝ ոչ ևս կը բաժնուէր անկէ: Այս գաղթածնի ակնապարար դժգունութիւնն իւր մօրմէն ստացած էր, դժգունութիւն մը, զոր ոչ յողնութիւնն և ոչ ջերմութիւնը չեն կրնար այլայլել երբէք: Մարգարտափայլ սատափ մը, մանկութեան և թարմութեան փայլատակում: Աչքերը, սեւ, փայլուն, խոր և հանդիպահայեաց: Կարծես թէ հնդկուհիի աչեր էին, կէս ընկղմեալ, բայց զուարթ և սէգ: Ամբողջութիւնն իսկապէս Արտեմիսն էր, հելլեն քերթողաց նրբահասակ Արտեմիսն, իդէականի երազիչը, բարձրաբերձ լերանց և հեռաւոր հորիզոնաց խանդակաթ սիրահարը:

Օրիորդ Արտեմիս Մորէր տասն և ինն տարու էր. իւր ընտանեաց հետ տասնեութ ամսէ ի վեր էր որ կը բնակէր: Մայրն երբէք հոգ տարած չէր իրեն: Որչափ հեռուն տանէր իւր յիշողութիւն, ինքզինք միայնակ լքեալ կը գտնէր: Մինչև ութ տարու եղած ժամանակ Պրըթայնի մէջ կը բնակէր, Նանթի շրջակայներն, աղքատիկ աղգականներու քով, որոց համար իւր ներկայութեան խորիկ հարստութիւն մ'էր:

3




իւր կենաց երջանիկ ժամանակն եղաւ այն : Ազատ և անհոգ կը վազվզէր դաշտերուն մէջ և ծովեզրին վրայ դրացի տղու մը հետ որ յետոյ իւր բարեկամն եղաւ : Ժամանակը կ'անցնէր : Օր մը սենեկապանուհի մը գնաց զինքն առաւ — մայրն իւր հանգիստը չէր աւրեր այսչափ փոքր բանի մը համար — և Մորէրի ապարանը բերաւ , ուր տասն և հինգ օր ժամանակ անցուց , բացարձակապէս անտես լինելով իրարու յաջորդող այցելութիւններու , ճաշերու և ցայգահանդէսներու փոթորկին մէջ :

Տղայք՝ առանց կասկածուելու կամ նշմարուելու ամեն բան կը դիտեն : Արտեմիս անմոռաց կը յիշէր որ այն տասնեւհինգ աւուր մէջ մայրն երկու անգամ միայն զինքն համբուրեր էր , եկած և մեկնած ժամանակ : Կը յիշէր նաեւ երկու դէմք , որ իւր աչքին կը զարնէին . Պ. Տը Մորէր , իւր սկեսրայրն , որոյ անունը կը կրէր , կ'ըսէին իրեն , վասն զի որդեգրած էր զինքը . միջահասակ , լուռ և ցուրտ երեւութով մարդ մը , կանուխ ճերմկիւ սկսած մազերով : Տժգոյն դէմք և պաղ աչեր ունէր . հարցասէր , բոցի պէս բորբոքող և շուտով մարող : Ի սկզբան սէր կը ցուցնէր իրեն , բայց Արտեմիս՝ հակառակ իւր ջանից՝ չէր կրնար ընտելանալ անոր . տեսակ մը տարտամ և անդիտակցական սարսափ մը կ'ազդէր իրեն , զոր չէր կրնար մեկնել , բայց որչափ իւր մանկութեան , նոյնչափ և իւր աղջիկութեան ժամանակ կը տիրէր իւր վրայ : Աւելի կը սիրէր թանտրէ մարքիզն՝ որ յաճախ իւր մօր տունը կուգար : Գոնէ խօսող մարդ էր , որով Պ. Մորէրի մըշտընջենական լուութիւնն առաւել զգալի կը լինէր : Թանտրէ մարքիզ զուարթ էր , կը ծիծաղէր և երբեմն կը խաղար մանկիկին հետ , ինչպէս կը կոչէր զայն : Ասկէց զատ հաճելի էր իւր այրական գեղովն , իւր արթուն սթափ և վառփայտ խելքովն , իւր շարժմանց

և ձեւոց ընդաբոյս վայելչութեամբն և նուրբ ու երկայն հասակով :

Այն տասնեւհինգ օրէն վերջն Արտեմիս նորէն սենեկապանուհւոյն յանձնուելով իւր նոր պքսորավայրը գնաց , գաւառական տխուր և սառնային վանք մը , ուր ինն տարիէն աւելի մնաց : Այս ինն տարուան մէջ իւր մայրն հինգ անգամ տեսաւ . վասն զի հինգ անգամ միայն իւր ընտանեաց քով եկաւ : Իւր պարսպուրդի ժամանակները կրօնաւորուհեաց հետ կ'անցունէր , որոց խստակրօնութիւնը կը վախցնէր զինքը : Առանց իւր Աննա-Մարի բարեկամուհւոյն գորովանաց , կը մեռնէր իւր տրտմութենէն : Պ. Մորէր ալ քանի մ'անգամ այցելութիւն տուաւ իրեն , բայց միայն առաջին և երկրորդ տարիներն : Այնուհետեւ ոչ եւս երեւցաւ : Անշուշտ կը ձանձրանար համբ և սարսափահար տղու մը տեսակցութենէն , որոյ համար իւր մեկնումն ազատութիւն էր :

Վերջապէս ասկէց տասնեւութ ամիս առաջ վանամայրն , որ այս աղջիկը շատ չէր սիրեր՝ չափազանց հանդարտ բարեպաշտութեանը պատճառաւ , ծանոյց իրեն թէ կրօնաւորուհւոյ մը հետ փարիզ պիտի երթար : Արտեմիս ուրախութեամբ մեկնեցաւ վանքէն . միայն Աննա-Մարիէն բաժնուելուն վրայ պիտի տիրէր , բայց ան ալ վեց շաբաթէ ի վեր մեկնած էր : Պ. Բէրսէնի հետ ամուսնանալու համար : Մորէրի ապարանը նոյն վիճակին մէջ գտաւ , ինչ որ էր ինն տարի առաջ : Միայն թէ իւր մայրն ու սկեսրայրը ծերացած էին : Յուրտ ընդունելութիւն մ'ըլլին իրեն , Պ. Մորէր իւր սովորական պազութեամբ , մայրն ալ իւր դժգոհ չորութեամբ : Տիկին Մորէր չէր քաշեր իւր աղջկան յաղթող թարմութիւնն ու զոյտաիչ գեղեցկութիւնն : Արտեմիս նշմարեց որ երկուքն ալ երկարօրէին կը զննէին զինքը , բայց տարբեր եղանակ



կաւ = Նշմարեց որ թանտրէ մարքիզն յաճախ չէր գար  
և նա ալ ծերացած էր . բայց քառսուն տարու լինե-  
լով հանդերձ գեղեցիկ և նշանաւոր էր :

Անկէց ի վեր անցած տասնեւութ ամսոց մէջ Ար-  
տեմիս վարժուեցաւ դիտելու և լռելու : Տիկին վէր-  
նիէի դահլճին մէջ ալ քիչ խօսած էր : Եթէ Աննա-  
Մարի հոն չգտնուէր , Արտեմիս բնաւ չպիտի խօսէր :

Տիկին Ժան վէրնիէի տունէն դուրս ելնելէ յե-  
տոյ՝ Տիկին Մորէր և աղջիկն իրենց կառքը նստան և  
տուն վերադարձան առանց խօսք մը փոխանակելու ,  
ինչպէս որ սովորութիւն ըրած էին : Տուն հասնելէն  
յետոյ միայն Տիկին Մորէր ըսաւ .

— Տիկին ֆէրսէն չձանձոյց ձեզ թէ այս իրիկուն  
ճաշի պիտի գայ :

— Այո՛ :

Այս եղաւ իրենց բոլոր խօսակցութիւնն : Արտեմիս  
իւր խցիկը քաշուեցաւ , որ իրեն պէս թարմ էր և  
կուսական . իսկ մայրն իւր բնակարանը գնաց : Գեղանի  
ֆաթէրին ինքզինք սարսափելի կերպիւ խոնջիւղ զգա-  
լով , երկայն աթոռի մը վրայ տարածուեցաւ իւր աղօ-  
տալոյս ներքնասենեկին մէջ , առանց նշմարելու թէ  
գիշերուան մութը կը կոխէր ապարանին պարտիզին  
մէջ : Տեսած միակ ստուերներն իւր մտածութեանց  
ստուերներն էին : Զոհողութիւնը կատարուած էր : Հե-  
տեւեալ օրն համայն փարիզ պիտի իմանար թէ ինքը  
կը թողուէր , և թէ իւր տարփաւորն իրեն փեսայ կը  
լինէր : Արտեմիս կը գողնար զայն իւր ձեռքէն , ուստի  
և բարկութեան սարսուռ մը կը յուզէր զինք : Ժա-  
մերը կ'անցնէին առանց համրուելու , երբոր իւր սե-  
նեկապանուհին ներս մտաւ՝ բերելով այն հին կան-  
գեղներէն մին որ քանի մը տարիէ ի վեր նորաձեւու-  
թիւն եղած էին , և մեզմ' լուսով մը լուսաւորեցաւ  
սենեակը : Տարօրինակ ներքնասենեակ մը , ուր մտնու-

ղը կը տարակուսէր թէ արդեօք ջերմ կրօնասէր թէ  
աշխարհասէր կնոջ մը բնակարան էր : Որմին վրայ  
փղոսկրէ մեծ խաչելութիւն մը կար , և ֆրկչին ոտ-  
քին վրայ դեղին փայտէ անարուեստաբար շինուած  
լուրտի վարդարան մը կախուած էր , որոյ հատերն ա-  
րուրէ թելերով կապուած էին իրարու : Դիմացի որ-  
մին վրայ գեղեցիկ փորագրութիւն մը կար , որ կը ներ-  
կայէր զհեշտասէրն Անտիոպէ , մերկ պառկած մամու-  
ռին վրայ , և քունին մէջ յանկարծակի կոխուած դաշ-  
տաց հրաշեայ Շահապետէն : Որմերը թանձր մետաք-  
սով պատած , աթոռները խորունկ և կակուղ , լայն  
բարձեր բարձրառէչ գորգերուն վրայ , փոքրիկ գրա-  
դարան մը քանդակեալ կաղնիէ , որոյ մէջ քովէ քով  
դրուած էին Նճան-Նիւն Յեսուսի և Նաւարիոյ Լուսնայի  
Վեպերը , Ս. Օրոսիոսի խոստովանութիւններն և Պատալիոյ ,  
Մոսի Բարեպաշտակն կենաց տասն և հինգ սուր թղթա-  
կազմ հատոր մը , և Վրանգաւոր կապուցութիւնն : Կորս հա-  
տոր փառակազմ : Օղին մէջ անըմբռնելի կերպիւ կը  
ծփար քաղցր և հրապուրիչ անուշահոտութիւն մը , որ  
կահերուն ու կարասիներուն , գորգերուն ու օթոցնե-  
րուն մէջ տարրացած էր : Այս հակապատկերէն կը  
հասկցուէր այս կնոջ բնաւորութիւնը , կրօնամոլ և  
զեղծ , սնապաշտ և զգայասէր , բացարձակապէս զուրկ  
բարոյական զգացումէ և վախցող ապագայ պատիժ-  
ներէ :

Քաթէրին վերստին կ'ընկզմէր իւր դառն մտածու-  
թեանց մէջ : Իւր տարփական անցելոյն բոլոր յիշա-  
տակներն աչքին առջեւ կը պատկերանային ներքնա-  
սենեկին մէջ , և պէտք էր մշտնջենապէս հրաժարիլ  
այդ սէրէն : Նորէն սենեկապանուհին եկաւ և հար-  
ցուց թէ կրնա՞ր ընդունիլ թանտրէ մարքիզը , քա-  
թէրին ոտքի վրայ ելաւ և անմիջապէս կտրուկ ձայ-  
նիւ մը .

— Այո՛, ըսաւ . գնացէք աղաչեցէք Պ. Մարքիզն որ սպասէ , և եկէք հազուեցուցէք զիս :

Այս միջոցին Բաթէրին արմուկովը վառարանին կրթնած՝ երկարօրէն ինքզինք կը նայէր հայրին մէջ : Երեսը՝ տարիքին հակառակ՝ գեղեցիկ էր . ժամանակն հազիւ իւր հետքը նշանակած էր աչերուն ծայրը քանի մը խորշումներով և այտերուն վրայ բարակ խաղաւարտով մը : Հասակն իւր առջի ներդաշնակաւոր նրբութիւնը , պարանոցն իւր սիգապանծ գեղեցկութիւնը կը պահէր :

Գառն ժպիտ մը փոթեց Տիկին Մորէրի շրթունքը :

— Եւ սակայն գեղեցիկ եմ գեռ , միմռաց աչքն հայրին վրայ սեւեռած , որոյ մէջ երբեմն ինքզինք կը դիտէր յաղթող տարփուհին , և որ այժմ պարտեալ տարփուհւոյն տժգոյն ուրուականը կը ցոլացնէր :

Սենեկապանուհին ներս մտաւ և Բաթէրին շուտով հաղուեցաւ , սեւ դիպակէ երկայնատտուն շրջազգեստ մը հագնելով , որ իւր իրանին գեղեցիկ ձեւերը կը կաղապարէր և մարմնոյն մարդարտափայլ տժգունութիւնն առաւել եւս երեւան կը հանէր : Բըրինձի փոշիէ քող մը ձգեց իւր այտերուն վրայ , և ծանրութեամբ , որպէս թէ իւր խօսիլը մտիկ ընելով .

— Ներս մտցուցէք Պ. Թանտրէն , ըսաւ :

Ոտքի վրայ կեցած էր , վառարանին կրթնած , անշարժ և ակնկառոյց : Արդեօք վերջին յո՞յս մը կը պահէր և գերազոյն ճի՞գ մը թափել կ'ուզէր : Մարքիզն երեւցաւ ժպտադէմ , սէգ , անպատկառ :

— Ի՞նչպէս էք , լա՛ւ էք , սիրելի՛ Տիկին , ըսաւ իւր քիչ մը դատահնչուն ձայնիւ :

— Ինչո՞ւ համար զիս Բաթէրին չէք կոչեր , քանի որ առանձին ենք :

Մարքիզը դժգոհ շարժում մ'ըրաւ ինչպէս մարդ մը որ անհաճոյ վէճի մը բռնուելու վտանգի մէջ կը

տեսնէ զինք և չզգուշանալուն վրայ կը ցաւի : Տիկին Մորէր վախցաւ որ կը մեկնի , իսկոյն դիրքը փոխեց , և քաղցր , խոնարհ և դրեթէ աղերսարկու դէմք մ'առաւ :

— Ինչ որ կ'ուզէիք ըրի , Ֆապիէ՛ն , ըսաւ : Այսօր քանի մ'այցելութիւններ տուի , և ամեն տեղ ձեր Արտեմիսի հետ ամուսնութիւնը ծանուցի . . . որովհետեւ հաւանութիւն տուի . . . որովհետեւ այնպէս դրած էք ձեր միտքը . վստն զի այնպէս որոշած էք , այնպէս չէ՞ :

Մարքիզը ժպտեցաւ , և մօտենալով ձեռքը համբուրեց զարմանալի եղանակաւ մը . վստն զի կէս խանդակաթ էր՝ իբր տարփաւորի մը համբոյր , և կէս քաղաքավարական՝ իբր բարեկամի համբոյր :

— Ես ձեզ այնչափ սիրեցի , Ֆապիէ՛ն , և . . . (ձայնը ցածցնելով) այնչափ կը սիրեմ :

Մարքիզը , մեղմով , ծանրութեամբ , և մէկ բանը քսաներորդ անգամ կրկնող մարդու մը համբերատար դէմքով պատասխանեց .

— Ես ալ ձեզ շատ սիրեցի , Բաթէրին : Միշտ երախտապարտ պիտի լինիմ ձեզ այն երջանակէտ տարիներուն համար զորս տուիք ինձ : Բայց ամեն բան վերջ մ'ունի , և դուք ամենէն լաւ դիտէք . . . միայն դուք գիտէք թէ ես ի՞նչ փնտռեցի այս ամուսնութեան մէջ :

Եւ ձեռքէն բռնելով ստիպեց որ նստի իւր քով , և քաղցրութեամբ .

— Միթէ սիրելով է որ կը փափաքիմ այս ամուսնութեան , սիրելի՛ Բաթէրինս , ամենեւին : Ես չեմ սիրեր զԱրտեմիս , դուք ալ գիտէք : Երբոր մարդ մ'իւր կենաց մէջ ձեզ պէս կնոջ մը հանդիպելու երջանկութիւնն ունեցած է , իւր կիրքը կընայ ժամանակ անցնելով նուազիլ , որովհետեւ , աւա՛ղ , յաւիտենական

բան չկայ, բայց իւր սիրտ յաւիտեան կը շնորհակցի: Ո՛չ, պատշաճից ամուսնութիւն մ'է այս, և ոչ ուրիշ բան: Մեք, ներեցէք ինձ ըսել, երկուքս ալ երիտասարդ չենք, դուք քառսունեւհինգ տարու էք, ես քսուսուն: Խօսնդութեանց տարիքն անցուցինք: Այսուհետեւ մեր մէջ մնալու բանն է տեւական և խորին զգացում մը, այնպէս որ ապահով լինինք մշտապէս միմեանց վրայ վստահելու:

Այս խօսքերը սիրազեղ քաղցրութեամբ մը կը խօսէր, ջանալով որրեւ Քաթերինի սրտին ցաւը, բալասան մը դնել անոր վերքին վրայ:

— Դուք կը ճանչէք զիս, յարեց Մարքիզն, որ ես ընտանեօտեր մարդ մ'եմ: Այն տարիքն հասայ, ուր տուն մը, ընտանիք մը պէտք է, և ասա ճշդիւ այս պարագայիս մէջ է որ սիրոյ փորձ մը տուի ձեզ՝ ձեր աղջիկը կնութեան առնելու փափաքելով: Իմ անուամբս և հարստութեամբ դիւրաւ կրնայի ամուսին մը գըտնել: Բայց մեր կապակցութիւնն հանրածանօթ լինելով, ապագայ ընտանիքս անշուշտ պիտի պահանջէր ինձմէ որ ամեն յարաբերութիւն դադրեցնեմ ձեզ հետ: Այս դժպէսի գաղափարը վայրկեան մ'իսկ չուզեցի ընդունիլ, վասն զի վատութիւն մ'եւ ապաշնորհութիւն եղած կը լինէր իմ կողմէ: Մանաւանդ որ չէի կրնար այդ քաջութիւնն ունենալ: Չեզ այլ եւս չտեսնել, ձեզ, որ իմ լաւագոյն բարեկամս և մտերիմ խորհրդականս էք: Չատել կեանքս ձեր կեանքէն, այնպէս որ դուք ինձ և ես ալ ձեզ օտար լինի՛նք: Լաւագոյն էր ուրեմն մեր փոխադարձ սէրն հաշտեցընել մեր ապրած աշխարհի օրինաց հետ, ընտանեկան կեանք մ'ստեղծելու ներքին բաղձանացս հետ, — աւելի հեռուն կ'երթամ, — նոյն իսկ ձեր կանոնաւոր կենաց մէջ մտնելու բաղձանաց հետ:

Քաթերին յանկարծական շարժում մ'ըրաւ: Մար-

քիզը չնշմարել կեղծելով շարունակեց նոյն հանդարտ և գորովալիլ լեզուն, մինչեւ ծայրը խաղալով իւր յանդուգն կատակերգն, և իբրեւ քաղաքացիական բարոյականի առածներ ծախելով իւր մանր քարուկանները:

— Դուք իմ ճանչածներուս մէջ ամենէն պարկեշտ կինն էք, ըսաւ լուրջ ծանրութեամբ: Ես շուտով գուշակեցի, սիրելիս, ձեր ներքին պայքարն ընդ մէջ ձեր վաղեմի գաղափարներուն և այսօրուան կրօնական կրից: Չեր դրադարանին մէջի գիրքերը տեսնելս բաւական եղաւ. . . : Առաջին անգամ որ վերապառուելի հայր Պրէմոն հոս մտաւ, հասկցայ որ ես մինակ չէի ձեր սրտին մէջ:

Մեղմով կը մօտենար անոր, իւր խօսքերուն թաւացումը շեշտելով:

— Մէհ, շատ տառապեցայ, Քաթերին, երբոր տեսայ որ վերջնական որոշում մ'ընել պէտք էր: Բայց շուտով մերժեցի օտար ամուսնութեան մը գաղափարն որ զիս կը հեռացնէր ձեզնէ: Այն ժամանակ որոշեցի ամուսնութեան առնուլ զՍրտեմիս: Գեղեցիկ է արդարեւ, բայց ցուրտ գեղեցկութեամբ մը, որ ինձ շատ հաճելի չէ, և ձեր գեղեցկութեան հետ չկրնար բաղդատուիլ: Մէհ, դուք մնաս կը հասցնէք ձեր աղջկան, սիրելիս: Ասկէց դատ ես զայն տղայ տեսած եմ, և միշտ տղայ պիտի մնայ ինձ համար: Վերջապէս անհնար է ինձ բաժնուիլ ձեզնէ, ամենէն երջանիկ կեանքը պիտի վարենք, զոր կրնայ մարդ երեւակայել, վասն զի չպիտի բաժնուինք երբէք, այնպէս չէ, և միշտ պիտի տեսնենք զիրար:

Պ. Թանտրէ անշուշտ երկար խորհած էր իւր խաղցած դերին վրայ: Երբէք կատակերգակ մ'ունեցած չէր աւելի ճարտար ձայնի ելեւելջ, աւելի հաշուեալ շարժումը քան զայս մարդ: Իւր հոգը չէր բուժել այն



վերջը զոր կուտար ֆաթէրինի սրտին և սնտառու-  
թեան . բաւական կը համարէր ընացնել զայն մեղմով  
որպէս զի մինչեւ իւր ամուսնութեան ժամանակ գըժ-  
տութիւն մը չծագի , որ կրնար արգելք լինիլ իւր  
խորհրդոց : Օրինակի համար , Պ. Ֆօրէի պէս դիտող  
մը կրնար նշմարել այն փոյթն՝ որով Պ. Թանտրէ կը  
ջանար փաղաքել այդ սիրտն ու սնտառութիւնը :  
Ինքզինք ծերացած , կեանքէ յոգնած և մինչև իսկ  
յափրացած կը ցուցնէր , որպէս զի Տիկին Մորէր չկար-  
ծէր վայրկեան մը թէ նոր սէր մ'սկսած էր անոր  
սրտին մէջ : Եւ այս ամեն ստախօսութիւնը ապար-  
դիւն չպիտի մնային : վասն զի գուցէ քսաներորդ ան-  
գամն էր որ կը կրկնէր : Ո՛ւր կը հասնէր մարդկային  
բարոյականն , եթէ վատշուէր մարդիկ զիրար չկրնա-  
լին խաբել :

— Տիկին Ռոշէզ դահլիճն է , ըսաւ սենեկապանու-  
հին՝ ներքնասենեկին դուռը կէս մը բանալով :

Քաթէրին՝ պատէն կախուած ժամացոյցին նայե-  
լով տեսաւ որ ժամը եօթն էր : Մարքիզին թեւէն  
բռնելով դէպի դահլիճը շտկուեցաւ իւր կոշնալան-  
ներն ընդունելու , որք Տիկին Ռոշէզի պէս գալու վրայ  
էին :

— Կը վախնայի որ չպիտի գայիք , ըսաւ ֆաթէրին  
համբուրելով իւր բարեկամուհին . նամակս այս առա-  
ւօտ հասաւ ձեզ :

— Բարեբաղդաբար ուրիշ տեղ ճաշի խօսք տուած  
չէի , թէ և դարձեալ կ'աղատէի զիս : Այրի լինիլ չար-  
ժեք՝ եթէ իւր հաճոյից համեմատ չգործէ : Արդ՝ իմ  
հաճոյքս ալ միշտ ձեր տունը գալ է :

Հանրիէթ Ռոշէզ յոյժ պճնասէր այրի մ'էր : Այրն  
որ ազնուաբարոյ մարդ մ'էր , զայն կնութեան առնը-  
լու երջանկութիւնն ունենալէ յետոյ մեռեր էր : Խեղճն  
այս միակ միջոցը գտեր էր չապրելու այնպիսի կնոջ մը

հետ որ գեղանի հրէջ մ'էր : Բարձրահասակ , նուրբ ,  
գեղադէմ , բայց նմանը չտեսնուած ամենաչար արա-  
րած մ'է Հանրիէթ Ռոշէզ : Իւր մասնագիտութիւնն է  
չար խօսիլ ամենուն վրայ . մինչև իսկ բարեկամներուն ,  
ազգականներուն և իւր վրայ : Չկայ պատիւ մը որ  
աղարտելու չաշխատի : Չկայ նազանք մը որ արատա-  
ւորել չփորձէ : Ինչ է այրոց դէմ այսչափ ոխալուն  
պատճառը : « վասն զի շատ նիհար է » կըսէր մտացի  
մարդ մը , և կ'աւելցնէր « Հանրիէթի երկու բազուկնե-  
րէն նիհար բազուկ մը կրնայ շինուիլ » : Յաւտենապէս  
բանաստեղծական ծիծաղի մը ներքև կը ծածկէ իւր  
չարամտութիւնն և պաղտիւն կատաղութիւնն , որ  
փայլակի պէս կը ցոյանայ : Ըսուեցաւ թէ տարվաւոր-  
ներ ունի : Բայց ընդհանրապէս ամենէն ջերմ սի-  
րահարք չուտով կը հեռանան անկէ : Այնպիսի ծի-  
ծաղով մը կը խնդայ , որ սաստիկ կը խայթէ : Կարծես  
թէ տեսակ մ'օձի չըւմ կ'ելնէ բերնէն ընդհանրա-  
պէս այն ամէն մանր գրպարտութեանց հետ՝ զորս  
իւր վարդագոյն շրթունքը կ'արձակեն ժպտելով :

Երկու այսպիսի վատարարոյ կանայք բնականաբար  
հաճելի պէտք էր լինէին միմեանց՝ հակառակ իրենց  
տարբեր տարբերութեան : Տիկին Հանրիէթ Ռոշէզ քը-  
սան և եօթն տարու էր : Կարծես թէ տեսակ մը լուին  
դաշնադրութիւն կար մէջերնին , ա՛յնչափ սերտիւ  
կապուած էին իրարու հետ . կ'օգնէին միմեանց և  
փոխադարձաբար կը պաշտպանէին զիրար : Բայց Հան-  
րիէթ , չարախօսութեան դեւէն գրաւեալ , յաճախ կը  
վրիպէր դաշնադրութենէն :

Տանը մտերիմներէն երկու երեք ալ հեռոցեան է-  
կան , և անոնց ետեւէն Տիկին Քերսէն (Ոննա-Մարի) ,  
որ իսկոյն Արտեմիսը փնտռեց իւր աչերով : Աղջիկը  
կարծես զգալով իւր բարեկամուհւոյն գալը , շատ  
չանցած՝ նա ալ եկաւ : Իսկ Պ. Մորէր , սովորաբար

ճաշի նստելու վայրկենին կը կոչուէր . ճիշդ այն միջոցին երեւցաւ , ուր սպասաւորը դահլճին դրան երկու փեղկերը կը բանար ծանուցանելու համար թէ ճաշը պատրաստ էր : Լուսթեամբ իւր թեւը Տիկին ֆէրնէնի նուիրեց , մինչդեռ Քաթէրին՝ Պ. Թանտրէի թեւին յեցած՝ անոնց ետեւէն կուգար :

Ճաշի մ'սկիզբը գրեթէ միշտ պաղ ու չոր է , վասն զի թէ՛ մազնիսականութեան հազորդակցութիւնը տակաւին չէ հաստատուած կոչնականաց մէջ , և թէ՛ կոչնականք՝ խելքով փայլելէ առաջ իրենց պատուաքաղով փայլել կը խորհին : Բայց Մորէրի տպարանին մէջ ամեն տեղերէ աւելի պաղ էր : Քանի որ համագամ կերակրոց և ազնիւ ըմպելեաց տուած անգորութիւնը շարձակէր լեզուները , Պ. Մորէրի ներկայութեան ազդած սանձային տպաւորութեան ներքեւ կը մնային : Պ. Մորէր սեղանին մէջտեղը նստած էր Քաթէրինի դէմ , զոր միշտ «Տիկին» կը կոչէր : Քիչ կ'ուտէր , միայն շուր կ'ըմպէր , և բնաւ չէր խօսեր , բայց միայն իւր քովիններուն քանի մը բառով պատասխանելու համար : Երբոր իւր հիւրերէն մին խօսք ուղղէր իրեն , մէկ երկու բառով կամ գլխով կը պատասխանէր : Կ'ըսէին թէ շատ զբաղած էր իւր մտաւորական աշխատութեամբ , մանաւանդ իւր աշխարհագրական պարապմտիք : Ամենէն աւելի ցանկորդներէն մին էր այն հնչողակաւոր ընկերութեան գումարումներուն , որում անդամ են աշխարհի ամենէն հոյակապ աշխարհագիրք և ուղեւորք : Հոն յաճախ կը խղէր իւր սովորական համբուսթիւնն , և հակիրճ , մեկին և իմաստալից բանախօսութիւն մը կընէր : Զինքը ճանչողները պակասամիտ և տորօրինակ մարդ մը կը համարէին : Այս կարծիքը կը նպաստէր չքմեղացնելու զՔաթէրին , և զիրենք կ'ազատէր այս մենախոհ բնաւորութիւնը խորապէս ուսումնասիրելու աշխատութենէն : Ոչ ոք կը նշմարէր

այն պայծառ քաղցրութիւնն որ մերթ ընդ մերթ կը փայլէր այս մարդուն պաղ աչաց մէջ , և այն զուարթ բարութիւնը զոր յանկարծ կ'ստանային իւր փակ շրթութունը : Ճշմարիտ է որ քաղցրութեան այդ ճառագայլութումը քիչ կը տեւէր , և բարութեան զուարթութիւնն ալ շուտով կ'անհետանար , ինչպէս որ աշնան ժամանակ կանաչագեղ դաշտին վրայ դարնող արեգական շքեղ ճառագայլները կը հալածուին գորշ երկնից անուր ամպերէն :

Սակայն քիչ քիչ խօսակցութիւնը կը տաքնար : Հանրիէթ հոն լինելով , անհնար էր չ'չարախօսել և չ'զըրպարտել : Կէս ժամու մէջ ամեն գայթակղութեանց վրայ հարեւանցի խօսուեցաւ , ամեն ամօթոյք երեւան հանուեցան , ամեն վերքեր հետազօտեցան , բայց զգուշութեամբ , ինչպէս որ կը վայլէր մանկամարդ աղջկան մ'առջև : Ամենն ալ փարիզեան աշխարհի փրտութեան մէջ պատրուակ մը միայն կը տեսնէին հանձարաբանութիւն մը կամ համարձակ բաղդատութիւն մ'ընելու : Միայն Աննա-Մարի և Արտեմիս չէին խօսիր : Իսկ Պ. Մորէր , հայեացքը դատարկութեան մէջ ընկղմած , կը թուէր թէ ֆանիաթքա գնացած լինելու չափ հեռի կը գտնուէր իւր տունէն : Սակայն երիտասարդ մը , Պուլփառի չապկավաճառաց խանութներուն առաջակողման պէս թարմ և պճնազարդ , յաջողեցաւ յափշտակել զայն իւր երաններուն խօրէն և քանի մը խօսք կորզել բերնէն :

— Մեծ լուր մ'ունիմ ձեզ աւետելու , ըսաւ : Զեր մէջ յիշող կայ Մաքսիմիլիէն Տանկարի արկածն , որ անցեալ ամիս այնչափ ազնուկ հանեց լրագրաց մէջ :

Այս անունը լսելուն պէս , Պ. Մորէր իսկոյն իւր գլուխն երիտասարդին դարձուց : Անշուշտ կը զարմանար որ այդ Լուի Մարէշալի պէս դատարկ գլուխ անձ մը կըցած էր ճանչել զՄաքսիմիլիէն Տանկար : Լուի

Մարեչալ գուշակեց Պ. Տը Մորէրի մտքէն անցածը, վասն զի աւելցուց ծիծաղելով .

— Էս աներկբայ էի որ Մաքսիմիլիէնի խօսքն ըրածիս պէս մեր կոչնատէրն երկինքէն աշխարհ պիտի վերադառնար : Իսկ դուք, Տիկնայք և Պարոնայք, արդէն մոռցած էք այն արկածն որոյ վրայ կը խօսիմ, պատմութիւնն այն անվեհեր ուղեւորին, որ միայնակ թումպուրթու խորհրդաւոր քաղաքը գնաց, և վերադարձին՝ հրացանով մեծ կռիւ մ'ըրաւ գերի տարուած փոքրիկ Արարուհի մ'աղատելու համար :

— Մաքսիմիլիէն զիւցազուն մ'է, պատասխանեց Պ. Մորէր :  
Այս չորս բառն այնպիսի թրթռուն ձայնիւ, այնպիսի ջերմ արտասանութեամբ մ'ըսաւ, որ Արտեմիս, որ լուռ կեցած կը դիտէր, անշուքով անոր նայեցաւ :

— Կ'երևի որ դուք այդ մեծ ուղեւորն հանդիսաւոր կերպիւ ընդունելու գիտաւորութիւն ունիք, ըսաւ Լուի Մարեչալ, խօսքը Պ. Մորէրի ուղղելով :

— Կ'երևի որ դուք այդ մեծ ուղեւորն հանդիսաւոր կերպիւ ընդունելու գիտաւորութիւն ունիք, ըսաւ Լուի Մարեչալ, խօսքը Պ. Մորէրի ուղղելով :

Պ. Մորէր գլխովն հաստատական նշան մ'ըրաւ :

— Կ'ըսուի թէ, յարեց երիտասարդն, Աշխարհազրական ընկերութիւնը Նորտէնտրիպիտի եղած ընդունելութեան նման ընդունելութիւն մը պատրաստած է անոր : Հանրապետութեան նախագահն և զոյգ մը նախարարք պիտի գան : Մաքս (այսպէս կը կոչէինք զինքը վարժարանին մէջ) ասկէց երկու տարի առաջ պառուանչան ստացաւ . այժմ Պատուոյ Լէգէոնի սպայութեան աստիճանն և ճեմարանի անդամութիւն պիտի տրուի իրեն : Ես չեմ նախանձիր, վասն զի ազնուասիրտ երիտասարդ մ'է, զոր շատ կը սիրենք : Ահա նշանաւոր մարդ մ'եղաւ . գեղեցիկ է վառքը . . . այո՛, բայց . . . վաստկելը շատ դժուար :

Կոչնակայք ծիծաղել սկսան, և խօսակցութիւնը փոխուեցաւ : Զիարչաւի մրցմանց վրայ խօսիլ սկսան,

մինչ Պ. Մորէր իւր խոկմանց կը վերադառնար, և Արտեմիս կ'ըսէր ինքնիրեն թէ ո՛վ կրնար լինիլ այն արեւաասարդն, որոյ գործերն իւր հօրուին սառոյցը կը հալեցնէին : Իսկ Տիկին Քէրսէն, որ դեռ առջի օրը Նիսէն վերադարձած և յանկարծակի իւր բարեկամուհւոյն ամուսնութիւնն իմացած էր, ետեւէ ետեւ կը դիտէր զԱրտեմիս, Քաթերին և Պ. Թանտրէ : Նըշմարեց որ Թանտրէ մարքիզն, իւր սովորութեան հակառակ, ոչ թէ իւր նշանածին, այլ իւր ապագայ զօրանչին քով նստած էր, և Արտեմիսի հետ պաղութեամբ վարուիլ կը ձեւացնէր : Եւ սակայն երբոր դիպուածով անոր նայէր, լոյս մը կը փայլէր աչքին մէջ, իբր թէ կրկն կոհակ մը կ'եղնէր դէպի սիրտը : Բայց փայլակը շուտով կը մարէր, և Պ. Թանտրէ վերստին անտարբեր երեւոյթ մը կ'առնուր :

Ճաշն աւարտեցաւ, և երբոր դահլիճը կը վերադառնային, Աննա-Մարի (Տիկին Քէրսէն) Արտեմիսի ծուեցաւ և կամացուկ մ'ըսաւ անոր .

— Զիս սենեակդ տար, խօսք ունիմ քեզ :

Արտեմիս գրեթէ իսկոյն վարագոյր մը վեր առնելով՝ երկուքն ալ աներեւոյթ եղան . յետոյ փոքրիկ սենեակը հասնելով .

— Շատ ուրախ եմ որ զիս վերուցիր, գոչեց Արտեմիս բարեկամուհւոյն ճիտը փաթթուելով : Շատ բան ունիմ քեզ ըսելիք :

— Ես ալ ունիմ : Նստէ ուրեմն, դիմացս : Ո՞րչափ ժամանակէ ի վեր Պ. Թանտրէի հետ ամուսնութիւնդ սրոշուած է :

— Այժմ օրէ ի վեր :

— Ինչո՞ւ համար աղոր վրայ խօսք մ'ըրած չէիր ինձ՝ Նիս երթալէս առաջ :

— Վասն զի տակաւին խօսքը չկար :

— Լաւ, բայց ուր օրէ ի վեր ինչո՞ւ չգրեցիր ինձ :

— Մայրս առաւօտ մը զիս կոչեց և ըսաւ թէ Գ. թանտրէ զիս ամուսնութեան կը խնդրէր և թէ պատասխանս իմանալու կը փափաքէր, ըստ որում բացարձակապէս ազատ էի ընտրութեանս մէջ: Մինչեւ իրիկուն խորհելու ժամանակ խնդրեցի, և իրիկուն յայտնեցի թէ կը հաճէի ամուսին ընդունիլ զՊ. Թանտրէ: Եւ որովհետեւ քիչ օրէն փարիզ պիտի վերադառնայիր, անօգուտ համարեցի գրել քեզ:

Աննա-Մարի մեծապէս շփոթեալ էր. ինքզինք դժուարին կացութեան մը մէջ կ'զգար. բայց իւր խրդմըտանքէն առաջնորդեալ՝ չէր ուզեր իւր հրաւիրած բացատրութենէն խուսափել: Ուստի մեծ հանդարտամտութիւն կեղծելով՝ ըսաւ.

— Մայրդ բնաւ դիտողութիւն չըրա՛ւ:

— Բնաւ. գիտես որ իրարու հետ երկարօրէն չենք խօսիր երբէք: Ասկէց զատ, այն իրիկունը մայրս այնչափ սաստիկ գլխուցաւ մ'ունէր, որ իւր ներքնասենեակն առանց լոյսի մնացած էր: Այս պատճառաւ շուտ մը ճանքեց զիս:

Աննա-Մարի սրտին մէջ խորին գուժ մը կ'զգար: Շահ կը մեղքնար դժբաղդ աղջիկը:

— Ուրեմն կը սիրե՞ս թանտրէ մարքիզը:

Սրտակէզ ժպիտ մը կը փոթէր աղջկան շրթունքը:

— Ո՛չ, ըսաւ:

Աննա-Մարի գոչեց.

— Չես սիրեր և ամուսնութեան կ'առնուս:

Տեսնելով որ Արտեմիս գլուխը կը ծռէր, Տիկին Բէրսէն բռնեց անոր ձեռքն, և ըսաւ եռանդեամբ.

— Քանի որ այդպէս է, ամեն բան կրնայ ազատիլ. դու չես ամուսնանար անոր հետ. շատ պարզ է այս. կ'ըսես թէ վերջին վայրկենին խորհելով միտքդ փոխեցիր, և անհնար է որ մարքիզն ամուսնութեան առնուս:

Արտեմիս վայրկեան մ'անոր նայեցաւ այնպիսի աչքով մը, որոյ մէջ խոր մտածութիւն մը կը յուզուէր. յետոյ հարցուց պարզապէս.

— Ինչո՞ւ համար:

Տիկին Բէրսէն նեղուիլ սկսաւ: Քիչ մը լուռ կենալէ յետոյ պատասխանեց.

— Վասն զի . . . երբոր մէկը բեզ պէս մանկամարդ, գեղեցիկ և հարուստ է . . . կա՛մ բնաւ չամուսնանար, կա՛մ իւր սիրած մարդուն հետ կ'ամուսնանայ:

Նոյն սրտածմիկ ժպիտը նորէն երեւցաւ օրիորդին շրթանց վրայ:

— Ի՞նչ պակասութիւն կամ մեղք կը գտնես թանտրէ մարքիզին վրայ, հարցուց:

— Ե՛ս:

— Այո՛, դու:

Տիկին Բէրսէն կարմրեցաւ քիչ մը:

— Ի՞նչ պակասութիւն կամ մեղք կ'ուզես որ գրտնեմ անոր վրայ:

— Ուրեմն, երբոր կ'ըսես թէ անհնար է որ զայն ամուսնութեան առնում, միթէ չի՞ հասկցաւիր որ բան մը կայ զոր ես չեմ գիտեր, և որ անպատճառ պիտի խորչեցնէ զիս անկէ:

Աննա-Մարի սարսուեցաւ: Արդեօք Արտեմիս կասկած մ'ունէր: Բայց ո՛չ, անհնար էր. կոյսը բանէ մը չէր կասկածիր. ի՞նչպէս կրնար չար կասկած ծագել անմեղ աղջկան մը մաքին մէջ, որ չարի վրայ գաղափար չունէր:

— Միայն սա գիտեմ թէ, ըսաւ, զուարճութեանց անձնատուր, յոյժ աշխարհասէր, խաղամու մարդ մ'է, և թէ դու չես կրնար երջանիկ լինիլ անոր հետ:

— Իմալ մտքէս կ'անցնի որ երջանիկ չպիտի լինիմ, բայց վարժուած եմ: Իմ բոլոր փափաքածս է,

Թշուառ չլինիլ անոր հետ : Նախ յոյժ քաղաքավար մարդ մ'է, այնպէս չէ . և ես չեմ տեսներ թէ ինչ ծանր պակասութիւն մը կրնայ դրուիլ անոր վրայ : Եթէ տարփանօք չեմ սիրեր զայն, գոնէ տեսակ մը բարեկամութիւն կ'ազդէ ինձ : Ձինքը տղայութենէս ի վեր կը ճանչեմ : Ժամանակաւ, երբոր մէկը չէր ըզբաղեր իմ վրայ, Պ. Թանտրէ բաւական գորովասրտութիւն կը ցուցնէր ինձ, և ասոր համար շնորհակալ եմ իրեն : Վերջապէս աներկբայ եմ որ իմ ճաշակներուս չհակառակիր, և փափաքած կեանքս կրնամ ունենալ :

— Ինչո՞ւ համար աներկբայ ես :

— Վասն զի կաթողին կը սիրէ զիս :

— Ճշմարիտ է, միմնջեց Տիկին Քէրսէն, կաթողին կը սիրէ քեզ, ճաշին ժամանակ նշմարեցի :

— Այն ժամանակ անշուշտ նշմարեցիր նաև որ իւր սէրն յայտնապէս ինձ ցուցնելէ կ'զգուշանար . կը խոստովանիմ որ գոհ եմ այդ ընթացքէն :

Աննա-Մարի ոտքի վրայ ելաւ, որպէս զի ճակատն եւնող կարմրութիւնը ծածկէ : Քանի մը քայլ առաւ սենեակին մէջ . յետոյ, Արտեմիսի քով դառնալով, ըսաւ բուռն կերպիւ .

— Ո՛չ, ո՛չ : Այդ ցուցած փաստերուդ ոչ մին փաստ չէ : Քեզ պէս աղջիկ մը չամուսնանար մարդու մը հետ միմիայն զինքը սիրելուն և ինքն ալ անոր բարեկամ լինելուն պատճառաւ : Աղջիկ մը չամուսնանար դժբաղդ չլինելու համար, ընդհակառակն՝ երջանիկ լինելու համար կ'ամուսնանայ, և ես կ'ուզեմ որ դու երջանիկ լինիս, վասն զի արժանի ես : Դարձեալ կ'աղաչեմ քեզ, փոխէ որոշումդ, ետ կեցի այդ ամուսնութենէն . ինչ որ կ'ուզես ըրէ, բայց մի՛ ամուսնանար Թանտրէ մարքիզին հետ :

Արտեմիսի աչքը բոց կ'արձակէին :

— Մտիկ ըրէ, Աննա-Մարի, զիս կ'ստիպես այն-

պիսի բաներ ըսելու, զոր մէկու մը չեմ ըսած . Դու չես գիտեր ինչ սոսկալի կեանք է իմ կեանքս : Մայրս չսիրեր զիս, և — սարսափելի է խոստովանիլ, — ես ալ չեմ սիրեր մայրս : Ի բաց առեալ քեզ և պատանեակ մը, զոր Պրըթայնի մէջ ճանչեցի տղայութեանս ժամանակ, ոչ ոք սէր ցուցած է ինձ : Իմ կեանքս անհուն անապատի մը կը նմանի, որոյ մէջ հազիւ քանի մը ծաղիկ բուսած է : Ես ամեն փորձ ըրի, որպէս զի մայրս սիրէ զիս, բայց միշտ սառուցե պատի մը զարնուեցայ : Ո՛րչափ պիտի սիրէի զինքն, եթէ կամենար : Վերջապէս, ինքզինքս կը մխիթարէի այն յուսով որ ապագային մէջ ընտանիք մը կազմեմ : Ամեն տեսած տղայքս հայր մը, մայր մը, եղբայրներ կամ քոյրեր ունէին, ապագային վրայ մտահոգ չէին, վասն զի ներկայն ունէին : Ես՝ ընդհակառակն՝ պարտաւորւած էի ապագայ երջանկութիւն երազել, որպէս զի ապերջանկութեանս համար չտանջուէի : Ասկէց զատ, երբոր վանքէն հոս վերադարձայ, տեսայ, դիտեցի . . . :

Եւ կանգ առաւ . ներքին սրտայուզութիւն մը կը մտմտէր զինքը :

— Սառնամանեաց մթնոլորտի մը մէջ կ'ապրիմ : Մայրս կ'ատէ զիս, կ'ըսեմ քեզ . ինչո՞ւ համար : Երկարօրէն փնտռեցի պատճառը : Գուցէ հօրս յիշատակին համար . վասն զի գիտես կամ չգիտես թէ Պ. Մորէր իմ հօրուս է, և եթէ անոր անունը կը կրեմ, օրինական հաճոյակատարութեամբ մ'է, զոր արժան չդատեցին բացատրել ինձ : Եւ այս առաջին ատելութեան քով՝ երկրորդ մ'ալ կը դուշակեմ, զայն զոր մայրս և իւր այրն ունին միմեանց դէմ : Կ'զգամ որ շուրջս այնպիսի բաներ կան, որք պէտք չէր լինէին . կ'զգամ որ ամեն մարդ մեզ կը նային թատրոնի և պարահանդէսի մէջ մասնաւոր հետաքրքրութեամբ : Աներկբայ եմ

որ իմ մերձաւորներէս միոյն կենաց մէջ անագորուն սխալներ կան : Ոչ թէ մօրս կենաց մէջ , քաւ լիցի . մայրս պաղ և գոռոզ է , բայց անարատ է . իւր բարեպաշտութիւնը պահպանած է զիւրն ամեն բանէ : Բայց հայրս , այն հայրս , որ իմ ծնած ժամանակս արդէն մեռած էր , թերևս ոճիր մը գործած է , որոյ բեռն ես կը կրեմ : Կարճ խօսելով , այս տան մէջ ինձ ցոյց տրուած հակակրութիւնը կը ծանրանայ իմ վրայ ցընցողներու պէս , զորս ինձմէ հեռի կը նետեմ . կուզեմ դուրս ելնել . . . : Սիրոյ սպասել : Դէմս երևողներուն ոչ մին չեմ սիրեր . և կուզեմ ժամ առաջ վերջ տալ այժմու կենացս , որ զիս կ'սպաննէ . . . : Մարքիզը ներկայացաւ . մանկութեանս ժամանակ բարեւորտութիւն ցոյց տուաւ ինձ . կը սիրէ զիս . և ես ա՛յնչափ կարօտ մնացած եմ այլոց գորովէն , որ Մարքիզին ցոյց տուած գորովը խորապէս կ'ազդէ ինձ : Դու ալ ինձ հետ կը ճանչես թէ ազնուաբարոյ մարդ մ'է . . . : Ուրեմն կ'ամուսնանամ անոր հետ . նա զիս կը հեռացնէ հօսկէց , և կեանքս ազատ և յարգել կը լինի : Եթէ մայր չունեցայ , դաւակներ կ'ունենամ , և զանոնք կրկնապատիկ կը սիրեմ , թէ՛ ինձ համար՝ որ չսիրուեցայ , թէ՛ իրենց համար որ սիրուելու արժանի պիտի լինին :

Արտեմիս այնչափ եռանդով , այնչափ շերմութեամբ կը խօսէր , որ իւր տօգոյն դէմքը կը գունաւորուէր , և աչերէն հուր կը ցայտէր :

— Եթէ գիտնայիր , Աննա-Մարի , աւելցուց աղջիկն , ո՛րչափ կը փափաքիմ շուտով երթալ , շուտով փախչիլ այս ապարանէն , ուր ամեն բան օտար է ինձ . սիրտերը , սովորութիւնները , մինչեւ իսկ պատերը : Սպասել որ մէկը սիրեմ : Բայց թէ որ իմ ընտրածս չսիրէ զիս : Ոչ , մարքիզն ազատ է , անկեղծապէս սիրահարած է ինձ . կ'ընդունիմ կ'երթայ : Ես հիմա այն

վիճակին մէջ եմ որ կ'ըսեմ մտօքս թէ բարօրութիւնն առաւել վիշա չկրելու մէջ է քան թէ երջանկութեան , և թէ՛ երբոր մէկն հանգիստ է , ոչ ևս արգահատելի է : Այս է հա հիմ փիլիսոփայութիւնս . արդարեւ անագորուն . . . և ես տասնինն տարեւ եմ :

Անհնար է նկարագրել այն դառնութիւն՝ զոր Արտեմիս դրաւ այս վերջին խօսքերու մէջ : Իւր բոլոր քաջած տառապանքը դուրս կը յորդէր վերջապէս : Ո՛րչափ տանջուած լինելու էր խեղճ աղջիկն որ այսպիսի դժնդակ եղբակացութեան մը կը հասնէր : Աննա-Մարի զգաց որ ա՛լ բան մը չունէր աւելցնելու : Այս ամուսնութիւնն արդիւելու համար պէտք էր գոչէր աղկան երեսին թէ « այդ մարդ՝ քու մօրդ տարփաւորն է : » Իրաւունք ունէ՞ր այսպէս ընելու , և ոճիր մը գործած չէ՞ր լիներ : Արդէն Արտեմիս մեծ կասկածներ ունէր , զորս իւր կանացի նախազգացութիւնը կը ծնանէր . բայց իւր կուսական տգիտութիւնը թող չէր տար ճշդել : Տիկին ֆէրսէն խորին հառաչք մ'արձակեց , համբուրեց զԱրտեմիս և լռեց :

— Այժմ , ըսաւ , վերադառնա՛նք դահլիճն , ուր մեր բացակայութիւնը կրնայ նշմարուիլ : Աղէկ միտքս եկաւ . վաղն ինձ հետ պտըտելու կուգամ :

— Ո՛ւր :  
— Փարիզէն դուրս կը տանիմ քեզ : Դաշտերն ըզմայլելի են դարնան այս առաջին օրերը :

— Շա՛տ աղէկ . երբոր քու հետդ լինիմ , կը մոռնամ :  
— Դահլիճը չե՞ս դար , հարցուց Աննա-Մարի , տեսնելով որ բարեկամուհին չէր երթար իրեն հետ :

— Ո՛չ , չքմեղացո՛ զիս ըսելով թէ յոգնած է : Ո՛հ , մի՛ վախնար , չեն դարմանար : Ես վայրենաբարոյ եմ . ամեն մարդ գիտէ :

Տիկին ֆէրսէն դուրս ելաւ : Արտեմիս մինակ մընաց , անշարժ , դառն մտածութեանց մէջ սուզեալ :

եղած խօսակցութեան վրայ կը խորհէր՝ և գոհ կը լինէր իւր սիրան սփոփելուն վրայ : Ճշմարիտ էր , մարբիզին հետ ամուսնանալէ զատ ինչ կրնար ընել : Վանքը վերադառնալ : Յաճախ կ'անցնէր մտքէն , բայց ինք պարզ հաւատացեալ մ'էր և ոչ կրօնամուլ . իւր ողջախօս խելքը շատ բանի վրայ կասկածելու կը մըղէր զի՛ք : Սուտ խօսած պիտի լինէր Աստուծոյ՝ ըսելով թէ ի սրտէ կը պաշտէր զինքը , մինչ մարգոց հնարած աստուածներուն պիտի ծառայէր :

Հետեւեալ օրը , Աննա-Մարի կանուխ եկաւ Արտեմիան առնելու :

— Ձեր աղջիկը կ'առեւանգեմ , ըսաւ Տիկին Մորէրի , և կը ծանուցանեմ ձեզ թէ մինչև իրիկուն քովըս պիտի պահեմ :

Տիկին Մորէր երբէք չէր դանդատեր իւր աղջիկը շտեմնելուն վրայ : Ուստի բնաւ առարկութիւն չըրաւ , և երկու մանկամարդուհիք աներեւոյթ եղան երկու ահաբեկեալ թռչնիկներու պէս : Տիկին Քերսէնի վիթթորիան (կառք) կ'սպասէր ապարանին առջև : Մուշտակներուն մէջ փաթթուեցան , և ձիերն արշաւասոյր ճանքայ ելան : Արտեմիա չէր գիտեր ո՛ւր կը տանէր զինքն իւր բարեկամուհին . թող կուտար որ տանի , կառքին արագութեան հեշտութենէն արբեալ : Շատ չանցած՝ Պուլոյնի անտառին ծառուղին անցան . իրենց շուրջը գարնան անուշ հոտեր կը բուրէին , երկրի այն գգուանքը՝ զոր ապրիլի ամիսը կը զրկէ գեփիւռին համբոյրներուն հետ : Պայծառազուարճ արեգակ մը կը ծիծաղէր կապուտակ տերեւներուն ներքեւ , իւր ոսկեզօծ տախտակները դեռաբուսիկ մամուռներուն վրայ պարզելով : Բնութիւնն իւր կապոյտ և կանանչ վերարկուն կը հագնէր նորածին գարնան նշանուելու համար : Օդը դեռ զով , բայց արդէն քաղցրաբոյր , մեղմաբար կը ձողկէր երկու

բարեկամուհեաց երեսն , որք աչերնին փակելով՝ իրենց երազներուն անձնատուր կը լինէին :

Երբոր կառքը Սէնի եզերքն հասաւ , Աննա-Մարի ձեռքն երկնցուց և գոչեց ուրախութեամբ .

— Տես՝ անգամ մը , սրչափ գեղեցիկ է :

Եւ արդարև այն տեսարանը , զոր ամեն փարիզցիք կը ճանչեն , այն առաւօտ յափշտակիչ երեւոյթ մ'ունէր : Սէն՝ կապոյտ և կանանչ էր ըստ հաճոյից լուսոյն . Նրային հաւեր կարկաչելով կը թռչաէին գետեզրը պատող երկայն և գեղնորակ խոտերուն մէջ : Նաւաձիգ շոգեմաւ մը , քրտնելով ու շչելով ծանր լաստ մը կը քաշէր , որոյ վրայ թխադէմ նաւասափ մը կանգնած էր . աւելի հեռին ամարանոցներն իրարու ետեւէ աստիճանաձեւ բարձրացած էին : Մինչև իսկ այն ծաղրաշարժ տնակները , զորս փարիզի միջնակարգ քաղաքացին շատ կը սիրէ , հեռիէն հաճելի և կայտառ երեւոյթ մ'ունէին :

— Այժմ կ'ըսե՞ս ինձ ո՛ւր կ'երթանք , հարցուց Արտեմիա ժպտելով :

— Կ'երթանք նախաճաշ ընելու :

— Ո՛ւր :

— Շաթու , գիւղացի պանդոկապետի մը ճաշարանը . թէև ստորին կարգի , բայց զուարճալի : Անցեալ ամառ հոն ճաշ մ'ըրի ծածկաբար ամուսնոյս հետ : Վախնալու բան մը չկայ : Շաթու մէջ բնաւ մարդ չգտնուիր , և մեք առանձին կը լինինք : Փոքրիկ շուայտութիւն մը , երկուքս ի միասին , զմայլելի չէ՞ :

Աննա-Մարի խնդալէն կը մարէր խորհելով թէ երկու վախճաբեղ և քնքուշ փարիզուհիք գեղջուկ պանդոկի մը մէջ նախաճաշ պիտի ընէին : Շատ չանցած՝ ձիերուն կարծր սմբակները շառաչել սկսան Շաթուի մայթին վրայ , և կառքը գետին եզրը պանդոկի մ'առջեւ կեցաւ :

Աննա-Մարի հրամայեց սպասաւորին որ կառքին սնտուկին մէջ պահուած նպարեղէնի սակաւը բերէ, վասն զի կը կասկածէր որ պանդոկին ճաշը բաւական չլինի: Երկու մանկ ամարդուհիք պանդոկին նեղ սանդուղէն վեր ելնել սկսան առաջին դատիկոնն երթալու համար, երկուքն ալ զուարթ, նոյն իսկ Արտեմիս, զոր բաց օդի մէջ պտոյսը կը կորզէր իւր տխրութենէն: Երկուքն ալ ամէն ժամանակէ աւելի գեղեցիկ կը թուէին իրենց երեսին գոյնին կենդանութեամբն և գեղափայլ աչերուն ուրախութեամբ, զորս այդ շրջագայութիւնը կուտար իրենց:

Կանանչ սենեակ մը մտցուցին դիրենք: Տիկին ֆէրսէն քիչ մը շփոթեցաւ: Երկու օտարական մարդիկ պարզաբար կը ճաշէին փոքրիկ սեղանի մ'առջև: Բայց երկուքն ալ զննելէ յետոյ քաջալերուեցաւ, հասկնալով որ պատուաւոր մարդիկ էին: Մին վաթսուն տարեկանի մօտ բարձրահասակ և գեղատիպ ծերունի մ'էր, գլխուն մազերը ձիւնի պէս ճերմակ, հանդերձները սև էին, պարզ և վայելչաձև, աչերը սև, քաղցր լըջութեամբ տպաւորեալ, իւր ցանցաւ և չափաւոր շարժումնքն հանդարտ կեանք կը նշանակէին: Վերջապէս իւր ընդհանուր կերպարանքովն ու վարքով հին ժամանակի Մաքրականները (տեսակ մը բողոքական) կը յիշեցնէր: Ընկերն երեսնամենի մօտ երիտասարդ մ'էր, խրոխտ նայուածքով և դժգոյն դէմքով: Կապոյտ աչերը նուրբ և հանճարեղ գլուխ մը կը լուսաւորէին, և իրենց շարժուն արտայայտութենէն այնպէս կը թուէր թէ սրտին մէջ մի արտայայտութիւնները ճշդիւ կը ցուանային անոնց մէջ: Մազերն ու մօրուքը խարտեաշ էին: Բարձր ճակատը, քունքերուն կողմը թեթևապէս կորնթարդ, խորշովիլ սկսած էր արդէն խորհրդածող մարդոց ճակտին պէս: Նա ալ սև զգեստ հագած էր, յոյժ պարզ, որ իրանին վա-

յելչագեղ նրբութիւնը կը ցուցնէր: Երկու կանանց ներս մտնելը տեսնելուն պէս, յարգանօք ողջունեցին զանոնք, և սկսան դաշն ձայնիւ խօսակցիլ, որպէս զի նեղութիւն չպատճառեն անոնց:

— Եւ դու կը կարծես, սիրելի Մաքսս, ըսաւ ծերունին, թէ քսան վայրկենէն աւելի պէտք չէ՞ մեզ:

— Ո՛չ, հայր, պատասխանեց երիտասարդը: Վերջին այցելութիւնս այնչափ տեսեց: Քաշելով կ'երթանք, եթէ կուզէք, և ետ դառնալուս կառքը հոս կը դառնենք:

Յետոյ սրկէ նրկէ խօսքեր ըրին: Արտեմիս և Աննա-Մարի զանոնք կը դիտէին իրենց աչքին ծայրով, և իրենք ալ տարտամ խօսքեր կ'ընէին: Երկու զոյգերը դրեթէ միևնոյն ժամանակ աւարտեցին իրենց նախաճաշն, և թէպէտ երկու մանկամարդուհիք յետոյ եկած էին, բայց և այնպէս նախ իրենք մեկնեցան՝ վերստին ընդունելով երկու օտարականաց յարգական ողջոյնը: Սանդուղէն վար լիջան և վարի սրահէն անցնելով Սէնի եզրն հասան:

— Նայի՛նք, ըսաւ Տիկին ֆէրսէն, պէտք չէ՞ որ սխալինք:

Եւ իբր թէ դոց ըրած դաս մը սերտելով.

— Չախ կողմը դառնալ, ուղղակի երթալ մինչև որ փոքրիկ ծառատան մ'եղնէ մեր դէմ, տունն անոր ծայրն է . . . : Օ՛ն շուտ, Արտեմիս, թեւս մտի և երթանք:

— Չե՞ս զմայլիք վստահութեանս վրայ, ըսաւ օրիորդ Մորէր, չեմ գիտեր ո՛ւր կ'երթանք:

— Կը յիշէս Ժան Պորէլ օրիորդը, որ մեր հետ վանքն էր: Հիմա շատ ինկած է, սիրելիս: Հայրն, որ փոխանակութեան միջնորդ էր, սնանկացաւ: Ասոր վրայ՝ Ժան Պորէլ աղջկանց մեծ վարժարան մը մտաւ իբր վարժուհի, բայց այս պաշտօն ծանր կուգայ ի-



րեն : նիս եղած ժամանակս նամակ մը գրած է ինձ  
 և կ'աղաչէ որ ընկերող տիկնոջ պաշտօն վարելու տեղ  
 մը գտնեմ իրեն : Այս խնդրածն ունիմ ես : Պառաւ  
 կոմսուհի մը կայ որ կը ձանձրանայ և ընկերուհի մը  
 կ'ուզէ : Պիտի իմացնեմ իրեն : Որովհետեւ նա աղ-  
 քատ է և ես հարուստ , ինձ կ'իյնայ երթալ իրեն : Մեք  
 երկուքս իրեն պէտք եղած հանգերձանքը կուտանք ,  
 և դու շնորհակալ պիտի լինիս ինձ , որ բարեգործու-  
 թեան մ'ընկերակից կ'ընեմ քեզ :

Արտեմիս՝ ի պատասխան՝ համբուրեց իւր բարեկա-  
 մուհին , և շարունակեցին իրենց ճանքան , միշտ զուարթ ,  
 միշտ ուրախ , ընդ ազդեցութեամբ դարնան այս գե-  
 ղեցիկ աւուր :

— Ի՞նչպէս գտար մեր ճաշարանին մէջի դրացի-  
 ներն , հարցուց Աննա-Մարի :

— Շատ շնորհքով մարդիկ :

— Այնպէս չէ՞ :

Այս միջոցիս , նշանակեալ ծառաստանը հասնելով ,  
 Սէնի եզերեայ ուղին թողուցին և դէպի ծառաստանն  
 ուղղուեցան զառիվեր ճանքէ մը , որ երկու կողմէ  
 նիհար ու ոսին խնձորենիներով չրջապատեալ էր . հինգ  
 վայրկեանէն զառիվերին գլուխն հասան , և հոն փայ-  
 տէ նստարան մը տեսնելով դալարագեղ հովանոյ ներ-  
 քէ , պահիկ մը նստան յողմութիւն առին : Քանի մը  
 վայրկեան յետոյ վարժարանը մտան և օրիորդ ժան  
 Պորէլը խնդրեցին :

Քառորդէ մ'ի վեր՝ խօսարանին մէկ անկիւնը կե-  
 ցած կը խօսակցէին իրենց վաղեմի բարեկամուհւոյն  
 հետ , որ ի սրտէ շնորհակալութիւն կը յայտնէր իրենց ,  
 յանկարծ երկու մարդ ներս մտան , որք Շաթուրի  
 պանդոկին մէջ ճաշող օտարականներն էին : Անոնց մօ-  
 տէս կը քայլէր տասներկու տարեկանի մօտ տղայ մը ,  
 որ տարօրինակ երևոյթ մ'ունէր : Կարծես թէ փոքրիկ

վայրենուհի մ'էր քաղաքակրթեալ երկրի մը մէջ նեա-  
 ուած , և իւր բնազդմանց և ճաշակաց բնաւ չյար-  
 մարող այս նոր կեանքէն ահաբեկ եղած : Միջահա-  
 սակ էր՝ սև , թաւ , ծանր , փայլուն մազերով , որք  
 իւր արեւակէզ այտերն ի վար , և ետեւէն ալ թիկունքն  
 ի վար կախուած էին : Լուրջ և խոկուն դէմք մ'ու-  
 նէր , որ կարծես թէ իւր տեսութիւնը սահմանաւո-  
 ըրող գորջ պատերէն աւելի հեռի , և իւր գլուխը ճըն-  
 չող ձեղունէն աւելի բարձր կը նայէր : Եոեսր , միօրի-  
 նակ թխաթոյր , խոհուն տխրութիւն մ'ունէր : Բայց  
 ամենէն աւելի աչքի դարնող բանն իւր խոչոր և խո-  
 բունկ աչերն էին , որք իրենց անքթիթ բացութեամբ  
 կը փայլէին սև ադամանդներու պէս : Օրիորդ ժան  
 Պորէլ՝ դէպի իւր բարեկամուհիներուն ծռելով կա-  
 մաց մը .

— Լաւ դիտեցէք սա տղան և սա երիտասարդն ,  
 ըսաւ : Տղան փոքրիկ արարուհի մ'է , որ անապատին  
 խորէն կուգայ : Իսկ երիտասարդը նշանաւոր անձ մ'է .  
 մեծահամբաւ Մաքսիմիլիէն Տանկլար ուղեւորն է :

— Ի՞նչ կ'ըսէք , ա՞յս է , գոչեցին միանգամայն Ար-  
 տեմիս և Աննա-Մարի :

Իսկոյն յիշեցին առջի իրիկուան խօսակցութիւնն՝  
 որ տեղի ունեցաւ ճաշին ժամանակ Մորէրի ապարա-  
 նին մէջ : Այս էր այն արի ռահվիրայն , որ միայնակ  
 կ'ուղեւորէր ծածկախորհուրդ Ափրիկէի անապատնե-  
 բուն և անել ճանքաներուն մէջէն . այն դիւցազն , ինչ-  
 պէս կը կոչէր Պ. Մորէր , որ խեղճ գերի մը կը պաշտ-  
 պանէր հրացանի հարուածներով . այն երեսնամեայ  
 մեծ մարդն , որուն հոյակապ անձինք արքայաւայել  
 ընդունելութիւն մը կը պատրաստէին : Խօսարանին  
 բարձր պատուհաններէն արեւը վէտ առ վէտ ներս  
 կը մտնէր , և իւր ճառագայթները լուսեղէն շրջանա-  
 կով մը կը պսակէին երիտասարդին խոկուն ճակատը :

Հիապատար փառաց մէջ կ'երևերնա Արտեմիսի, արդէն հռչակաւոր եղած անուան մ'ը պարզաբար կատարուած ազնիւ գործերու փայլով: Երեք կանայք, յակամայից անոր մեծ անուան ազդեցութիւնը կը կրէին, բնազդաբար կը լռէին, որպէս զի լսեն այդ օտարականն, որոյ գործերը ժողովրդական հրաշալի պատմութեանց կարգ անցած են:

— Ուրեմն գո՛հ ես, ժէմմա՛, կ'ըսէր Մաքսիմիլիէն:

— Այո՛, որովհետեւ քու մօտդ պիտի լինիմ:

Իրենց երկար ուղեւորութեան միջոցին, Մաքսիմիլիէն քիչ մը ֆրանսերէն ուսուցեր էր անոր. և զիշերօթիկ վարժարանն այդ սկսուած դաստիարակութիւնը շարունակելով, ժէմմա արդէն բաւական լաւ կը խօսէր կոկորդային եղանակաւոր արտասանութեամբ:

— Այս ծերունին իմ հայրս է, ըսաւ Մաքսիմիլիէն ժէմմայի. քանի մ'օրէն պիտի դայ քեզ առնու և մեր երկիրը պիտի երթանք ծովուն կողմը:

— Պիտի սիրեմ զայն, որովհետեւ քու երկիրդ է. և երջանիկ պիտի լինիմ ապրելով այս ծերունւոյն քով, որովհետեւ քու հայրդ է:

Դեռատի արարուհին՝ ճակատը ծռելով քանի մը խօսք մըմուտք ցած ձայնիւ:

— Ի՞նչ կ'ըսես, ժէմմա՛, հարցուց Մաքսիմիլիէն:

Արտքուհին գիշերուան պէս սև ու խորունկ աչեր տնկեց անոր վրայ:

— Կ'ըսեմ. — Դոհութիւն Աստուծոյ, առ որ կը վերադառնան ամեն բան: Դուրս ելնենք, կուզեմ պարտէզը ցուցնել քեզ:

Եւ երիտասարդին ձեռքէն բռնեց, և դէպի ծերունին դառնալով.

— Դու ալ կուզաս, հայր իմ:

Եւ երեքը մէկէն դէպի պարտէզն ուղղուեցան: Այս տարօրինակ և բանաստեղծական տեսարանն,

Ափրիկեան շողով մը դունաւորեալ, այնչափ ազդու տպաւորութիւն մ'ըրաւ երեք կանանց վրայ, որ աակաւին քանի մը վայրկեան լուռ մնացին: Վերջապէս օրիորդ Ժան Պորէլ խօսիլ սկսելով, իւր ընկերին վերայ խորհրդակցեցաւ Աննա-Մարիի հետ: Իսկ Արտեմիս կը կենար մտադրաւ և խոկուն: Անպատմելի շփոթութիւն մը կար վրան. անծանօթ բան մը կը յուզէր զայն, այնպէս որ Տիկին Բէրսէր նշմարեց:

— Ի՞նչ ունիս, հարցուց իւր բարեկամուհւոյն:

— Կը ջանամ միտքս բերել թէ ո՞ւր տեսած եմ Պ. Մաքսիմիլիէն Տանկար, և ո՞ւր լսած եմ անոր ձայնը, պատասխանեց Արտեմիս:

Ետ դարձած ժամանակնին, հակառակ Աննա-Մարիի ճգանց, Արտեմիս մունջ մնաց, կարծես իւր յիշողութեան ներկայելով այդ դիւցազնագործ երիտասարդն և այն փոքրիկ արարուհին, որ անապատի բնակչաց քաղցր և առածաւոր խօսուածքն ունի:

Ամուսնութեան ծանուցումներն հրատարակուած էին: Մօրէրի ապարանին մէջ մշտնջենաւոր երթեւեկ մը կար փութաջան հայթայթիչներու, որք ապագայ մտքբիզուհւոյն պէտք եղած չքեղ հանդերձանքը կը պատրաստէին:

Ապրիլ 23 ին քաղաքական ամուսնութիւնը պիտի կատարուէր թաղապետութեան պաշտօնատունն, ապրիլ 26 չորեքշաբթի օրն ալ պսակի արարողութիւնը պիտի կատարուէր եկեղեցին: Ակումբները գրեթէ գաղբած էին այս ամուսնութեան վրայ չարախօսելէ: Փարիզ այսպէս է. բարկութիւնն երկար չտեւեր. իւր բարոյական նախանձալուզութիւնը կարճատեւ է: Թատերախաղի հանդիսատեսներուն կը

նմանի, որք խեղճ դիւցազնուհին անգթաբար հալածող դաւաճանին դէմ կը գրգռին, և զայն դժոխոց աստուածներուն մատնելէ յետոյ, յարգանօք կ'ողջունեն այն դերը կատարող դերասանը: Թերեւս փառիզցիք գիտակցութիւն ունին թէ կեանքը տխուր խեղկատակութիւն մը լինելով, մեր ամենքս ալ անծանօթ Շէքսպիրէ մը գրուած խաղի մը կատակերգակներ ենք: Յետոյ նոր գայթակղութիւնք մէկուն և միւսին հեաաքրքրութիւնը կը շարժէին: Պ. Վոյսի անձնասպանութիւնն ու կտակն և Արտեմիսի ամուսնութիւնը մոռցուած էին՝ անհետացեալ գիսաւորներու պէս: Մինչեւ իսկ ոչ եւս կը խօսուէր Մաքսիմիլիէն Տանկլարի վրայ, որ ութ օր շարունակ ամենուն բերանն էր, և այն ութ աւուր մէջ չկար լրագիր մը, որոյ մէջ այդ հուշակաւոր ուղեւորին անունը քանի մ'անգամ չկարդացուէր: Օրաթերթը մանրամասնօրէն կը նկարագրէին անոր բնակած սենեակը, նախաճաշ ընելուն եղանակը, հագուելուն կերպը, քսանեչորս ժամու մէջ ծխած գլանիկներուն թիւը: Պատկերազարդ լրագիրք, աւելի կամ նուազ անխորհրդապահ, անոր պատկերն հրատարակելով կը շատանային: Իսկ լուսանկարիչներէ ոմանք՝ անոր պատկերը չունենալովի իրենց հաւաքածօյից մէջէն քիչ շատ անոր գլխուն նմանող գլուխ մը կ'ընտրէին: Բնականաբար յիշմամ ալ բաժանորդ եղած էր այդ սքանչազման: Արարուհիէն և անոր պաշտպանէն յետոյ ուրիշ հանրածանօթ անձի մը վրայ զբաղեցան, որ իւր կինն սպաննած էր տեսնելով որ սենեկապան ծառայներու գործածութեան մէջ մասնաւոր դիտումներ ունէր: Յետոյ անցան Տիկին Թրաքոֆի վրայ, որ յանկարծ անբերութեան հիւստեղութեան համաստեղութենէն: Հազար տեսակ դարմանալի պատմութիւններ կը պտըտցնէին: Ամենէն աւելի հաւատացուածն այս էր թէ քսանեչորս ժամու չափի դալտնածածուկ տեղ

մը քաշուեր էր արքայազուն իշխանի մ'ընկերակցութեամբ: Յետոյ մոռցուեցաւ Տիկին Թրաքոֆի փախուստն ալ, ինչպէս մոռցուած էին յիշմամ, Մաքսիմիլիէն, Վոյսի կտակն և Արտեմիսի ամուսնութիւնն:

Սակայն ֆաթէրին Մորէր և իւր դուստրը չէին մոռնար: Ապրիլ 23 և 26 թուականները մէկուն համար թողում, միւսին համար ազատութիւն էին: Տանը մտերիմները նշմարեցին որ վերապատուելի հայր Պրէմոն այժմ առաջուանէն աւելի յաճախ կուգար, և թէ Տիկին ֆէրսէն ոչ ևս մինակ կը թողուր զԱրտեմիս, որովհետեւ Տիկին Մորէր համբերատարութեան պէտք ունէր, աղջիկն ալ քաջասրտութեան: Արդարեւ, ժամանակէ մ'ի վեր, Արտեմիս խորհուրդ մը կ'երկնէր, զոր իւր լաւագոյն բարեկամուհւոյն իսկ չէր յայտներ: Ծանր մտահոգութիւն մ'ունէր: Շուրջն եղողները կարծեցին թէ հանդիսաւոր ժամը մօտեցած լինելով, իւր նոր ապագային վրայ կը խորհէր: Ոչ ոք կը կասկածէր թէ այդ ազնիւ արարածը կուիւ մը պիտի փորձէր: Մայրն, եւս քան զեւս տխրագգած, քիչ դուրս կ'ելնէր. միայն ճաշի ժամանակները կ'երեւնար, և իւր աղջիկը շատ չէր տեսներ: Պ. Մորէր, Մաքսիմիլիէն Տանկլարի ուղեւորութեան և գիւտերուն վրայ տեղեկագիր մը շինելու պաշտօն ստացած լինելով Աշխարհագրական ընկերութենէն, իւր սենեկին մէջ փակուած կ'ապրէր: Միայն Պ. Թանտրէ կը փայլէր՝ երբոր իւր վաղեմի տարվուհւոյն խուզարկու նայուածքէն չէր վախնար: Իւր բարեկամները քաջ գիտէին Մորէրի ապարանին մէջ ցոյց տուած աւերելոյթ պաղութեան պատճառը: Լըրամպուա թատրերգակը կը պնդէր թէ գեղանի մարքիզը « բացարձակապէս պատկերաչալչար (\*) եղած էր »: Այս հեշտա-

(\*) Մոռէ պատկերը շինելով շարչարել կամ այրել, այնպէս կարծելով թէ պատկերին տէրն ալ նոյն անցքը կը կրէ:

սէր մարդն , որ իւր տարիանաց մէջ մի միայն իւր ըզ-  
գայական բաղձանաց զոհացումը կը միտաւէր , քսան  
տարեկան երիտասարդի մը պէս կը սիրէր զԱրտեմիտ

— Մի՛ խաբուիք , կ'ըսէր Լըրամպուա իրիկուն մը  
խօսակցութեան մը մէջ . մարքիզն իւր կենաց մէջ ա-  
ռաջին անգամ իսկապէս սիրահարեալ է : Պիտի չհաւ-  
տա՞ք այս ըսածիս , կ'անիրաւիք . վասն զի ես լաւ կը  
ճանչեմ զայն : 1860ին մի և նոյն տարփուհին ունե-  
ցանք վեց ամիս . . . ուստի իրարմէ ծածկելու գաղտ-  
նիք մը չունինք : Տեսէ՛ք , երբէք հաւատարիմ չէ ե-  
ղած իւր կապակցութեանց մէջ . զինքը սիրող կանանց  
ամենն ալ խաբած է , մինչեւ իսկ Տիկին Մորէր , զոր  
տասն և հինգ տարի պահեց : Եւ զիտէ՛ք այս վերջինին  
երկարատեւ իշխանութեան գաղտնիքը :

Լըրամպուա ձայնը ցածցուց , ինչպէս կ'ընեն այն  
մարդիկ որ համարձակ մտածութիւն մը յայտնելու  
կը պատրաստուին :

— Զգայութեան ունակութիւն և ոչ ուրիշ բան : կը  
հաւաստեմ ձեզ թէ սիրաբ ընաւ դործ ունեցած չէ  
այդ կապակցութեան մէջ : Տիկին Մորէր իւր մարմնոյն  
ամենէն աւելի հաճոյ տարփուհին էր : վասն զի , վեր-  
ջապէս , այդ կինը գեղեցկութենէն զատ ուրիշ բան  
չունի . թանչի (\*) պէս գեղեցիկ է . խօսակցող չէ , այլ  
պարզապէս բերան ուսած կամ սերտածն արտասանող  
մ'է : Համարձակ գրուածներ կամ բարեպաշտական  
գիրքեր միայն կարգացած է , կրօնամոլութիւն ցո-  
փութեամբ ամոքուած : Բարի խորհուրդ մը տալու  
կարող չէ : Ամենէն զուարթ հոպիտը կրնայ տիրեցը-  
նել . . . : Ահա կը տեսնէք որ իրաւունք ունիմ և աս-  
պարէզ կը կարգամ ձեզ հակառակն ապացուցանելու :

Լըրամպուա իւր բոլոր թատրերգութեանց մէջ  
այոչափ դիտողութիւն ցոյց տուած չէր : Առաջին ան-

(\*) Անուշ Զուրի ձուկ մը :

գամ իւր կենաց մէջ թանտրէ մարքիզ սէր կ'զգար .  
այսինքն՝ առաջին անգամ մարմինէն տարբեր բան մը  
կը բաղձար կնոջմէ մը : Արտեմիտի վրայ անխառն կա-  
տարելութիւններ կը գտնէր , հոգւոյ վեհութիւն ,  
խղճի ազնուականութիւն , որ այդ մարմնական քաղա-  
քավարութեանց վարժուած մարդը կը շիթեցնէին :  
Զայն կնութեան առնչու մոլեգին փափաքն՝ իւր կը-  
րած վեհագոյն զգացմանց չափով կը մաքրուէր :

Ամուսնութենէն ութ օր առաջ , և Տիկին Մորէրի  
առջեւ ցոյց տուած կեղծ պաղութեան հակառակ ,  
քիչ մնաց որ օձիքը ձեռք պիտի տար : Արտեմիտ գե-  
ղեցիկ ձայն մ'ուռէր , և երաժշտական ընտիր հատ-  
ուածներ կ'երգէր : Աննա-Մարի խնդրեր էր իրմէ որ  
Պիզէթի « Հրօժեշտ Արաք տասնչականուհոյն » հռչակաւոր  
երգը նուագէ : Արտեմիտ այնչափ զգայուն ոգեւորու-  
թեամբ երգեց այս սքանչելի նուագերգութիւնն , որ  
թանտրէ մարքիզ սաստկապէս յուզուեցաւ , և մոռ-  
նալով իւր խոհեմ զգուշաւորութիւնը , բուռն խան-  
դով մ'իւր նշանածին մօտեցաւ : Բայց նա իսկոյն ու-  
րիշ հատուած մ'սկսելով՝ կանգ առնելու հարկադրեց  
զայն : Պ. թանտրէ հասկցաւ որ մեծ դժուարութիւն  
պիտի կրէր ինքզինք զսպելու : Գիտնալով Տիկին Մո-  
րէրի բուռն նախանձութիւնը , կը վախնար որ կռիւ-  
մը կը պայթի և ամեն բան կը կորնչի : Այս պատճա-  
ռաւ իւր այցելութիւնն ակամայ համառօտեց այն ի-  
րիկուն և կանուխ մեկնեցաւ : Տիկին Մորէր սովորա-  
բար իւր բնակարանը կը քաշուէր և Արտեմիտ մինակ  
կը մնար Աննա-Մարիի հետ , զոր Պ. Բէրսէն կէս գի-  
շերուն կուգար կը տանէր : Երկու մանկամարդուհիք  
կը սիրէին խօսակցութեան այդ յարմար ժամը , կէս  
լուսաւորուած մեծ դահլճին մէջ , մինչ դուրսէն փո-  
ղոցին շուինդներն ալ կը հանգարտէին և լուսնին արժ-  
գոյն ճառագայթները բարձր վարագոյրներուն մէջէն

ներս կը սարդէին : Ուստի մեծ եղաւ Տիկին Քէրսէնի զարմանքն , երբոր մարքիզին մեկնելէն յետոյ , և Տիկին Մորէրի մեկնելէն առաջ Արտեմիս ըսաւ անոր .

— Կը բարեհաճի՞ք շուտով պառկելու չերթալ և պահ մը խօսակցելու միջոց շնորհել ինձ , որուն պէտք ունիմ , մայր իմ :

Տիկին Մորէր արդէն մինչև դահլճին կէսն յառաջացած էր , կանգ առաւ և Արտեմիսի դառնալով , երկիւղախառն զարմանօք .

— Հետս խօսակցի՞ր կ'ուզես :

— Այո՛ :

— Ուրեմն ներքնասենեակս ե՛կ , հոն կ'սպասեմ քեզ :

Այս երկիւղն ու զարմանքն Աննա-Մարի ալ կ'զգար : Արտեմիս սովորականէն աւելի աժդոյն էր . կը տեսնուէր որ զօրեղ որոշում մ'ըրած էր : Գուշակեց որ իւր բարեկամուհին խնդիր մը պիտի առաջարկէր իրեն :

— Բան մը մի՛ առաջարկեր ինձ , վճռական փորձ մը պիտի ընեմ մօրս քով : Քանի օրէ ի վեր կը խորհիմ . թէ՛ պարտականութիւնս և թէ՛ խղճմտանքս կ'ըսեն ինձ թէ լաւ կ'ընեմ : Ի՞նչ օգուտ ունի իմայնել քեզ : Եթէ անյաջող ելնեմ , պիտի տրտմիս . իսկ եթէ յաջողիմ , վաղն ուրախութեամբ ձեր տունը պիտի վազեմ քեզ ծանուցանելու :

Եւ որովհետև Աննա-Մարի կը պնդէր , Արտեմիս կամացուկ մ'իւր աժդոյն ձեռքն անոր շրթանց վրայ դրաւ :

— Կ'աղաչեմ , մի՛ հարցաքններ զիս , արդէն քեզ համար գաղտնիք մ'ունենալուս վրայ կը ցաւիմ :

Տիկին Քէրսէն մեկնեցաւ յոյժ սրտատանջ : Ի՞նչ էր արդեօք այդ գաղտնիք . ի՞նչ էր այդ խօսակցութեան նպատակ , և ի՞նչպէս Արտեմիս բան մը չէր յայտնել իրեն : Արդարև քանի մ'օրէ ի վեր նշմարած էր աղջկան

մտահոգութիւնը , բայց հարսնիքին մօտենալուն կը վերագրէր : Այժմ կը տեսնէր թէ սխալած էր և թէ Արտեմիս կը ծածկէր իրմէ իւր ընթացքին նպատակը , զոր վճռական կը կոչէր : Ի՞նչ պիտի անցնէր մօրն և աղջկան միջև : Հակառակ իւր սրտատանջ հետաքրքրութեան , Տիկին Քէրսէն ոչ ևս հանցաքննեց իւր բարեկամուհին , և գորովանօք զայն համբուրելէ յետոյ մեկնեցաւ :

— Առ վաղիւ , այնպէս չէ՞ , ըսաւ :

— Առ վաղիւ :

Արտեմիս մեծ դահլճին մէջ անշարժ կանգնած էր , դուրսը բարձր , աչերը դատարկութեան մէջ խորասուզած : Հեռաւոր յոյս մը կը դիտէր , որ իւր մըտածութենէն անդին կը ծփար անբնական ստուերի մը պէս : Վերջապէս քաջասիրտ շարժում մ'ընելով դահլճէն դուրս ելաւ և Տիկին Մորէրի ներքնասենեակը տանող նրբանցքը մտաւ :

Տիկին Մորէր կ'սպասէր , վառարանին կրթնած , նոյն տեղն ուր քանի մը շաբաթ առաջ մարքիզն ընդունած էր : Մարդկային սիրտը ծայրեր ունի , զոր փիլիսոփայութիւնը շատ չհասկնար և հոգեբանութիւնն ալ չբացատրեր : Այս կին , որ չէր համարձակած աղջիկն իւր տարվաւորին զլանալու , որ ինքզինք տկար կը գտնէր այն մարդուն առջեւ , զոր կը վախնար թէ չէր կրնար այլ եւս տեսնել կամ բոլորովին կը կորուսանէր , այդ կին կ'ըսէր ինքնիրեն թէ Արտեմիս թերեւս պիտի ծանուցանէր իրեն թէ մարքիզին հետ ամուսնանալ չէր ուզեր , Անխոստովանելի ուրախութիւն մը կը ծագէր սրտին մէջ . այո՛ , խնդրուած տեսակցութիւնը չէր կրնար ուրիշ նպատակ մ'ունենալ : Ծանր պատճառ մը պէտք էր , որովհետև այս առաջին անգամն էր որ իւր աղջիկն իրեն հետ խօսակցիլ կը խնդրէր քիչ մը հանդիսաւոր կերպիւ : Բայց չէ՞ր

սխալեր արդեօք : Անշուշտ, եթէ այս ամուսնութիւն խզուէր, Պ. Թանտրէ ուրիշ ամուսնութիւն մը կը կնքէր, բայց գոնէ իրեն դէմ նեղանալու պատճառ մը չէր ունենար, և մինչեւ որ այն ամուսնութիւնը կնքուէր, իրենց յարաբերութեան կապերը կրնային նորոգուիլ : Այն ժամանակ կը յուսար իւր հին իշխանութիւնը նորէն ձեռք առնուլ, այն զգայական իշխանութիւնը զոր տասնեւհինգ տարուան յազուրդը չէր տկարացներ :

Արտեմիս ներս մտաւ : Նշախ լուսութիւն տիրեց, յետոյ մեղմաբար .

— Մայր իմ, ըսաւ աղջիկը, քանի մ'օրէն պիտի ամուսնանամ և այս տունէ պիտի մեկնիմ : Իրարմէ բաժնուելէ առաջ կ'ըզեմ հարցնել ձեզ թէ երբէք վշտացուցած եմ ձեզ :

Տիկին Մորէր ա՛յնչափ կարմրեցաւ, ո՛րչափ Արտեմիս տօգոյն էր : Առաջին խօսքը զայն սրտէն կը զարնէր . « Քանի մ'օրէն պիտի ամուսնանամ . . . » ո՛րչափ հեռի էր այն յոյսէն որուն կը փաթթուէր հինգ վայրկեան առաջ, հնչպէս խեղդուող մարդը ոստի մը կը փաթթուի : Սակայն շուտով ինքզինք բռնեց և պաղու-  
թեամբ .

— Լաւ չեմ հասկնար ձեր խօսքերն, ըսաւ : Բայց հոգ չէ, գոհ եմ ձեր այդ ընթացքէն : Ապահով եղիք, աղջիկս, դուք երբէք ցաւցուցած չէք զիս :

Արտեմիս ժպտեցուց այն սրտակէզ ժպիտով որ միշտ կը ծփար իւր շրթանց վրայ :

— Ուրեմն, մայր իմ, քանի որ ինձ դէմ վշտանալու բան մը չունիք, ինչո՞ւ համար զիս սիրած չէք երբէք . . . ինչո՞ւ համար զիս չէք սիրեր :

— Արտեմիս :

— Ո՛հ, թոյլ տուէք որ սիրտս բանամ ձեզ : Ես տասնեւինն տարու եմ, և ծնած օրէս ի վեր այս առաջին անգամ է որ կը համարձակիմ բանալ, երբոր

տղայ էի, չէի կրնար լաւ տեսնել թէ ի՞նչ յանցանք գործած էի արդեօք : Բայց վերջապէս կը հասկնայի որ զիս կը պատժէիք, որովհետեւ զիս ձեզնէ հեռի կ'աքսորէիք : Այդ բան զիս շատ վշտագնեց : Իմ ամեն հասակակիցներու մայրն իրենց քով էր, և երբոր չը լինէր, յայտնի էր թէ մեռած էր : Այն ժամանակ կ'երթային անոր գերեզմանը տեսնելով կը մխիթարուէին : Իսկ ես, ոչ կենդանի մայր մ'ունէի, ոչ փակուած գերեզման մը : Այն դժբաղդ վիճակս անտրտունջ տարի, վասն զի դեռ չէի կրնար խորհրդածել, և երբոր մէկը չխորհրդածեր, համբերութեամբ կը կրէ առանց բացատրելու : Մեծցայ, զիս վանքը դրիք : Կ'երդնում ձեզ, այն ինն տարուան մէջ ամեն օր ձեր այցին սպասեցի, և բնաւ չեկաք : Եւ որ աւելին է, զիս մինակ կը թողուիք, և երբ, ուր ուրեմն հաճէիք վանքէն դուրս հանել զիս, ձեր պաղութեանը կամ անտարբերութեանը կը զարնուէի : Դուք իմ մայրս էք, և կրնամ համբել ձեր համբոյրները տասնեւինն տարիէ ի վեր :

Արտեմիս ա՛յնչափ բաղցրութեամբ, ա՛յնչափ գորովալիւր ձայնով կը խօսէր, որ ֆաթէրինի սիրտն յուզեցաւ : Շարժում մ'ըրաւ դէպ առ դուստրն, որ կարծեց թէ կրցաւ կակղացնել ապառաժն, և իւր եռանդուն ու ազնուախոհ բնութեան խանդովն աւելցուց .

— Կ'աղաչեմ ձեզ, մայրի՛կ, թոյլ տուէք որ միտքս բացատրեմ ձեզ : Այնպիսի բաներ պիտի ըսեմ ձեզ, որ թերեւս շատ համարձակ համարուին աղջկան մը համար, բայց անժխտելի է որ երկուքս ալ տարօրինակ կացութեան մը մէջ ենք : Շատ մտածեցի նշանուած օրէս ի վեր, դուք կ'ատէք զիս՝ անշուշտ դառն յիշատակներ ձեզ յիշեցնելու պատճառաւ : Հայրս, զոր ես չտեսայ երբէք, թերեւս ծանրապէս վշտացուցած է ձեզ, և դուք՝ անոր դէմ ունեցած ատե-

լութիւննիդ իմ վրայ կը դարձնէք : Բայց ես անմեղ եմ, ես բնաւ գէշութիւն չեմ ըրած : Կ'աղաչեմ, մայրիկ, եթէ սխալ չէ այս կարծիքս, եթէ ճիշդ է դու չակութիւնս, մի՛ ոխաք ինձ դէմ, և մի՛ անիծէք զիս՝ ձեր այդ ամուսնութենէն ծնած լինելու դժբաղդու թեանս համար :

Տիկին Մորէրի դէմքը կապարի գոյն առած էր . շրթունքը կը դեղնէին, աչերն հուր կը ցայտէին : Կարծես թէ Արտեմիսի խօսքերը զարհուրելի յիշատակներ կ'արթնցնէին անոր սրտին մէջ : Ո՞վ գիտէ, թե՞ բեւս կը յիշէր այն գաղտնիքը, զոր Պ. Ֆօրէ կը ծածկէր Տիկին Վէրնիէէն և զոր Քաթէրին բողբոլին թաղուած կը կարծէր անցելոյն ստուերներուն տակ : Իւր առաջին սրտայուզութիւնն անցած էր, իւր առաջին խանդաղատանքը մարած էր արդէն : Կանգնած կը կենար, անշարժ, վառարանին կրթնած, և կարծես թէ դիւթական կոչմամբ աչքին առջեւ եկած էին Արտեմիսի ծնանելէն առաջ և յետոյ անցած անցքերն : Աղջիկը խաբուեցաւ մօրը սրտայուզութեան վրայ : Մարսափը՝ գորովոյ զարթնում կարծեց : Իւր սրտին միայն անսարով՝ Տիկին Մորէրի ոտքն ինկաւ, և համբոյրներով ծածկեց անոր դողահար ձեռները, զորս ետ քաշելու ուժ չունէր :

— Մայրիկ, մայրիկ, գոչեց, սիրէ զիս և պիտի պաշտեմ քեզ : Թեքեւս մինչև ցարդ քեզնէ չսիրուելու յանցանքն իմն է : Պէտք էր որ յաղթէի քու ընդդիմութեանդ, որովհետև իմ չգիտողած մէկ բանս քեզ կը բաժնէր ինձմէ : Փոխանակ այնպէս ընելու, երկչոտ և գոռոզ եղալ, այս պատճառաւ չես ճանչեր զիմ սիրտ, և չես գիտեր այն գորովոյ գանձերը զորս երկար ժամանակէ ի վեր մթերած եմ և քեզ կը պահեմ : Պէտք է որ ամէն բան խոստովանիմ քեզ : Կ'ըսէի Աննա-Մարիի թէ քեզ չէի սիրեր : Հայհոյութիւն մ'է

այս զոր հանեցի բերնէս, և որոյ համար ներում կը խնդրեմ քեզնէ խոնարհաբար : Ես պատրաստ եմ քեզ սիրելու : Ո՞րչափ պիտի ցաւիս կորուսեալ ժամանակին համար՝ երբոր իմ որդիական գորովս տեսնես :

Արտեմիս խոնարհելով և ինքզինք փոքրկացնելով պատասխանի մը կ'սպասէր որ չէր գար :

— Ես լաւ գուշակեցի, այնպէս չէ՞ : Շարունակեց Արտեմիս՝ հետզհետէ տաքնալով : Հայրս է պատճառ զիս չսիրելուդ : Պատասխան տուր ինձ, մայրիկ, կ'աղաչեմ :

— Կը սխալիք, սիրելի՛ Արտեմս, ըսաւ վերջապէս Տիկին Մորէր, ես ձեզ կը սիրեմ, ինչպէս որ մայր մը պարտի սիրել իւր զաւակն : Ես ձեզ խստութեամբ մեծցուցած եմ, չեմ ուրանար զայս . բայց ես միշտ այնպէս խորհած եմ թէ աղայքն իրենց ընտանեաց մէջ պահելն աղէկ չէ : Դուք աղով վարուց կանոնաւորութիւն մ'ստացաք, հաստատուն կրթութիւն մը, զոր չպիտի կրնայիք ունենալ՝ եթէ քովս պահէի ձեզ : Ուստի բնաւ ձեզ մեղադրելու բան մը չունիմ, բայց միայն թէ փախաքածիս չափ կրօնասէր չէք : Վերապատուելի հայր Պրէմնն, որոյ վրայ բարձր համարում մ'ունիմ, ինչպէս գիտէք, անցեալ օր կը դիտէր թէ դուք առաջնորդ չունէիք բնաւ : Այս բանը չպիտի ըսէի ձեզ՝ եթէ չտեսնէի այն վստահութիւն զոր կը ցուցնէք ինձ և որ շատ կը շարժէ սիրտս : Հաւատացէք ինձ, սիրելի՛ աղջիկս, թէ ես ոչ հրաման կուտամ ձեզ և ոչ իսկ խրատ, վասն զի գիտեմ որ պէտք չէ երբէք ծանրանալ այլոց խղճին վրայ : Իմ ըրածս պարզ դիտողութիւն մ'է, զոր պարտական չէք ինչեկաւ առնուլ, եթէ չյարմարի ձեզ :

Այս եղաւ ահա մօրը բոլոր պատասխանը : Այն գորովագին խանդաղատանաց, որք խեղճ աղջիկն այդ կնոջ ոտքը խոնարհեցուցած էին, մայրը կը պատաս-

խանէր՝ անոր վարուց կանոնաւորութիւնն ու կրթութիւնը գովելով, և ջերմակրօն չլինելը քննադատելով: Մարմարիոնը չէ՛ր կակղանար անոր խոնարհ գգուանքով: Սառայցը չէ՛ր հալեր անոր ջերմ ազերսանաց առջեւ: Արտեմիս ոտքի վրայ ելաւ՝ սրբելով իւր արտասուաց կայլակներն որք իւր տժգոյն այտերն ի վար կը սահէին:

— Ծնորհակալ եմ՝ ձեր դիտողութիւններէն, մայր իմ. պիտի ջանամ օգուտ քաղել անոնցմէ, մրմնջեց մեկնելով:

— Ո՛չ, ո՛չ, կեցի՛ք տակաւին, Արտե՛մ, ըսաւ Տիկին Մորէր, բան մը պիտի հարցնեմ ձեզ:

Աղջիկը սրտակէզ զարմանքով մ'իւր մօր նայեցաւ: Իւր ըսած այն խօսքերէն, մօրը առած այն պատասխաններէն յետոյ՝ տակաւին ի՞նչ խօսք կրնային ունենալ միմեանց հետ: Արդեօք սրտին մէջ կրած վէճըն էր, արիւնալից վէճը, զոր Քաթերին նորէն կը բանար: Բայց Արտեմիս երբէք այնչափ գեղեցիկ երեւցած չէր: Տիկին Մորէր նախանձելով կը դիտէր անոր մաքուր դէմքն, սքանչելի աչերն, արձանատիպ իրանը, ժողկալիթիթ մանկամարդութիւնը: Ինքն ալ ունեցած էր գեղեցկութեան այդ գանձերն, և ինչ որ ինք յաւիտենապէս կորուսած էր իրեն համար, իւր աղջկան վրայ, իւր հակառակորդին վրայ կը գտնէր: Նախանձը սրտէն խածաւ զինք:

— Ձեր ամուսնութեան վրայ է հարցնելիքս, շարունակեց Տիկին Մորէր: Երբոր Պ. Թանտրէ ձեզ ամուսնութեան խնդրեց, ես ազատ թողուցի ձեզ, կը սիրէ՞ք մարքիզը:

— Ո՛չ:

— Ուրեմն ինչո՞ւ կը հաճիք ամուսնանալ անոր հետ: Չեմ հասկնար:

Արտեմիս տխուր նայուածք մը ձգեց իւր մօր վրայ:

— Վասն զի շուտով դուրս ելնել կ'ուզեմ՝ այս տունէն, ուր օտարական մ'եմ ես: Առաջին դէմն ելնողին հետ կ'ամուսնանամ, որպէս զի աւելի շուտ մեկնիմ տտուից: Եւ շատ բնական է այս, որովհետեւ դուք չէք սիրեր զիս և երբէք չուզեցիք որ ես ալ ձեզ սիրեմ:

Եւ գլխովն ահնածարար ողջունելով իւր մայրը, դուրս ելաւ: Երբոր հեռացաւ, յաղթական ժպիտ մը փայլեցաւ Քաթերինի շրթանց վրայ:

— Չսիրեր եղբր զայն, մրմնաց:

Սակայն Արտեմիս իւր սենեակը գնացած էր: Ա՛հ, ամեն ժամանակէ աւելի կ'ուզէր այս ամուսնութիւն, որ իւր ազատութիւնը պիտի լինէր: Կը դողար տակաւին իւր մայրն այն անտիճան անողոք գտնելուն վրայ, չկրնալ թափանցելուն վրայ մինչև այն սիրտ՝ որ խստիւ փակեալ կը մնար իւր դէմ: Առաջին անգամ իւր գլխին մէջ կը դարձունէր ու կը դարձունէր այդ անբացատրելի հակակրօնութեան պատճառները: Հագարերորդ անգամ կը փնտռէր թէ ի՞նչ էր իւր յանցանք: Չայս խորհելով, նախ մերթ ընդ մերթ, յետոյ միշտ և երկար ժամանակ, հասած էր այն եզրակացութեան թէ մեծ յանցանք մը, թերեւս ոճիր մը գործած էր ժամանակաւ իւր հայրն: Եւ արդարեւ ըստ բաւականի տրամաբանական խորհրդածութիւն մը կ'ընէր: Ընկերութեանց մէջ Օրիորդ Մորէր կը կոչուէր, և սակայն իրօք Օրիորդ Սորպիէ էր: Իւր հօրուն իսկապէս որդեգրած էր զինք, կամ թէ առ շնորհո՞ւկս անոր անունը կը արուէր իրեն: Ամուսնութիւնը ծանուցանող պաշտօնագրին մէջ՝ «Արտեմիս Մ. Մորէր» անուանած էին զինք: Անշուշտ մայրը ծածկել կ'ուզէր Սորպիէ անունն: Ինչո՞ւ համար արդեօք, եթէ ոչ՝ արան մը կար այդ անունն վրայ: Եւ որպէս զի մասամբ մ'անհետանար պաշտօնական գրութեան մը մէջ, հարկ էր որ Տիկին Մորէր մեծ ազդեցութիւն



ներ ի գործ դնէր : Չէր գիտեր թէ տասնեւչորս տարի առաջ, կայսրութեան վերջերուն մօտ, Պ. Թանտրէի հօրեղբայրներէն մին քիչ մը ժամանակ դատական նախարար եղած էր : Այն միջոցին Պ. Թանտրէ աշխատելով յաջողած էր կայսերական հրամանագիր մը ձեռք բերել, որ իւր տարփուհւոյն դուտեր քաղաքային վիճակը կը ճշգէր :

Եւ երբ Արտեմիս կը մտածէր Պ. և Տիկին Մորէրի մէջ տիրած հակակրօթեան վրայ, հոն ալ իւր հայրը դատապարտող ապացոյց մը կը տեսնէր : Անշուշտ իւր գիտնական հօրուն զղջացած էր Պ. Մորպիէի այրին ամուսնութեան առած լինելուն վրայ : Սակայն Արտեմիս չէր համարձակեր վճռել թէ արդեօք իւր հայրը դատապարտելի՞ էր թէ անպարտ : Անշուշտ Պ. Մորէրի չէր վաղբեր իւր ամուսնոյն խէթիւ նայիլ նախորդէրկանը պատճառաւ . բայց աղջիկն՝ այդ մարդը չսիրելուն համար՝ չէր զարմանար այդ բանի վրայ : Այսպէս, հոգեբանական անբացատրելի երեւոյթով մ'Արտեմիսի կասկածներն իւր ամեն մերձաւորաց վրայ կ'իյնային, բացի մօրմէն : Կը տեսնէր որ մայրը բարեպաշտ էր, և ժամանակ ժամանակ այն բարեպաշտութիւնն իբր սկզբնապատճառ կը նկատէր իւր նկատմամբ ունեցած պաղութեան : Առաւել յօժարամէտ էր ամեն մարդ ամբաստանելու՝ քան զիւր անագորուն մայրն : Այս դժնդակ տեսակցութեան գիշերը մինչեւ լոյս Արտեմիս դառն արտասուք թափեց : Իւր կասկածները կը մարմնանային, իւր դաղափարներն յստակապէս կը ծրագրուէին : Մօրն իւր աղջկան դէմ՝ հակակրօթեան պատճառն այս էր որ մին ծանր անցեալ մը կը յիշեցնէր միւսին : Պ. և Տիկին Մորէր սիրով չէին ապրիր իրարու հետ, վասն զի երկրորդ այրը չէր ներեր զառաջինը : Սխալը շատ անգամ անողորբապէս տրամաբանական է : Արտեմիս չէր տեսներ

զայդ տրամաբանութիւն և անգամ մ'ալ կ'ըսէր ինքնիրեն .

— Հայրս մեծ յանցաւոր մ'եղած է, բայց ի՞նչ ոճիրով :

Այս հարցման չէր կրնար պատասխանել :

Հրաւիրեալք իրարու ետեւէ կը հասնէին և լայն սանդուղին մարմարեայ աստիճաններէն վեր կ'եղնէին, կանայք գեղեցկապէս հագուած և զբօսնու պատրաստ . այրերն ալ երեկոյթի կանոնաւոր զգեստներով, այնպիսի մարդոց երեւոյթ մ'ունէին, որք իրենց զուարճութեան համար չէին երթար հարսանեկան պարահանդէս մը : Ծագկանց մեծամեծ կողովներ՝ նըրբանցըներն ու նախասենեակները կը լցնէին իրենց քաղցր բուրմամբ, որք կանանց անուշահոտութիւններուն հետ խառնուելով՝ դուրսէն ներս մտնողները կ'զգլխէին : Մերթ ընդ մերթ նուագածուաց եղկացեալ երգերը մէկէն ի մէկ կ'ոգեւորէին երբոր դահլճին դռները կէս կը բացուէին դիպուածով . յետոյ դուրսը կը վերսկսէր ապարանքին բակը մտնող կառքերուն խուլ շուխուր : Համայն փարիզ հոն էր : Տիկին Մորէր, իւր պարահանդէսի հրաւերներով ամենուն հետաքրքրութիւնը կ'արծարծէր : Արկածն իւր նորանշանութիւնը վերստին կը գտնէր . գայթակղութիւնը նորէն միտքերը կը գրաւէր : Շատ մարդիկ, որք սովորական ժամանակներ իրենց տեղէն չէին շարժեր, միմիայն այս մայրն ու այս աղջիկը զննելու համար կուգային : Չէին գիտեր թէ իրերն ինչպէս անցած էին, չէին գիտեր թէ Քաթերին ընդգիմանալէ յոգնելով հաւանած էր այդ ամուսնութեան, Արտեմիս ալ ապրելէ վհատելով յանձն առած էր : Հասարակութիւնը

բիրա կերպիւ կատարուած իրողութիւնները չքններ  
 երբէք, այլ կրաւորաբար կ'ընդունի: Եթէ մեկնել  
 ջանայ, մեծ գիծերէն կ'սկսի: Գնացէք հազար մար-  
 դէ խնդրեցէք որ աշխարհային հոգեբանութիւն քնեն:  
 Մի քանին միայն Տիկին Վէրնիէի և Մորիս Ժանարո-  
 նի թուրքերանութեան շնորհիւ գիտէին թէ Տիկին  
 Մորէր երկու անգամ ամուսնացած էր, և թէ առաջին  
 այրն ինքզինք սպաննած էր: Բայց այս պատմութիւն  
 մեծ յաջողութիւն մը չէր գտած: Ի՞նչ կը նշանակէր  
 անցեալն այնպիսի մարդոց առջև՝ որք ներկայն կը  
 տեսնէին: Որո՞ւ հոգն էր այդ հին ամուսնութիւնն և  
 այդ անձանօթ անձնասպանութիւնն, երբոր իրենց  
 առջև ուրիշ թատերախաղ մը կար աւելի հետաքրք-  
 րաշարժ:

Մանաւանդ կանայք ախորժ կ'զգային ենթադրե-  
 լով որ այս ապարանին պատերուն միջև ապրող ող-  
 բերգութիւն մը կար: Փոքրիկ վեպ մը կը պատմէին  
 միմեանց, յոյժ ճշմարտանման, ուր քաթէրին և Ուր-  
 տեմիս փետրայի և Արեկիոյ դեր կը խաղային: Ոմանք  
 կը հծծէին իրարու ականջէ վար թէ ազդիկը մուկ-  
 նաբար կը սիրէր զմարբիզն, և թէ Տիկին Մորէր՝  
 գայթակղութենէ փախնալով՝ կը զիջանէր: Ուրիշներ  
 ալ կը պնդէին թէ Արտեմիս ամեն բան գիտէր և գիտ-  
 նալով կը գործէր: Բնականաբար, շանրիէթ Ռոշէզ  
 երկրորդ դասուն մէջ էր: Իբրեւ տանը մտերիմ, լաւ  
 տեղեկութիւն ունեցող կը կարծուէր:

Տնկանոցին մէջ նստած, պաշտողներու ակումբի մը  
 մէջ, որք անոր նայուածքն իրենց վրայ ձգելու համար  
 կը մեցէին, հանդարտութեամբ կը զրպարտէր, հան-  
 դերձ այն քաղցր ժպտով՝ որ միշտ կ'ընկերակցէր իւր  
 քարուականաց:

— Կը հաւատարմ ձեզ թէ շատ զօրեղ է այդ գե-  
 ղեցիկ Արտեմիս: Սիրելիս, մի՛ վատսհիք այն կա-

նանց՝ որք անմեղութեան դէմք ունին: Շատ վտան-  
 դաւոր արարածներ են: Չարութիւնը զուարճութեամբ  
 կամ մանաւանդ անհոգութեամբ կը կատարեն: Այս  
 պատճառաւ ոչ ոք իրաւունք ունի բարկանալու անոնց  
 դէմ:

— Ուրեմն դուք կ'ենթադրէք թէ օրիորդ Մորէր...

— Ես բան մը չեմ ենթադրեր, բնաւորութիւն մը  
 կը բացատրեմ ձեզ, և ոչ ուրիշ բան: Այնպիսի բա-  
 ներ կը վերագրեն ինձ, զորս ըսած չեմ երբէք, և թրշ-  
 նամիներս օգուտ կը քաղեն հաստատելու համար թէ  
 չարամիտ եմ: Ես Արտեմիսի վրայ չար չեմ խորհիւր  
 երբէք: Այդ սիրուն աղջիկն երկար ժամանակ է Վեր  
 կը ճանչեմ ես: Նայեցէք մայրը, Տիկին Մորէր... Ե-  
 րեսին կարմիր քսած է, որպէս զի շատ տոգոյն չե-  
 րելի: Բայց լաւ չընէր ինքզինք ներկել... խեղճ  
 կին:

Եւ այս կարեկցութիւնը կը կէտադրէր այն նուրբ  
 քմիծաղով, որ կը սուլէր և չէր թրթռար: Ոչքն  
 իւր շուրջը պտըտցուց, յետոյ իւր փաղաքուշներէն  
 միոյն՝ Լուի Մարէշալի՝ ցոյց տալով երիտասարդ մը,  
 որ նարնջենիի բարձր սնտուկի մը կըթնած կը խօ-  
 սակցէր Պ. Մորէրի հետ:

— Այդ դէմք տեսած եմ ես տեղ մը, ըսաւ:

— Շատ հնարաւոր է, սիրելի՛ Տիկին, այդ դէմք  
 ամիսէ մ'իվեր շատ տեսնուեցաւ պատկերազարդ լը-  
 րագրաց մէջ:

— Մ, նշանաւոր անձ մ'է:

— Արդարեւ:

— Անունն ի՞նչ է:

— Մաքսիմիլիէն Տանկլար:

Հանրիէթ քանի մը վայրկեան մտախոհ մնաց, ու-  
 ղեւորին գեղեցիկ դուրսը դիտելով: Պ. Մորէրի հետ  
 խօսած ժամանակ աչերը կ'ողեւորէին և բոցեր կ'ար-  
 ձակէին:

— Բարեկամութիւն մ'ըրէք ինձ, ըսաւ Ղուի Մա-  
րէշալին: Իրիկուն մը ճաշ ըրած ժամանակնիս դուք  
չէիք ըսողը թէ Պ. Տանկարի դպրոցական բարեկամն  
մըն էիք:

— Այո՛, Տիկին:

— Ուրեմն ներկայացուցէք զիս, կ'աղաչեմ: Մը-  
տածեցէք անգամ մը, մարդ մը որ թոմարութու տե-  
սած է. այս բանը զիս կը փոխէ անոնցմէ, որք թոր-  
թոնիէ զատ ուրիշ բան տեսած չեն:

Քանի մը վայրկեան յետոյ ներկայացումն եղաւ, և  
Մաքսիմիլիէն կարմրածաղիկ նշաննոյ մը տակ նըս-  
տաւ Հանրիէթի քով:

— Ես ձեր վրայ սքանչացողներէն մին եմ, պարոն:  
Ձեր ուղեւորութեանց վրայ հրատարակած նոր գիրքն  
ստուգիւ զգածեցուց զիս, և այժմ ես այ խենդն ե-  
ղած եմ այդ Ափրիկէի՝ զոր դուք այնչափ կը սիրէք:

Հանրիէթ Ռոչէզ գրքին առաջին երեսն անգամ կար-  
դացած չէր, և ա՛յնչափ կարեւորութիւն կուտար Ափ-  
րիկէի, որչափ Շանդ-Էյիղէի բոլորակին. բայց կ'ուզէր  
հաճոյ լինիլ Մաքսիմիլիէնի: Այդ երիտասարդին վրայ  
համակրութիւն մը կ'զգար՝ առանց պատճառը գիտ-  
նալու. թերեւս այն պատճառաւ որ ուրիշներու չէր  
նմաներ: Այդ ազնուապետական բնութիւն կարծես  
թէ ամեն օր տեսնուած փրօն էակներուն զեղէն չէր:  
Մաքսիմիլիէն առանձնութեան մէջ շատ ապրած լինե-  
լուն՝ կասկած չէր ըներ կանանց վրայ: Պարզմտաբար  
հաւատաց որ այդ գեղեցիկ, նուրբ և բանաստեղծա-  
կան երեւութով արտարածն հրապուրեալ էր խորհր-  
դազգած Ափրիկէի պատմութիւններով: Ուստի ա-  
ռանց աղաչել տալու՝ քաղցրութեամբ զիջաւ Հանրիէ-  
թի խնդրանաց: Այս վերջինին ուրախութիւնն ան-  
նկարագրելի էր: Գիտէր որ մարդու մը հաճոյ լինե-

լու համար պէտք է անոր աւելի սիրած նիւթին վրայ  
խօսիլ:

Արտեմիս ալ հոն եկաւ զուգապարէ կէս յոգնած,  
թիկնաթուռի մը վրայ նստաւ, և իւր հետ պարողէն  
չնորհակալութեամբ բաժնուելով՝ ականջ նուիրեց  
Մաքսիմիլիէնի խօսքերուն: Հանրիէթ չէր տեսներ զայն,  
Այլիկը մտիկ կ'ընէր: Երիտասարդն իւր սովորական  
զգուշաւորութիւնը զսպելով կը խօսէր. անապատը կը  
նկարագրէր, ուր անփոփոխելի հօրիգոնն անհունու-  
թեան մէջ քաշուած գորշ գիծ մ'էր: Իւր այն տեղի  
կեանքը կը պատմէր, ծարաւուտ երկրին տխրութիւն-  
ներն ու թմրութիւնները, աւազներն, ուր անգղնե-  
րու անչարժ ամբոխին բնակած անհեթեթ պուպաք-  
ները անկուած էին: Կը պատմէր Ափրիկէի գիշերնե-  
րուն լուսաւորութիւնն և տարօրինակ հրապոյրը, դաշ-  
տերուն զարհուրելի լութիւնն և ոսկեզանակ երկ-  
նից եզրը սողացող ճահիճներուն դեղին ծուխերը,  
պարտասիչ ուղեւորութեանց օրերը, դողդոջուն հո-  
րիզոններու ցոլացումը, թոմարութու և Սէկու-Քու-  
րոյ քաղաքաց հեռաւոր տեսիլն հանգերձ իրենց սպի-  
տակ հողէ պալարներով: Յետոյ կը նկարագրէր մար-  
դոց սովորութիւնները, կանանց անասնական վիճակն,  
որք գետնին վրայ նստած, փայտէ սանդերու մէջ ե-  
զիպտացորեն կ'աղան. նոյնպէս անոնց պարերը, եր-  
գած երգերը, մերկ փորերնին լուսնի լուսով տատա-  
նելը, այլ և այլ ցեղերու միմեանց հետ մարտնչելը,  
բանակի մը զարմանալի անցքը, զգեստուց և սպա-  
ռազինութեանց երվներանգ գոյներու խառնուրդը,  
պղինձներուն փայլը, ամբողջ ազգի մը յառաջխաղա-  
ցումը, կանանց կաղկանձիւնը մոլեգնեալ դեւերու  
պէս, թմրուկներու վայրագ և տխուր ներդաշնակու-  
թիւնը: Կը նկարագրէր ներքին գետերու վրայ նաւա-  
կով ըրած երկար ուղեւորութիւնները, անցուցած տօ-

Թակէզ ժամերը կտաւէ վրաններու ներքեւ, որք միշտ կը ջրուէին և շողի կը ծխէին, գետերուն եզերքն անսահմանաբար պարզուած միեւնոյն անտառները, միեւնոյն եղտիւրները, միեւնոյն անապատները, չոր եզանակին երկար ամիսներէն յետոյ մահուան ամիսները, յետոյ կենաց յանկարծական վերադարձը, գարնանային ջրոց հոսմամբ՝ տնկոց և ծաղկանց արագաբար աճումը, անհեթեթ և գաղանական ծաղիկներ, որոց անասնականութիւնը մահացու թոյներ կը բուրէ :

Բանաստեղծութեան հրապոյրն ա՛յնչափ մեծ է, որ Հանրիէթ, հակառակ իւր չորութեան, տարտամ ազդեցութեամբ մը կ'ըզգածուէր : Երբէք այսպէս խօսուած չէր իրեն : Ոչ միայն գեղեցիկ, դեռատի, հանճարեղ էակի մ'առջեւ կը գտնուէր, այլ և մարդու մը : Իսկ Արտեմիս զմայլմամբ մտիկ կ'ընէր, դիւթուած անոր երաժշտական ձայնէն, անոր յափշտակիչ և գունադեղ նկարագրութենէն, որ զինքը կեղծ Սփրիկէներէն հանելով իսկական Սփրիկէ կը տանէր : Հանրիէթ հռչակաւոր մարդ մը կը տեսնէր. Արտեմիս բանաստեղծ մը կը գուշակէր այդ բանաստեղծութեան տակ : Զարմանալով այս սրտայուզութեան վրայ, որ զինքը կը բռնէր, Արտեմիս կամացուկ մը հեռացաւ դէպի տնկանոցին խորը :

— Շատ տխուր բան մ'եղած պէտք է լինի ձեզ համար, Պարոն, ըսաւ Տիկին Հանրիէթ Ռոչէզ պահ մը լռութենէ յետոյ, այդպէս առանձին ապրիլ : Հորկաւ շատ կը ձանձրանաք :

— Ո՛չ, պատասխանեց Մաքսիմիլիէն ժպտելով :

— Քաջասրտութիւն է :

— Ամենեւին. ես ընաւ արժանիք չունիմ այդ մասին : Ուրիշներու հետ եղած ժամանակ երբեմն ձանձրացած եմ, բայց ես ինձ հետ մինակ եղած ժամանակ երբէք :

— Ուրեմն ընտանիք չունիք :  
Բազէի թուիչին պէս արագ ստուեր մը սահեցաւ Մաքսիմիլիէնի ճակատին վրայէն :

— Գուցէ անխոհեմութիւն է ըրածս, բայց ես դժուարաւ կը հաւատամ, որ դուք կարենաք կատարելապէս երջանիկ լինիլ այդ հեռուօր արշաւանաց մէջ : Անհնարին է որ ձեզ պէս մարդ մը Գրանսայի հեռկազուած չլինի աւելի ամուր և աւելի քաղցր կապով : Անկեղծ եղիք, ճշմարիտ է :

Փարիզցի մը պիտի դարմանար այս հարցման վրայ, որ ոչ միայն տարօրինակ, այլ և անպատեհ էր : Մաքսիմիլիէն, հոգածութեան փորձ մը միայն համարեցաւ և ժպտելով :

— Յոյժ ծաղրելի պիտի երեւիմ ձեզ, Տիկին, ըսաւ : Բայց այդ ձեր ըսած կապերն երբէք գոյութիւն չունեցան ինձ համար : Ես քիչ մ'իբր վայրենի մեծցայ Պրըթայնի մէջ, մեծ հօրս քով, որ խտտակրօն ծերունի մ'էր, գլխէն մեծամեծ վիշտեր անցած : Զիս իւր տխուր կենաց մէջ մեծցուց : Երբոր շափահաս եղայ, աշխարհի մէջ նետուեցայ սիրահար իրէականին, արկածներու հետամուտ, վրանի տակ պառկելով, հրացանը քովս : Կը հասկնաք որ չէի կրնար կարելութիւն ընծայել պատահական կեղակարծ սէրերու : Բոց մ'անցաւ Հանրիէթի աչերուն մէջէն :

— Բայց վերջապէս, ըսաւ սա, ձեր հասակին մէջ եղող մարդ մը սիրել և սիրուել կուզէ : Գուք յաջողութիւն ձեռք բերած, փառք վաստկած էք : Շատ շանցած՝ պիտի տեսնէք թէ այդ աղամանդները կեղծ են, և թէ ոչինչ կրնայ հաւասարել իրարու կրթնոց երկու սիրտերու արբեցութեան : Ես իրաւունք ունիմ այսպէս խօսելու : Իմ ամուսինս, որ ինձմէ շատ աւելի տարւոք է, կրնար հայրս լինիլ : Շատ անգամ կ'ըսեմ ես ինձ թէ բոլոր հարստութիւնս և կենացս

տասն տարին կուտամ, որպէս զի սիրոյ երկնային սըր-  
տայուզութիւնը գո՛նէ վայրկեան մը ճանչեմ:

Հանրիէթ իւր այս փոքրիկ նուագը մեծ ճարտա-  
րութեամբ ծախեց. ամեն երանգներ կը գտնուէին  
անոր մէջ: Իւր սովորական նենգաւոր ժպիտին տեղ  
այս անգամ պաշտելի տխրութիւն մը կեղծեց: Մաք-  
սիմիլիէն ներքին յուզում մ'զգաց, այս կին զինքը  
կը հանգստացնէր այն թեթեւամիտ փարիզուհիներէն,  
որ իւր գալէն ի վեր իւր դէմ կ'ելնէին: Եթէ գիտ-  
ցած լինէր ճշմարտութիւնն այն ամուսնոյն վրայ, որ  
«Հանրիէթէն շատ աւելի տարւոք էր, և կրնար անոր  
հայրը լինիլ»: Կենդանութեանը ժամանակ երսունեւ-  
հինգ տարեկան գեղեցիկ մարդ մ'էր, լայն ուսերով,  
և յոյժ քիչ պղատոնական բնաւորութեամբ: Հանրիէթ  
տեսաւ իւր արտադրած տպաւորութիւնն, և իբր ճար-  
տար ռազմագէտ՝ չհամարձակեցաւ յառաջ վարել իւր  
յաջողութիւնը, վախնալով որ վտանգի մէջ կը ձգէ:

— Կը հաճի՞ք ձեր թեւն ընծայել ինձ, «Էբէլ Պարոն»:  
Բարեկամուհիներէս մին կը կոչէ զիս. երկուշաբթի  
օրը տունս եմ, բայց ուրիշ ամեն օր ալ հոն եմ մինչև  
ժամ 3, և ուրախ պիտի լինիմ եթէ յիշէք:

Մաքսիմիլիէն զարմացած և միանդամայն հրա-  
պուրուած՝ հնազանդեցաւ: Երկարօրէն ետեւէն նա-  
յեցաւ և մրմնջեց.

— Գեղեցիկ է . . . :

Պարահանդէսը կը շարունակէր՝ առանց նշանաւոր  
միջադէպի: Միայն կը նշմարուէր, որ Տիկին Մորէր,  
ինքզինք զսպելուն հակառակ, շատ կը տատանէր, և  
կարծես թէ ինքզինք զբօսցնելու կ'աշխատէր: Ստէպ  
մարքիզին կը նայէր, որ վերջապար կը խաղար Արտե-  
միսի հետ: Այն ժամանակ դառն սարսուռ մը կը  
կծկէր լքեալ տարփուհւոյն երեսն. իւր այտերը ծած-  
կող սնդոյրին տակ կը դեղնէր. Պ. Թանտրէ ոչ եւս

ինքզինք զսպելու փոյթ ունէր. նշանածին գեղեցկու-  
թիւնը զինք կ'զգլխէր: Այդ հասուն և ինքզինք լաւ  
կառավարել գիտցող մարդը սրտին մէջ երիտասար-  
դական արեան աւիւն ունէր: Շրացմունք կուգային  
իւր վրայ երբոր կ'ըսէր ինքնիրեն.

«Այս պայծառագեղ կոյսն իմն է. այս ճկուն մար-  
մինն իմ սեփականութիւնս պիտի լինի. այս անարատ  
չրթունքն ես պիտի համբուրեմ, այս սրտին մէջ ես  
պիտի սէր արթնցնեմ»:»

Իսկ Արտեմիս, այնչափ հանդարտ, որ կարծես թէ  
ուրիշի մը հարսանեկան պարահանդիսին ներկայ էր,  
բան մը չէր տեսներ, բան մը չէր գուշակեր:

Կը սիրէր զուգապարն և պարզաբար անձնատուր կը  
լինէր իւր զուարճութեան, և խորհելով որ շատ չանցած  
պիտի մեկնէր այս անիծեալ տունէն, և իւր երազած  
նոր ապագայն պիտի բացուէր վերջապէս իւր առջեւ:  
Երկու երեք անգամ նշմարեց որ մայրն ատելի աչօք  
իրեն կը նայէր. բայց մեղադրեց իւր այս գաղափարն.  
արդարեւ Տիկին Մորէր զինքը չէր սիրեր, բայց ան-  
տարբերութեան ու ատելութեան միջեւ մեծ հեռաւո-  
րութիւն կայ: Օրիորդն այնչափ զուարթագեղ փայլ  
մ'ունէր, որ Տիկին Քէրսէն հիացաւ: Վերջապարի  
դարձուածներէն միոյն մէջ Արտեմիս և Աննա-Մարի  
(Տիկին Քէրսէն) քովէ քով գտնուելով, վերջինը կամա-  
ցուկ մ'ըսաւ իւր բարեկամուհւոյն.

— Ստուգիւ ուրախ դէմք ունիս այս իրիկուն:

— Շատ հնարաւոր է, պատասխանեց Արտեմիս  
ժպտելով: Սիրտս թեթեւեցած է, վասն զի ամեն վիշ-  
տերս վերջացած են:

Աւա՛ղ, չէին վերջացած, այլ կ'սկսէին:

Կէս գիշերն հինգ ժամ անցած էր, այն գորշախառն  
լոյսն, որ ոչ գիշեր էր, ոչ ցերեկ, և թափանցիկ փոշիի մը  
պէս պարտիզին ծառերուն վրայ կը ծաւալէր տարտամո-

ըէն : Զահերն ու կանդեղներն աղօտանալ կ'սկսէին : կանայք երբէք այնչափ գեղեցիկ չեն , որչափ պարահանդիսին այն ժամուն , ուր կէս պարտասեալ , առաւել պարզութիւն , առաւել մարգարտափայլ գոգունութիւն մ' և առաւել քաղցր բան մ'ունին իրենց նուազկոտ աչերուն մէջ : Օդը ծանր անուշահոտութեամբ բեռնաւորուած է , որք վերածխելով արագապէս կ'ղգլխեն ուղեղները : Հագուստներն ու գլխու գարդերն իրենց առջի թարմութիւնն ու շուքը կորուսած են . մերկ ուսերը կը դնդչեն շողշողուն աղամանդներուն տակ , և քանի մ'ուշիմ մարդոցմով զուարթացեալ թեթեւ ճաշ մը բաւական է պարահանդէս մ'աւարտել ամենափափուկ զուարճութեամբ :

Արտեմիս նստած էր ընդ մէջ Մարքիզին և Մարքիզին սիմփիէն Տանկլարի զոր իրեն ներկայացուցած էին : Օրիորդն ոչ նազաց , ոչ շփոթեցաւ , այլ անկեղծաբար իւր ձեռքն երկնցուց ուղեւորին : Խոստովանեցաւ թէ շատ կը փափաքէր զինքը ճանչել , գիտնալով որ Պ. Մորէր մեծ համարում ունէր իւր վրայ : Յիշեցուց իսկ ժպտելով թէ քանի մ'օր առաջ իրարու հանդիպած էին : Ծանօթութիւնը շուտով կապուեցաւ , այնպէս որ այս ճաշի միջոցին Մարքսիմիլիէն և Արտեմիս գրեթէ շարունակ խօսակցեցան : Մարքիզը գիտցաւ ծածկել զգացած գոգոնութիւնը , բայց տիկին Հանրիէթ Ռոշէզ ոչ : Հետզհետէ կը կարմրէր ու կը գեղնէր : Կարծես թէ Արտեմիս բան մը կը գողնար անկէ : Մարքսիմիլիէն , բանէ մը տեղեկութիւն չունենալով , այս խօսակցութենէն զգացած հաճոյքին անձնատուր եղած էր : Եթէ քիչ մ'աջ կողմը նայէր , պիտի տեսներ որ Հանրիէթ իւր պաղ աչերն Արտեմիսի վրայ տնկած էր :

Պարամուք առաջարկեցին պարը շարունակել ճաշէն յետոյ , բայց հանդիսականք խումբ խումբ կը մեկնէին , և շատ շանցած՝ տանը մտերիմները միայն

մնացին . Քաթերին շղագրգիւ գէմքով մը բռնեց Պ. Թանտրէի թևէն և տնկանոցին քովի ճեմելիքը տարաւ : Երբոր մինակ մնացին հոն , երեսին գոյնը նետած , բարկացայտ , սպառնալից աչօք .

— Դուք սո՛ւտ խօսեցաք ինձ , ըսաւ , դուք կը սիրէ՞ք զայն :

— Քաթերին . . .

— Զիս խաբելու փորձ մի՛ ընէք : Ա՛ , դուք լաւ խաղցիք ձեր պժգալի կատակերգութիւնը : Հիմա շատ ուրախ պէտք է լինիք ձեր այդ սատիճան յաջողելուն վրայ :

Եւ երբ մարքիզն ընդմիջել կը փորձէր զարհուրելով այս տեսարանէն և վախնալով որ մէկը կը լսէ , կամ Արտեմիս կ'իմանայ այս կեղտոտ գողտնիքը .

— Լռեցէք , ըսաւ Քաթերին խուլ ձայնով մը : Իմ աչերս կրնան զիս խաբել , զիս , որ տակաւին ձեզ սիրելու վատութիւնն ունիմ : Եւ ահա այս թշուառականին տուած եմ կենացս տասնհինգ տարիներն , այս թշուառականին որ զիս դաւաճանեց , և զոր կ'ատեմ :

Ստուգիւ գեղեցիկ էր Քաթերին իւր կրից բռնութեան մէջ : Աչերը բոց կ'արձակէին : Մարքիզն ընկըրկեցաւ : Քաթերին ուսերը թոթվեց արհամարհանօք :

— Այո՛ , կը վախնաք ինձմէ . բայց ինչո՞ւ : Կը վախնաք որ այս անիծեալ ամուսնութիւնը կը խզեմ : Գիտէք որ անհնարին է այդ հիմա , քանի որ համայն փարիզ տեսաւ ու լսեց : Մի՛ վախնաք , գնացէ՛ք . բայց ամեն բան լմնցած է մեր մէջ , թէ՛ բարեկամութիւն և թէ՛ վստահութիւն , երթաք բարեաւ :

Եւ առանց անոր ձեռքին դաշելու գահլիճը վերագարձաւ : Իսկ մարքիզն , որ էութիւնները կը ճանչէր , ծածուկ սանդուղէ մ'աներեւոյթ եղաւ : Տնկանոցին ծայրը հասած ժամանակ Քաթերին իւր ամուս-

նոյն ձայնը լսեց որ հրամաններ կուտար : Դասչիճն աւարտեալ պարահանդիսի մը երեւոյթն ունէր : Առաւօտեան նորածագ լոյսը , կարծես թէ կանդեղներու նուազեալ լոյսին հետ մաքառելէ ամաչելով , վախն ի վախը ներս կը մտնէր բարձր պատահաններէն : Տեղ տեղ վարագոյր մը կէս քաշուած էր՝ վարագուրակալ երիզէն զերծած . քանի մը ծաղկունք , պարօղներուն պէս յոգնած , թոյնած , թարշամած , դետնին երեսը փռուած էին . երկու դասչիճներուն մեծաբաց դուռներէն կը տեսնուէր ճաշին սեղանը կէս ժողվըտուած , ուր պնակները կը թափառէին ծածկօցին վրայ ընդ մէջ ճարդկած անձեռոցներու :

— Չեր հրամանին համեմատ , կ'ըսէր սպասաւորը , կառքը լծուած պիտի սպասէ ներսի դրան առջեւ՝ ժամ ութին քառորդ մնացած :

— Պատթիէնը զրկեցի՞ք սնտուկին հետ :

— Այո՛ , Տէր իմ , երկաթուղոյն կայարանը ձեզ պիտի սպասէ :

Քաթէրին լսած էր զայս : Երբոր սպասաւորը դուրս կ'եղնէր , ինք ներս մտաւ , և երբոր մինակ մնաց իւր ամուսնոյն հետ , հարցուց զարմացական դէմքով .

— Ուղեւորութիւն ունիք :

— Այո՛ :

— Ո՞ւր պիտի երթաք :

— Մարսիլիա :

— Չէ՞ք կրնար յետաձգել այդ ուղեւորութիւն : Ես թէպէտ չեմ խառնուիր ձեր գործերուն , բայց թոյլ տուէք ինձ այս խորհուրդը տալ ձեզ : Այդպիսի արագ ուղեւորութիւնէ մը չէ՞ք յոգնիր :

Պ. Մորէր ցասմամբ և միանգամայն արհամարհանօք Քաթէրինի նայեցաւ : Յետոյ , ուսերը թոթվելով ըսաւ .

— Շատ բարեսիրտ էք որ այդպէս հող կը տանիք

իմ առողջութեանս : Մի՛ վախնաք , ես ձեր կարծածին չափ արագ չպիտի ընեմ այս ուղեւորութիւն : Ամիս մը պիտի տեւէ :

— Ամիս մը :

— Կը մոռնա՞ք ուրեմն թէ Արտեմիս ութօրէն հարս պիտի լինի :

— Ես բան մը չեմ մոռնար :

— Ուրեմն . . .

— Ուրեմն . . . չէ՞ք հասկնար այսչափ պարզ բան մը : Ճշդիւ այդ ամուսնութեան ներկայ չգտնուելու համար կը հեռանամ :

Պ. Մորէր պող արեամբ կը խօսէր , իրրեւ մարդ մը՝ որ իւր կամքը կը յայտնէ և չուզեր որ մէկը դիտողութիւն ընէ : Քաթէրին հասկցաւ որ խօսք պիտի բացուէր , բնազդաբար շուրջը նայեցաւ : Պ. Մորէր դուշակեց անոր միտքը :

— Կ'ուզէք ստուգել որ մեր խօսքը լսող չլինի՞ , յարեց խրոխտ հեզնութեամբ : Անհող եղիք , Տիկին , մեր մարդոց ամենն ալ հեռացած են , և ոչ ոք կրնայ ներկայ գտնուիլ այս ընտանեկան վէճին , վասն զի ընտանեկան վէճ մ'է այս , ճշմարիտ չէ : Այո՛ , կը մեկնիմ : Չվայլեր ինձ ներկայ գտնուիլ ձեր աղջկան . . . Պ. Թանտրէի հետ միանալուն : Ես իմ պարտքս կատարեցի՝ երեւնալով այս պարահանդիսին մէջ : Հարսանեկան պարահանդէս մը աշխարհային արարողութիւն մ'է վերջապէս : Ասոր համար մարդիկ զիս մեղադրեն կամ ոչ , ամենեւին փոյթս չէ : Բայց , որչափ և սկսեալիկեան եմ , կը յարգեմ կրօնական արարողութիւնները : Չեմ ուզեր տեսնել որ քահանայ մ'օրհնէ այդ ամուսնութիւն և խաչը բարձրացնէ այդ երկու գլուխներուն վրայ :

Պ. Թանտրէի հետ միանալուն : Ես իմ պարտքս կատարեցի՝ երեւնալով այս պարահանդիսին մէջ : Հարսանեկան պարահանդէս մը աշխարհային արարողութիւն մ'է վերջապէս : Ասոր համար մարդիկ զիս մեղադրեն կամ ոչ , ամենեւին փոյթս չէ : Բայց , որչափ և սկսեալիկեան եմ , կը յարգեմ կրօնական արարողութիւնները : Չեմ ուզեր տեսնել որ քահանայ մ'օրհնէ այդ ամուսնութիւն և խաչը բարձրացնէ այդ երկու գլուխներուն վրայ :

Քաթէրինի դէմքը կապարի գոյն առած էր . կուրծքէն ծաղիկ մը կորզեց և անոր կոթը լսածխածել սկը-

սաւ իւր խիտ ակռաներով : Բայց ճակատը չէր խոնարհեցնէր , այլ ուղղակի իւր ամուսնոյն երեսը կը նայէր՝ ասպարէզ կարգալու կամ դիմադրաւերու կերպիւ : Պ. Մորէր խօսքը շարունակեց քիչ մ'աւելի ջեմութեամբ , որ իւր սովորական պաղարիւնութեան հետ հակապատկեր մը կը ձեւայնէր :

— Կեցիք , Տիկին , ամեն բան բացատրենք քանի որ հոս ենք : Երբոր առաջին անգամ ձեզ տեսայ , երջանկութիւնը լիաշուրթն կը ծիծաղէր ինձ : Երիտասարդ , դիւրահաւատ , անկեղծ էի . կեանքը կը բացուէր իմ առջեւ փառաւոր , գուցէ և երջանիկ : Ի՞նչ տկար արարած է մարդ : Չեզ տեսայ և կորսուած էի : Դուք Պուրկոյնի խորը քաջուած կ'ապրէիք երկամեայ աղջկան մը հետ : Առաջին նայուածքով զիս նուաճած էիք , և երազ մը միայն ունէի . այն է՝ ձեզ ամուսնութեան առնուլ , և առի . . . անմտաբար : Կրնայի տեղեկութիւններ ստանալ , ձեր անցեալ կեանքն իմանալու ջանք ընել , բայց յիմարութիւն մը ըռնած էր զիս : Ո՛հ , լուեցէք . այս առաջին անգամ է որ բաց սրտով կը խօսինք այն չարաշուք օրէն ի վեր որ անուսն տուի ձեզ . . . : Քանի որ սկսայ , մինչեւ ծայրը պիտի երթամ . . . :

Քանի մը կաթիլ արտասուք յեռած էին Պ. Մորէրի ճակատին վրայ . կուրծքը կ'ելնէր կ'իջնէր . ինքզինք հանդարտ բռնելու կամքն և հետզհետէ տաքցած բարկութիւնը կը կռուէին միմեանց հետ :

— Հինգ տարի կուրաբար սիրեցի ձեզ : Բան մը չէի տեսներ , մինչեւ իսկ ձեր մտութիւնները : Դուք հեշտական կեանք մը կը վարէիք և ես զբօսասիրութիւն կը կոչէի զայդ : Չեր աղջիկ զաւակն օտարնեւրու քով տուած էիք առանց յիշելու զայն : Իմ վատութիւնս դարձեալ կը չքմեղացնէր ձեզ : Աւելին ըրի : Դուք կը փափաքէիք որ ձեր աղջիկն իմ անուսն

կրէ օրինաւորապէս : Ես ալ հաճեցայ : Չեր մէկ նայուածքովը կամ ժպիտովը վարձատրուած կը համարէի զիս , վասն զի դեռ այն ժամանակ կատակերգութիւն կը խաղայիք : Ձիս սիրել կը ձեւացնէիք . . . : Ես հաւատացի մինչեւ այն օրն ուր ձեզ բռնեցի ձեր տարփաւորին հետ :

Տկար հառաչք մը լսուեցաւ տնկանոցէն , բայց ոչ այրն , և ոչ կինը լսեցին : Մին չափազանց բարկութեանէն , միւսը չափազանց սարսափէն :

— Ինչո՞ւ չսպաննեցի ձեզ , շարունակեց Պ. Մորէր , առաւել եւս զայրացած , վասն զի ձեր վրայ գլխաւանմտութիւնն ունեցայ , վասն զի կին մ'սպաննող մարդը վատութիւն ըրած կը լինի : Չեր տարփաւորն սպաննել , ի՞նչ օգուտ կ'ունենար : Նոյն առթիւ իմացայ որ առաջինը չէր , և արդէն սաստիկ զգուած լինելով , չէի ուզեր ոճիր մը բեռցնել խղճիս վրայ : Ոչ : Մեղապարտն , ես էի , ես որ խառնակեցիկ կին մ'ամուսնութեան առած և անունս անոր աղջկան տուած էի : Իրաւունք չունէի ուրիշներն իմ յիմարութեանս պատասխանատու բռնելու : Ի՛հ , անոնք՝ իբրեւ մարդ՝ իրենց արհեստը կը գործէին՝ ձեզ հետ սիրային յարաբերութիւններ հաստատելով . դուք ալ ձեր անանական ցած պաշտօնը կը կատարէիք : Դժնդակ գիշերներ անցուցի ելք մը գտնելու համար , բաժնուիլ : Բաժանումը ձեզ իմ կենակցութենէս կը զատէր . բայց անունս չէր վերցնէր ձեր վրայէն : Եւ ես անունս սիրելու տկարութիւնն ունիմ , վասն զի հօրս անունն է : Ես՝ ներկայ գտնուելով՝ արտաքին երեւոյթները կ'ազատէի : Այլսարհ կրնար կասկածիլ , մինչեւ իսկ ամբաստանել , բայց գոնէ գայթակղութիւն չէր լիներ : Պիտի խնդայի՞ն իմ վրայ : Դուք այնչափ լացուցած էիք զիս , որ ուրիշներուն խնդալն հոգ չէի ըներ :



Պ. Մորէր ոչ ևս կրնար ինքզինք բռնել, տարիներով սրտին մէջ մթերուած բարկութիւնը բովանդակապէս դուրս կը թափէր :

— Ա՛, կը զարմացնեմ ձեզ, այնպէս չէ՞ : Այն սառ կտրած մարդը չեմ, որ աշխարհի մէջ կը պըտըտի բան մը չգիտնալու, բան մը չհասկնալու դէմքով : Եւ որովհետեւ սառէ դիմակ մ'անցուցած էի երեսս, կարծեցիք թէ բան մը չէի գիտեր : Որովհետեւ չըթուէրս կը փակէի, կարծեցիք թէ չէի արհամարհեր ձեզ : Արդ, ո՛չ, ես չեմ արհամարհեր ձեզ : Ձեր ինձ ազգած զգացումը զգուանք է : Ես ձեզ այն աստիճան անարգ արարած մը կը նկատեմ, որ մինչև իսկ ձեզ ատելու զօրութիւն չունիմ :

Քաթէրին մտիկ կ'ընէր սքլած, սասանած այս յանկարծական զարթումէն : Պ. Մորէր ուժով մ'անոր դաստակը բռնելով .

— Ձիս տխմար և հաճոյակատար ամուսին մը կարծեր էիք, այնպէս չէ՞ : Կրնայի ձեր տարփաւորներուն մին կամ մի քանին սպաննել . . . բայց դուք արժանի չէիք որ ձեզ համար արին թափուէր :

Եւ հրեց զայն, այնչափ ուժգնութեամբ, որ գնաց թիկնաթուռի մը մէջ ինկաւ սորսափահար :

— Ես ձեզ ուսման նիւթ ըրի ինձ, խնամով հետազօտեցի որպէս զի բարութեան նշոյլ մը, առաքինութեան հիւլէ մը, պարկեշտութեան մասնիկ մը գտնեմ ձեր վրայ . բայց բան մը չգտայ : Ամեն մոլութիւն կայ ձեր քով, և բնաւ բարեմասնութիւն, ամեն անարգ բնազդմունք, և բնաւ ազնիւ զգացում . ինչ որ յոռի չէ ձեր վրայ, այն ալ յոռացած է. և դուք չարութեան մէջ ալ մեծութիւն չունիք, այլ վատաբար, ցածաբար կը գործէք, նենգելով, ստելով : Այդ ամենը գիտէի և կեցայ : Երբոր մէկը ճիւղաղի մը հետ ամուսնանալու յիմարութիւնը կը գործէ, վա՛յ անոր : Մեք անխելք ըն-

կերութեան մը մէջ կ'ապրինք, ուր ամուսնութիւնն անել ուղի մ'է : Կա՛մ դուխը պատին դարնելով ջախջախել, կամ ծռել հարկ է : Ես ծռեցի դուխս : Ասկէց զատ՝ յոյս մը կը մնար ինձ, սիրուիլ ձեր աղջիկնէն և ազատել զայն ձեր կորստական ազդեցութենէն . . . : Այս փափաքս ալ նենգութեան հանդիպեցաւ : Ձեր աղջիկը կ'ատէ զիս, և ես չեմ սրբօղիւր անոր, վասն զի չճանչեր զիս : Ես այն աստիճան վարժուեցայ քաջուած ապրելու, որ չտեսնողներուն ինքզինքս յայտնել չեմ ուզեր : Գո՛նէ պէտք չունեցայ զայն ձեր ձեռքէն կորզելու, վասն զի բարեբաղդաբար պատուար մը կայ ձեր երկուքին միջև : Ձեզ պէս արարածներ համաձայնութեան համար ստեղծուած չեն : Ձեր աղջիկն այնչափ բարձր է, որչափ դուք ցած էք . այնչափ մեծ սիրտ է, որչափ դուք նուաստախոհ : Եւ ես շատ անգամ ապշելով կըսեմ թէ ինչպէս այն մարմինը կըրցաւ ծնիլ ձեր մարմնէն, ինչպէս ձեր աղբիւսէն կըրցաւ բողբոջիլ այդ ծաղիկ :

Այս անգամ հառաչ մը չէր որ լսուեցաւ ձեմելիքէն, այլ աղիողորմ հեկեկանք մը, և անմիջապէս յետոյ անկում մը դահլճին տախտակամածին վրայ : Մէկէն քաթէրին ցատկեց ոտքի վրայ ելաւ . Աստուած մեծ, ո՞վ լսեր էր : Պ. Մորէր վազեց ընկնողին քով : Արտեմիս անզգայ փռուած էր, մարդարտի պէս ձերմըկած, վարդի կողովի մը մէջ տեղը, զոր ընկած ժամանակ կործաներ էր : Այս անկման միջոցին գլուխը կողովին գօրնուելով՝ արեան բարակ գիծ մը կոյսին անարատ ճակատը կարմրեցներ էր : Պ. Մորէր, առանց ձայն հանելու, մեղմով մը վերցուց և իւր թեւերուն մէջ առաւ : Յետոյ իւր թաշիկնակովը ճակտին արիւնը սրբելով, փոքրիկ վէրքը զննեց, որ պարզ ճանկըրթուք մ'էր : Շատ չանցած՝ Արտեմիս աչքը բացաւ, և ձեռքը ճակտին կը տանէր՝ որպէս թէ սոսկալի մտածու-

Թիւն մը վանելու համար, երկարօրէն Պ. Մորէրի կը նայէր: Այս սրտաճմիրկ նայուածքը դպաւ Պ. Մորէրի:

Ամեն բան լսեց, ըսաւ ինքնիրեն: Քաթէրին ալ վազեց և ուզեց խնամ տանիլ իւր աղջկան, բայց նա մեղմով մ'ետ քշեց և ոտքի վրայ ելնելու ջանալով:

— Բան մը չունիմ, անցաւ, ըսաւ: Միայն կ'աղաչեմ, պարո՛ն, որ սենեկապանուհիս արթնցնելու շնորհ ընէք . . . . .

Անկողնին մէջ տարածուած է, զինք շրջապատող նուրբ պատառներէն աւելի սպիտակ: Ո՛հ, այո՛, ամեն բան լսեց, Պ. Մորէրի անագորուն խօսքերը տակաւին կը թրթռան անոր ականջին: Այլ չը կրնար երկբայիլ. Քաթէրինի սարսափահար լուրթիւնը խոստովանութեանց ամենէն ջախջախիչն է: Կը հասկնայ հիմայ թէ իւր մայրն ի՛նչ էր. կը հասկնայ հիմա թէ ինչո՛ւ զինքն ամուսնութեան խնդրող չկար: Ո՛վ կառնուր այսպիսի արատաւոր կնոջ մ'աղջիկը: Կը հասկնար հիմայ իւր յարգ չգտնելուն պատճառն, և քանի մ'որ առաջ Աննա-Մարիի շփոթութիւնն երբոր ինք իւր հայրը կը դատապարտէր:

Աղջկան գեղեցիկ գլուխն հակած էր բարձին վրայ, և դառն արտասօք կը վիժէին աչերէն: Իւր միամտութիւնն, և հաւատքին անհետացումը կ'ողբար: Մինչև ցարդ իւր մայրը կ'ամբաստանէր թէ կ'արհամարէր զինքը, ուզող աչօք կը նայէր իրեն, բայց չարութիւն չէր յուսար: Անոր անբացատրելի հակակրօնութիւնն իւր հօր դէմ ունեցած ատելութեան կը վերագրէր: Եւ ահա յանկարծ քողը կը պատուէր: Բայց իւր մօրը բարեպաշտութիւնը, ան ալ սո՛ւտ է եղեր: Խեղճ նահատակ, կեանքը դժնդակ կ'երեւէր իրեն, որովհետև տասն և ինն տարեկան հասակին մէջ ամեն սէր ամեն գորով կը կտրանցնէր իրարու ետեւէ:

Լոյսն յորգառատ ներս կը մտնէր պատուհաններէն: Սենեկապանուհին աշտանակը վառ թողած էր սեղանին վրայ. մոմերուն բոցը կը նուաղէր նորածագ արեւուն ճառագայթներէն: Կը թուէր Արտեմիսի թէ մեռած էր ինք և մոմեր վառեր էին իւր քով: Նորէն սկսաւ լալ խորհելով որ մահուան պատկերն էր միայն, որովհետև իւր կեանքն երջանկութեան իսկութիւնը չունէր:

Դուռը բացուեցաւ. Արտեմիս աչքն այն կողմ դարձուց: Պ. Մորէր էր, որ անկողնին մօտենալով հարցուց քաղցրութեամբ.

— Ի՛նչպէս էք, որդեա՛կս.

— Աւելի լաւ, պարո՛ն, շնորհակալ եմ:

Եւ ուշադրութեամբ երեսը նայեցաւ: Կը թուէր իրեն թէ առաջին անգամ կը տեսնէր: Ուզեր էր որ զինքը սիրէ:

— Դեռ հո՞ս էք, չգացի՞ք, հարցուց Արտեմիս:

Պ. Մորէր քիչ մը շփոթեցաւ. այս պարզամիտ հարցումը միայն կ'ապացուցանէր թէ Արտեմիս ամեն բան լսած էր:

— Ո՛չ, որդեա՛կս, պատասխանեց, այս իրիկուն պիտի երթամ . . . երբոր կատարելապէս ապահովիմ ձեր վրայ:

Աղջիկը լուռ կը կենար գրեթէ շփոթեալ. կարծես թէ բան մը հարցնել կ'ուզէր և չէր համարձակեր: Պ. Մորէր հասկցաւ անշուշտ, վասն զի յարեց.

— Միթէ իմ ուղեւորութիւնս անհաճո՞յ է ձեզ:

Աղջիկը կարմրեցաւ:

— Ես չեմ ներեր ինձ հակառակիլ ձեր գիտաւորութեանց, բայց վերջապէս երջանիկ կը լինիմ . . . յոյժ երջանիկ, եթէ կարենաք ներկայ գտնուիլ հարսնիքիս:

Պ. Մորէր աղջկան երեսը նայեցաւ ուշադրութեամբ:

ճշմարտութիւնը դիւրաւ կը կարգացուէր անոր աչե-  
րուն մէջ, որ սրտին հայելին էին, և անկեղծութիւն  
կը ցոյանային: Գուշակեց ինչ որ չէր կրնար ըսել ի-  
րեն. « Ո՛հ, հոս կեցիք, Պարոն, մի՛ երթաք կ'աղա-  
չեմ, որպէս զի քովս մէկն ունենամ որ կը սիրէ զիս:   
Ես լսեցի քիչ մ'առաջ ձեր ըսած խօսքերն ինձ հա-  
մար, և գիտեմ որ զիրար պիտի հասկնանք այսու-  
հետեւ. . . : Հոս կեցիք, որպէս զի ընտանիքի երե-  
ւոյթն ունենամ ես՝ որ ընտանիք չունիմ, հօր մ'երե-  
ւոյթն ունենամ ես՝ որ մայր չունիմ: »

Պ. Մորէր ծռելով աղջկան ճակատը համբուրեց:  
Ինքն ալ շփոթեալ կ'երեւէր, ինք ալ իւր շրթունքն այ-  
րով հարցում մ'ունէր, բայց չէր համարձակեր ար-  
տաբերել:

— Կը կենամ ուրեմն, որդեա՛կս, քանի որ դուք  
այնպէս կը փափաքիք:

— Ո՛հ, շնորհակալ եմ:

— Բայց թող տուէք ինձ որ բան մը հարցնեմ ձեզ,  
և մանաւանդ բաւական վստահութիւն ունեցէք իմ  
վրայ, որպէս զի անկեղծօրէն պատասխանէք: Դուք  
առանց թաքուն խորհուրդի՞ կ'ամուսնանաք Պ. Թանա-  
րէի հետ:

Արտեմիս կարմրեցաւ, վասն զի իւր կենաց մէջ  
առաջին անգամ սուտ պիտի խօսէր: Բայց ի՞նչ օ-  
գուտ ունէր այս բարի մարդուն սրտին վերքը նորո-  
գել՝ ըսելով իրեն. « Կ'ամուսնանամ, վասն զի ոչ ոք  
կ'ուզէ ձեր կնոյ աղջիկը: »

— Առանց թաքուն խորհուրդի է, պատասխանեց:

— Ըսել է թէ կը սիրէք զայն:

— Այո՛, ըսաւ տկար կերպիւ:

Պ. Մորէր հառաչեց, յետոյ հայրաբար անոր ճա-  
կատը համբուրելով.

— Երջանիկ եղիք, որդեա՛կս, վասն զի արժանի էք:

Եւ դուրս ելաւ գլխակոր:

Ո՛հ, եթէ Արտեմիս իւր սիրտն անոր բացած լի-  
նէր, եթէ վախցած չլինէր ամեն բան խոստովանելէ,  
տակաւին ժամանակ կար, կրնար ամուսնութիւնը  
խղուիլ, արդարեւ մեծ գայթակղութեամբ, բայց ի՞նչ  
է գայթակղութիւնն երջանկութեան քով: Պ. Մորէր  
լուց, վասն զի աղջիկը կը սիրէր իւր նշանածն: Այս  
յայտարարութիւն բաւական էր: Ուստի որոշեց իւր  
կորուսեալ տունը մնալ՝ մինչ աղջիկը ձեռքն անցու-  
նէր երջանկութեան միակ երեւոյթն որ կրնար տա-  
կաւին կենալ իրեն համար:

Շարաթն անցաւ առանց բնաւ նոր դէպքի: Քա-  
թէրին զարմանօք տեսաւ որ իւր այրը կը կենար, և  
չհամարձակեցաւ պատճառն հարցնել: Պարահանդէսին  
առաւօտուն անցած սարսափելի տեսարանէն ի վեր  
անբացատրելի երկիւղ մը տիրած էր իւր վրայ, և ա-  
մեն անգամ որ Պ. Մորէրի հետ դէմ առ դէմ կու-  
գար, սիրտը դող կ'ելնէր: Միւս կողմէ նախանձն ալ  
կը կեղեքէր զինքը: Մարքիզին դէմ ատելութեամբ  
վառուած էր այն օրէն ի վեր որ Արտեմիսի վրայ սեր  
ունենալը տեսած էր. ութ օր դժուակ կեանք մ'ան-  
ցուց: Նախասահմանութիւնն՝ իւր անարդարութեան  
երկար ասրինները չքմեղացնելու համար՝ մերթ ընդ-  
մերթ արդարութեան ժամեր կ'ունենայ:

Կանխաւ որոշուած ծրագրին մէջ միակ փոփոխու-  
թիւն մը մտաւ: Նոր ամուսնացեալք իրենց մեղրա-  
լուսինը քաննի մէջ պիտի անցունէին: Պ. Մորէր ա-  
ռաջարկեց Արտեմիսի որ մինչեւ աշուն վէր բնակին:  
Աղջիկն ալ սիրով ընդունեց: Պ. Մորէր գեղեցիկ  
դղեակ մ'ունէր հոն ծովուն մօտ, էօի և Թրէբօրի  
մէջ տեղը: Մարքիզը բնաւ ընդդիմութիւն չըբաւ:  
Բաւական էր որ բան մ'Արտեմիսի հաճելի լինէր որ-  
պէս զի իրեն ալ հաճելի լինի: Վերջապէս ապրիլ 23ն

ու 26ը հասան : թաղապետական պաշտօնատունը շատ մարդ չգտնուեցաւ , քանի մը մտերիմներէ զատ , որք էին Տիկին Ռոշէզ և Աննա-Մարի Պարոն ֆէրսէնի թեւը մտած : Տիկին Հանրիէթ Ռոշէզ մութքոյն զգեստ հազած էր :

— Ձեր սուգը կը բռնեմ , ըսաւ կամացուկ մը ֆաթերինի ականջն ի վար :

Անագորուն խօսք մը որ սրտէն կը զարնէր զՏիկին Մորէր : Երբոր մէկն այնպիսի վիշտ մ'ունի , ուր սնափառութիւնը դառնապէս կը խոշտանգի , վէրքն առաւել կը զայրանայ՝ երբոր կարեկցութիւն ցոյց արուի : ֆաթերինի մտերիմ բարեկամուհւոյն ըսած խօսքը շատ բան կը նշանակէր : «Մնաս բարեաւ գեղեցկութիւն , մնաս բարեաւ երիտասարդութիւն , մնաս բարեաւ սէր» կը նշանակէր :

Ընդհակառակն՝ Մատլէնի եկեղեցին նեղ եկաւ հրաւիրեալներն ընդունելու : Եւ ի՞նչ հագուստներ , թէեւ դեռ առաւօտ էր : Լրագրաց լրատուներ խղճի մտօք տեղեկութիւն կը գրէին : Պսակի արարողութիւնը ծանր եղաւ , ինչպէս որ կը վայէր , թէև հանդիսականք՝ սեղանին նայելէ աւելի Արտեմիսի կը նայէին , որ գեղեցիկ էր և դժգոյն իւր կուսական պըսակին ներքեւ :

Յանկարծ աթոռներու շարժում մը լսուեցաւ : Վերապատուելի Հայր Պրէման , այն ժամանակի նշանաւոր քարոզիչը , պատարագ կ'ըսէր , և քարոզ պիտի խօսէր : Համառօտ , միատիկեան և շոգելից բանախօսութիւն մ'ըրաւ , ուր « հոգւոյն արտահոսումներն անհունութեան տենչանաց» հետ կը շփոթէին : Յետոյ խնկոց պայծառ ալիքներու մէջ թեւաւոր երգեհոններն իրենց ամենէն գեղեցիկ երգերը նուագեցին . և քահանային ձայնն Աստուծոյ օրհնութիւնը կոչեց Մարքիզին և անոր կնոջ վրայ :

Վէռի դղեակը , զոր Պ. Մորէր 1871ին գնեց , բլուրի մը վրայ շինուած է , էօէն թրէթոր երթալու ճանրուն անկիւնը : Հոն երթալու համար դալարազարդ քարէ կամուրջէ մը պէտք էր անցնիլ , որ տեղ տեղ փայլուն մամուռներով գունաւորեալ վազուկ շրոյ խրամներու վրայ ձգուած էր : Խոշոր ծածաններ (սագան պալըղը) անշուշտ ժամանակակից մեծ Օրիորդին , գուարթաբար կը պտըտէին այն շուրին մէջ , և իրենց թեփոտ կրնակը կը տաքցնէին արեւուն դէմ : Չախ կողմը բարակ և բարձր աշտարակ մը կայ գորշագոյն , բայց կարծես թէ կը ժպտի զինքը պատող բաղեղներուն մէջ . յետոյ մեծ շէնք մը կը տարածի , ճակտին կողմը միացած : Դղեակին ճարտարապետութիւնն երեք տարբեր ոճերու բաղադրութիւն մ'է . մաս մը Յրանսուա Ա.ի , ուրիշ մաս մը Լուի ԺԳ.ի , և մէջտեղն արդի : Բայց այս զանազանութիւնն , որ արուեստական տեսակէտով ծանր սխալ մ'է , ճարտարապետութեան ծանօթութիւն չունեցողներուն աչքին համար առաւել գեղեցկութիւն մ'է : Ընդհանուր երեւոյթը լի է թարմութեամբ և զուարթութեամբ : Պատերը շաղապատուն տունկերով և լայնատերեւ բաղեղամբք ծածկուած են : Բայց լուսոյն ծածանման համեմատ , գոյներն ալ կը զանազանին , կանաչէն սեւի և սեւէն երկնագոյնի ցատկելով , որոյ մէջ տեղ տեղ կապոյտ կէտեր կը շողշողին :

Պ. Մորէր զմայլեցաւ այս գեղեցկութեանց վրայ : Իւր նուրբ ճաշակով Վէռի դղեակը վայելչութեան հրաշալիք մ'ըրաւ : Ներքինն արտաքինէն վար չէր մնար բնաւ : Մեծ դահլճին կահերուն և զարդարանաց փափկութիւնն ու ազնուութիւնը մեծ հուշակ հանած էր շրջա-

կաները: Որմերն իլիականէն փոխ առնուած նիւթերէ նկարակերտ օթոցներով ծածկեալ էին, ճերմակ դիպակէ եզերքով թաւշեայ վարագոյրներու մէջ: Դրան ալ ու ձախ կողմերն երկու մեծ աշտանակներ հին քանդակագործ կաղնեփայտէ, որք ծաղկանոցի տեղ կը գործածուէին: Դիմացը մեծ պատուհան մը կար շքեղանակեալ երկու պահարաններէ, որք դղեակին տնկանոցներէն հանուած անուշահոտ ծաղիկներով ծածկեալ էին: Սրեւելեան չոր գորգն, ամեն կողմ բարձերով ցանուած, քայլերը կը մեղմացնէր: Նըկարներուն դալով, Ռիքարի «գրան վրայ» մը և ձեղունին վրայ թէնթորէի դրուագ մը, սխալներով լի, բայց յոյժ փափուկ ճաշակով և անմասն երանգով շինուած: Միւս պատուհանին մօտ գնացողին աչքին կը պարզուէր գեղեցիկ դաշտանկար մը: Նախ ընդարձակ և աւազով ծածկուած բակ մը, յետոյ սանդուղ մը որ ծաղիկներով և կանանչ եզերքով զարդարեալ Ֆրանսաձեւ մեծ պարտէզ մը կ'իջնէր: Պարտէզն ալ աստիճան առ աստիճան վար իջնելով կը հասնէր անհուն մարգագետին մը, ուր նայողին աչքը կը հանգչէր ուրախութեամբ:

Դահլճին մօտ մեծ նախասենեակ մը կար փայլուն փայտէ, հոյաչէն սանդուղով: Նախասենեակին քով ներքնասենեակ մը ճարձնաձեւ: Որմերն ասղնեակարներով պատեալ էին, որոց մէջ եփտոյէն ճշմարիտ թուղուններ բերուած և բարձրաքանդակ յեուած էին իրենց փետուրներով: Վերջապէս, բարձր դուռ մը մատենադարանը կը հանէր, որ թէ եւ պարզ էր, բայց նշանաւոր: Նշարանները լայն նըրբուղիներու վրայ կը բացուէին առաջին և երկրորդ դաստիկոններուն մէջ: Դղեակին շուրջը սէգ սոճիներու անտառներ իրենց խաչաձեւ թեւերը կ'երկնցնէին: Լոյսէն ստուերը, արուեստէն բնականը, նուրբէն փայ-

լենին կ'անցնէր մարդ՝ զմայլելի անակնկալով լի փոխանցմամբ:

Ֆապիէն Տը Թանտրէ և Սրտեմիս սքանչելի օր մը այդ դրախտն հասան: Սպրիլի վերջին օրը թոյլ կուտար որ երեկոյեան արեւը բարձր ոստերուն մէջէն ծիծաղելով մայրը մտնէր: Թարմ ցախերը վարդագոյն կը շողշողային պարահանդէս գնացող դեռատի օրիորդաց պէս, ցողաթուրմ ծառերու սուր հոտերն իրենց անոյշ բոյրերով օդը կը պարարէին: Հեռին, նուրբ մէգի մը մէջէն, որ ամենափափուկ շղարչէ վարագուրի մը կը նմանէր, ցած բլուրներ կը տեսնուէին ծառերով ու մարգերով բեռնաւորեալ, ուր կովերու հօտեր կը ճարակէին:

Սրտեմիս կը պաշտէր այս վէռի դղեակն, ուր խիստ քիչ անգամ կ'երթար. ուստի Պ. Մորէրի առաջարկը մեծ ուրախութիւն պատճառած էր իրեն, և շնորհակալ էր Ֆապիէն Տը Թանտրէէն որ հոն երթալու հաճութիւն տուած էր: Կէս օրը կէս ժամ անցած երկու ամուսինը Մատլէնի եկեղեցիէն ուղղակի Սէն-Լազարի կայարանը գնացեր էին, ուր երկու հոգինոց կառք մը կ'սպասէր: Ճանրան մարքիզն ինքզինը այնպէս ցոյց տուաւ, ինչպէս որ էր իրօք, շնորհալի, հանճարեղ և հրապուրիչ: Իւր դրաւումը կ'սկսէր: Արտեմիս անձնատուր կը լինէր ազատութեան այս նոր հրապուրին: Քանի որ կառախուսմբը կը սրանար, զինքը փարիզէն հեռացնելով, իւր խռովեալ սիրտը կը հանդարտէր: Կը մտածէր թէ նոր կեանք մը կ'սկսէր, ուր կը յուսար ճաշակել այն երջանկութիւն՝ որում չէր հանդիպած տակաւին:

Սակայն մարքիզն յոյժ ծանր կը թօթափէր իրմէ իւր բռնազրօսութիւնը: Ի զուր կ'ըսէր ինքնիրեն թէ այս կին իւրն էր, թէ այս մարմին իւր սեփականութիւնն էր, թէ այս շրթանց համբոյրներն իւր արդար

իրաւունքն էին . ահամայ ներդուծիւն մը կ'զգար : Մինչեւ այն ժամանակ , Արտեմիսի վրայ զգացած բուռն սէրը՝ ֆաթէրինի պատճառաւ՝ ծածկելու հարկադրեալ , իւր հանդարտ գորովին դիմակը մէկ կողմ նետելու կը վարանէր : Ասկէց զատ՝ այդ հրապուրիչն այն բոցեւանդ կիները միայն կը ճանչէր , որք իրենց ըրածը գիտնալով անձնատուր կը լինին : Իսկ հոս շուշանի պէս սպիտակ անարատութեան մ'առջև էր . ա՛յնչափ անբծութիւն կը կարգար Արտեմիսի երեսին վրայ , ա՛յնչափ անմեղութիւն կը տեսնէր անոր նայուածքին մէջ : Իւր բաղձանքն առաւել գրգռեալ և նուազ համարձակ էր : Արտեմիսի ձեռքը բռնեց և մեղմաբար սեղմելով .

— Թող տուէք ինձ խոստովանիլ ձեզ՝ ինչ որ կը խորհիմ , ըսաւ , այժմ՝ որ առանձին ենք , այժմ՝ որ միմեանց ենք . չէք գիտեր ինչ աստիճան կը պաշտեմ ձեզ : Իմ կեանքս իսկապէս այն օրէն կ'սկսի , ուր ճանչեցի ձեզ , . . . : Ես ոչ ևս քառսուն տարու եմ երբոր ձեր քովն եմ , այլ քսան տարու եմ . տղու մը պէս կ'երկբայիմ և կը յուսամ , և ա՛յնչափ երջանիկ կ'զգամ զիս , որ չեմ կրնար բարեբաղդութեանս հաւատալ :

Աւելի ուժով կը սեղմէր Արտեմիսի ձեռքը . աչերը կը բոցավառէին .

— Կի՛նս , դուք իմ կի՛նս էք :

Սակայն դարձեալ ինքզինք բռնեց և իւր երկարօրէն զսպեալ կրից ձայնն արգիլեց : Ոչ միայն մոլեգնաբար կը սիրէր զայն , այլ և բուռնեւանդ կը տենչար անոր : Ինչպէս ութ օր առաջ , ամուսնական պարահանդէսին մէջ , երբոր անոր վրայ ծռելու և մերկ ուսերը գգուանօք լափելու բաղձանքէն կը մեռնէր , փորձուեցաւ գրկել զայն իւր բաղկաց մէջ և իւր շըրթունքն անոր շրթանց վրայ փակցնել . . . . բայց

յանկարծական շարժմամբ մը հեռացաւ Արտեմիսի քովէն և կառքին միւս անկիւնը քաշուեցաւ : Վասն զի չէր ուզեր վախցնել զայն . կը հաւատար դեռատի աղջկանց անգիտակցութեան , բայց ոչ բացարձակ տգիտութեան : Գիտէր որ անոնք գրեթէ յստակ դաղափար մ'ունին ամուսնութեան վրայ , մանաւանդ երբոր տեսակ մ'ընկերութեան մէջ մեծնան : Իրենց բարեկամուհեաց կէս մտերմական յայտնութեանց և ընդհատ խոստովանութեանց մէջ դիւրաւ կը գուշակեն թէ ինչ նոր երեւոյթի ներքեւ մարդ ինքզինք պիտի ցուցնէ : Մարքիզն յաճախ խորհած էր ասոնց վրայ : Կ'ըսէր ինքնիրեն թէ կոյսն՝ իւր մօր դահլճին մէջ՝ երիտասարդ , վայելչագեղ և նշանաւոր էակ մը կը տեսնէ և կը զարնուի անոր : Իդէական ծաղկանց պսակ մը կը հիւսէ անոր համար , ամեն փափկութեամբ կը պճնադարդէ զայն , և ամուսնութենէն յետոյ , երբոր վերջապէս առագաստի սենեակը կը բացուի , անագուրուն կախարդանաց դիւթական տեսարանին ներկայ կը գտնուի , ուր մարդն անասնոյ կը փոխուի : Պապիէն գիտէր այս ամեն : Խիստ շատ կանայք սիրած էին զինք , խիստ շատ կանայք մտերմական գաղտնիքներ հաղորդած էին իրեն : Գիտէր որ շատ ամուսնութիւնք հարսանեաց առաջին գիշերին պատճառաւ կ'աւրուին : Բայց իրեն համար այնպէս պիտի չլինէր , մինչեւ ցվերջին ծայր պիտի յարդէր Արտեմիսի փափկասրտութիւնն , որպէս զի ինքնիրեն տուած ազնուական մարդու շուքն անաղարտ պահէ : Քաջարար խեղդեց իւր իղձերը , զսպեց իւր համբոյրները : Կը գուշակէր որ կրնար գանիլ , բարոյական նողկանքի պէս բան մը գալ անոր վրայ : Ուստի անկարեւոր բաներու վրայ խօսեցաւ , իրենց անցած տեղերուն դաշտանը կարները բացատրեց Արտեմիսի : Կառք մը կ'սպասէր էօի կայարանը . Պ. և Տիկին Թանարէ հոն նստան :

Արտեմիս, եւս քան զեւս ուրախ, ուղեւորութեան  
այս երկար մտերմութեան մէջ զինքը խորաշեցնող բան  
մը չպատահելով, հետաքրքրաբար իւր շուրջը կը զըն-  
նէր : Կ'զմայլէր այն պարարտարօտ դաշտերուն վրայ,  
ուր Նորմանտացի կովերը կը ճարակէին խաղաղ և խո-  
կուն : Բնութեան խորին հանդարտութիւնը կը ներ-  
դաշնակէր իւր հոգւոյն խոր հանդարտութեան հետ :  
Ուրախ աչօք հասաւ վէճի դղեակն : Երկու սենեկա-  
պանուհիք դիմաւորեցին իրենց տիրուհին և անոր հա-  
մար պատրաստուած բնակարանը տարին :

Ճաշին ժամանակ նշանաւոր դէպք մը չպատահե-  
ցաւ : Մարքիզը միշտ քաղաքավար, հանճարեղ, փու-  
թաջան, կրից ձայներն իւր շրթանց վրայ կը զսպէր,  
իւր աչերուն մէջի բոցը կը մարէր . և սակայն քանի  
որ գիշերն առաջ կ'երթար, զարմանալի շփոթութիւն  
մը կը տիրէր վրան : Երբոր մեծ դահլճին մէջ մինակ  
մնաց Արտեմիսի հետ, սպասաւորաց հետաքրքիր նայ-  
ուածքէն հեռի, ծաղկանց կողովներուն քով տարաւ  
զայն և ծունգի վրայ գալով անոր առջև .

— Այսուհետեւ ձեր լաւագոյն բարեկամն եմ, ը-  
սաւ . չեմ ուզեր որ ձեր խորհրդոց մին անձանօթ  
մնայ ինձ . սրչափ գեղեցիկ, սրչափ քաղցր բան է,  
սիրելիս, սրտի և գաղափարաց մտերմութիւնն, որք  
ամեն ժամանակ մեզ ներկայ ընեն իրարու համար :

— Ես հաւատք ունիմ ձեր վրայ, Ֆապիէն, պա-  
տասխանեց Արտեմիս : Իրաւունք ունիք, այսուհետեւ  
իմ լաւագոյն բարեկամս պիտի լինիք : Պէտք է ուրեմն  
որ ամեն բան ըսեմ ձեզ :

— Այո՞ :  
— Լաւ, ամեն բան կ'ըսեմ ձեզ . և բնաւ պատ-  
ճառ մը չունիմ ծածկելու :

Ռրչափ քաջայոյս էր և հանդարտ : Չէր հասկնար  
իւր բարեկամուհեաց ոմանց երկիւղն այն անձանօթին

առջև, որ ամուսնութիւնն է : Ինչո՞ւ համար հեշտալի  
բան մը չլինէր Ֆապիէնի պէս խոհական և ազնուա-  
բարոյ էակի մը հետ : Այսու ամենայնիւ, յոչ կամաց,  
գուցէ իսկ առանց իւր գիտութեան, կը ջանար երկա-  
րել երեկոյթը :

— Կուզէ՞ք որ երգեմ, հարցուց :

Եւ ստանալիք պատասխանին կանխաւ աներկբայ,  
Ֆոսթի թատրերգն առաւ և դաշնակին առջև նըս-  
տաւ : Երկար երգեց, և մարքիզն ալ չէր ուղեր ընդ-  
միջել : Յամբ արբեցութիւն մը կը տիրէր վրան : Կու-  
նտի սքանչելի երաժշտութիւնն, Արտեմիսի ջերմ  
ձայնով երգուած, ուղղապէս ազդեցութիւն կ'ընէր  
անոր զգայարանաց վրայ : Կը դիտէր անոր գեղեցիկ  
սև աչերն, ուր արուեստագէտի բոց կը փայլէր, դէմ-  
քըն որ կ'այլափոխուէր, ճապուկ մարմինն որ լի էր  
անդիմադրելի հրապուրով : Երկու անգամ ծռեցաւ որ  
համբուրէ զայն տենչանօք, երկու անգամ բանավա-  
րութեան վերջին նշոյլ մ'արգելեց զինք : Բայց առանց  
գիտակցութիւն ունենալու, իւր գեղեցիկ որոյմանց  
ամենն ալ կը նուազէին՝ հալելով իւր բազմանաց կրա-  
կէն, ինչպէս մարտ ամսոյ ձիւներն արևուն ճառա-  
դայթներէն : Հասկցաւ որ չպիտի կրնար ինքզինք մին-  
չև վերջը բռնել՝ եթէ փորձութիւնն աւելի երկար  
տեւէր : Ուզեց ինքզինք կորզել այդ հեռզհեռէ մեծ-  
ցող վտանգէն, և զանգակը քաշելով սենեկապանու-  
հի մը կոչեց :

— Ժամը տասնեւմէկն է, սիրելիս, ըսաւ . կը  
կարծեմ որ ժամանակ է ձեր սենեակը քաշուելու :

Եւ որովհետեւ Արտեմիս կը կարմրէր գլուխը ծռե-  
լով, մարքիզն աւելցուց, անոր ձեռքն համբուրելով .

— Կը ներէք ինձ որ յետոյ գամ ձեզնէ լուր առ-  
նում, այնպէս չէ՞ :

Արտեմիս նորէն կարմրեցաւ և գրեթէ անհասկնալի «այո՛» մը թոթովեց :

Ամուսնական յարկն առաջին դատիկոնին մէջ էր . երկու սենեակ պճնասենեկով մը , և երկուքին մէջ տեղը դահլիճ մը : Արտեմիս , իւր երազներուն մէջ սուղուած , ինքզինք իւր սենեկապանուհեաց ձեռքը թողած էր : Պճնասենեակը , լիապէս լուսաւորուած երկու կանդեղներով , գիշերուան համար պատրաստուող վայելչագեղ կնոջ մ' զմայլելի և քաղցրաբոյր խարշափովը կը լցուէր : Մարքիզուհին ինքզինք կը տեսնէր մեծ հայելոյն մէջ , ոչ թէ կարմրած , այլ տոգոյն , իւր քակուած մազերուն երեսնօսական փայլին ներքեւ . ժպիտը կը փախչէր իւր լըջացեալ շըրթունքէն , և ճակտին վրայ փոթ մը կը գծուէր : Գիշերուան զգեստն հագնելէ յետոյ տարօրինակ ըզգացում մը կրեց իւր ննջասենեակը մտած ժամանակ : Հոնտեղի կէս մութն հակապատկեր մը կը ձեւացնէր պճնասենեկին պայծառ լուսաւորութեան հետ : Ննջասենեակը լայն և բարձր էր , լաւ տաքցած այն զուարթ կրակով՝ որ կը շողշողէր վառարանին մէջ : Զեղունէն կախուած կանդեղ մ'իւր լոյսը կը մաղէր ապակիներուն փափուկ կապուտին մէջէն , տեսակ մը լուսաստուերի մէջ թողով սիւնազարդ մեծ անկողինն , որ իւր պաթիսթէ սաւաններուն ակնախըտիզ սպիտակութեամբ կը փայլէր : Արտեմիս մինակ էր . իւր վարդագոյն սենեկազգեստն հանեց և անկողինը մտաւ սարսուռով :

Հոն կ'սպասէր խոկուն , մտածելով որ իւր կենաց հանդիսաւոր ժամուն կը մօտենար , և տարօրինակ խորհուրդներ կը յուզուէին իւր ուղեղին մէջ : Իւր բոլոր անցուցած կեանքը կը տեսնէր իբր փայլակի մը մէջ . իւր առաջին տարիները , Պրըժայնի մէջ , ծովուն եզերքը , վանքին մէջ անցուցած երկար օրերն ,

և իրիկուան ալ ժամ ութին կանոնաւորապէս անկողին մտնելը : Կը յիշէր այն առաջին անգամն ուր մտածեր էր թէ օր մը պիտի ամուսնանար , և այն ժամանակ բնաւ կարեւորութիւն չընծայելն «ամուսնութիւն» բառին : Յետոյ , երբոր զգացեր էր ճշմարտութիւնն , իւր անկողինն իրեն տէր եղող մարդու մը հետ բաժնելու գաղափարին տարօրէն զգացումը կը յիշէր : Այն ժամանակ յանկարծ միտքը կը բերէր այն սարսափելի տեսարան , որ պարահանդէսէն յետոյ ծագած էր ընդ մէջ իւր մօր և հօրուին : Տարփաւորք , իւր մայրը տարփաւորներ ունեցած էր :

Ի՞նչ էր ուրեմն այն սիրոյ ֆիզիքական տպաւորութիւնն , որ կրնար կին մը հրապուրել՝ սիրոյ հեշտութիւնները ճաշակելու համար՝ մոռնալու իւր համբաւը , ստացած դիրքը , աշխարհի կարծիքը , իւր ամուսնոյն յարգը , և գուցէ իսկ իւր զաւակաց գորովը : Պէտք էր որ սիրոյ մէջ խիստ բարկ հեշտութիւնք գտնուէին , որովհետեւ ամեն բան կամակար կը զոհուէր ադոնց : Ի՞նչ անդիմադրելի հրապոյրներ էին , որովք իւր մայրն՝ առանց խղճի խայթ զգալու՝ զոհած էր իւր կենաց անդորրութիւնն ու արժանապատուութիւնն : Ուստի Արտեմիսի առաջին սարսափին վրայ կ'աւելնար տարտամ և անգիտակից հետաքրքրութիւն մը : Պիտի ճանչէր այն սէրը , զոր բանաստեղծք այնչափ հրապուրիչ ձեւերով կը զարդարեն . կին պիտի լինէր , և քիչ քիչ կ'սկսէր բացատրել ինքնիրեն թէ ի՞նչպէս իւր բարեկամուհիներէն ոմանք , և ի մէջ այլոց Աննա-Մարի , իրենց ամուսնութենէն յետոյ սիրած էին այն մարդ , զոր առաջ չէին սիրեր : Անշուշտ , սէրն զգացումէ մ' և տպաւորութենէ մը կը բաղկանայ . պէտք էր՝ այդ զգացման հասնելու համար՝ այդ տպաւորութենէն անցնիլ , մէկուն բարոյական հաճոյքը ճանչելու համար՝ միւսին ֆիզիքական հաճոյքը ճաշակել : Տա-



րակոյս չկայ որ իւր պարկեշտութիւնը կը զգածուէր մտածելով որ Ֆապիէն զինքն իւր թեւերուն մէջ պիտի առնուր և իրեն անծանօթ գգուանօք պիտի ծածկէր զինքը : Բայց որովհետեւ այս էր ամուսնութիւնը , որովհետեւ այսպէս կ'ուզէր բնական օրէնքը , ընկերական օրէնքը , վերջապէս մարքիզին դէմ հակակրօութիւն մը չէր զգար . ընդհակառակն , հաճելի իսկ էր իրեն իւր քաղցր ձեւերովն և ազնուական վարմունքով : Արդարեւ քաղաքավար մարդ մը պիտի գտնէր տարփաւորին մէջ , և վերջինին համբոյրները միւսին խօսքերուն քաղցրութիւնը պիտի ունենային :

Եւ մինչ Արտեմիս այսպէս կը խորհրդածէր , Ֆապիէն ամուսնական սենեակը մտնելու կը պատրաստուէր : Իւր յիշողութիւնն հետախուզելով չէր կրնար գտնել կին մը , որ այսչափ զինքը շփոթեցնէր : Սէրն , իւր քով , զգայութեանց սարսափելի զարթումով մը , բաղձանաց յանկարծ ականութիւնով մը կը բացատըրուէր : Քանի որ Արտեմիսի տիրանալու ժամը կը մօտենար , արիւնն աւելի արագ կը հոսէր իւր երակաց մէջ . սիրտն ուժգին կը բաբախէր , քող մը կը մթնցնէր իւր տեսութիւնը . շատ հեռի էր այժմ այն ըրած խորհրդածութիւններէն :

Աչերը կը փակէր , և Արտեմիսի վրայ երազած ձեւերու գեղեցկութիւնները տեսակ մ'ուրուականի մէջ կը տեսնէր : Արդարեւ տակաւին կ'ըսէր ինքնիրեն թէ այդ գիշերէն կախեալ էր իւր ամուսնական կենաց երջանկութիւնը . բայց այս տեսակ մը դաս էր , զոր կը յեղյեղէր առանց լաւ գիտակցութիւն ունենալու : Գրեթէ ամեն բարեբաղդ մարդոց պէս՝ առաւել իւր կրից բորբոքմունքը կը ճանչէր քան թէ խանդաղանքը : Մանաւանդ չէր գիտէր կոյսը : Չէր գիտէր կնոջ բնազդական ամօթխածութիւնն , որ մանկամարդ աղջկան մը վրայ մասնաւորապէս երկչոտ հանգամանք մը

կ'ունենայ : Սակայն , երբոր դուռը բացուեցաւ , բանավարութեան վերջին նշոյլ մ'ունեցաւ : Որոշեց որ չվախցնէ այդ տղան՝ զոր սարսափելի պայմանադրութիւն մ'իրեն կը մատնէր : Բանավարութեան նըշոյլը շուտով մարեցաւ , երբոր տեսաւ զԱրտեմիս պառկած մեծ անկողնին մէջ՝ սենեակին հետալի կէս-լուսովն ողողեալ : Քովը մօտեցաւ , տակաւին վարանելով , կակազելով , յետոյ քանի մը վայրկեան նայեցաւ առանց խօսելու : Մէկէն Արտեմիսի փաթթուեցաւ : Աղջիկն յանկարծ բռնուելով իւր ամուսնէն , դիմադրելու փորձ փորձեց : Այն ժամանակ Ֆապիէն իւր բոլոր ուժը գործածեց , որ իւր բուռն բաղձանքով կրկնապատկեալ էր , և աղջիկն որս եղաւ անոր բիրտ կրից : Կը զսպէր իւր պժգանաց ձայնը , զոր իւր շքրթուքը կուզէին արձակել . ինքզինք ազտեղեալ և անարգեալ կ'զգար : Այդ սոսկալի մարդն , իւր ամուսինն էր : Այժմ ցասումն ու բարկութիւնը կը գրաւէին այդ օրինաւորապէս բռնաբարեալ կուսին սիրար : Առագաստին խաղաղ լուութեան մէջ ինքզինք կորուսած կը մնար , ինքիրմէ սոսկալով , զսպելով այն հեկեկանքն որք իւր կոկորդը կ'եղնէին , և իւր մերկ թեւերը խածնելով , կ'ըսէր ինքնիրեն .

— Եւ ասոր համար էր որ մայրս ինքզինք անպատուեց :

Մայիսը կը վերադառնար՝ եղկացնելով օդն և կանաչազարդելով դաշտերն : Արդէն թռչունք բնակութիւն կը հաստատէին դարաստանին բարձր ծառերուն մէջ : Ժամանակն էր այն քաղցր շրջապայութեանց , ուր տարփաւորը դաշտերը կ'եղնեն նորածին փթթինազարդութեանց մէջ իրենց սիրելի խորհուրդներն և ան-

վախճան համբոյրները փոխանակելով : Վէ՛ռի դղեակին մէջ , ըստ երեւութիւն , ամենազուարթ կեանք մը կը վարէին : Երեք շաբաթուան առանձնութենէ յետոյ , մարքիզն առաջարկեց քանի մ'այցելութիւններ ընել շրջականերն և իրենց դրացիներն ընդունիլ : Մնաց որ , մեղրալուսին մը չկրնար յաւիտեան տեւել . հարկ է վերջապէս արտաքին կենաց խառնուիլ : Ինչո՞ւ համար շուտով չսկսիլ , քանի որ այդ պայմանաժամն անպատճառ պիտի գայ վերջապէս : Ճշմարիտն այս է որ մարքիզը կը ձանձրանար :

Այս մարդուն վրայ հոգեբանական յոյժ հետաքրքրաշարժ երեւոյթ մը կ'անցնէր : Արտեմիս «չէր զուարճացներ զինքը » : Եւ այս մարդ անամօթաբար չպիտի վարանէր ըսելու թէ զուարթաբան կամ ծաղրածու չէ ընաւ : Առաւօտէն մինչև իրիկուն իւր դէմը կին մ'ունէր միօրինապէս հանդարտ դէմքով , յստակ բայց պաղ նայուածքով , որ քիչ կը խօսէր , շարունակ կը կարդար կամ երկար մտածութեանց մէջ կ'ընկղմէր : Երբոր Ֆապիէն խօսք մը կ'ուղղէր անոր , կարծես յանկարծ քունէ կ'արթննար : Երկու երեք անգամ աղաչելէ յետոյ որ երգէ , հազիւ կը բանար իւր դաշնակն : Իւր հանդարտ հնազանդութիւնը կ'ապացուցանէր թէ առանց հաճոյք մ'զգալու՝ կը զիջանէր , ոչ ևս ունենալով երաժշտի մ'ուրախութիւնը նախապատիւ վարպետներու մտերմութեան մէջ : Ֆապիէն չէր կրնար իսկ մխիթարուիլ դիտողութիւն մ'ընելով . երբէք ընդդիմութիւն չէր գտներ անոր կողմէ : Արտեմիս իւր ամուսնոյն ամեն քմահաճոյից անձնատուր կը լինէր , ինչպէս կակուղ կնքամոմ մը , որ իւր վրայ դրոշմեալ տիպը կը պահէ : Երբէք բան մը չէր առաջարկեր , այլ իւր ամուսնոյն առաջարկածն իսկոյն կ'ընդունէր : Եթէ այլը ձիով պտոյտ մ'առաջարկէր , մտադիւր կ'ընդունէր , բայց առանց շութափութեան : Կնոջական մտերմու-

թեանց վարժուած այս աշխարհասէրն ամենէն աւելի զարմացնող բանն այս էր որ Արտեմիս իւր խորհուրդներն ու գաղտնիքները չէր յայտներ իրեն : Երբէք չունեցաւ իւր հետ այն պաշտելի գեղումն , ուր երկու սիրտը կը բացուին իրարու : Ուղեց հարցաքննել զայն իւր անցեալ վարուց , վանքին մէջ անցուցած կենաց , կազմած բարեկամութեանց վրայ , բայց միշտ բախեցաւ , ոչ թէ լուութեան , այլ քաղցր ընդդիմութեան մը , որուն չէր կրնար յաղթել :

Ա՛հ , եթէ կարող լինէր կարգաւ անոր սիրտը , պիտի տեսնէր թէ տարաբաղդ նորատի կինն ի՞նչ աւերմունք կը կրէր իւր մէջ . աւերմունք իւր յուսոյն և երջանկութեան , զորս երկար ժամանակ զգուած էր : Խեղճ աղջիկը վերջապէս կ'եզրակացնէր թէ վշտակրութեան դատապարտուած էր ինք , և թէ ի զուր լաւագոյն օրեր կը յուսար : Երբեմն ինքզինք կը մեղադրէր իւր ամուսնէն խորշելուն համար : Ի՞նչ յանցանք գործած էր նա վերջապէս , և ի՞նչ մեղադրանք կրնար ընել անոր : Այն բարոյական սոսկումը զոր կ'զգար անկէ , կրնար իւր բնութեան մէկ պակասութիւնը լինիլ , բայց չէր կրնար ընաւ արատել այն բարոյական ձիրքերը զորս կը կարծէր կենալ Ֆապիէնի վրայ : Սէրն ամեն բան չէ կենաց մէջ , և որովհետեւ այդ կիրքն իւր երազածին պէս չէր զգար , իրաւունք չունէր մարքիզին արժէքը չճանչելու :

Գալով մարքիզին , այն բաղձանքները՝ զորս Արտեմիս զարթուցած էր անոր սրտին մէջ , քիչ քիչ կը բթանային : Սովորաբար , իւր տարփուհիներն ալ նոյն Ֆիզիքական ձգումը կ'զգային իրեն համար՝ ինչ որ ինքը կ'զգար Արտեմիսի համար . այս պատճառաբան մը չէր հասկնար մարքիզուհւոյն այն բնազդական ընդդիմութիւններէն , այն ակամայ կրուած՝ բայց երբէք չընդունուած յանձնառութիւններէն : Ասկէց զատ

ամուսնացեալ մարդոց յոյժ սովորական եղած այն սխալը կը գործէր, որք լաւագոյն կը համարին իրենց կինն ամբաստանել, և բնաւորութեան պակասութիւն մը կը տեսնեն հոն, ուր իրենք միայն յանցաւոր են:

Ի՞նչ տարբերութիւն այս արձանին և իւր առջի բոցեռանդ տարփուհիներուն միջեւ: Պիգմալիոնի պատմութիւնն յաւիտենական է: Արձանագործը կը սիրահարի սառած Գալատէայի. բայց կ'սկսի տաքցնել զայն իւր հրավառ համբոյրներով, կը ջանայ արթնցնել անոր սրտին մէջ աստուածային խանդն, և չուզեր անոր տիրանալ՝ մինչեւ որ մարմարը մարմին կը լինի: Իսկ հոս՝ մարմարը միշտ մարմար կը մնար: Ֆապիէն կ'զգար որ Արտեմիս բացակայ կը կենար իւր համբոյրներէն, որոց հեշտալի արբեցութեան չէր մասնակցեր, անծանօթ լինելով այն կրից յափշտակութեան, յորմէ վախնալ կը թուէր: Ֆապիէն կը վըշտանար ասկէ. ոչ միայն իւր յիմար սնափառութեամբ, այլ և իւր դժգոհ հեշտասիրութեամբ:

Ուստի մեծ ուրախութեամբ նշմարեց այս դեկտեմբերի օդէն աւելի ցուրտ մեղրալուսնին միօրինակութիւնը խցելու միջոցն, որովհետեւ բարոյական ըզգացում չկար իւր քով. ըսաւ ինքնիրեն թէ ամուսնութիւնը վերջապէս սէր չէ, այլ տեսակ մ'ընկերական պաշտօն, զոր պարտաւորեալ է մարդ կատարել երբոր վիճակ մ'ունի աշխարհի մէջ: Նորէն տարփուհիներ պէտք էր ունենալ, որովհետեւ Արտեմիս չէր ուզեր իւր տարփուհին լինել: Իւր տունը պէտք էր լաւ վիճակի մէջ պահել և ցայգահանդէսներ տալ, ուր մարքիզուհին փայլէր իւր գերազանց գեղեցկութեան անբաղդատելի շքով:

Պէտք չէ խնդրել կարգ մը էակներէ այն ազնիւ փափկութիւններն, որք գերագոյն արարածոց յատուկ են: Ֆապիէն անկարող էր սիրելու այնպիսի կին մը,

որում չէր ցանկար, և անկարող էր ցանկալու կնոջ մը, որ իւր կրից թռիչներուն բաժանորդ չէր: Այսպէս յամրաբար ամբարտակ մը կը կանգնուէր ընդ մէջ այս վեց շաբաթուան ամուսնոց: Մարքիզը պէտք էր շուտով բժշկուիլ Արտեմիսի վրայ ունեցած սէրէն, և բժշկուածին պէս իյնալ միւս ոչ նուազ հասարակային սխալման մէջ.

— Ես անկասկած եմ կնոջս վրայ. նա հաւատարիմ պիտի կենայ ինձ, որովհետեւ զգացողութիւն չունի: Վասն զի մարդ, որ հիմնապէս սնապարծ և ինքնամոլ էակ մ'է, չընդունիր երբէք որ ուրիշ մը կրնայ ծնուցանել այն զգացումներ, զորս ինք կարող չեղաւ գրգռել:

Յունիս ամսէն սկսեալ խումբ մը ֆարիզցիք խոյացան վէճի դըրեակին վրայ: Պ. Թանտրէ հրաւիրելոց դասակարգեր չէր կազմաւորեր. ո՛վ ինչպէս ուզէր՝ այնպէս կը մնար: Պ. Մորէր և Քաթէրին այլ և այլ պատճառներ յառաջ բերելով չեկան: Արդարեւ Պ. Մորէր գործ մը կ'աւարտէր, որոյ համար ֆարիզ կենալու պարտաւորեալ էր: Քաթէրին ալ փոյթ չունէր Արտեմիսի և Ֆապիէնի սիրակցութեանց ներկայ գրտնուելու: Ճշմարտութիւնը չ'ը գիտեր, և ի՞նչպէս պիտի իմանար: Աղջիկը սիրով չէր իւր մօր հետ, որպէս զի իւր վիճակն յայտնէր անոր: Փեսան ալ չափազանց ինքնասիրութիւն ունէր: Մարքիզուհին այդ ամեն հրաւիրելոց անցնելը կը տեսնէր՝ առանց անոնց զբօսանքներուն խառնուելու: Նախ՝ վասն զի բնաւ հաճոյք չէր գտներ անոնց մէջ, երկրորդ՝ կ'զգար որ իւր ախրութիւնն այդ թուուցիկ գլուխներուն վըրայ կը ծանրանար իբրեւ անբաժան ձանձրոյթ: Բան մը միայն ուրախացուց զինք. այն է Տիկին Քէրսէնի գալը, որ քանի մը շաբաթ իրեն հետ անցունելու մտադիր էր: Նոյն միջոցին փայլուն ընկերութիւն մը

կար վէճի դղեակին մէջ : Նախ Տիկին ժամ վէրնիէ , միշտ հանճարեղ և խայթիչ , իւր պչրող փարիզուհւոյ նուազեալ շնորհագեղութեամբ , և Մորիս ժանտրոն , տասնեակներով հանճարաբանութիւններ շինող , որք երբեմն կը կճէին , բայց բնաւ չէին սկրդեր , և Լուի Մարէշալ , միշտ քսուած , օրը չորս անգամ հագուստ փոխելով , առաւօտուն , նախաճաշի ժամանակ կէս օրէն յետոյ և ընթրիքի ժամանակ : Հոն էր նաեւ Տիկին Ռէբ , կատարելապէս մխիթարուած Պ. Վոյսի մահուան վրայ , և վերջապէս Հանրիէթ Ռոչէզ , որոյ վրայ յոյժ անհաւանելի պատմութիւն մը կը պտըտէր : Սիրահարած էր : Որո՞ւ : Ոչ ոք գիտէր : Բայց կը ճըշդէին , և կարծիքն այս անգամ ճշմարտութեան երեւոյթ կ'առնուր : Նախ իւր վարմունքը փոխուած էր , խոկուն և մտազբաղ էր : Ճաշի կամ երեկոյթի մէջ աչերն յանկարծ կը լուսափայլէին . ասկէց զատ առաջուան չափ չարամիտ չէր :

Ինքզինք վէճի դղեակն հրաւիրեց , և իւր գալը գրեց Արտեմիսի : Եթէ մէկը շահ ունենար անոր ընթացքը դիտելու , երրորդ օրը կրնար ճշդել : Տիկին Ռոչէզ ամեն օր նախաճաշէն յետոյ դուրս կ'երէր և իրիկուան ճաշին ժամանակ կը վերադառնար : Բայց ո՞վ կրնար հետազօտել զայն : Լուի Մարէշալ՝ Տիկին վէրնիէի կը քծնէր , որ խենդի պէս կը ծիծաղէր այս բանիս վրայ . Մորիս ժանտրոն՝ Տիկին Ռէբի վրայ կը խենդենար , յորմէ չէր բաժնուեր ինչպէս իւր ստուերէն . Մարքիզը կը ձանձրանար , մարքիզուհին մտախոհ էր , և Տիկին Քէրսէն իւր բարեկամուհւոյն դաղտնիքն հասկնալու կ'աշխատէր :

— Օ՛ն , սիրելիս , ըսաւ անոր օր մը , անկեղծ եղիր ինձ հետ . երջանի՞կ ես :

— Բայց . . .

— Խուսափանք պէտք չէ , երջանի՞կ ես :

— Ամուսինէս դժգոհելու բան մը չունիմ :

— Ա՛ն երկդիմի պատասխան մ'ալ . ես քեզ բացորոշ ճշմարտութիւնը կը հարցնեմ . երջանի՞կ ես :

— Այո՛ :

Տիկին Քէրսէն երկար նայուած մը ձգեց մարքիզուհւոյն վրայ , և չափեց , զգալով որ դեռ չափաի կրնար բան մը քաղել անկէ : Արդարեւ Արտեմիս կը սիրէր զԱննա-Մարի , բայց իւր մէջ անցածն անոր ըսելու կը վարանէր : Մարքիզին դէմ մեղադրած նք արտաբերել : Հարսանեաց առաջին գիշերին պատմութիւնն ընել : Փապիէնի ցոյց տուած պաղութենէն գանգաւիլ , որ իւր ցոյց տուած պաղութեան հետեւանքն էր : Թէ՛ ընկերութեան և թէ՛ առանձնութեան մէջ Պ. Թանտրէ ինքզինք կատարեալ կը ցուցնէր , ուստի և չէր կրնար աւելի պահանջել : Եւ ի՞նչպէս այլք կրնային տեսնել ինչ որ մտերիմ բարեկամ մը չէր տեսներ : Չէին կրնար բնաւ կասկածիլ թէ սառոյցի լեռ մը կար այդ եռամետայ ամուսնոց մէջ : Ասկէց դատ՝ անոնցմէ իւրաքանչիւրն ուրիշ բանի զբաղած էր : վերջապէս Արտեմիս և Փապիէն երջանիկ կ'երեւէին . այլոց ի՞նչ փոյթն էր որ իրենց ցոյց արուածին հակառակ կողմը փնտռէին : Շատ մարդիկ արտաքուստ կը ժպտին , և իրենց կրած վիշտն իրենց մէջ կը ծածկեն :

Առաւօտ մը , Արտեմիս միայնակ պտըտելու ելաւ ձիով : Օդն հեշտալի էր , անուշաբոյր մեղմիկ հով մը կը պարարէր օդը : Բաւական ձիավարելէ յետոյ , Մէնսի շրջականերն հասած ժամանակ ձիաւորի մը պատահեցաւ : Մարդը գլուխն ասդին դարձնելով , Արտեմիս ճանչեց զայն . Մաքսիմիլիէն Տանկարն էր , որ բաւականացաւ ողջունելով մանկամարդուհին , և անշուշտ պիտի անցնէր երթար , բայց Արտեմիս ուղղապէս անոր մօտեցաւ .

— Բարեբաղդ հանդիպում մ'է այս, Պարոն, ըսաւ, արդեօք դրացի՞ ենք :

— Այո՛, Տիկին, ես թրէբոր կը բնակիմ :

— Եւ ինձ այցելութիւն չտուի՞ք :

— Արդարեւ, Տիկին, դուք հազարապատիկ աւելի շնորհալի եք, և ես չեմ կարող ըսել ձեզ թէ ձեր այդ մարդասիրութիւնն ո՞րչափ շնորհակալ կ'ընէ զիս. բայց ես պատիւ չունիմ ձեր բարեկամներէն մին լինելու, և չեմ ճանչեր թանտրէ մարքիզը. վերջապէս կը վախնայի որ ձանձրոյթ կուտամ ձեզ :

Անշուշտ ուրիշ պատճառ մը կար, որ Մաքս չէր ուզեր ըսել, վասն զի խօսած ժամանակ քիչ մը կը կարմրէր, ինչպէս ամեն աննենդ բնութիւն ունեցող անձինք, որք ճշմարտութիւնն ամբողջապէս չխոստովանիլը ստախօսութիւն կը համարին :

— Նախ, Պարոն, ըսաւ Արտեմիս, գեղերու մէջ փարիզի չափ խօստապահանջութիւն չկայ, և ներկայացումը կատարելապէս կը բաւէ այցելութիւն մ'արտօնելու : Երկրորդ, ձեզ պէս մարդ մ'երբէք ձանձրալի չէ :

Արտեմիս գրեթէ զուարթութեամբ կը խօսէր, չը ծածկելով այն բերկրութիւնը՝ զոր Մաքսիմիլիէնի ներկայութիւնը կը պատճառէր իրեն : Կը յիշէր մըտքին մէջ այն գեղեցիկ օրը, զոր Աննա-Մարիի հետ անցուցած էր փարիզի շրջականներն, աղջկանց վարժարանին մէջ, գարնան այն զով կէս օրէն յետոյ :

— Եւ ձեր փոքրիկ արարուհին, ի՞նչ եղաւ, շարունակեց Արտեմիս :

— Մեծ հօրս և ինձ հետ է ի թրէբոր, պատասխանեց Մաքսիմիլիէն :

— Անունը թէմմա է, այնպէս չէ՞ :

— Այո՛, Տիկին, կամ մանաւանդ մականուն մ'է զոր ես տուած եմ անոր : Ճշմարիտ անունը, որ ա-

րաբերէն յոյժ գեղեցիկ է, գոհար կը նշանակէ . դժբաղդարար անհասոյ հնչում մ'ունի ֆրանսերէնի մէջ : Բան մը փնտռեցի որ արարացի բառին իմաստը յիշեցնէ, և ամենէն յարմարագոյնը գտայ թէմմա անունը : Խեղճ տղան :

— Ինչու այդպէս կը խղճաք վրան :

— Վասն զի մինակ է աշխարհի մէջ և հեռի իւր հայրենիքէն :

— Չի՞ կրնար հոն վերադառնալ :

— Ինձմէ զատուիլ չուզեր, Տիկին. ի՞նչ ընեմ : Այս արեւելցիք մեզ պէս չեն. յամառ երախտագիտութիւն մ'ունին : Ես կեանք տուի այդ տղուն, և թերեւս ախուր ընծայ մ'է որ ըրի իրեն : Արդ, այսչափը բաւական է որ այդ փոքրիկ սիրտ յաւիտեան անձնուէր լինի ինձ : Եթէ տեսնէք անոր վիճակն, երբոր մեկնիմ կամ վերադառնամ : Աչերն այնպէս կը լուսաւորուին, որ կարծես թէ արեւու ճառագայթ մը կայ սեւ աղամանդի մը մէջ : Ետեւէս կը նայի առանց խօսելու, շրթունքը միայն շարժելով, կամացուկ բան մ'ըսելու պէս :

— Կը սիրէ ձեզ :

— Այդ աղջիկը :

Այս երկու բառերն այն կերպով արտասանեց Մաքսիմիլիէն, որ յայտնի կը տեսնուէր թէ արարուհին ո՞րչափ գոյութիւն չունէր իրեն համար իբրեւ կին : Թէմմա կրնար մեծնալ, բայց ինք յաւիտեան ուրիշ բան չպիտի նկատէր զայն, այլ միայն վայրենուհի մը, զոր ժամանակաւ իւր թեւերուն մէջ բառնալով փախուցած էր յալթարերձ սօսերէ շրջապատեալ սէզերու մէջէ, հրացանի հարուածներ փոխանակելով : Սակայն ժամանակը կ'անցնէր, մարքիզուհին և իւր ընկերը կէս ժամէ ի վեր զմայլելի ճանրէ մը կ'երթային աջ ու ձախ պտղաբեր ծառերէ հովանաւորեալ : Ֆրանսայի հիւսի-

սային գաւառաց մէջ, ուր խնձորենոյ մշակութիւնն ընտանեկան հաստատութիւն մ'է, հովանաւոր ծառեր գտնելը զարմանալի բան մ'է միշտ : Լայնատեղեւ սօսիներ կային՝ իրենց արգասաւորիչ հիւթն արձակ հողին մէջ աճեցնող :

— Բայց դղեակն եկեր ենք, գոչեց Արտեմիս՝ զարմացմամբ իւր շուրջը նայելով :

Առանց նշմարելու և առանց բնաւ կասկածելու՝ խոտորնակ ճանբան բռներ էին, որ էօ քաղաքին ետեւէն դառնալով վէռի դարաստանին վերի կողմը կ'երնէ :

— Ուրեմն, Տիկին, ըսաւ Մաքս ժպտելով, ինձ ուրիշ ընելիք չմնար, բայց եթէ հրատեչտ առնուլ ձեզնէ և շնորհակալութիւնս յայտնել այս սխրալի պտոյտին համար :

— Ամենեւին, Պարոն, չեմ ուզեր որ այդպէս բաժնուիք ինձմէ : Մինչեւ վերջը պիտի ընկերակցեք ինձ և մեզ հետ նախաճաշ պիտի ընէք :

— Բայց անհնարին է, Տիկին :

— Ինչո՞ւ :

Մաքսիմիլիէն ապշած մնաց, չգիտէր ինչ պատասխան տալ, վասն զի վերջապէս անհնար էր իրեն ըսել թէ ինչո՞ւ չէր ուզեր կամ չէր կրնար երթալ նախաճաշ ընել վէռի գղեակին մէջ : Բարեբաղդաբար Արտեմիս սխալ հասկցաւ Մաքսի խօսքերուն մտքը. կարծեց թէ քաղաքավարութենէ թելադրեալ պարզ պատճառանք մ'էր, կամ ձանձրութիւն պատճառելու երկիւղ :

— Չքմեղանք չեմ ընդունիր, ըսաւ ժպտելով : Նախ ժամանակն ուշ է. դուք նօթի էք հարկաւ, և մինչեւ որ թրէրոր հասնիք՝ ճաշի ժամանակը շատ պիտի անցնի. երկրորդ չեմ ուզեր հիւրերս զրկել ձեզ տեսնելու և ճանչելու բերկրութենէն : Պիտի մերժէք ինչիւրս :

Ո՛չ, չէր մերժեր : Այս ոսկեղէն ձայնը տարօրինակ ազդեցութիւն մը կ'ընէր Մաքսի վրայ, որ սխրացած անոր կը նայէր : Մաքսի գուհին իւր ազնիւ մատակիրն վրայ նստած էր, իրանն ամազոնի մը մէջ բանտարկուած, որ իւր պարանոցին և ուսերուն դեղեկութիւնը կը նկարէր : Չին վաղցնել սկսաւ. Մաքս ալ անոր օրինակին հետեւեցաւ, և երկուքը մէկէն դղեակին աւաղայատակ բակը մտան : Մաքսի զրկմէն ի մէկ չճանչեց զՊ. Մաքս Տանկլար, բայց երբոր իւր կինն անոր անունը տուաւ, սիրալիբ մեծարանօք ընդունեց զայն :

— Ամենն ալ դահլիճն են, ըսաւ. ուշ մնացիք, սիրելիս :

Հանրիէթ Ռոչեզ շատ կեղծաւոր էր. արդարեւ ինքզինք բռներու կամ իւր մտքը ծածկելու արհեստն սքանչելապէս գիտէր. այնպէս որ իւր սիրելագոյն բարեկամուհուն մահուան կրնար ներկայ դտնուիլ առանց բնաւ խուսկելու, և սակայն յոյժ նշանական « ա՛ » մը արձակեց երբոր Մաքսիմիլիէն վէռի դղեակին ընդարձակ և հրաշագորդ դահլիճէն ներս մտաւ՝ թանտրէ մաքրիզուհին թէն առած : Իսկոյն սկսաւ շնորհալի կերպիւ ժպտիլ, մինչդեռ սրտին մէջ բարկութեան զգացում մը կ'որոտար : Բայց շուտով քաջաբեցաւ, եթէ երբէք երկիւղ կրած էր, վասն զի Արտեմիս բարձրաճայն պատմեց թէ ինչպէս պատահեր էր Պ. Մաքս Տանկլարի և հրաւիրեր էր : Մաքսիմիլիէն Հանրիէթի մօտենալով ողջունեց : Նա ալ կամացուկ մ'ըսաւ .

— Նախաճաշէն յետոյ սենեակս եկէք ետեւս՝ երբոր աչք ընեմ ձեզ :

Հանրիէթի գաղտնիքը Մաքսիմիլիէն էր : Պէտք էր որ ստուգիլ սիրէր զայն. վասն զի այս խորամանկ և պաղարիւն կինն, որ ամեն բան կը հաշուէր, մինչեւ

իսկ իւր տկարութիւնները, նախաճաչէն ելած ժամանակ առաջարկեց անոր պտոյտ մ'ընել դարաստանին մէջ: Միայն թէ, փոխանակ ծառերուն տակ տանելու, դղեակին մէջի բնակութեան յարկերը տանող աշտարակներէն միոյն մէջ սողոսկեցաւ անոր հետ: Եւ երբոր Հանրիէթի ննջասենեակը հասան.

— Հիմա պատմէ ինձ, ես ամեն բան գիտնալ կ'ուզեմ, ըսաւ:

Պէտք եղաւ որ Մաքսիմիլիէն վերսկսէր Արտեմիսի ըրած պատմութիւնն՝ առանց մանրամասնութիւն մը մոռնալու: Հանրիէթ անոր աչերուն մէջ կը նայէր՝ ճշմարտութիւնն ամբողջապէս հոն կարդալու համար: Նոյն միջոցին չէր խորհեր թէ ինչ պիտի ըսէին իրեն համար եթէ իմանային որ երիտասարդին հետ իւր սենեկին մէջ փակուած էր: Ոչ Տիկին վէրնիէի չարախօսութիւնները կը մտածէր, ոչ Տիկին Ռէբի այպանումները կամ Մաքսիմ Ժանտրոնի բամբասանքը. ոչ իւր նախանձութիւնը միայն պաշարած էր իւր միտք, յիմար, անխորհուրդ և անճահ նախանձութիւն մը, վասն զի բնաւ ապացոյց մը չկար թէ Արտեմիս և Մաքս սուտ խօսելու համար համաձայնած լինէին: Մարքիզուհին հազիւ կը ճանչէր զՊ. Տանկլար, և արդարեւ ամուսնական պարահանդէսէն ի վեր երբէք տեսած չէին զիրար:

Այդ չարաճճի արարածն իւր կենաց մէջ առաջին անգամ կը սիրէր ճշմարտապէս: Ի սկզբան մտածեր էր հուշակաւոր անձ մ'աւելցնել իւր հաւաքածոյին մէջ, յետոյ քիչ քիչ ճարպիկ պչրանքով լարած որոգայթին մէջ ինք բռնուեր էր: Մարդուն միամտութիւնն յաղթեր էր կնոջ չարամանգութեան. անկեղծութիւնն յաղթեր էր ստութեան: Փոխանակ անոր անկումը պատրաստելու, յանկարծ գլխոյ և զգայարանաց յիմարութեան մ'անձնատուր եղեր էր: Եւ այս

կիրք կը մեծնար այն ժամանակէն ի վեր, և կարծես թէ ոչինչ կրնար յազեցնել այդ սրտի մէջ յանկարծակի բորբոքեալ բոցն:

Իսկ Մաքսիմիլիէն: Ստուգիւ յոյժ պիտի չփոթէր եթէ պէտք լինէր իրեն ըսել ինչ որ իւր սրտին մէջ կ'անցնէր: Հանրիէթ ի սկզբան հաճելի եղաւ իրեն իւր անբաղդատելի վայելչագեղութեամբն և շնորհալի ժըպիտով: Կը սիրէր անոր թեթեւ, յաճախ խորամանկ և միշտ չարամիտ խօսակցութիւնը. բամբասանքն անուշութիւն ունի մինչեւ իսկ լաւագոյն մարդոց համար: Միայն թէ, խորհրդածելով մտածեց թէ վատթար բնաւորութիւնը միայն կը հալածեն խեղճ մարդկութիւնը. կին մը, որ ամեն մարդու համար գէշ կ'ըսէ մէկու մը, այն մէկուն համար ալ գէշ պիտի ըսէ ամեն մարդու: Բայց թէ որ Հանրիէթ հաճելի էր Մաքսի, գոնէ հաճելի լինելէ աւելի բան մը չէր ըներ. Ընդհակառակն՝ Տիկին Հանրիէթ Ռոչէյ՝ ամեն անգամ զայն տեսնելուն՝ քիչ մ'աւելի կը սիրահարէր անոր. օրին մէկն՝ երիտասարդն ինքզինք տարփաւոր դտաւ կնոջ մը զոր չէր սիրեր. սովորական արկած այն ամեն կապակցութեանց, ուր մէկուն կիրքը միւսին կրից չհամապատասխաներ երբէք:

Մաքսիմիլիէն բան մը չէր ուխտեր. վասն զի չէր հրապուրած զՀանրիէթ, այլ ինքզինք ընծայած էր: Երիտասարդը բռնուած էր, առանց մեծ խանդի, այնպիսի կապակցութեան մը մէջ, որ շատ հաճոյ չէր իրեն: Իւր սրտին փափկութիւնը կը վիրաւորուէր իւր համբոյրներուն ստութեանէն: Պահ մը մտածեց խղել յարարերութեան կապը. բայց ինքզինք բռնեց այն զգացմամբ, որ արանց քով սովորական, բայց կանանց քով խիստ հազուադիւր է. այն է զթութիւն: Ո՞չ ապաքէն հոկտեմբեր ամսոյ մէջ նորէն ուղեւորութեան պիտի ելնէր. այն ուղեւորութիւն բնական լուծումը

պիտի լինէր գործին, և դո՛նէ իրեն ընաւ դժգոհու-  
թիւն չգատճառող կին մը թշնամանած լինելու խղճա-  
հարութենէն ազատ կը մնար: Սէր լինէր կամ քմա-  
հաճոյք, Հանրիէթ պչրող չէր եղած Մաքսիմիլիէնի  
հետ, այլ անկեղծօրէն ինքզինք նուիրած էր անոր.  
մինչեւ իսկ, առանց իւր պարզամիտ անամիառութեան,  
Հանրիէթ կրնար արդէն նշմարել Մաքսիմիլիէնի գաղ-  
շութիւնը:

Շարունակ ոտքի վրայ կեցած էր անոր առջեւ. իւր  
ինքնասիրութիւնը քիչ քիչ կ'ողորուէր:

— Ծնորհակալ եմ, ըսաւ, կասկածս անիրաւ է  
եղեր:

Մաքսիմիլիէն սենեակէն դուրս ելաւ առանց մէկէ  
մը տեսնուելու, և իւր բացակայութիւնը նշմարուելէ  
առաջ դահլիճը մտաւ: Քանի մը վայրկեան յետոյ  
հիւրերը պարտէզն երան բարձրաբերձ և թաւ ծա-  
ռերէ ընդարձակ ճեմելիք մ'երթալու համար: Հոն  
Արտեմիս նորէն կը խօսակցէր Մաքսիմիլիէնի հետ,  
մինչ մարքիզը կը շաղակրատէր Տիկին Վերնիէի և  
Մորիս Ժանստոնի հետ: Ասոնց ետին, քիչ մը հեռի,  
Տիկին Ռէք՝ լուի մարէշալի համեմեալ զուարճաբա-  
նութիւններուն վրայ կը ժպտէր: Տիկին Քերսէն բա-  
ցակայ էր երկու առուր համար. այրը պէտք ունեցեր  
էր անոր՝ իւր ազգականներէն միոյն ամուսնութեան  
համար:

— Երկար պիտի կենա՞ք Թրէբոր, կ'ըսէր մարքի-  
զուհին:

— Մինչեւ հոկտեմբեր ամիսը, Տիկին:

— Սյուզափ երկար:

— Երբոր մէկը շատ կ'աշխատի, ըսաւ Մաքսիմի-  
լիէն ժպտելով, ժամանակն երկար չերեւիր երբէք:  
Հաճեցէք նկատել որ մեծ հայրս և Ժէմմա հետս են.  
Երկու արթուն գորովներէ շրջապատեալ եմ միշտ:

Վերջապէս ծովն աչքիս առջեւն է, և միշտ կը սիրեմ  
մանկութեանս այդ հին բարեկամը դիտել:

— Ի՞նչ ծովուն եզերքը մեծցած էք:

— Այո՛, Տիկին, Պրըթայնի մէջ:

— Պրըթայնի մէջ, գոչեց մարքիզուհին զուար-  
թութեամբ: Ես ալ: Պրըթայնի ո՞ր կողմը:

— Օ՛, աննշան անկիւն մը, որոյ անունը լսած չէք  
երբէք. Բորնիքի շրջակայները:

Այս անգամ Արտեմիս կանգ առնլով.

— Ես ալ, ըսաւ դարձեալ:

Եւ ուշադրութեամբ երիտասարդին երեսը նայե-  
լով, որ նոյնպէս զարմացած էր, վայրկեան մը լու-  
թենէ յետոյ աւելցուց յուզեալ ձայնիւ.

— Այդ աննշան անկիւնը Լա Պիրոշէա կը կոչուի,  
այնպէս չէ: Աչքս գոցեմ, բաւական է. . . ամեն բան  
միտքս կուգայ: Կը յիշեմ՝ այն փոքր ծովեզրը, խա-  
րակներով լի, և զանոնք շրջապատող պարուրածեւ  
բլուրը՝ գորշագոյն տունկերով ծածկեալ: Կենացս լա-  
ւագոյն տարիներն հոն անցուցած եմ մեծ ազարակին  
մէջ, Պովուառի ճանբուն վրայ, այն բարի մարդոց  
քով, որք շատ կը սիրէին զիս: Ազատ էի, երջանիկ  
էի, բարեկամ մ'ունէի որ կը խաղար և կը վազվզէր  
ինձ հետ դաշտերուն ու ժայռերուն մէջ: Ես Մաքս  
կը կոչէի զայն, վասն զի անունը Մաքսիմիլիէն էր. նա  
ալ զիս Ժովիէթ կը կոչէր, վասն զի սիրուն կը գտնէր  
զիս: Տղայութեանս այդ ընկերը չմոռցայ երբէք. ոչ  
Լա Պիրոշէաէն մեկնած և վանքը մտած ժամանակս, ոչ  
ալ վանքէն ելնելով մեր տունը դարձած ժամանակս. . . :  
Օր մը տեսայ զայն ընկերութեան մէջ, առանց զիրար  
ճանչելու խօսակցեցանք միմեանց հետ, և պէտք էր  
որ անծանօթ ծովեզրի մ'անուն յիշէր ինձ, որպէս զի  
անցեալն արթնցներ և յիշողութիւնս լուսաւորէր, և



որպէս զի չափահաս մարդուն մէջ վերստին գտնէի տղան, այն տղան, որուն կ'ըսէի.

— Բարի լոյս, Մա՛քս . . . նա ալ կը պատասխանէր ինձ .

— Բարի լոյս, Ժողիէ՛թ, ըսաւ Մաքսիմիլիէն՝ բուցավառ աչօք, սիրանալով իւր մանկութեան ամենասիրելի յիշատակներուն այսպէս յանկարծ արթննալուն վրայ . . . : Դո՛ւք, Տիկի՛ն, դո՛ւք էք Ժողիէթն : Ա՛հ, հիմա կը հասկնամ թէ ինչո՞ւ ձեր ոսկեղէն ձայնը տարօրինակ թուլութիւն մը կ'ընէր իմ վրայ : Անցեալը կը գրաւէր ներկայն, և այն բերկրութիւնը զոր ունէի ձեզ հետ խօսելու համար, անցելոյն բերկրութեան անուշահոտութիւնն էր :

Արտեմիս բնազդաբար աչքը դարձունելով տեսաւ որ իրենք երկուքը մինակ էին. միւս զոյգերն ուրիշ կողմ գնացած էին :

— Եկէ՛ք, ըսաւ Մաքսի, ուրախ լինելով այս առանձնութեան վրայ : Կրնանք պահ մը խօսակցիլ :

Եւ քաշեց տարաւ կանաչազարդ փոքրիկ քէօչկ մը, որ ծառուղոյն մէկ քովը ծածկուած էր :

— Նստինք հօս, Պարո՛ն : Եթէ գիտնայիք որչափ սիրտս յուզուեցաւ ձեզ գտնելուս վրայ : Ըսի ձեզ թէ յանկարծական լուսաւորութիւն մ'եղաւ ինձ համար. առաջ չկրցի ճանչել ձեզ, դուք ալ զիս. այս բնական է. բայց ինչո՞ւ համար, երբոր դուք Բորնիքի շրջակայներն անձանօթ խորշի մը խօսքն քրիք, զարմանալի սրտայուզութիւն մ'զգացի, այն « արդէն տեսած » ի տպաւորութիւն, որ յանկարծ արթնցուց յիշողութիւնս :

— Վասն զի, տղայութիւնը, Տիկի՛ն, կենաց այն ժամանակն է, որ աւելի հետք կը թողու մարդկային սրտին մէջ : Արդեօք մարդ՝ կենաց մէջ յառաջ երթալով սխրացմամբ կը յիշէ այն ժամանակն ուր կենաց մէջ կը մտնէր. կամ թէ՛ տղուն դեռ նոր յիշողու-

թիւնն առաւել հաւատարմութեամբ կը պահէ ստացած տպաւորութիւնը : Չեմ գիտեր. բայց տասն տարու եղած ժամանակիս չնչին բաներն այսօր կը յիշեմ, և քսան տարու եղած ժամանակիս կարեւոր իրողութիւնները կը մոռնամ :

— Ուրեմն կը յիշէք . . .

— Լա Պիրոյէ՛ ուր . . .

— Եւ Ժողիէ՛թը :

— Ա՛հ, Տիկի՛ն մարքիզուհի, Ժողիէթ ա՛յնչափ սիրուն էր, որչափ դուք գեղեցիկ էք : Կը տեսնեմ զայն տակաւին իւր կապոյտ շրջագգեստով և գորշ կտաւէ գոգնոցով : Օր մը ձեռք ձեռքի տուած խորաձորի մը մէջ կը թափառէինք և սեւ թուփ կը բրցունէինք : Տեսնելով որ թաւուտի մը մէջ շատ թուփ կար հասունցած, թողուցի զինքն և թաւուտին մէջ մտնելով շատ մը բրցուցի բերի : Շուտով բախնեցինք և խոտին վրայ նստած՝ սկսանք ուտել, ես անյազաբար շրթունքս և այտերս ներկելով, իբրեւ մեծ և անհոգ պատանի մը : Իսկ Ժողիէթ, իբրեւ փոքրիկ մաքրասէր օրիորդ, շնորհալի կերպիւ և մատին ծայրերովը կ'ուտէր զգուշութեամբ : Երբոր զիս տեսաւ, քիթս բերանս և ձեռներս կարմիր ներկուած, սկսաւ ծիծաղիլ, իւր ճերմակ ակունները ցուցնելով և իւր փոքրիկ ձեռներն իրարու զարնելով : յետոյ իւր երկու թեւերով պարանոցս փաթթութեցաւ ըսելով. « Բեզ համբուրելու համար չէ որ կը համբուրեմ քեզ. այլ վասն զի դու ներկուած ես, ես ալ կ'ուզեմ ներկուիլ . . . » : Կը յիշէք զայս, Տիկի՛ն :

Մարքիզուհին կը ճառագայթէր ուրախութենէն :

— Ի՛նչպէս չեմ յիշեր, ըսաւ : Գիւղին մէջ մեծ ծակ մը կար, յորմէ շատ կը վախնայի : Երբոր անձրեւ գար, այն ծակը կը լցուէր ջրով, և երկիւղս սարսափի կը փոխուէր : Քանի անգամ Մաքս զիս

գրկելով ցատկեց անոր վրայէն . և երբոր վախնայի ,  
Մաքսին ճիտը վաթթուելով՝ իսկոյն կը ջրաջալերուէի :  
Կը յիշէք զայս , Պարոն :

— Ի՞նչպէս չեմ յիշեր . . . Եւ ձեր գտնուած ա-  
գարակին վարձակալուհւոյն սեւ գամփուր . . .

— Եւ քահանային տնտեսուհին , որ պատարագին  
ժամանակ կուլար :

Արտեմիս զայն յիշած ժամանակ խնդալէն կը մա-  
րէր , որպէս թէ քահանային տնտեսուհւոյն արտաս-  
ուելը նորանչան ու ծաղրելի բան մ'եղած լինէր :  
Մաքս ալ կը խնդար . յիշատակութիւններն յիշա-  
տակութեանց կը յաջորդէին , և զիրար տեսնելուն  
վրայ ուրախ , բան մը չէին տեսներ , բան մը չէին  
լսեր , մինչեւ իսկ ծառուղւոյն մէջ իրենց մօտ ճար-  
ճատող չոր տերեւներու խորշիւնը :

Հանրիէթ՝ Մաքսէն քառորդ մը յետոյ իջեր էր  
իւր սենեակէն , որպէս զի քիչ մը ժամանակ անցնէր  
երիտասարդին և իւր երեւան ելնելուն միջեւ : Դահ-  
լիճը թափուր գտնելով , ծառաներէն իմացաւ որ հիւ-  
րերը ծառուղին գնացած էին : Տիկին Հանրիէթ Ռո-  
չէզ տասն վայրկեանէն քառուղի մը հասաւ , ուսկից  
ճանբան երկուքի կը բաժնուէր . մին գարաստանին  
կատարը կ'ելնէր , միւսը կանաչազարդ քէօշկը կ'իջ-  
նէր : Այս վերջին ճանբան բռնեց , ինչո՞ւ համար :  
Վասն զի դիպուածը մեր բաղդն իւր հաճոյից համե-  
մատ կը վարէ . վասն զի իւր ամենափոքր քմահաճօքն  
Հանրիէթի պէս չար և վատ կին մը կը մղէ . վասն զի  
զայն ձախ կողմը դարձունելով և ոչ ալ կողմ , ճակա-  
տագիրն իւր ամենազօր կամքը կը ցուցնէր :

Քէօշկէն հինգ քայլ հեռու կանգ առաւ . խօսակ-  
ցութեան ձայները կը լսէր , և իւր խորամանկ նա-  
խանձութիւնը չէր կրնար խաբուիլ : Ի՞նչ կ'ընէր իւր  
տարփաւորն , հոն , այդ կնոջ քով . ուստի առանց ձայն

հանելու , կամաց կամաց կը յառաջանար որպէս զի  
լրտեսէ զանոնք : Ինքզինք բռնել քաջ գիտէր : Անոնց  
խօսքերէն մի քանին լսեց և երկարժամանակեայ մը-  
տերմութեամբ միացած լինելնին իմացաւ՝ առանց քէօշ-  
կին մէջ ցատկելու և իւր ներկայութեամբ զՄաքսի-  
միլիէն սարսափեցնելու : Ի՞նչպէս կը ստէր պահ մ'ա-  
ռաջ ըսելով թէ չէր ճանչեր զԱրտեմիս : Ի՞նչպէս Ար-  
տեմիս ալ կը ստէր առաւօտուն՝ Մաքսիմիլիէնը նա-  
խաճաշի բերելով : Ահա հասկցուեցաւ որ ասոնց մէջ  
մտերմութենէ աւելի բան մը կար , այն մշտնջենական  
կապն որ մանկութեան երկու բարեկամներ իրարու  
կը կապէ :

Ետ ետ երթալով հեռացաւ անկից , աչքը քէօշ-  
կին վրայ սեւեռած , որպէս զի անկասկած լինի թէ  
Մաքս և Արտեմիս չէին գիտեր որ իրենց գաղտնիքն  
իւր ձեռքին մէջ էր : Ո՞հ , ո՞չ , պէտք չէ որ նշմա-  
րեն , որպէս զի ժամանակ ունենայ ինք իւր վրէժ-  
խնդրութիւնը սրելու : Ծառի մը կը թնեցաւ , գլուխն  
ուղղաբերձ , աչերն անչարժ : Իւր սիրոյն նենգումէն  
աւելի՛ իւր սնափառութեան վիրաւորուելուն վրայ կը  
զայրանար : Նոյն իսկ կսկիծն , որ ամեն բան կը մաք-  
րէ , ցած զգացում մը միայն կ'արթնցնէր անոր սրտին  
մէջ : Վրէժ առնուլ . Ի՞նչպէս , յորմէ՞ : Այնպիսի վրի-  
ժառութիւն մը կ'երազէր , որով երկուքն իրարմէ վի-  
րաւորուէին . երկուքը մէկ ցցի կապել , թշնամանել ,  
և անոնց մարմնէն արիւն հոսիլը տեսնել : Վերջապէս  
ճանբան շարունակել սկսաւ : Երբոր հրաւիրելոց խրմ-  
բակին հանդիպեցաւ , մէկուն մտքէն չէր կրնար անց-  
նիլ թէ փոթորիկ մը կ'որոտար անոր սրտին մէջ :  
Քաղցրաբար կը ժպտէր իւր սովորութեան համեմատ :  
Արտեմիսի և Մաքսիմիլիէնի բացակայութիւնը նշմա-  
րել տալու չէր վարաններ , բայց դեռ ժամանակը չէր ,  
Քառորդ մը յետոյ երեւցան ասոնք :

— Ուր էիք, հարցուց Տարբիզն երկու դեռատի-  
ներուն՝ երբոր իրարու հանդիպեցան :

— Աներկբայ եմ որ Արտեմիս անգթաբար վար-  
ուած է, ըսաւ զուարթաբար Տիկին Վէրնիէ : Իւր կալ-  
ուածին ամեն կողմը պարտացուցեր է Պ. Տանկար :

Տիկին Թանտրէ կարմրեցաւ :

— Այդպէս է, յաւ գուշակեցիք, ըսաւ :

Իւր ուրախութիւնը չէր կեղծեր. ինչ՞ու համար  
ծածկել ինչ որ մեղապարտ չէ. բայց անհուն երջան-  
կութիւն մը կը փայլէր վրան, երջանկութիւն մը, զոր  
ինք ալ չէր հասկնար : Արտեմիս և Մաքս մտքերնուն  
չէին անցուներ այն բարոյական փոփոխութիւնն որ այս  
հանդիպումն ըրած էր իրենց վրայ : Իսկ Հանրիէթ,  
վերջին յուսոյ մը կը փաթթուէր : Թերեւս իրար նոյն  
օրը ճանչեր էին ստուգիւ : Այն ժամանակ, Արտեմիս  
չպիտի վարանէր այդ դէպքն իւր ամուսնոյն պատմե-  
լու : Բայց Արտեմիս՝ ընդհակառակն՝ լուռ կը կենար,  
և որ առաւելն է, առաջուանէն աւելի պաղօթիւն  
ցոյց տալ կը թուէր Մաքսիմիլիէնի, որ կարծես թէ  
վերջին հարուած մը տալու համար Հանրիէթի, ա-  
մենը մէկէն նախաճաշի հրաւիրեց վաղայաճորդ օրն  
ի թրէբոր, և աւելցուց, Արտեմիսի դառնալով :

— Կը յուսամ, Տիկին, որ շնորհ կ'ընէք ընդունիլ  
այս հրաւերս, իբր թէ ձեր վաղեմի բարեկամը լինե-  
լու պատիւն ունենայի :

Վաղեմի բարեկամն է : Այս երեք բառերը կը դատա-  
պարտէին զՀանրիէթ : Այժմ՝ երկբայութիւն չունէր,  
Մաքսիմիլիէն կը սիրէր զԱրտեմիս, Այն ժամանակ  
դիտեց զանոնք՝ որչափ ժամանակ որ Պ. Տանկար վէճի  
դղեակը մնաց : Տիկին Թանտրէի աչաց մէջ փայլող ու-  
րախութիւնը, Մաքսիմիլիէնի հետ փոխանակեալ նայ-  
ուածներն, այս ամենը բաւական ճարտարախօս էին  
նախանձօտ կնոջ մը համար : Պաղ և խորին կատաղու-

թիւն մը կ'զգար իւր սրտին մէջ : Երբոր Մաքսիմիլիէն  
վերստին ձի հեծաւ, Հանրիէթ երկար նայուած մը  
ձգեց անոր ետեւէն, նայուած մը, որ ոչ թէ սիրով  
լցուած էր առաջուան պէս, այլ բուռն տախիութեամբ  
մը, որ յագեհալու համար ամեն բան ընելու պատ-  
րաստ էր :

Մաքսիմիլիէն ծովափի ծառուղւոյն վրայ մեծ տուն  
մը կը բնակէր : Իւր հաւը տան գետնայարկին վրայ  
ընդարձակ սենեակ մը գրաւած էր, լուսապայծառ  
արեւուն դէմ, ուստից մերթ ընդ մերթ իւր թոռան  
կամ թէմմայի հետ պտըտելու համար միայն դուրս  
կ'երնէր : Ամեն մարդ, թրէբորի մէջ, կը սիրէր ու կը  
յարգէր այս գեղեցիկ, տխրաժպիտ, խրոխտահայ-  
եաց և քաղցրաբարոյ ծերունին, որ ամեն օր ֆազի-  
նոյին առջեւէն անցնելով ծովուն կողմը կ'երթար : Իւր  
տխուր ժպիտը միմիայն իւր թոռանն երեսը նայած  
ժամանակ քիչ մը կը զուարթանար : Այն ժամանակ  
կ'զգացուէր որ ծերունի Պ. Տանկար իւր երիտասարդ  
թոռան պատճառաւ միայն տակաւին կ'ապուած էր  
կենաց :

— Այս իրիկուն շատ զուարթ կ'երեւիս, ըսաւ ծե-  
րունի Պ. Տանկար իւր թոռան (Մաքսիմիլիէնի) վերա-  
դառնալը տեսնելով :

Մաքս իջաւ ձիէն, երասանակը ձիադարմանին տը-  
լաւ, որ կ'սպասէր, և համբուրելով իւր հաւն :

— Արդարեւ երջանկութիւն մը պատահեցաւ ինձ :

— Երջանկութիւն, ա՛հ, մի՛ թողուր որ թռչի  
ձեռքէդ, սրգեակ. երբոր մէկն իմ տարիքս հասնի,  
ափսոսալով կը յիշէ այն ամեն երջանկութիւնները  
զորս յիմարաբար վատնած է ճանքան : Ուղին որչափ

երկայն է և դադարներն որչափ կարճ : Բայց պատմէ նայիմ ինչ բարեբաղդ արկած պատահեցաւ քեզ :

Երբունին տանն առջեւ նստած էր՝ ճեմողներուն և պճնադարդ ճեմողուհիներուն անցուդարձը դիտելով : Մերթ ընդ մերթ ծովեզրին վրայ խաղացող մանկանց սուր ձիծաղներուն քրքիջները կը լսուէր :

— Կը յիշէ՞ք զԺողիէթ , հայր իմ , հարցուց Մաքս :  
— Ժողիէթ :

— Այո՛ , այն փոքրիկ աղջիկն որ Լա Պիրոշէռ բնակած ժամանակնիս իւր բոլոր ժամանակն ինձ հետ կ'անցանէր , և ինքը Պոլուաուի ճանբուն վրայի մեծ ագարակին մէջ կը բնակէր հայր Բրիւսէի քով :

— Կը յիշեմ հիմա :

— Ահա այն աղջիկը գտայ այսօր . այժմ թանտրէ Մարքիզուհի կը կոչուի :

Պ. Տանկլար՝ յոյժ կենցաղագէտ և մարդկային սիրտը փորձառութեամբ ճանչող լինելով՝ իսկոյն հասկըցաւ երիտասարդին ուրախութեան պատճառն այսչափ պարզ հանդիպումէ մը յետոյ : Սիրող մարդոց յատուկ եղող սրտի փափուկ դիւանագիտութեամբ ուզեց որ Մաքսիմիլիէն մանրամասնաբար պատմէ այդ հանդիպումն , սկիզբէն մինչև վերջը : Երբոր լսեց , ինքն ալ նոյն խօսքն ըսաւ մտքէն , ինչ որ Հանրիէթ ըսած էր . « պիտի սիրէ » :

— Ըսել է որ այդ խենդերուն հրոսախումբը վաղայաջորդ օրն հոս պիտի խուժէ :

— Այո՛ , հայր իմ , արդեօք տհաճութիւն կը պատճառէ ձեզ :

— Ամենեւին , որդեա՛կս : Ես ալ շատ ուրախ պիտի լինիմ Ժողիէթը տեսնելով , որ մեծ տիկին մ'եղած է :

Մաքսիմիլիէն տունէն ներս մտած ժամանակ տեսաւ որ Ժեմմա պատուհանին մօտ կանգնած էր . խեղճ աղջիկը լսել էր բոլոր խօսակցութիւնը :

— Եւ դու , Ժեմմա՛ , ի՞նչ ըրիր իմ բացակայութեանս միջոցին :

Ժեմմա երկարօրէն Մաքսիմիլիէնի երեսը նայեցաւ Յետոյ .

— Քեզ սպասեցի , ըսաւ :

Մաքսիմիլիէն մեծ ուշադրութիւն չընծայեց այս պատասխանին : Երկար ժամանակէ ի վեր ոչ եւս կարելորութիւն կուտար Ժեմմայի տարօրինութեանց , որք ըստ իւր կարծեաց՝ Արաք ցեղին յարակից թերութիւններ կամ հանգամանքներ էին , տարօրինութիւնք , որք անհաճոյ չէին իրեն , վասն զի , դեռ քիչ ժամանակ առաջ կը յանձնարարէր գիշերօթիկ վարժարանի տնօրէնուհւոյն , որ զանոնք ուղղելու կամ մոռցնել տալու չաշխատի :

Հետեւեալ օրը , Մաքսիմիլիէն , ըստ սովորութեան , նախաճաշէն յետոյ տունէն դուրս ելաւ , քաղաքին մէջէն անցաւ և Էօի ճանբան բռնեց : Այն ճանբուն վրայ երկու երեք գեղջկական քէօշկեր կան կահաւորեալ , բաւական վայելչագեղ , զոր ամառները կը վարձեն : Մաքս անոնցմէ մին վարձած էր , և հոն էր որ կը տեսակցէր իւր սիրուհւոյն հետ : Փարիզէն բերուած սպասաւոր մը պահպանութիւն կ'ընէր քէօշկին , և երկու տարիաւորաց հոն գալը տեսնելուն պէս կը հեռանար անտի : Մաքս և Հանրիէթ ըստ սովորութեան՝ զիրար գտան քէօշկին մէջ : Նախորդ օրուան հազիւ խօսքն եղաւ : Հանրիէթ քանիցս անգամ ներում խնդրեց իւր ծաղրաշարժ նախանձութեան համար : Միթէ ինք չէ՞ր ճանչեր իւր «սիրելի» Արտեմիսն ալ : Եւ մարքիզուհւոյն անունն անգամ մը խօսակցութեան մէջ ձրգուելուն պէս , Հանրիէթ սկսաւ վերջին ծայր գովել զՏիկին Թանտրէ : Երիտասարդը չէր կասկածեր , և շատ կը սխալէր : Պէտք է միշտ կասկածիլ իւր տար-

փուհիէն, մանաւանդ երբոր չափէ դուրս գովեստ խօսի ուրիշի մը վրայ :

— Շատ ուրախ եմ, սիրելի Մաքս, աւելցուց իւր խանդավառ ներբողն աւարտելէ յետոյ, որ պիտի կրնամ յուսացածէս աւելի երկար ժամանակ կենալ ձեր քով : Տիկին Մօպլան բարեկամուհիս կը գրէ ինձ այս առաւօտ թէ յառաջիկայ ամիսը Թրէբոր պիտի գայ անցունել, և զիս ալ հոն կը հրաւիրէ :

Երբէք այնչափ շնորհալի եղած չէր, վերջին ծայր զուարթ էր, և ջանաց զուարճացնել իւր տարփաւորը, զոր մտահոգութեան մէջ կը տեսնէր : Հանրիէթ իւր դերը կը խաղար : Մաքս սիրահարեալ էր Արտեմիսի . այս մասին աներկբայ էր, և կ'ուզէր անոր աչքը կապել, որպէս զի իւր վրէժխնդրութեան դէմ արգելք մը չկրնայ ելնել : Բաժնուեցան իրարմէ՝ վաղայաջորդօրուան համար ժամադրելով, վասն զի հետեւեալ օրը վէռի դղեակին հիւրերը Թրէբոր պիտի գային նախաճաշի : Մաքսիմիլիէն տուն վերադարձաւ մտախոհ, ուրախ լինելով այն գովեստներուն վրայ՝ զորս Տիկին Հանրիէթ Ռոչէզ ըրաւ Արտեմիսի վրայ : Չէր նշմարեր որ առջի օրէն ի վեր Արտեմիս շարունակ գրաւած էր իւր միտք :

Դղեակին մէջ մեծ ուրախութիւն կար առաջարկեալ նախաճաշին համար : մանաւանդ հետաքրքրութիւնն առաւել կը սրէր այդ տիկնանց ուրախութիւնը : Տիկին վէռնիէ, Տիկին Ռէք, նոյն իսկ Աննա-Մարի, որ առաւօտէն ի վեր եկած էր, յոյժ կը փափաքէին ճանչել ժէմմա, այն փոքրիկ վայրենուհին, որոյ վրայ լրագիրք այնչափ կը խօսէին քանի մ'ամիս առաջ : Եթէ՛ դիպուածով ճշմարիտ լինէր դահլիճներուն մէջ պտրտած պատմութիւնը : վասն զի կ'ըսուէր թէ սիրոյ պատմութիւն մը ծածկուած էր այն վիպասանական արկածին ներքեւ : Տիկին Քէրսէն, ինքզինք

լաւ տեղեկութիւն ունեցող ցուցնելու փառասիրութեամբ քիչ մնաց որ պիտի ըսէր թէ ինք և Արտեմիս տեսած էին այն փոքրիկ արաբուհին փարիզի շրջականերն աղջկանց գիշերօթիկ վարժարանի մը խօսարանին մէջ . բայց մարքիզուհին (Արտեմիս) աչք ըրաւ անոր որ լուէ : Քիչ մ'ետքը, Արտեմիս աղաչեց զայն որ նոյն լուութիւնը շարունակէ, և երբոր Տիկին Քէրսէն պատճառն հարցնելով կը պնդէր, տարտամ պատասխան մը միայն կ'ստանար :

Թրէբորի նախաճաշն յոյժ զուարթ եղաւ : Առաջին կէս ժամուն մէջ՝ բնականաբար՝ մի միայն ժէմմայով զբաղեցան : Բայց անհնար եղաւ ուրիշ բան քաղել անկէ, այլ միայն միավանկ բառեր կամ յոյժ կարճ խօսքեր : Մունջ նստած էր սեղանին վարի ծայրը, քիչ ուտելով և իւր բոլոր ուշադրութիւնն Արտեմիսի կամ Հանրիէթի վրայ ամփոփելով . կարծես թէ այս համախմբութեան մէջ այդ երկուքը միայն կային իրեն համար : Յետոյ կոչնականք դադրեցան ժէմմայի վրայ զբաղելէ, և ոչ ոք նշմարեց որ անոր սեւ աչերը խորապէս և լրջաբար յառած էին այդ երկու կանանց վրայ, որոց Մաքսիմիլիէնի կենաց հետ խառնուած լինիլը կը գուշակէր : Դիտող մարդ մը կրնար նշմարել թէ իւր աչաց արտայայտութիւնն օրչափ կը փոփոխուէր մարքիզուհին կամ Տիկին Հանրիէթ Ռոչէզ տեսած ժամանակ : Առաջնոյն համար լի էր ծածկախորհուրդ և գորովալից քաղցրութեամբ, իսկ երկրորդին համար պողպատի պէս պաղ : Նախաճաշն աւարտելուն պէս փախաւ, և մէկ մ'ալ հիւրերուն մեկնած ժամանակ երեւան ելաւ : Չեւքը վարդ մը բռնած էր : Հանդարտ կերպիւ մարքիզուհւոյն մօտեցաւ և վարդն անոր երկնցուց . յետոյ ձեռքը բռնեց համբուրեց :

— Ո՛հ, սիրուն տղեկ, գոչեց մարքիզուհին :

Եւ սթափ կատուի շարժմամբ, որ զինքն յոյժ շնորհալի կ'ընէին, ժէմնայի ճակատը համբուրեց : Այս անգամ, Արաբուհուոյն աչքին մէջ քաղցրութենէ և խանդաղանքէ աւելի բան մը կար . գոռոզ երախտագիտութիւն մը, զոր մեծսիրտ գերի մը կ'ունենայ իւր այն տիրոջ համար՝ որ շնորհ մ'ընէ իրեն : Վերադարձին, հիւրերն այս միջադէպին վրայ միայն կը խօսէին, որոյ սրտաշարժ պարզութիւնն ամենուն մտքին կը զարնէր : Աննա-Մարի և Արտեմիս կը խօսակցէին իրարու հետ : Աննա-Մարի քիչ խօսեր էր, ինչպէս Տիկին Հանրիէթ Ռոյէզ, և անոր պէս շատ դիտեր էր :

— Պ. Մաքսիմիլիէն սխրալի է, այնպէս չէ, Արտեմիս :

— Այո՛, սխրալի է, պատասխանեց իսկոյն մարքիզուհին, և աւելցուց .

— Սրտին վեհութիւնն անմիջապէս գուշակելու համար բաւական է երեսը նայիլ : Նշմարեցի՞ր այն գորովալից սէրը, զոր հաւն և թոռն ունին իրարու վրայ : Եւ որչափ պարզ է : Մարդ չկարծեր երբէք որ այդ երիտասարդ դիւցազն մ'է, գրեթէ մեծ մարդ մը :

— Դուք այնպիսի եռանդով մը կը խօսիք անոր վրայ . . .

— Ինչպէս որ կը խորհիմ'այնպէս կը խօսիմ : Ստուգել, ես չհանդիպեցայ երբէք բնութեան մը, որ ասկէց աւելի համակրելի լինէր ինձ : Ես ամեն բանէ առաջ ուղղութիւնն ու անկեղծութիւնը կը սիրեմ մարդու մը վրայ : Եւ կ'երդնում որ Պ. Մաքսիմիլիէն ճանկար ուղիղ և անկեղծ է :

Աննա-Մարի պատասխան չտուաւ : Դեռ վտանգ չկար . որովհետեւ Արտեմիս չէր ծածկեր Մաքսի վրայ ունեցած համակրութիւնն : Ասկէց զատ՝ թերեւս կը

խաբուէր : Վերջապէս, Արտեմիս դեռ քանի մ'ամսէ ի վեր ամուսնացեալ էր . այսչափ կարճ ժամանակի մէջ չէր կրնար իւր ամուսնէն ձանձրանալ : Սակայն տիկին Գէրսէն կը գուշակէր որ իւր բարեկամուհին բան մը կը պահէր իրմէ . և երկու ամուսնոց իրարու վրայ ունեցած պաղութիւնը մտածել կուտար զինք : Իսկ Տիկին Հանրիէթ Ռոյէզ, իւր լռութիւնը մեկնելու համար, որով ինքզինք մատնելու վտանգէն ազատ կը մնար, գլխու ցաւ մ'ունենալ կը կեղծէր :

Արտեմիս դղեակը վերադարձած ժամանակ իմացեր էր որ իւր մայրն առաւօտեան ճեպընթացով եկեր էր, քանի մ'օր կանխելով զՊ. Մորէր : Այո՛րն յոյժ քիչ անգամ ընկերութեանց մէջ կ'երեւէր իւր կնոջ հետ, և երբէք չէր ճանապարհորդեր անոր հետ : Քաթէրինի բնակարան տրուած էր գետնայարկին վրայ աջակողմեան աշտարակին մէջ : Արտեմիս այս լուրն առած ժամանակ, ոչ ուրախութիւն զգաց, ոչ դժգոհութիւն . բայց մարքիզը քիչ մը շփոթեցաւ : Կը թուէր իրեն թէ զիրենք շրջապատող ծաղրիչ փարիզուհիներն և սկեպտիկեան Պուլվարցիներն իւր այս կնճուռտ վիճակին վրայ պիտի ժպտէին : Քաթէրին ինչպէս պիտի վարուէր իրեն հետ : Եթէ գիտնա՞ր այն պատերազմներն որք այդ կնոջ սրտին մէջ կը տրուէին :

Իւր տարփաւորին ամուսնութեան սկիզբները քաթէրին իւր ատելութեամբ միայն կ'ապրէր, յիմարատելութիւն մ'այն թշուառականին դէմ որ զինք խաբելով կը թողուր : Կը յիշէր Ֆապիէնի տարփական յայտարարութիւններն, հնարած ամեն սուտերն : Յետոյ, քիչ քիչ, ատելութեան կը յաջորդէր կսկիծ : Իւր տարփական անցելոյն ամեն յիշատակները միտքը կը բերէր մի առ մի, և այն ժամանակ ինքզինք միայնակ կ'զգար իւր մեծ և թափուր ապարանին մէջ, ընդ մէջ ընկերութեան՝ որ իրեն բարեկամ չէր, և իւր ամուս-

նոյն՝ որ քիչ կը խօսէր իրեն հետ : կրօնասիրութեան մէջ աւելի եւս առաջ կ'երթար : կրօնաւորութիւններ, քահանայներ, աղքատախնամ քոյրեր կը տեսնուէին իւր տան մէջ : Այս մասին անկեղծ էր : Չկրնալով այլ եւս մարդը սիրել, զՍտուած կը սիրէր : Ոչ թէ իւր կսկիծները խղճին խայթ եղած էին, այլ կրօնքին խորհրդական (միսթիք) կողմերուն կը յարէր, որ Ստուածասիրութեամբ միսթարութիւն կը խոստանար : Բայց և միանգամայն կը շարունակէր Ֆապիէնի վրայ խորհիլ . տարփաւորին պատկերն իւր ամեն գործոց մէջ կը սպրդէր : Ի դուր իւր անյագ զգայականութիւնն ինքզինք սպառել կը ջանար եկեղեցիները պտըտելով, բարեգործական այցելութիւններ ընելով : Եկեղեցիէ կամ բարեգործական այցելութենէ յետոյ՝ զբօսափայրերը կամ Պուլոյնի անտառը կ'երթար, այն ամեն տեղ վերջապէս, ուր անցեալ յիշատակներ կ'ապրէին իրեն համար : Առաւօտ մը զայն տեսնելու անզուսպ տենչ մ'զգաց, բայց իսկոյն զսպեց ինքզինք : Ի՞նչ, երթալ այդ երկու դեռատի ամուսնոց մէջ մտնել : Անոնց խանդագորով նայուածքն և մինչև իսկ համբոյրները տեսնել, երբոր զիրենք միայնակ կարծէին : Այն ժամանակ սարսուռք կը ցնցէին զինք . ցաւ կ'ըզգար սրտին մէջ խորհելով որ անոնք երջանիկ էին հան, մինչդեռ ինք հազար մահուամբ կը չարչարուէր : Նախանձութիւն կ'զգար, կը նախանձէր իւր աղջկան վրայ : Գազանութիւնն իւր սարսափելի իշխանութիւնը նորէն ձեռք կ'առնուր անոր վրայ, և Ֆապիէնի դէմ ի սկզբան զգացած ատելութիւնն այժմ Արտեմիսի դէմ ատելութեան կը փոխուէր :

Եւ ինչո՞ւ չատէր այն մանկամարդ, գեղեցիկ, վայելաշնորհ և սխրալի կիներ, որոյ վրայ ոչ եւս իւր աղջիկը կը տեսնէր, այլ իւր հակառակորդը : Կին մը մայր է՝ ոչ թէ մարդկային արարած մ'իւր կողերուն

մէջ կրած լինելու կենդանական գործով, այլ հանապազօրեայ գործով, սիրոյ ունակութեամբք և այն հազար խնամքներով զորս իւր զակին վրայ կը լնու : Կին մ'իւր մայրութիւնն արժանապէս կը շահի, որչափ ցաւակրութեամբ, նոյնչափ և գործով : Փոքրիկ էակ մը ծնած ժամանակ կրած Ֆիդիքական ցաւն՝ ըսկիզբ և խորհրդանիշ է այն բարոյական ցաւին զոր պիտի կրէ իւր կենաց ամեն ժամերուն մէջ : Ճշմարիտ մայրն այն է որ իւր զակէն ցաւ կը կրէ : Կը ցաւակրի՝ երբոր զաւակը դեռ փոքր է և կը հիւանդանայ : Կը ցաւակրի երբոր զաւակը մեծ է և կը կորսնցնէ՝ այն անհրաժեշտ օրինօք որ թռչնիկը բունէն դուրս կը մղէ :

Քաթերին երբէք չէր լացած, ոչ ալ ցաւ կրած էր Արտեմիսի վրայ : Իւր ծննդաբերութիւնը դէպք մը, բնութեան ցոյց մը միայն եղած էր, և ոչ Եւրիշ բան : Չայն գլխէն հեռացուցած էր հնար եղածին չափ շուտով, նախ լա Պիրոյէն զրկելով, յետոյ վանքը փակելով : Եւ այն օրն ուր այդ աղջիկն իւր մօր տունը կը վերադառնար, անոր տափաւորը կը գողնար : Քաթերին չէր բաշեր զայն, կը նախանձէր անոր վրայ, կ'ատէր զայն : Կը ջանար ճշմարտութիւնը գուշակել Արտեմիսի դուն ուրեք զրած նամակներէն : Մարքիզուհին երջանիկ էր : Կը սիրէր իւր այրը : Կը կարդար ու կարդար անոր նամակներուն սովորական տողերը, տեսնելու համար թէ կը պարունակէին՝ արդեօք գաղտնիք մը որ կը խուսափէր իրմէ : Կը հարցաքննէր այն ցուրտ թուղթերն, որպէս թէ գաղտնիք մը ծածկած էին : Ամենէն աւելի զինք մտածման մէջ ձգող բանն այս էր որ Արտեմիս աւելի յաճախ կը դըրէր իւր հօրունին : Արդեօք իւր գաղտնիքներն անոր կը հաղորդէր : Վերջապէս առաւօտ մը չկրցաւ այլ եւս դիմանալ : Իմացուց Պ. Մորէրի թէ վէտի

գղեակը կ'ուզէր երթալ : Նաջալ պատասխանեց թէ ազատ էր երթալու : Բայց միանգամայն ինքն ալ կ'որոշէր երթալ : Արդարեւ ծանր կուգար իրեն թանտրէ մարքիզին հետ մի և նոյն տան մէջ ապրիլ , բայց ֆաթէրինէն կը վախնար . կը կասկածէր որ կ'երթայ Արտեմիսի երջանկութիւնը կը քայքայէ : Պ. Մորէր կրնա՞ր իւր ուրջուին (խորթ աղջիկ) մտքէն անցածը գուշակել : Խորհրդածութիւն մը վերջնապէս համազեց զայն : Վէ՛ռի գղեակն իրենն էր . հոն ինք ոչ թէ մարքիզին տան , այլ իւր տան մէջ պիտի լինէր : Հոն հասնելուն պէս , ինք էր տանուտէրը : Վերջապէս կուզէր պաշտպանի դեր կատարել Արտեմիսի նկատմամբ : Չկրնալով այն չարաշուք ամուսնութիւնն արգելուլ , կ'ուզէր լաւի դարձունել :

Արդ , ֆաթէրին միայնակ գնաց : Պ. Մորէր քանի մ'օր ետքը պիտի երթար : Ուղեւորութեան միջոցին հազար տեսակ հակառակ զգացմանց մէջ տատանեալ մնաց : Մարքիզն ի՞նչպէս պիտի ընդունէր զինքը : Ի՞նչ պիտի ըսէր իրեն : Յանկարծակի Ֆապիէնի տան մէջ պիտի իյնար , պարզապէս իւր ուղեւորութիւնը ծանուցանելով նոյն առաւօտ զրկած հեռագրով մը : Վերստին պիտի տեսնէր զայն , այն մոլեգնաբար սիրւած մարդը , այն մարդ զոր տակաւին կը սիրէր : Կուզէր որ շուտով գղեակն հասնէր , միանգամայն կուզէր որ երբէք չհասնէր : Ժամացոյցը կը նայէր , ուրախանալով և միանգամայն զարհուրելով որ կայարանը կը մօտենար : Երբոր գղեակին բակը մտաւ , սրտատանջութիւնը կը կտտէր զիւր սիրտ . իւր հեռագիրն հիւրերուն թրէբոր երթալէն ետքը տրուած էր . ուստի չէին սպասեր զինք . ոչ ոք կար հոն զինք ընդունելու համար : Քաթէրին գոհ եղաւ ասկից , վասն զի Ֆապիէնի հետ իւր տեսակցութիւնը կ'ուշացնէր :

Երբոր աշտարակի յարկին մէջ տեղաւորեցաւ , մեծ

ուրախութիւն զգաց : Անոր քով պիտի ապրէր : Թե՛րեւս իսկ սրտին մէջ տարտամ յոյս մը կը պահէր՝ այդ երկար ժամանակ դրաւած մարդուն երեւակայութիւնն ու զգայարանը դարձեալ վրդովելու : Իւր շրջագրեստներէն ամենէն վայելուչն ընտրեց , ինքզինք պճնազարդեց այնպէս , ինչպէս երբեմն կը պճնազարդէր երբոր տարփական ժամադրութեանց կ'երթար : Ինչպէս որ քանի մ'ամիս առաջ ըրած էր , այս անգամ ալ ինքզինք զինեց հայելիին մէջ , հասկնալու համար թէ տարիքն և արտուքն ինչ արդիւնք կ'արտադրէին իւր դէմքին վրայ : Ինքզինք միշտ գեղեցիկ գտաւ , և արդարեւ միշտ գեղեցիկ էր . իւր դէմքին մարդարտատիպ դժգունութեամբ , իւր ուղիղ և թըրթռաթեւ քիթովն և կարմիր շրթունքով : Այտերուն բարակ խաղաւարտը կ'աներեւութանար բրինձի փոշիին ամպին ներքեւ , և քունքերուն խորշոմներն հազիւ կը նշմարուէին :

Արտեմիսի և Ֆապիէնի հետ առաջին տեսակցութիւնն յոյժ սիրալիր եղաւ : Իւր փեսին ձեռքը սեղմեց և մարքիզուհին համբուրեց : Ամենուն ալ մէկ մէկ շնորհալի խօսք ուղղեց . հաճոյ լինելու փափաք ունէր : Ճաշին ժամանակ ինքզինք աշխոյժ և վառվռուն ցոյց տուաւ , հակառակ իւր սովորութեան , լրագրաց մէջ վերջին օրերս կարդացած տարփական զուարճալի կամ ծաղրաշարժ դէպքերը կը պատմէր , ծիծաղելով , իւր սպիտակ ատամուկը ցուցնելով , և մերթ ընդ մերթ իւր բոցաշունչ նայուածը Ֆապիէնի վրայ տնկելով , որ առջեւը կը նայէր : Զահերուն պայծառութիւնն ալ կը նպաստէր իրեն . իւր սքանչելապէս պահպանուած գեղեցիկութիւնը լոյսերուն ազդեցութեամբ կը կրկնապատկէր : Ֆապիէն ակնկառոյց կը դիտէր զայն , զարմանալով որ տասնեւհինգ տարի վայելելէ յետոյ դարձեալ գեղեցիկ և ցանկալի կը գտնէր զայն : Առանց



իւր զիտութեան, քաղաքատութիւն մը կ'ընէր ընդ մէջ մօրն և աղջկան, ընդ մէջ այդ կնոջ և այդ արձանին: Ուստի՞ կուգար այդ տարբերութիւն: Ինչո՞ւ համար մին իւր գեղեցկութենէն շատ տուած էր միւսին և իւր կիրքէն յոյժ քիչ: Եւ տակաւ անձնատուր կը լինէր այն հրապուրին զոր ֆաթէրին կ'ազդէր իրեն, հրապոյր մը որ աւելի բուռն էր այժմ, որովհետեւ արգիլեալ պտղոյն գրգռիչ հանգամանքն ունէր: Իրարու ետեւէ կը զննէր մայրն ու աղջիկն, և կը զարմանար՝ առաջինն հանճարամիտ և վառվռուն տեսնելով, մինչ երկրորդը մունջ էր և պաղարիւն: Քաթէրին կ'ըզգար արտադրեալ արդիւնքն և այս դոհութիւն աւելի ջերմ բոց մը կը վառէր իւր աչաց մէջ:

Արդարեւ Արտեմիս մտախոհ և տխուր էր. ոչ մէկու համար փութաջանութիւն չցուցնելով, այլ միայն մերթ ընդ մերթ ժպտելով մէկուն կամ միւսին, յոյժ հեռի այն ճաշի ընդարձակ դահլիճէն, ուր ծիծաղները բարձրաձայն կը հնչէին ազնիւ գինիներու զգրլխիչ անուշահոտութեանց մէջ: Չէր նշմարեր, որ սեղանին երկու այլ և այլ կողմերէն զինքը կը դիտէին շարունակ, Տիկին Քէրսէն ձախ կողմէն, և Հանրիէթ աջ կողմէն իւր ներքին մտածմանց յառաջդիմութիւնը կը զննէին իւր դէմքին վրայ:

Երեկոյթն ալ ճաշին չափ զուարթ եղաւ. բայց երբոր գիշերն ամեն մարդ իւր բնակարանը քաշուեցաւ, Աննա-Մարի և Հանրիէթ իրենց կարծիքն որոշած էին: Հետեւեալ օրերը պատահած քանի մը մանր դէպքեր կատարելապէս համոզեցին զանոնք: Մաքս այժմ գրեթէ ամեն օր կուգար, և ամեն անգամ Արտեմիս աւելի բերկրութեամբ կ'ընդունէր զայն: Ասկէց զատ, մարքիզուհւոյն մտահոգութիւնները կ'աւելնային: Շատ անգամ զինքը կը գտնէին տարտամ մտախոհութեանց մէջ, և երբոր յանկարծ ձայն կուտային իրեն, կար-

ծես թէ խոր քունէ կ'արթննար: Վերջապէս առաւօտ մը, գիրքերու բեռնակ մ'եօթն-ութ խոշոր հատորներ բերաւ դղեակն՝ Ափրիկէի մէջ եղած հռչակաւոր ուղեւորութեանց վրայ, Լիվինկսթոնէն և Սթանլիէն մինչեւ Սէրբա-Բինթոյ հազարապետը: Տիկին Հանրիէթ Ռոչէզի կատաղութիւնն յամրաբար կ'աւելնար. արդարեւ չէր ծիւրեր, ոչ, բայց ռիսը կը սաստկանար: Դեռ ժամանակ չէր ականը պայթեցնելու. ընդհակառակն, պէտք էր որ Մաքսի աչակապը շարունակէր: Բանի մը ձեռնարկելէ առաջ կ'ուզէր որ յաջողութեանն ապահով լինէր: Հարուածն այնպէս զարնել՝ որ մահացու լինի: Իսկ մարքիզը բան մը չէր տեսներ, բան մը չէր կասկածեր. իւր աչքն ու ականջները միմիայն ֆաթէրինի համար էին:

Յունիսի վերջերն օր մը՝ Արտեմիս սօսեաց ծառուղւոյն մէջ կը ճեմէր մտախոհ, յանկարծ թեւ մը սպրդեցաւ իւր թեւին տակ, նայեցաւ որ Աննա-Մարի էր:

- Կ'ուզե՞ս հետս պտըտիլ, ըսաւ:
- Շատ սիրով, պատասխանեց Արտեմիս:

Երկու դեռատի կանայք թաւուտներուն տակ հովանաւորեալ շաւղի մը մէջ մտան, որ մամուռով և մացառներով ծածկեալ էր: Երբոր Տիկին Քէրսէն կատարելապէս ապահով եղաւ թէ ոչ ոք անհանգիստ կըրնար ընել զիրենք, փայտէ նստարանի մը վրայ նըստաւ, Արտեմիսը քոյն առաւ, և քաղցրութեամբ.

- Դիտե՞ս ինչ կ'ընեմ հոս գալէս ի վեր:
- Ինչ կ'ընես, գոչեց Արտեմիս ծիծաղելով. ի՞նչ պիտի ընես, կ'ըբօսնուս, կը յուսամ:
- Ո՛չ, քեզ կը դիտեմ:
- Չի՞ս:
- Այո՛, քեզ:

— Չէի գիտեր որ ես այդչափ գիտելու արժանի հետաքրքրաշարժ բան մը կրնայի լինիլ :

— Կը սխալիս . ընդհակառակն , ես նշմարեցի որ դու շատ հետաքրքրաշարժ և գիտելու արժանի ես : Չեմ խնդրեր քեզնէ որ անկեղծաբար պատասխանես ինձ . ես քաջ գիտեմ քու բնաւորութեանդ անկեղծութիւնն և սիրոյդ գորովն , որպէս զի կասկածիմ ադոնց վրայ :

— Ո՛հ , զիս կը զարհուրեցնես այդ յառաջաբաններովդ :

Տիկին ֆէրսէն իւր բարեկամուհւոյն երեսը նայեցաւ :

— Արտեմիս , ըսաւ , այրդ կը սիրե՞ս :

— Ոչ :

— Ինչո՞ւ համար :

Մարքիզուհին կը լռէր . յանդիմանութիւն մը կարդաց Աննա-Մարիի աչերուն մէջ : Այն ժամանակ ամեն բան յայտնեց անոր , թէ ինչպէս այդ մարդ զինքը վիրաւորեր էր իւր փափկասրտութեան մէջ , թշնամաներ էր իւր ամօթխածութեան մէջ :

— Իրաւունք ունիս , չես սիրեր ամուսինդ , պատասխանեց տխրութեամբ Տիկին ֆէրսէն՝ երբոր մարքիզուհւոյն խոստովանութիւնն աւարտեցաւ : Լաւ խորհեցա՞ր քեզ պահուած կենաց վրայ : Դու սա երկսայրաբանութեան մէջ բռնուած ես . կամ առանց սիրոյ ապրիլ , կամ ամուսնէդ ուրիշ մարդ մը սիրել :

Եւ երբ Արտեմիս զարմացեալ կը կենար , Աննա-Մարի աւելցուց .

— Ապահո՞վ ես որ արդէն ուրիշ մէկը չես սիրեր :

— Ե՛ս :

— Այո՛ , դու . հաւաստի՞ ես որ Պ . Տանկլարի նըկատմամբ ունեցած հակումդ պարզապէս բարեկամական եղած լինի : Ինչո՞ւ կը չփոթիս . սրտիդ խորն ի-

ջիւր և յստակօրէն կարդա՛ւ : Պատասխան մի՛ տար ինձ , եթէ կ'ուզես , և եթէ խղճմտանքդ իմ առջեւ հողանել ծանր կուգայ քեզ : Ես մէկ բան միայն կը խնդրեմ քեզնէ , այն է թող չտալ որ այդ սէրն առանց քու գիտնալուդ սրտիդ մէջ սողոսկի : Ես որ ուշի ուշով գիտեցի քեզ , կը կարծեմ որ դու լաւ չես հասկցած ուղեղիդ մէջ եղած աշխատութիւնն : Եւ եթէ ես իրաւունք ունենամ , եթէ դժբաղդաբար սիրես զՊ . Տանկլար . . .

— Աննա-Մարի՛ :

Տիկին ֆէրսէն լռեց : Արտեմիս սաստիկ գունատեցաւ , յետոյ ըսաւ յուղեալ ձայնիւ .

— Եթէ սիրեմ զՊ . Տանկլար . . . այո՛ . բայց նա երբէք չպիտի գիտնայ : Մի՛ վախնար . ես անարատ ապրել կուզեմ : Սիրելը մեղք չէ . սրտի զարկն արգելուլ կարելի չէ . յանցանք չկայ հոն՝ ուր կամքն անկարող է . ուր որ կամքը կը գործածուի , հոն պարտականութիւնը կ'սկսի : Պիտի յարգեմ իմ ամեն պարտականութիւններս , և հաւատարիմ պիտի կենամ ամուսնոյս , որչափ իրեն համար , նոյնչափ և ինձ համար : Ի՞նչ է իւր վրայ դտած պակասութիւնս . սա միայն թէ իւր բնութիւնն իմ բնութիւնս չէ հասկըցած : Անշուշտ մեզ համար դժբաղդութիւն մ'է այս , բայց այնպիսի դժբաղդութիւն մը , որուն ամեն հետեւանքը կ'ընդունիմ : Ես չեմ կրնար երբէք իրաւունք ընծայել ինձ՝ դրժելու այն երդմանց , զորս ազատաբար տուած եմ մարդու մը , երբ այդ մարդ չէ դըրժած իւր երդմանց : Բայց որովհետեւ ամեն բան գիտնալ կ'ուզես , զիս կատարելապէս ճանչէ : Ո՛չ , ես չեմ սիրեր , ո՛չ , և չպիտի սիրեմ երբէք եթէ սէրը զիս այնպիսի զգուանաց յանձնել է , որք յոյժ անհաճուէն ինձ :

Աննա-Մարի երկար նայուած մը ձգեց իւր բարե-

կամուհւոյն վրայ և հառաչեց : Կամացուկ մը կը նը-  
շանակէր այն օրն ուր Արտեմիս պիտի սիրէր , և ուր  
ոչ եւս այսպէս պիտի խորհէր : Յամբարայլ ետ դառ-  
նալ սկսան դէպ ի դղեակն , երկուքն ալ լռիկ , խոր  
մտածութեանց մէջ ընկղմեալ : Բայց այս խօսակցու-  
թիւն գոնէ սա արդիւնքն ունեցաւ , որ Արտեմիս մեծ  
զգուշութեամբ վարուիլ սկսաւ Մաքսիմիլիէնի հետ :  
Երկու երեք օր այնպէս կարգադրեց որ դղեակը չը  
գտնուեցաւ երբոր Մաքս իւր սովորական այցելու-  
թիւնը կ'ընէր : Դեռ չէր սիրեր զայն , և սակայն այս  
դոհողութիւն յոյժ ծանր եկաւ իրեն : Ասկէ զատ՝ ա-  
ներկբայ էր արդէն չսիրելուն :

Մաքս հասկցաւ : Իւր այցելութիւնն հետզհետէ  
քիչցուց , ի մեծ ուրախութիւն Հանրիէթի որ բանէ մը  
տեղեկութիւն չունէր : Պարկեշտ զգացման մը հաս-  
ւատալու անկարող , կը կարծէր թէ իւր տարիաւո-  
րին Արտեմիսի նկատմամբ քմահաճոյքն յարդի բոց  
մ'էր միայն : Եւ շատ յարմար ժամանակի հանդիպե-  
ցաւ այս բան . վասն զի վէճի դղեակէն պիտի մեկնէր  
և թրէքոր պիտի երթար իւր բարեկամուհւոյն՝ Տիկին  
Մօպլանի քով : Գոնէ աւելի հանդարտ սրտիւ պիտի  
երթար , իւր ոտխը պարտեալ թողլով իւր ետին :  
Տիկին վէճնիէ ալ Պրիտ պիտի երթար և վեց շաբաթ  
հոն մնար՝ իւր առողջութիւնը կազդուրելու համար :  
Իւր հետ տանիլ ուզեց զԱրտեմիս , բայց սա յանձն  
չառաւ :

— Թող տուր ինձ որ պնդեմ , ըսաւ Տիկին վէճ-  
նիէ հառաչելով : Շատ պիտի ձանձրանամ հոն : Միայն  
սա մխիթարութիւնն ունիմ որ ամուսինս հետս չէ :  
Վեց շաբաթ պարապուրդ : Օ՛ն , քիչ մը քաջութիւն  
ունեցիր , սիրելի մարքիզուհիս , հետս եկ :

Բայց Արտեմիս դիմացաւ : Տիկին վէճնիէն յետոյ  
Մորիս Ժանարոն ալ իւր հետ տանիլ ուզեց զայն . անոր

ետեւէն Տիկին Ռէբ , որ Լուի Մարէշալի հետ մեկ-  
նեցաւ : Այս վերջինը շատ յառաջ գնացած կը թուէր  
Տիկին Ռէբի համակրութիւնը գրաւելու մասին : Օ-  
գոստոսի սկիզբը վէճի դղեակին մէջ մի միայն Տիկին  
Քէրսէն մնացած էր , որ չէր ուզեր մինակ թողուլ իւր  
բարեկամուհին :

Եւ արդարեւ , առանց Աննա-Մարիի , Արտեմիս  
յաճախ մինակ պիտի մնար : Մարքիզը չէր զատուեր  
Քաթէրինի քովէն , երկուքն ի միասին կը պտըտէին ,  
կամ մարքիզը դուրս ելնել ուզած ժամանակ՝ Քաթէ-  
րին ալ անոր հետ կ'եղնէր : Կարծես թէ տարիական  
անցեալ մը չկար այդ երկու էակաց միջեւ . միմեանց  
հետ չափազանց մտերմութեամբ վարուելէ չէին վախ-  
նար : Մինչ այս մինչ այն , Արտեմիսի քանի մ'ստիպու-  
ղական նամակներուն վրայ Պ. Մորէր վէճի դղեակն  
եկաւ , առջեւէն ահագին սնտուկներ դրկելով , որք լի  
էին զիւրքերով և ձեռագրերով : Իսկոյն Ֆապլէնի և  
Քաթէրինի վարքը փոխուեցաւ : Կարծես թէ գաղտնի  
թշնամութիւն մը կար մէջերնին : Պաղութիւն կը ցուցը-  
նէին միմեանց , և կծու խօսքեր կը փոխանակէին :  
Թերեւս , քիչ մը մօտէն զննողը կրնար նշմարել որ այդ  
թշնամութիւն՝ խիստ նոր լինելուն՝ չէր կրնար անկեղծ  
լինիլ : Բայց ամառուան դեղեցիկ ամսոյ մը մէջ , թըռ-  
չուններով լի տերեւներու մէջ , կապոյտ երկինքի մը  
ներքեւ , մարդու մտքէն չանցնիր մօտէն զննութիւն  
ընել : Աւելի կ'արժէ արեւուն ակնախտից ծագումը  
դիտել ամեն առաւօտ , կամ երեկոյի կարմրերփեան  
ամպերն , երբոր գիշերն իւր գորշ թեւերը տարածէ  
հորիզոնին վրայ :

իրօք փարիզ փոքրիկ քաղաքաց Կոյտ մ'է : Եւ հոն եղած շաղակրատա՛նքը : Երբոր ամառուան տաքը կոխէ և փարիզցիք ասդին անդին չուեն , շոգմոզներու , փասքուսներու և սուտ պատմութիւններ հնարողներու հրոսախմբեր հորիզոնին չորս կողմը կը թռչին : Զերմուկներու կայարանները , հանքային ջրոց քաղաքներն , և ծովու բաղանեաց օթեւանները կը լցուին փարիզի այդ բեկորներով : Առաւօտէն մինչեւ իրիկուն ուրիշ գործ չունին . ամեն օր իրար կը տեսնեն , և ո՛րչափ շատ տեսնեն , այնչափ աւելի պէտք կ'զգան զիրար ճանկրտելու : Ասկէց կը հասկցուի որ ջերմուկներուն , հանքաջրոց քաղաքներուն և ծովու բաղնիքներուն մէջ շոգմոզութիւնը և սուտ պատմութիւնը զիրար կը գլեն տարօրինակ արագութեամբ : Բայց փարիզի մէջ այնչափ վտանգաւոր չեն : Փարիզ տենդոտ է . իւր դեւը միշտ յառաջ կը մղէ զինք . ուստի ժամանակ չունի առջի աւուր ըսուածն հետեւեալ օրն յիշելու : Իսկ ծովու բաղանեաց մէջ , ընդհակառակն , ամեն մարդ քիչ շատ ջղացաւ ունի . այս պատճառաւ բամբասանքն անհեթեթ համեմատութեանց կը հասնի հոն :

Տարտամ և յողզողդ շուինդի մը կը նմանի . ուստի կ'ելնէ , ո՛ւր կ'երթայ , ոչ ոք գիտէ : Տուներուն մէջ կը մտնէ , ճաշի դահլիճներուն և ննջասենեակներուն մէջ կը սպրդի . յետոյ պատուհանէն դուրս կը ցատկէ և իւր երգը մրմնջելով կ'երթայ ծովեզերքին խցիկներուն մէջ . մինչեւ իսկ ծովը մտնող գեղուհեաց թաց մարմինը պատող սփածանելիին ներքեւ կը սողոսկի , երբոր ծովէն դուրս կ'ելնեն թափանցիկ և խայտախարիւ կերպարանօք :

Արդ , քանի մ'օրէ ի վեր թրէբորի մէջ ծովու բաղնիք առնող արք , և մանաւանդ կանայք , յոյժ արտա-

սովոր նիւթ մ'երեւակայած էին : Ծովեզերքի ծառուղւոյն վրայ կամ քաղաքին փողոցներուն մէջ թանառէ մարքիզը կը տեսնէին յաճախ բաց կառքով իւր զոքանչին հետ : Առաւօտ մը մէկն ըսաւ .

— Ըսել է թէ մարքիզը միշտ գեղանի փաթէրինի հե՞տ է :

— Բայց ո՛չ , պատասխանեց ուրիշ մը , որովհետեւ անոր աղջիկն առած է :

— Այո՛ , ճշմարիտ է :

Արդէն մոռցուած էր մարքիզին ամուսնացած լինիլը , բայց անոր տարիական կապակցութիւնը չէր մոռցուած : Անոնք իսկ , որք կինը չէին այլ եւս յիշեր , տարփուհին կատարելապէս կը յիշէին : Աշխարհ այսպէս է . կանոնաւոր վիճակներու չեն համակրի , մինչդեռ ապօրէն վիճակները կ'զբօսցնեն զիրենք : Մեր ժամանակակից ընկերութիւնը խօսքով պարկեշտ՝ բայց գործով զեղծ է , իւր դատողութեանց մէջ անաչառ , և ներողամտութեան մէջ անսպառ է : Իւր յատկանիչն է դրամին յարգանք : Տիկին ֆ . . . որ տարփաւոր մ'եւ քառսուն հազար ֆրանք եկամուտ ունի , աւելի խստիւ կը պարսաւի քան Տիկին Յ . . . որ երկու տարփաւոր և երեք միլիոն ունի : Ամենագեղեցիկ անուն մ'ունեցող իշխանուհի մը՝ գայթակղութիւն գայթակղութեանց վրայ կը բարդէր : Իւր բարեկամներէն մին խրատ կուտար իրեն որ այնչափ չխիզախէ հանրային կարծեաց դէմ : Իշխանուհին՝ անպատում արհամարհանօք պատասխանեց .

— Հանրային կարծիքն ո՞վ է , ես հարո՞ւստ եմ :

Արդ՝ Պ . թանտրէ և Տիկին Մորէր մեծահարուստ լինելով , բնականաբար փարիզցիք շատ խիստ չէին կրնար լինիլ անոնց նկատմամբ : Ասկէց զատ ի՞նչ գիտէին : Ֆապիէն իւր տարփուհւոյն աղջիկն առեր էր : Միթէ նո՞ր բան մ'էր այս : Իւր կնոջ հետ քիչ դուրս

կ'երնէր և գորանչին հետ ստէպ : Մնչուչա , գորանչը  
բաշառող էր , իսկ կինը հիւանդոտ :

Փոխանակ այս գոհացուցիչ մեկնութեամբը շատա-  
նալու , երկու երեք փարիզցիք , որք բերանաբաց օդն  
ի վեր կը նայէին , յոյժ հետաքրքրաշարժ պատմու-  
թիւն մը հնարեցին : Ըստ այդ մարդոց , թանտրէ  
մարքիզին և Տիկին Մորէրի յաճախ ի միասին պտը-  
տելնուն պատճառն այս էր որ իրենց կապակցութիւ-  
նը նորոգուեր էր : Դեռատի կին մը ցասամաբ կը բո-  
ղոքէր այս խօսքին դէմ , իբր թէ այսպիսի ամօթալի  
գործ մ'անհաւատալի էր :

— Ունակութիւն է , պատասխանեց իւր ամուսինը ,  
կարծելով որ ամեն բան կը մեկնուէր այս տխմար բա-  
ռով , որ բան մը չնշանակեր :

Շատ չանցաւ , ճշմարտութիւն կամ զրպարտու-  
թիւն , այս կարծիքը տարածեցաւ թրէբորի մէկ ծայ-  
րէն միւսը . բայց բարեբաղդաբար չհասաւ Մաքսիմի-  
լիէնի ականջն , որ տանը մէջ փակուած և իւր աշխա-  
տութեան մէջ սուղած , միայն Հանրիէթը տեսնելու  
համար մերթ ընդ մերթ դուրս կ'երնէր : Վէռի դըղ-  
եակն ալ յոյժ քիչ կ'երթար : Հետեւաբար երիտասարդը  
չէր գիտեր պարտած զրոյցները : Օր մը կէս օրէն յե-  
տոյ՝ ծովեզրը պտըտած ժամանակ Պ. Մորէրի պատա-  
հեցաւ :

— Ահ , որչափ երջանիկ եմ ձեզ տեսնելով , Պա-  
րոն , ըսաւ Պ. Մորէր՝ Մաքսի ձեռքը սեղմելով : Գի-  
տէի որ դուք թրէբոր կը բնակիք , ինչպէս որ դուք ալ  
իմ վէռի դղեակը գտնուիրս գիտէիք : Բայց երկուքս  
ալ սաստիկ զբաղած լինելով , ներողամիտ պէտք է լի-  
նինք միմեանց համար :

— Ձեր երկն յառաջացած է :

— Յոյժ յառաջացած . այս իրիկուն կը տեսնէք :

— Այս իրիկուն :

— Այո՛ , ձեզ տուն պիտի տանիմ , մի՛ ընդդիմա-  
նաք . հազիւ ձեռքս անցար , չեմ թողուր ձեզ : Ձեր  
տունը կը հանդիպինք և կը ծանուցանենք ձեր հաւուն  
թէ ճաշի չպիտի դաք :

Մաքս ձեւի համար միայն կ'ընդդիմանար : Ընդ-  
հակառակն , կ'օրհնէր այս դիպուածն , որ զինքը վէռի  
դղեակը կը տանէր : Յանկարծ իւր նախընթաց օրերու  
տխրութիւնն անհետացաւ , և ուրախ զուարթ ճանբայ  
ելան : Երբոր դղեակին ծառուղին մտան , Մաքսի սիրտը  
բաբախել սկսաւ . պարտիզին մէջ ծառի մը տակ եր-  
կու կին նշմարեց , որոց մին էր Արտեմիս , և միւսն  
Աննա-Մարի :

— Աւասիկ հօրուդ և Պ. Մաքսիմիլիէն , ըսաւ Ան-  
նա-Մարի՝ իւր բարեկամուհւոյն դէմքը դիտելով :

Արտեմիս կը վախնար անչուչա , որ իւր դէմքը բան  
մը չմատնէ , վասն զի իսկոյն ելաւ և դէպի եկողներն  
ուղղուեցաւ :

— Խորհուրդ չեմ տար ձեզ որ շնորհակալ լինիք  
Պ. Տանկարի , սիրելի՛ որդեակս , ըսաւ Պ. Մորէր Ար-  
տեմիսի : Երեւակայեցէք որ զալ չէր ուզեր և ես բըռ-  
նութեամբ բերի :

Արտեմիս բռնազբօսեալ քմծիծաղով մը ժպտեցաւ ,  
չիչխելով Մաքսիմիլիէնի նայիլ , զոր նեղեալ և չփոթեալ  
կ'զգար , և անոր այս խոհական զգուշաւորութենէն  
յոյժ գոհ լինելով՝ շնորհակալ էր որ իւր միտքը լաւ  
հասկցած էր . գուշակած էր որ աւելի լաւ էր դղեա-  
կին մէջ այնչափ մտերմութիւն ցոյց չտալ : Եւ որովհե-  
տեւ հանապազօրեայ այցելութիւններէ յետոյ կատար-  
եալ բացակայութիւն մը կրնար մեկնութեանց առիթ  
տալ , անգամ մը դիպուածով կուգար կը ճաշէր մար-  
քիզուհւոյն հետ , և այն ալ հօրունի ստիպողական  
հրաւերովը : Բառորդ մը յետոյ Արտեմիս մուցած էր  
այս ամեն գեղեցիկ որոշումները : Յուրա վարուել կը

խոստանար և չէր կրնար կատարել, յաղթուելով այն ամենազօր հրապոյրէն՝ զոր Մաքս ի գործ կը դնէր իւր վրայ :

Մարքիզն և Տիկին Մորէր երեւցան այն պահուն, ուր իրենցմէ զատ ուրիշ մարդու չէր սպասուեր ճաշի դահլիճն երթալու համար : Գապիէն երբէք այնչափ ծիծաղադէմ եղած չէր . քաթէրին ալ երբէք այնչափ զուարթ եղած չէր : Տիկին Գէրսէն (Սննա-Մարի) Պ. Մորէրի հետ կը խօսակցէր, մինչդեռ զոքանչ և փեսայ զուարթաբար կը շաղակրատէին, առաջինն իւր թիկնաթուռն վրայ դէպի ետեւ ինկածի պէս նստած, իւր գեղեցիկ մերկ ուսերը պարզելով, երկրորդն ալ իւր վայելչաձեւ թուխ զգեստին մէջ կորացած, մեծ հանդարտութիւն կեղծելով : Արտեմիս և Մաքս յոյժ հեռի էին այս ստորին աշխարհէ . անպատու մ ուրախութիւն կ'զգային միմեանց քով գտնուելուն վրայ :

— Քարտէսներս դահլիճն իջուցնել տուի, ըսաւ Պ. Մորէր . կրնաք ձեր յառաջիկայ ճանապարհորդութեան ուղեցուցակը բացատրել մեզ :

Եւ, արդարև, երբոր կոչնականք ճաշարանէն դուրս ելան, Մաքսիմիլիէն կրցաւ տեսնել, սեղանի մը վրայ պարզուած, երկու կանդեղներու միջեւ, երկու Ափրիկեան քարտէս, Լիվինկսթոնի և Սթանլիի վերջին գիւտերուն համեմատ գծուած : Մարքիզն և քաթէրին ճաշակ չունէին այս բաներուն, և քաղաքավարութեան համար միայն ուշադրութիւն կ'ընծայէին : Բայց երկու մանկամարդուհիք, Արտեմիս և Սննա-Մարի, յոյժ կը փափաքէին ճանչել այն խորհրդաւոր երկիրները զոր Պ. Տանկար կը յուսար գտնել : Մաքս, իւր սիրուն պարզութեամբ հասկցուց անոնց թէ ինք նախ խորհած էր Ափրիկէի բոլոր լայնութիւնն անցնել, Ադրանտեանէն մինչեւ Հնդկական Ովկիանոս . բայց Սէր-

բա Բինթոյ հաղարապետին ուղեւորութիւնն հարկ չէր թողուր իրենին . այս պատճառաւ իւր առաջին յատակագիծը փոխեց : Փոխանակ արեւմուտքէն արեւելք երթալու, Պակամորիոյէն Գանկարիի ճանրով Պաննա պիտի երթայ որ Ադրանտեանի եզրը քաղաք մ'է քոնկոյ գետին բերանն : Եւ որովհետեւ մարքիզուհին կը զարհուրէր քարտէսին վրայ չտեսնելով այն անհուն անծանօթ երկիրները՝ զորս Մաքսիմիլիէն պիտի անցնէր, քանի մը մանրամասն տեղեկութիւններ տուաւ իւր արշաւանաց վրայ : Իւր հետ երեք հարիւր բնիկ պիտի ունենար քաջ զինեալ, և Սթանլիի վերջին ուղեւորութիւնը վերստին պիտի ընէր մինչեւ Նիանգայի երկու լիճերը, Նեղոսի քանի մ'ակունքն հետախուզելու համար, որ այն լիճերէն կ'ելնեն : Քոնկոյ հասած ժամանակ անծանօթին մէջ պիտի մտնէր : Կ'ուզէր այդ գետին բոլոր անցած տեղերէն մինչեւ միւս Ովկիանոսն իջնել : Կը նկարագրէր այն անթիւ մանր ժողովուրդներն, այն զինեալ ցեղերն, որոց հետ կուուիլ հարկ էր . Այրեցեալ գօտիի սարսափելի տաքերն, որ սառուցիչ ցուրտերու կը յաջորդէին, նօթութիւնը, ծարաւն և մահը միշտ ներկայ : Իւր խօսքը խրոխտ և միանգամայն քաղցր ճարտարութիւն մ'ունէր, որ Արտեմիսի սիրտը կը յուզէր : Մարքիզուհին կ'սքանչանար երիտասարդին դիւցազնութեան վրայ, որ կ'երթար նոր երկիրներ նուաճել արդի յառաջդիմութեանց, առանց ուրիշ յոյս մ'ունենալու, եթէ ոչ դիտութեան մարտիրոսներուն վկայաբանութեանց մէջ նոր անուն մ'ալ արձանագրել :

— Ձեր ուղեւորութիւնն երկար պիտի տեւէ՞, հարցուց մարքիզուհին :

- Երեք տարի, Տիկին, պատասխանեց Մաքս :
- Երեք տարի՞ :
- Մեր բարեկամը տասներկու հազար քիլո-

մէթրի չափ ճանաչ պիտի քայլէ, աւելցուց Պ. Մո-  
րէր :

Արտեմիս իւր մտածութեանց մէջ կը սուղէր : Եր-  
բոր Պ. Տանկլար ժամը տանին միջոցները մեկնեցաւ,  
մարքիզուհին գրեթէ պաղ գտաւ իրեն հետ : Այս  
պաղութիւն տխրութենէ զատ ուրիշ բան չէր :

— Կը տեսնես ահա որ իրաւունք չունէիր վախ-  
նալու, ըսաւ Տիկին Քէրսէնի : Պ. Տանկլար հոկտեմ-  
բերի մէջ պիտի երթայ և երեք տարի բացակայ պի-  
տի մնայ . . . էթէ վերագառնայ :

— Կամ երթայ, պատասխանեց Աննա-Մարի :

Տիկին Թանտրէ (Արտեմիս) գիշերն ի բուն Մաքսիմի-  
լիէնի խօսքերուն վրայ մտածեց : Ո՛հ, ո՛չ, ուրիշ մար-  
դոց չէր նմաներ այդ խրոխտ գէմքով, ներշնչեալ նայ-  
ուած քով և ջերմ ճարտարխօսութեամբ նշանաւոր  
երիտասարդն, որ քաջաբար այդպիսի ձեռնարկ մը կը  
փորձէր : Պիտի երթայ և ինքն ալ ոչ եւս պիտի տես-  
նէ զայն . . . : Այն ժամանակ իւր սրտին խորն իջնե-  
լով, այն խորհրդաւոր « ես »-ին մէջ, ուր ամենածա-  
ծուկ խորհուրդք կը թաքչէին, կը խոստովանէր ինք-  
նիրեն թէ Աննա-Մարի կրնար իրաւունք ունենալ՝ վը-  
տանգ մ'զգայով իրեն համար : Անկեղծաբար կը հար-  
ցաքննէր ինքզինք, և կը պատասխանէր թէ հանապաղ  
Մաքսիմիլիէնի վրայ կը խորհէր : Արդեօք սիրոյ սկզբը  
նաւորութիւն մը չէ՞ր երեւակայութեան այն բռնաու-  
րութիւնն՝ որ չէր թողուր ինքզինք կորզել իւր մտա-  
խոհութիւններէն : Ինքը սիրէ՞ր զՄաքս, ոչ : Զայրոյթ  
կ'զգար երբոր իւր պարտուց նեղ գծէն դուրս ելնե-  
լու գաղափարը կը ներկայանար իւր մտաց, և միշտ  
սա եզրակացութեան կը վերադառնար թէ իւր ամուս-  
նոյն մեղ դնելու բան մը չունենալով, բովանդակապէս  
անոր լինելու պարտական էր : Երկար և ցաւազին  
քնհատութենէ մը յետոյ՝ առաւօտուն քնացաւ :

Երբոր արթնցաւ, ժամը տասն էր, (կէս օրէն եր-  
կու ժամ առաջ), սրտին մէջ մղձկում կ'զգար, իբր  
թէ մեծ դժբաղդութիւն մը կ'սպառնար իրեն : Այն  
առաւօտ սաստիկ տաք կ'ընէր : Պ. Մորէր չըջակա-  
ները գնացած էր : Բաթէրին անձնական տկարու-  
թիւն պատճառելով անկողնէն չէր ելած : Մարքիզը,  
մարքիզուհին և Աննա-Մարի միայնակ էին . բոլոր  
վանդակափեղկերը փակած և վարագոյրներն իջուցած  
էին արեւուն հրատապ շերմութենէն պատասպարուե-  
լու համար : Դուրսն, անողոք երկինքն՝ անհուն կա-  
պոյտ դորգի մը պէս պարզուած էր : Ծառերը՝ նուա-  
զած՝ իրենց խոնջ ոստերը կախ թողեր էին : Թռչունք,  
օդին ծանրութենէն կարծես թմրած, ոչ եւս կը  
գեղգեղէին տերեւներուն տակ : Հազիւ մերթ ընդ-  
մերթ աղի հոտերով լի մեղմ հով մը կուգար ծովու  
կողմէն . բայց տաք և կիզիչ հով մը, նման դարբնոցի  
մը փքոցին հրաբորբոք շունչին : Ֆապիէն դահլճին մէկ  
անկիւնը լրագիր կը կարգար . Արտեմիս Պիզէթի մէկ  
երգը կը սերտէր . Աննա-Մարի ալ քունի դէմ կը մա-  
քառէր :

— Հազար ներում կը խնդրեմ ձեզնէ, սիրելի՛ բա-  
րեկամուհիս, ըսաւ մարքիզուհւոյն, ալ չեմ կրնար  
դիմանալ . այս տաքը կ'ընկճէ զիս . պիտի երթամ  
անկողնիս վրայ իյնամ :

— Ես ալ ձեզ պէս ընեմ, աւելցուց Ֆապիէն՝ լը-  
րագիրը ձեռքէն թողլով : Ստուգիւ կ'օքանչանամ ձեր  
վրայ, Արտեմիս . բաւական քաջութիւն պէտք է այս  
տաքուն երգելու համար :

Եւ սակայն Արտեմիս իւր դաշնակին առջեւ նստած  
չէր : Իւր մտածութիւնը, բացակայ, երազի թեւերով  
հեռիները կը թռչէր : Երբոր առանձին մնաց, ելաւ  
կանդնեցաւ, երկար աթոռի մը վրայ տարած ուեցաւ  
դահլճին ամենէն նսեմաստուեր անկիւնն, և ինքզինք

մեղմաբար թողուց իւր գիշերուան մտածութեանց, որք նորէն կը ներկայանային : Տարտամաբար կը մաքառէր իւր շուրջը տատանող թմրութեան դէմ : Քիչ քիչ իւր դաղափարները չփոթիլ սկսան , և վերջապէս աչերը փակեց : Երբոր արթնցաւ , որմին վրայ քանդակեալ բարձր ժամացոյցը նայելով տեսաւ որ կէս օրը շատ անցած էր : Իւր ծուլութիւնն յանդիմանեց . մայրն հիււանդ էր առաւօտէն ի վեր , և տակաւին լուր մը չէր հարցուցեր անոր որպիսութեան վրայ : Որոշեց մօրը սենեակն երթալ և տեսնել թէ բան մը կ'ուզէ՞ր :

Տիկին Մորէր դղեակին աշտարակին վարի դասիկոնն երեք սենեակէ բաղկացեալ յարկ մը կը բնակէր : Հագուելու սենեակէն կը մտնէին հոն , և փոքր դահլիճէն դուրս կ'ելնէին : Արտեմիս վարի երկայն սրահը մտաւ և մինչև հագուելու սենեակը գնաց , բայց դուռը ներսէն կղպուած լինելուն չկրցաւ բանալ : Ի սկզբան մտածեց ետ կենալ իւր այցելութենէն , խորհելով որ մայրը թերեւս դիտմամբ փակած էր , որպէս զի անհանգիստ չընեն զինքը . յետոյ որոշեց պարտէզին կողմէն դառնալ : Մօրը ննջասենեկին երկու պատուհանները սօսերու ծառուղւոյն վրայ կը բացուէին . երեք ոտք փայտաչէն փոքր սանդուղէ մը կարելի էր դիւրութեամբ ներս մտնել : Պատուհաններէն մին բաց լինելով , Արտեմիս փոքր սանդուղէն վեր ելաւ , և պատուհանին սպանոսակը վեր առնելով և կիսափակ վանդակափեղկը հրելով սենեակէն ներս մտաւ :

Բայց մէկէն կանգ առաւ տեսնելով որ իւր ամուսինն հոն էր իւր մօրը քով . . . . .

Խեղճ աղջիկը պահ մ'անշարժ մնաց , լռին , ապշած : Յետոյ յանկարծ սթափելով դուրս ելաւ սենեակէն , և փոքր սանդուղին երեք աստիճաններն արագաբար իջաւ այլայլած , շուարած , դողալով : Կ'ուզէր

հեռու փախչիլ և անծանօթ խորշ մը քաշուիլ , ուր չկըրնային հասնիլ աշխարհիս քարուականքն ու գարշուլթիւնները : Երբոր ոտքը պարտէզին աւազին վրայ կը դնէր , Պ. Մորէր երեւցաւ :

— Ձեր մօրը քովէն կուգաք , սիրելի՛ որդեակս , հարցուց .

— Այո՛ . . . այո՛ . . .

Կը կակազէր . բառերը կը խեղդուէին կոկորդին մէջ : Նորէն կրկնեց .

— Այո՛ . . . այո՛ . . . :

— Ուրեմն անհանգիստ չընեմ զայն , ըսաւ Պ. Մորէր : Գիրքերուս մին դահլիճը թողեր էի , և կը կարծեմ թէ ձեր մայրն իւր սենեակը տարած է :

Արտեմիս մտիկ կ'ընէր առանց հասկնալու : Սակայն երբոր տեսաւ որ Պ. Մորէր ոտքը սանդուղին ոտքին վրայ կը դնէր , հասկցաւ :

— Ո՛չ , ներս մի՛ մտնէք , ըսաւ :

— Ինչո՞ւ համար :

— Վասն զի մայ . . . վասն զի Տիկին Մորէր յոգնած է . . . կը փափաքի որ թող տան զինքը ննջել :

Պ. Մորէր Արտեմիսի երեսը նայեցաւ զարմանօք : Արդեօք դուչակե՞ց խաղացուած թատրերդին մէկ մասը , կամ թէ Արտեմիսի երեսին սարսափելի դժգունութիւնը տեսնելով անոր վրայ ունեցած գորովն ըզգածեցա՞ւ : Իսկոյն բռնեց դեռատի կնոջ ձեռքն , և տեսաւ որ սառած էր :

— Բայց դուք հիւանդ էք , որդեակ . ի՞նչ ունիք :

Պ. Մորէր սանդուղին առջեւ կեցած էր : Արտեմիս կը դողար խորհելով որ կրնար նա եւս ներս մըտնել և իւր տեսածը տեսնել : Ուստի յուսահատաբար կախուեցաւ իւր հօրուին թեւէն .

— Ձիս դարաստանը տարէք , ըսաւ , քիչ մ'օդ առնում . . .



— Ընդհակառակն , որդեա՛կ , ձեր սենեակը դարձէք . տաքը սաստիկ է , քալելով կրնաք աւելի հիւանդ րանալ : Երթամ ձեր սենեկապանուհին կոչեմ :

— Մի՛ մեկնիք քովէս . . . ո՛հ , պարոն , կ'աղաչեմ . . . մի՛ մեկնիք քովէս . . . :

Եւ կը քաշէր զայն դէպի սօսերուն ծառուղին , իւր գալարեալ ձեռքն անոր թեւին փաթթելով , որպէս զի չհեռանայ իւր քովէն , և վախնալով որ իւր շփոթութիւնն ու դժգունութիւնը բան մը կասկածել չտան անոր : Բայց Պ. Մորէր՝ մարքիզուհւոյն ակներև խօթութիւնն օղին անտանելի ծանրութեան կը վերագրէր : Տունէն հինգ վայրկեանի չափ հեռացած էին , Պ. Մորէր զգաց որ Արտեմիսի թեւն առաւել ծանրացաւ իւր թեւին վրայ . զարհուրելով կանգ առաւ , և տեսաւ որ աչերը փակած էր և երեսին դեղնութիւնը կապուտի կը փոխուէր :

— Չեմ՛ կրնար . . . չեմ՛ կրնար . . . մրմնջեց Արտեմիս :

Եւ թողլով Պ. Մորէրի թեւը , կրնըկին վրայ ինկաւ , տկար հառաչ մ'արձակելով :

Բարեբաղդաբար , Պ. Մորէր ինքզինք չկորսնցնելով վազեց ջրվէժին քով , և իւր գլխարկը պաղ ջրով լցուցած՝ վազեց դարձաւ Արտեմիսի քով և ճակատն ու քունքը թրջեց : Արտեմիս ոգելից ազերու սրուակ մը կը պահէր գրպանը . Պ. Մորէր փնտռեց գտաւ զայն և հոտոտել տուաւ : Մարքիզուհին նորէն տկար հառաչ մ'արձակեց . այտերը կարմրեցան , կարճ սարսուռ մը ցնցեց զայն . վերջապէս խելքը գլուխն եկաւ : Նախ իւր աչերն իւր շուրջը պտըտցուց առանց հայեացքի և արտայայտման : Յետոյ իրականութեան ըզգացումը վերադառնալով , իւր չարաշուք գիւտն յիշեց , և լալով իւր հօրուին թեւերուն մէջ ինկաւ :

Պ. Մորէրի երկիւղը կ'աւելնար : Արգետօք հիւանդ

դութեան սկզբնաւորութի՞ւնն մ'էր : Ի՞նչ կը նշանակէր նուազումէ մը յետոյ այս յուսահատութեան վերադարձը : Գրկեց զայն , և դղեակը փոխադրելով՝ սենեկապանուհի մը կոչեց , և հրաման ըրաւ որ մարքիզուհին հանուեցնելով անկողինը դնէ :

Քառորդ մը յետոյ , Աննա-Մարի իմանալով , վազեց եկաւ իւր բարեկամուհւոյն քով :

— Ի՞նչ է այս , Տէ՛ր Աստուած . Ի՞նչ ունիս , Արտեմ , գոչեց Տիկին Գերսէն , զարհուրելով Արտեմիսի այլայլեալ դէմքէն :

— Ոչինչ . . . ոչինչ . . .

Եւ այս « ոչինչ . . . ոչինչ » ն ըսած ժամանակ Աննա-Մարիի վրայ ա՛յնպիսի հայեաց մը կը ձգէր , որ սարսափելի հարցում մը կը պարունակէր :

— Կ'աղաչեմ , սիրելի՛ս , շարունակեց Տիկին Գերսէն ձայնը մեղմացնելով , վստահութիւն ունեցիր վերաս , բան մի՛ պահեր ինձմէ . . . : Միթէ՛ ես չեմ գիտեր քու ամեն դաղտնիքդ :

Բայց Արտեմիս լուռ կը կենար միշտ :

— Դու գիտէիր . . . գիտէիր . . . ըսաւ թոթով վելով :

Յետոյ լռեց : Գլուխն անդին չէր դարձուներ , այլ շարունակ Աննա-Մարիի վրայ յառած էր աչերն , որք տենդէն խոչորցած էին , և որոց մէջ անհուն յուսահատութեան մ'աղօտ բոցը կը փայլէր :

— Դու գիտէիր . . . գիտէիր . . . մրմնջեց դարձեալ :

Տիկին Գերսէն չէր հասկնար այս երկու բառերուն մէջ բովանդակեալ քաղցր և միանգամայն դժնդակ յանդիմանութիւնը :

— Գիտէիր . . . և չիմացուցիր ինձ . թողուցիր որ այս անիծեալ ամուսնութիւնը կատարուեցաւ , և կեանքս ջախջախեցիր անդառնալի կերպիւ : Ինչո՞ւ ա-

մեն բան չսեցի այն ժամանակ դահլճին մէջ : Ինչո՞ւ Պ. Մորէր չարտասանեց այնպիսի խօսք մը , որ ճշմարտութիւնն յայտնէր ինձ : Ես այսուհետեւ պժգանք միայն կրնամ ունենալ այդ թշուառականին համար : Դու գիտէիր որ ես զիս մշտնջենաւոր այրիութեան մը կը նուիրէի , և բա՛ւ մը չելաւ բերնէդ որ զիս լուսաւորէր . չցուցիր ինձ այս վիճն՝ ուր կը դիմէի ժպտելով : Գիտէիր այս ամուսնութեան ծանականքն , և ամեն մտրդ ալ գիտէր քեզ հետ , և մէկը չգլթաց իմ վըրայ :

Արտեմիսի աչերը նուազ կը յառէին քանի որ այս գաղափարները կ'անցնէին ուղեղին մէջէն՝ ատրաշէկ սուր սլաքներու պէս : Կէս մը նստիլ ուզեց անկողնին մէջ՝ դէպի Աննա-Մարի ծռելու համար , բայց իւր գեղեցիկ և դժգոյն գլուխը նորէն բարձին վրայ ինկաւ :

Սակայն Տիկին Մորէր և մարբիզը զարհուրելով՝ որոշեցին երեւան ելնել :

— Ձեր կինն հիւանդ է , ըսաւ Պ. Մորէր մարբիզին . քովը գնացէք :

Մարբիզն իւր կնոջ սենեակը մտաւ . և շատ չանցած դուրս ելաւ : Թրէբոր գնաց բժիշկ մը բերելու : Քաթերին առաւել քաջութիւն ունեցաւ . իւր աղջկան ննջասենեկէն փոխչելու բնաւ պատճառ մը չէր կրնար ցուցնել : Ուստի ներս մտաւ դողալով , և կը մըտածէր սարսափահար թէ արդեօք ի՞նչ պիտի ըսէր աղջիկն երբոր զինքը տեսնէր : Բայց դժբաղդ աղջիկը քնացած էր , կամ մանաւանդ տենդերու յարակից ծանր թմրութիւնը տիրած էր վրան : Այտերուն խընձորիկներուն վրայ կարմրութիւնը կ'աւելնար , շունչն արագ էր և կարճ . բազկերակն հարիւր երսուն կը զարնէր : Մերթ ընդ մերթ կը ցնցուէր անկողնին մէջ և ձեռներն անձկութեամբ կը շարժէր , իբր թէ զար-

հուրելի երեւոյթ մը վանել ուզելով . բժիշկը զննեց զայն , առանց թմրութենէն արթնցնելու :

— Դեռ չեմ կրնար հիւանդութիւնը ճշդել , ըսաւ Պէտք է սպասել : Տենդն հաւանօրէն պիտի աւելնայ գիշերը , և քանի մ'անգամ զառանցութիւն պիտի գայ վրան :

Ձառանցութիւն : Մարբիզն և Քաթերին սարսափեցան : Մի եւ նոյն մտածութիւնը կուգար երկուքին ալ . դադանական անձնասիրութեան մտածութիւն : Իրենց զոհը թողած , մի միայն իրենք զիրենք կը հուգային : Արտեմիս՝ զառանցութեան միջոցին յայտնութիւններ կրնար ընել : Տիկին Մորէր յայտարարեց թէ չպիտի մեկնէր իւր աղջկան քովէն , և թէ չէր կրնար անոր վրայ հսկելու հոգն ուրիշի յանձնել : Պ. Մորէր զարմանալով այս մայրական դորովոյ վերադարձին վըրայ , փրկիսփայական « ա՛ » մ'արտասանելով բաւականացաւ : Այս յանկարծական դորովն իբր շլախտի հետեւանք կը նկատէր : Բայց Տիկին Քէրսէնն համոզելն աւելի դժուար եղաւ : Պնդեց որ հիւանդապահի պաշտօն պիտի կատարէր իւր բարեկամուհոյն քով . Քաթերին առարկեց թէ սրտին անհանգստութենէն ու յուզումէն չպիտի կրնար ննջել . ուստի աւելի լաւ էր իւր « սիրելի զաւկին » քով կենալ : Տիկին Քէրսէն զիջանելու պարտաւորեցաւ : Այսու հանդերձ սարսափելով կ'զգար որ Արտեմիսի հիւանդութիւնը շուտով անցնելու բան չէր . ուստի և ինք ալ յաճախ կըրնար գալ և փոխանակել զՏիկին Մորէր :

Իսկ մարբիզը կը թափառէր տանը մէջ իբրեւ վըրտահար : Այդ մոլի մարդուն վրայ եղեռնաւորի սիրտ չկար . մեղքը գործելէ յետոյ՝ խիղճը տանջուելով կը զղար , ինքզինք կը կշտամբէր , կ'անիծէր . կը հասկընար որ ամեն բան լմնացած էր իւր և կնոջը միջեւ : Տասն անգամ մարբիզուհոյն սենեակին առջեւ եկաւ

անշոունջ, ոտքին մատներուն վրայ կոխելով, և դուռը կէս մը բանալով հարցուց ցած ձայնիւ .

— Ի՞նչպէս է :

Այս սրտատանջութիւն, որ բազմադիմի զգացումներէ ծնած էր, կրնար Պ. Մորէրի կասկածն հեռացնել, եթէ ունեցած էր : Եւ արդարեւ Պ. Մորէր բան մը չէր կասկածեր, թէեւ հաւասարապէս կ'արհամարհէր թէ՛ մարքիզն և թէ՛ ֆաթէրին : Պարկեշտ մարդիկ կը կարծեն միշտ թէ վատչուէր մարդոց ամօթալի գործերը սահման ունին . այս պատճառաւ է որ այսչափ խաբուողք կան : Ո՛չ, իւր որջուին հիւանդութեան կամ խօթութեան մէջ Պ. Մորէր գնահատելի պատճառ մը չէր տեսներ, եթէ ոչ օդին չափազանց տաքութեան և կուտակեալ յոգնութեանց արդիւնք :

Արտեմիս խորասուզեալ կը մնար իւր ծանր թմրութեան մէջ . բժշկին պատուէրին համաձայն ամեն ժամ պատուհանները կը բանային : Երբոր երեկոյեան զով օդը կը հասնէր մինչեւ յԱրտեմիս, կը թուէր թէ արթննալու վրայ էր . քիչ մը կ'երերար և ձեռքը ճակատը կը տանէր, մեղմ և մեքենական շարժմամբ, սաստիկ ցաւ մ'անկէց վանելու համար : Այն ժամանակ կցկտուր խօսքեր կ'արտասանէր, տղու մը լալով գանգատելուն պէս : Ժամը տասնէն յետոյ պատուհանները բանալ և օդը նորոգելը դադրեցուցին : Գիշերուան զովը՝ ցերեկուան բոցակէզ տաքին յաջորդելով կրնար դպչիլ Արտեմիսի : Միւս կողմէ, բժշկին հրամայած դեղը լաւ ազդեցութիւն ընելով՝ քիչ քիչ կը հանգարտեցնէր զայն : Կէս գիշերին աչքը բացաւ, քիչ մը քրթմնջեց, և նորէն թմրեցաւ, բայց ոչ այն շախշախիչ ընդարմացմամբ, որ մասնակի մահուան կը նմանի : Խաղաղիկ կը ննջէր այն աներազ քունով որ տենդը կը նուազեցնէ և ուղեղը կը զովայնէ :

Չեղունէն կախուած կանդեղն իւր կապուտակ լուսով կը լուսաւորէր ընդարձակ սենեակն, և տարտամ լոյս մը կը ծաւալէր աջ ու ձախ : Աղօտ ցոլ մը կ'արձակէր կահերուն և այլ նիւթոց վրայ, առաւել յըստակաբար ուրուադծելով ֆաթէրինի իրանն, որ լայն թիկնաթուռի մը մէջ թաղուած էր : Մինչեւ այս վայրկեան ֆաթէրին անձամբ դեղը կը խմցնէր հիւանդին : Արտեմիս չէր ճանչեր զայն, և դեղը կ'ընդունէր այն խոնջեալ և անգիտակից համբերութեամբ, որ ցաւակիրներու յատուկ է : Յանկարծ, առաջին անգամ խօսելով, տկար ձայնիւ մ'ըսաւ .

— Խմելիք մը . . .

Ֆաթէրին անմիջապէս ելաւ, արծաթէ սկահակ մը լցուց, աղջկանն անկողնին մօտեցաւ և անոր երկընցուց : Արտեմիս յանկարծական շարժմամբ անկողնին միւս ծայրը նետուեցաւ : Ֆաթէրին կարծեց ի սկզբան թէ տենդին պատճառած ցնցումներէն մին էր . բայց Արտեմիսի աչքն յամառ անշարժութեամբ անոր վրայ տնկուած էր : Այն ժամանակ հասկցաւ : Աղջիկը վախցեր էր գիշեր ժամանակ իւր մօր հետ առանձին գոնուելէ, և անկէ ինամուելէ : Ֆաթէրին վախն ի վախը պնդեց որ խմէ, Արտեմիս յամբ և կանոնաւոր շարժմամբ մ'ետ մղեց իւր մօր ձեռքը : Բայց միանգամայն աչքը սարսափելի նայուածքով մը Տիկին Մորէրի վրայ տնկուած էր : Ֆաթէրին նեղուելով հեռացաւ անկողնին քովէն և գնաց նորէն նստաւ թիկնաթուռին մէջ : Աղջկան աչերը չէին զատուեր անկէ : Թշուառական կիներ գուշակեց այն ամեն մտածութիւններն որք հիւանդին գրգռեալ ուղեղին մէջ կը թաւալէին :

Երբէք, երբէք մայրը սիրած չէր զայն : Ուրիշ տըղայք, վշտակրութեան ժամանակ, սիրտ մ'ունին իրենց ապաստան, այն է մօր մը սիրան : Արտեմիս,

որչափ հեռի տանէր իւր յիշողութիւն, ինքզինք միայնակ կը տեսնէր : Անձանօթ էին այն համբոյրներն որք մեղրէն անուշ են, որք տղուն երեսը կը գգուեն, և որք խաղաղ գիշերներ կ'ընծայեն ուրախալի ցերեկներէ յետոյ . անձանօթ էին իրեն այն գորովալիլ երկիւղներն, որք մայրերուն երեսը կը դժգունեցնեն : Խեղճ տղեկն ստրուկի մը պէս մեծցած էր, մերթ հոս, մերթ հոն, մօրը քմահաճոյից համեմատ տարուբերելով : Եւ այն օրն, ուր մայրական յարկը կը վերադառնար, պաղ և անզգայ արարած մը կը գտնէր հոն, որ զինք իւր տարփաւորին թեւերուն մէջ կը ձգէր : Արտեմիսի նայուածքը չէր բաժնուեր ֆաթէրինէն : Իւր երեւակայութեան բոլոր ճիգերը դէպ այդ միակ նպատակը կը ձգտէին . այնչափ բան դրած էր այդ նայուածքին մէջ որ խօսելու պէտք չունեցաւ : Բոլոր գիշերն այսպէս անցաւ, մունջ և սարսափելի, այնպէս որ Տիկին Մորէր չհամարձակեցաւ տեղէն շարժիլ կամ խօսք մ'արտասանել : Մտիկ կ'ընէր այն անէծքը, զոր իւր մահամերձ աղջիկն իւր վրայ կ'արձակէր իւր շարշարանաց խորէն : Երբոր առաւօտ եղաւ, արձանի պէս սպիտակ, շունչը մարած, իւր անթարթ, խոժոռ և քաղցր աչերն իւր ոճրագործ մօր վրայ կը յառէր միշտ :

Ամառուան գեղապայծառ առաւօտ մ'էր . թըռչունք կը գեղգեղէին ծառերուն մէջ : Պարտէզին ծաղիկներն արթնցած, հեշտալի բոյրեր կը ծաւալէին : Կապուտակ երկինք, տեղ տեղ սպիտակ ամպերով դրուադեալ, արեւուն ճառագայթներով ողողեալ համայն բնութեան հետ կը ծիծաղէր : Ամեն կողմ կեանքը կը վերածնէր քանի մը ժամու վաղահաս հանգիստէ մը յետոյ, և Արտեմիս, իւր ցաւոց անկողնին մէջ, հիւանդութենէն ընկճեալ, իւր բոլոր զօրութեամբ կը մաքառէր մահուան դէմ : Ի՛նչ անագորուն

հակապատկեր ընդ մէջ այս հիւանդին և քաջաուող բնութեան : Բժիշկն առջի օրէն շատ աւելի գէշ գըտաւ մարքիզուհին : Յայտնեց թէ իրիկուան ժամ վեցին նորէն պիտի գար : Իրիկունը տենդն աւելի շտուցած էր : Չառանցումը չէր դադարեր, և գլխուն ցաւն երկիւղալի կերպիւ կը ծանրանար : Բժիշկն յայտնեց թէ մարքիզուհւոյն հիւանդութիւնն ուղեղային տենդէր, և թէ հիւանդին վիճակը շատ ծանր էր . բայց դղեակին մէջ բացորոշ կերպիւ չյայտնեց իւր վճիռն : Երբոր թրէթոր հասաւ, դժգոյն դէմքով երիտասարդ մը դէմն ելնելով, սրտատանջ ձայնիւ մը տեղեկութիւն հարցուց մարքիզուհւոյն վրայ :

— Գուր ազգակա՛ն էք անոր, պարո՛ն, հարցուց բժիշկը խոհեմութեամբ :

— Ո՛չ, Տոքթէոր, այլ միայն անոր բարեկամը լինելու պատիւն ունիմ . . . : Ես Մաքսիմիլիէն Տանկլարն եմ :

— Այն ժամանակ կրնամ խոստովանիլ ձեզ ինչ որ չէի ուզեր ըսել ոչ իւր ամուսնւոյն և ոչ իւր մօր :

— Շատ գէ՛շ է ուրեմն :

— Անյոյս է :

Եւ որովհետեւ Մաքս կը դողդոջէր « անյոյս, անյոյս » թոթովելով, բժիշկն աւելցուց .

— Հրաշք կը լինի եթէ շաբաթն անցունէ :

Տիկին Մոպլան՝ գտնուած կանանց լաւագոյնն է : Իւր խօսքին նայելով ամեն մարդ կը սիրէ : Գուցէ այս պատճառաւ է որ ոչ զոք կը սիրէ : Փոքրահասակ, աչխոյժ, արթուն, մէկէն առ միւսն կը վազէ՝ այնպիսի գորովական ցոյցերով, որք կ'ապշեցնեն զմարդ : Մեկու մը խօսքը չընեն՝ առանց գովեստի մակդիր մը կը-

ցորդելու անոր անուան : Այդ ազնիւ Տիկին ք . . . կամ այդ սխարլի Պ. Յ. : Բայց եթէ , օրինակի համար , այդ ազնիւ Տիկին ք. կամ սխարլի Պ. Յ. երեք օր աներեւութանան իւր հորիզոնէն , թափառական շուն մը յիշելու չափ ալ չզբաղիր անոնց : Ամենայն անկեղծութեամբ կ'ըսէ .

— Պ. այսինչը . ա՛յ , այո՛ . շատ սիրեցի զայն ասկէց ամիս մ'առաջ :

Առ ժամն մոլեգնաբար կը սիրէր զՏիկին Հանրիէթ Ռոշէզ : Կին մը գեղեցիկ չէր՝ եթէ Տիկին Ռոշէզի չէր նմաներ , լաւ չէր հագուեր , եթէ Տիկին Ռոշէզի պէս չհագուէր : Շատ մարդիկ կան որ այսպիսի արտասովոր ուսիւններ կ'ընեն մէկ ծայրէն միւսը : Այդ անձինք սիրոյ չէզոքներն են : Այս աշխարհիս մէջ՝ պէտք է՝ կամ թեր կամ դէմ լինիլ . ով որ գիտէ ատել , նա միայն գիտէ սիրել :

Տիկին Մոպլան Թրէբորի մէջ ապարան մ'ունէր , որոյ անհեթեթ ճարտարապետութիւնն իւր բնաւորութեան ճիշդ նկարագիրն էր : Իւր առժամասկէս սիրած ամեն անձանց ճաշակը կը գտնուէր անոր վրայ : Հոս արդի քիչ մ'անդին Լուի Ժ. Գ. , չէնքին ճակատը վերածնութեան ոճովն էր : Աշտարակները դուռ միջին դար : Այս տեսակ դղեակ մը Փուայէլ կոչուած բլուրի մը վրայ շինուած , մասնաւոր յամառութեամբ մը կը զարնէր պարտողին աչքին : Տեսնել չես ուզեր զայն և դարձեալ կը տեսնես . բլրոյն զարմանալի մէկ տըրամադրութեամբ , թէ՛ ալ կողմէն գայ մարդ և թէ՛ ձախ կողմէն , անպատճառ կը տեսնէ իւր առջեւ Տիկին Մոպլանի հանճարին գործը :

Հանրիէթ աներկբայ էր որ լաւ ժամանակ պիտի անցունէր հոն , վասն զի բարեմիտ Տիկին Մոպլանի սրտին և կամաց կը տիրէր : Ծովու կողմն ամենէն գեղեցիկ յարկին մէջ զետեղուած , գէպքերուն կ'սպա-

սէր : Մաքսիմիլիէնի հետ միշտ նոյն , չտեսնել կը կեղծէր անոր տխրութիւնն ու մտախոհութիւնը : Սակայն օր մը , կէս օրէն յետոյ , Մաքս , այն աստիճան այլալած դէմքով եկաւ , որ Հանրիէթ չկրցաւ ինքզինք արդելուլ հարցնելէ :

— Գէշ լուր մ'առի հիմա , ըսաւ Մաքս . ձեր բարեկամուհին , Տիկին Թանտրէ , խիտ ծանր է :

Հանրիէթ իւր նուրբ շրթունքը սեղմելով արդիւնց այն անագորուն բառը՝ զոր արտասանելու վրայ էր : Արդահատական դէմք մ'առաւ , քանի մը կաթիլ արտասուք վիժեցին այտերն ի վար , և բեկեղալ ձայնիւ մ'ըսաւ .

— Ո՛հ , Տէ՛ր Աստուած , ի՛նչ դառն լուր էր որ տուիք ինձ :

Մաքս բժիշկէն լսածը կրկնեց անոր : Մրտեմիս անյոյս վիճակի մէջ էր :

Հանրիէթ աչերը փակեց , վախնալով որ իւր տարփաւորը կրնար ուրախութեան նշոյլ մը տեսնել հոն : Այս վայրկենէն , ոչ ոք Հանրիէթէն աւելի համակրութիւն ունեցաւ այդ «սիրելի աղջկան» առողջութեան : Օրն երկու անգամ , առաւօտ և երեկոյ , մարդ կը շրկէր վէռի դղեակը՝ լուր առնու համար , թէեւ աւելորդ էր , վասն զի Մաքսիմիլիէնի երեսը նայելով կրնար հասկնալ հիւանդութեան ընթացքը : Դժբաղդ Մաքս ոչ եւս կ'ապրէր : Երկար ժամեր անչարժ և մունջ կը կենար ընդ մէջ իւր հաւուն և Ժէմմայի , աչերը դատարկութեան մէջ յառած : Իւր վաղեմի փոքրիկ բարեկամուհին ուրիշ բանի համար չէր գտած , բայց եթէ յանկարծ կորսնցնելու համար : Մահուընէ աւելի սարսափելի բան : Մանկամարդ կին մը , կենաց գարնան մէջ յանկարծ կը զարնուի այն ժամուն՝ ուր ամեն բան կը ժպտէր իրեն : Մաքս չէր գիտեր թէ ի՛նչ սոսկալի եղերերդ մը կը խորտակէր այդ ծաղկափը-

Թիթ կեանք . չէր գիտեր թէ այն հարուած , յորմէ կը մեռնէր Արտեմիս , սրտին մէջ տեղէն կը զարնէր զայն :

Ծերունի Պ. Տանկար բան մը չէր ըսեր իւր թուռան : Երբոր մէկը շատ լացած է , այլոց համար մը խիթարութիւնը կ'արհամարհէ : Կսկիծներ կան , զորս ամօքել ուղելը գրեթէ թշնամանել է , և ճշմարտապէս վեհ սիրտերը լուութիւն կը սիրեն : Մաքսի սիրտն ամենէն աւելի տագնապեցնողն իւր առած տեղեկութեանց տարտամութիւնն էր : Բժիշկին խօսքերը կատարելապէս ճշմարիտ էին . պահ մը յուսահատելէ յետոյ՝ այժմ՝ յոյս կը յայտնէր : Բժշկաց արհեստական պարտականութիւնն է սրտատանջ երկիւղները քիչ մը քնացնել : Իսկ դղեակին սպասաւորներն , որոց կը հարցնէր անձկութեամբ , իրենց պաղ և անտարբեր դէմքով զայրոյթ կ'ազդէին երիտասարդին : Վերջապէս օրին մէկն որոշեց ուղղակի Պ. Մորէրի դիմել : Մինչեւ այն օր կը վարանէր՝ վախնալով որ Արտեմիսի հօրուն կրնար զարմանալ այս յանկարծ արթնցած համակրութեան վրայ . բայց՝ շատ չանցաւ՝ Մաքսի խրդձմտութիւնն յաղթուեցաւ սրտատանջութենէն , և այն ժամէն գոնէ սա ապահովութիւնն ունեցաւ թէ զինքը չէին խաբեր :

Թանտրէ մարքիզուհին երեք շաբաթ ստոյգ վտանգի մէջ էր : Հիւանդութիւնն իւր սաստկութեան հեռակէտն հասած կը թուէր , յանկարծ տենդը նուազիլ սկսաւ : Երիտասարդութիւն և քաջաւորջ մարմին յոյժ զօրաւոր են . արիաբար կը մարտնչին մահուան դէմ և երբեմն կը յաղթեն իրենց սարսափելի թշնամւոյն : Քսան և չորս ժամու մէջ զգալի բարւոքում մը տեսնուեցաւ , և բժիշկը կրցաւ պատասխանել մանկամարդուհւոյն աղատութեան համար : Երբոր Արտեմիսի զգայութիւնը վերադարձաւ , երբոր արթնցաւ

այն խոր թմրութենէն , որ մարդկեղէն արարածոց վախճանին սկզբնաւորութիւնն է , ինքզինք ապաքինեալ գտաւ ընդ մէջ Աննա-Մարիի և իւր հօրուն :

Նոյն օրը Ֆապիէն մէկ կողմ կոչեց զՊ. Մորէր , և իմացուց թէ մեծամեծ շահեր , ապիկար գործակալի մը ձեռօք վտանգի մէջ ինկած լինելով , իւր իտալիա երթալն հարկ եղած էր : Իւր հարստութեան մէկ մասըն անկէ կախում ունէր : Նամակներ ցոյց տուաւ , որք արդէն հինցած էին , և քանի մ'ստիպողական հեռագրեր : Մինչեւ ցարդ մարքիզուհւոյն հիւանդութիւնը վար դրած էր զինք : Այժմ՝ օգտակար կը կարծէր երթալ , և արդարեւ գնաց : Քաթէրին ալ , միւս կողմէ , հիւանդութիւն պատճառելով , անշուշտ կրած յոգնութենէն ու սրտայուզութենէն , իւր բնակարանը քաշուեցաւ :

Արտեմիս ամեն բան յիշեց : Կը վերածնէր ի կեանս , բայց կը վերածնէր նաեւ ի մտածութիւն : Պ. Մորէր կարեւորութիւն չէր տար մարքիզին յանկարծական ուղեւորութեան . նմանապէս բան մը չէր հասկնար Արտեմիսի լռին արտասուքներէն , որ իւր սպիտակ մեծ անկողնին մէջ պառկած , վերջին աստիճան գունատ , աչերը փոսն իջած , ամբողջ ժամեր անվախճան մտածութեանց մէջ խորասուզեալ կը մնար : Խորշում մը կը կնճռէր իւր սպիտակ ճակատը . կը թուէր թէ հանապազ իւր աչաց ներկայացող անիծեալ տեսիլ մը կը դիտէր : Պ. Մորէր և Տիկին Քէրսէն , զարմանալով անոր շարունակեալ լուութեան վրայ , հարցումներ ընել փորձեցին : Արտեմիս տարտամ պատասխան մը տուաւ , ըսելով թէ ինքզինք սաստիկ պարտասած կ'զգար : Երկուքն ալ ի զուր ջանացին կորզել զայն իւր անյեղի գաղափարէն : Արտեմիս գլուխը կ'երերցնէր ժպտելով . յետոյ վերստին իւր երկար լուութեան և մշտնջենաւոր խոկմանց մէջ կ'իյնար : Հոգւոյն այս վիճակ ութ

օրէ ի վեր կը տեւէր, երբոր մօրը հետ առաջին տե-  
սակցութիւնը տեղի ունեցաւ : Քաթէրին հանճարեղ  
չլինելով հանդերձ՝ խորամանկ էր, որովհետեւ կին էր :  
Իւր խօթութիւնը չէր կրնար շատ երկար տեւել, վասն  
զի վտանգաւոր կը լինէր : Իւր ամուսինը կամ Տիկին  
Քէրսէն եթէ խորհրդածէին, եթէ նշմարէին որ մար-  
քիզին ուղեւորութիւնն և իրեն ալ իւր բնակարանին մէջ  
փակուիլն Արտեմիսի ապաքինման կը զուգադիպէին :

Յերեկն, Արտեմիս, երկայն ակնոսի մը վրայ տա-  
րածուած, ինքզինք գետնայարկի մեծ դահլիճը փո-  
խադրել կուտար : Այն օրէն ի վեր որ կրնար քանի մը  
ժամ անկողնէն ելնել, այն մեծ դահլիճին մէջ նստելէ  
կ'ախորժէր : Իւր աչերն արուեստի ընտիր գործերէն՝  
բնութեան ընտիր գործերուն կ'անցնէին. իւր մտախո-  
հութիւնը կը նիրհէր տեսակ մը բարոյական ապշու-  
թեան մէջ որ երկար ժամեր կը տեւէր : Երբոր այս-  
պէս ժամանակ կ'անցունէր իւր խորհրդածութեան  
ակտաւոր վիճակին մէջ, կէս օրէ մը յետոյ մայրը  
դահլիճէն ներս մտաւ : Քաթէրին այն վայրկեանը կը  
դիտէր, ուր հիւանդը միայնակ լինէր. գիտէր որ ա-  
մեն օր Պ. Մորէր և Տիկին Քէրսէն երկու ժամ պը-  
տըտելու կ'ելնէին :

Արտեմիս սարսուռ մ'ղգաց իւր մայրը տեսնելուն  
պէս, որ դէպ իրեն կը յառաջանար երկչոտ և շիօթ-  
եալ, նենգամիտ յանցաւորի մը դէմքով, որ կը ցաւի՝  
ոչ թէ յանցանք գործած լինելուն՝ այլ բռնուած լի-  
նելուն վրայ : Մանկամարդուհին փակեց աչերն. ա-  
րիւնը սիրտը կը դիմէր : Երբոր աչքը բացաւ, Տիկին  
Մորէր կանգնած էր երկայն ակնոսին քով : Մայրն ի-  
րեն կը նայէր, իսկ ինքը՝ նահատակը՝ չէր համար-  
ձակեր իւր մօր նայիլ : Քանի մը վայրկեան լռութիւն  
տիրեց. բայց այս լռութիւն չէր կրնար երկար տեւել  
վասն զի չափազանց կը ծանրանար երկուքին վրայ :

— Հիւանդութիւն քաշեցիք . . . ծանր հիւանդու-  
թիւն քաշեցիք, աղլիկս, ըսաւ Քաթէրին :

— Այո՛, ծանր հիւանդութիւն, մայր իմ :

Քաթէրին իւր շղոտ մտաներով իւր գիշերազգես-  
տին ասղնենկարները կը ճմրտկէր :

— Բայց, գոհութիւն Աստուծոյ, հիմա աղէկ էք,  
ըսաւ թոթովելով իրարու ետեւէ այս հասարակ խօս-  
քերը : Ձեզ սիրողներուն ամենն ալ շատ վախցան :

Այս անգամ Արտեմիս աչքը վեր առաւ. « Ձինքը  
սիրողներուն ամենն ալ » : Ինչ դառն հեզութիւն  
այս չորս բառերու մէջ, զոր կ'արտասանէր այդ կին :  
Թեթեւ կարմիր մը դունաւորեց մարքիզուհւոյն դեղ-  
նած այտերը : Քաթէրինի սրտայուզութիւնն ու շփո-  
թութիւնը տակաւ կը հանդարտէր : Արարած մը ո՛ր-  
չափ նուազ բարոյական զգացում ունենայ, այնչափ  
աւելի յանդգնութիւն կ'ունենայ դժուարին պարա-  
զայից դիմագրաւելու :

— Եւ որովհետեւ այժմ սիրտս հանգստացած է ձեր  
վրայ, շարունակեց Տիկին Մորէր, կ'ուզեմ փարիզ վե-  
րադառնալ : Հաւանութիւն կուտա՞ք երթալուս :

— Անշուշտ :

— Վաղը պիտի մեկնիմ :

— Վաղը՛, ըսաւ Արտեմիս :

Այս խօսքն այնպիսի ձայնիւ մ'արտասանեց, որ  
Քաթէրին՝ քիչ մը զարմանալով՝ յարեց .

— Վաղն երթալուս մէջ անպատեհութիւն մը կը  
տեսնէ՞ք :

— Այո՛ :

— Ա՛, ո՞րն է :

Տիկին Թանարէ նորէն երկար նայուած մը փոխա-  
նակեց իւր մօր հետ : Ո՛րչափ բան կը պարունակէր այն  
նայուած : Կը նշանակէր. « Ձգոյշ կեցի՞ք, եթէ ոչ ինձ  
համար, դո՛նէ ձեզ համար, որպէս զի ոչ ոք կուահէ

ճշմարտութիւնը : Գուք կը հիւանդանաք այն օր՝ ուր ես բժշկուիլ կ'սկսիմ, և կը մեկնիք այն օր՝ ուր ես ոտք կ'երնեմ : Տիկին Մորէր հասկցաւ և լաւ հասկըցաւ, վասն զի ինքն ալ նոյն երկիւղը կը կրէր :

— Արդարեւ պատճառ մը չունիմ այսչափ շուտով երթալու, ըսաւ : Տակաւին ութ օր կը կենամ, օդը շատ գեղեցիկ է . . . տեսէք արեւն ինչպէս առատ կը մտնէ դահլճին մէջ :

Արտեմիսի գլուխը նորէն ինկաւ երկայն աթոռին բարձին վրայ . երեսին գոյնը բոլորովին դեղնեցաւ : Մեղապարտ կնոջ հանդարտութիւնը կը զարհուրեցնէր զայն : Քանի որ այդ կնոջ խղճմտանքին մէջ կ'իջնէր, ինքզինք կը կորսնցնէր, ինչպէս խոր հանքի մը հորն իջնող տղայ մը, և այս բարոյական խաւարը լուսաւորելու նշոյլ մը կը փնտռէր : Բնաւ խօսք մը, բնաւ շարժում մը, բնաւ նայուած մը, որ ապաշաւող սիրտ մը յայտնէ : Առաջին վայրկենի շփոթեալ դէմքին կը յաջորդէր կեղծ կամ ստոյգ հանդարտութիւն մը, որ սաստիկ կը դպչէր իրեն : Եւ այս ընտղն իւր մայրն էր : Եւ հասարակ խօսքեր միայն կը գտնէր իրեն ըսելու՝ այս սարսափելի թատերախաղին մէջ, ուր երկուքն ալ նետուած էին : Օղին գեղեցկութեան վրայ, առատաբար ներս մտնող արեւուն պայծառութեան վրայ կը խօսէր, որ այս ամեն քարուականներն իւր անտարբեր ճառագայթներով կը լուսաւորէր :

Քաթէրին պատուհանին քով երթալով, վարագոյրը վեր առած դուրս կը նայէր :

— Ա՛, Պ. Տանկարն եկաւ, չեմ հագուած, փախչիմ . իրիկուան կը տեսնուինք, Արտեմ, ըսաւ և շտապով դուրս ելաւ :

Մաքքիզուհին ելաւ նստաւ : Տիկին Մորէրի ըրած խօսքէն երկու բառ միայն լսեր էր, որը Մաքքիմիլիէնի գալը կը ծանուցանէին : Նոյն միջոցին սպասաւորը

ներս մտնելով, Արտեմիս ժամանակ չունեցաւ խորհրդածելու : Եւ սակայն իւր ի կեանս վերադառնալէն ի վեր յաճախ անոր վրայ կը մտածէր : Բայց որո՞ւ կրնար խօսիլ : Տիկին Քերսէնի ալ ոչ ևս կը համարձակէր վստահիլ, վախնալով անոր սիրալիր յանդիմանութիւններէն :

— Պ. Մաքքիմիլիէն Տանկար ձեր որպիսութիւնն հասկնալու եկած էր, ըսաւ սպասաւորը . բայց իմանալով որ անկողնէն ելած էք, կը հարցնէ թէ կրնա՞յ ընդունուիլ :

— Անշուշտ, ըսաւ մաքքիզուհին թոթովելով : Մաքքի վրայ առաջին նայուած մը ձգելուն պէս գուշակեց անոր կրած դառն սրտատանջութիւնը : Տխրադէմ և գունատ կը տեսնէր զայն . սակայն աչերն ուրախութիւն կը ճառագայթէին :

— Շատ բարեսիրտ էք, որ զիս տեսնելու կուգաք, ըսաւ իւր բարակ և նիհար ձեռքն երիտասարդին երկընցնելով :

— Գուք ալ շատ բարեսիրտ էք որ բժշկուեցաք, պատասխանեց Մաքս ժպտելով :

Երիտասարդն՝ Արտեմիսի ձեռքն իւր ձեռքին մէջ մեղմաբար սեղմած, աչքովը կը լափէր անոր անարիւն երեսն, որ մահն իւր թելով քերեք էր : Թողուց մաքքիզուհւոյն ձեռքը, ժպտան անհետացաւ շրթունքէն և արտասուք մը փայլեցաւ աչերուն մէջ :

— Ժողիէթ շատ փոխուած է, այնպէս չէ՞, ըսաւ մաքքիզուհին քաղցրութեամբ :

— Բայց ո՞ղջ է, գոչեց Մաքս, և ես տեսայ զինքը, և փառք կուտամ՝ Աստուծոյ, որ ազատեց զայն : Ա՛հ, Տիկին, եթէ գիտնայիք ի՞նչ դժնդակ ժամեր անցուցի : Նախ կը վախնայի որ ճշմարիտը չէին ըսեր ինձ, և կը կարծէի թէ Ժողիէթ մեռած էր . . . : Գուք, մեռած լինելը . դ՞ուք, գեղեցկութիւն և բա-



բութիւն . դուք , իմ տեսած կանանց մէջ ամենէն ազնիւն ու հանճարեղը : Գունը փախած էր աչքէս . իրիկուններն այս դղեակի շուրջը կը թափառէի , և ձեր կանգնողի լուսոյն փայլը կը նշմարէի մութին մէջէն : Եւ դուք , ձեր սենեակին մէջ պառկած , կը չարչարուէիք տենդէ . . . : Սոսկալի անձկութիւն մը կը ճմլէր սիրտս : Թրէբոր վերադառնալով , ծովեզրին վերայ կը պտըտէի , մէկ ժամ , երկու ժամ հոն կը կենայի հարցնելով ես ինձ թէ արդեօք հետեւեալ օրն ալ ողջ պիտի մնայի՞ք : Շատ ցաւ քաշեցիք , Տիկին , բայց Ժողիէթը սիրողներն ալ նոյնպէս ցաւ քաշեցին :

Մաքս գրեթէ նոյն խօսքը կը կրկնէր , զոր Տիկին Մորէր ըսած էր , բայց այս անգամ հեշտալի կ'երեւէր իրեն :

— Ժողիէթ աներկբայ է որ իւր բարեկամք չմոռցան զինքն , և դուք անոնց լաւագոյններէն մին էք , պատասխանեց Արտեմիս ժպտելով : Դուք չէիք կրնար զիս յանկարծ գտած լինիլ՝ իսկոյն կորսնցնելու համար : Ես կը հաւատամ թէ աներեւոյթ կապեր անցեալը ներկային հետ կը միացնեն : Այն կապերն են թերեւս , որ զիս ողջ պահեցին , առանց իմ գիտնալու : Անքուն անցուցած երկար ժամերուս մէջ յաճախ իմ առջի կեանքս կը յիշէի , որ Լա Պիրոյէուի մէջ ձեզ հետ անցուցած քանի մը տարիներուս մէջ կը բովանդակէր : Ես պէտք չունեցայ հարցնելու թէ արդեօք իմ վրայ լուր առնուլ եկած էիք : Այս մասին աներկմիտ էի : Բաւական էր որ ես ինձ հարցնէի : Քաջ գիտէի իմ ընելիքս՝ եթէ դուք հիւանդացած լինէիք :

Արտեմիսի դժգունութիւնը նորէն կ'անհետանար . բայց այս անգամ ցաւը չէր որ արիւնն երեսը կը բերէր : Ինքզինք երջանիկ և առողջ կ'զգար : Մաքս սըխրացմամբ անոր երեսը կը նայէր : Իւր գալէն ի վեր փոփոխութիւն մը կը լինէր անոր վրայ : Կը թուէր թէ

կեանքը վերստին մուտ կը գործէր , յամրաբար այս քնքուշ մարմնոյ մէջ , զոր հիւանդութիւնը մաշեր էր : Դեմքը քիչ քիչ կը կորսնցնէր այն մեղրամոմի գոյնն որ տեսնողը կը զարհուրեցնէր :

— Չկրցիք շատ աշխատիլ այս միջոցիս , այնպէս չէ , շարունակեց Արտեմիս : Եւ սակայն սեպտեմբերի մէջ ենք . հետեւաբար քանի մ'օր մնացած է ձեր ճանբայ ելնելուն .

— Այ չեմ երթար , ըսաւ Մաքս խանդով , և վայրկեան մը լռելէ յետոյ աւելցուց հանդարտ ձայնիւ .

— Կ'երթամ , բայց ժամանակէ յետոյ : Լռութիւն տիրեց : Ոչ եւս իրարու կը նայէին : Ի վերջոյ Մաքսի միջին խղեց լռութիւնը :

— Բայց մէկդի թողունք իմ աշխատութիւնս , Տիկին , այդ ամենը խիստ փոքր բան կ'երեւին աչքիս՝ երբ կը մտածեմ այն դժբաղդութիւնն որ քիչ մնաց ամենքս ալ պիտի ընկճէր :

Արտեմիս չպատասխանեց : Կը շփոթէր և կ'զգար որ Մաքս ալ կը շփոթէր իրեն պէս : Տեսակ մը նեղութիւն կը ծանրանար իրենց վրայ : Նորէն լռեցին : Վերջապէս մարքիզուհին լռութիւնը խղեց .

— Կը հաճի՞ք պատուհանը բանալ , ըսաւ Մաքսի միջինի . կարծէք թէ տաքէն կը խեղդուիմ հոս :

Երբոր Մաքս պատուհանը բացաւ ,

— Ա՛հ , ո՛րչափ լաւ է ապրիլն , ըսաւ : Արտեմիս ոգեւորուած և տաքցած էր դաշտին քաղցրարօյր հոտերէն , զուարթ արեգակէն , թռչնոց դայլայլիկներէն , արտաքին կենաց ամեն շունչերէն : Ինքզինք աւելի ուժով , աւելի քաջ կ'զգար : Քանի մը վայրկեան առաջ զինք Մաքսէն բաժնող նեղութիւնը տակաւ կ'անհետանար :

— Պէտք է որ վերստին աշխատիլ սկսիք , քանի որ

ձեր սիրան ոչ եւս անհանգիստ է : Դուք ձեզ չէք վերաբերիր , այլ ձեր ձեռնարկած մեծ դործին :

— Վերստին աշխատիլ սկսի՞մ : Ուրեմն պէտք է որ երթամ , հեռանամ Գրանսայէն : Այդ բան անհրճարին է ինձ այսօր : Իմ էութեանս լաւագոյն մասն ետեւս թողած պիտի լինէի : Գայով ձեռնարկած դործիս , ուրիշ մը թող շարունակէ : Իմ վրայ տարօրինակ փոփոխութիւն մ'եղաւ : Ինչ որ առաջ կը սիրէի , այժմ ոչ եւս կը սիրեմ . և զիս գրաւող փառասիրութիւնք այժմ փցուն կը թուին ինձ : Ոչ եւս կ'ուզեմ այն երկար ուղեւորութիւններն , որ զիս կը հեռացնեն սիրելիներէս . ոչ եւս կ'ուզեմ այն առանձնութիւնն որ ժամանակաւ զիս կը դիւթէր , և այսօր ատելի է ինձ :

Արտեմիս կը փակէր աչերը : Մաքս ոչ եւս կը շփոթեցնէր զայն . ընդհակառակն՝ խորին զմայլում մը կար վրան : Մաքսի խօսքերը չերմ բայց զսպեալ սիրոյ մը խոստովանութիւն կը պարունակէին , և ինքը գիտէր սակայն թէ Մաքս չպիտի ընէր զայդ խոստովանութիւն : Ի՞ր ուրեմն այնչափ նեղութիւն զգացին առաջ : Արտեմիս անդիտակցաբար՝ անձանօթ հրապուրի մ'անձնատուր կը լինէր : Ո՛րչափ պէտք էր զինքը սիրէր Մաքս , որպէս զի իւր բոլոր ապագայն , իւր բոլոր փառքն այսպէս զոհէր իրեն : Կ'սքանչանար այդ սիրոյ ազնուութեան վրայ , որ միայն զուշակել կուտար ինքզինք , որ ամեն բան կուտար և բան մը չէր խնդրեր : Այն ներքին տեսութեամբ , որ կանանց համար սրտի երկրորդ տեսութիւնն է , կ'զգար թէ ո՛ր աստիճան տիրած էր այդ երիտասարդի սրտին : Իւր տեղն , ուրիշ ո՛վ և լինէր , աւելի բան մը պիտի սպասէր . բայց ի՞նչ հարկ կար : Զիրար կատարելապէս կը հասկնային :

Նոյն միջոցին Տիկին Բէրսէն և Պ. Մորէր վերա-

դարձան իրենց պտոյտէն : Արտեմիս զուարթութեամբ ընդունեց զանոնք :

— Լաւ պտոյտ մ'ըրի՞ք , ըսաւ ժպտելով : Կը տեսնէք որ իմ միայնութիւնս երկար չտեսց :

Աննա-Մարի՝ մարքիզուհւոյն մօտեցաւ , մինչ Պ. Մորէր՝ Մաքսիմիլիէնի ձեռքը կը սեղմէր : Տիկին Բէրսէն ստուգիւ ապշած մնաց Արտեմիսի վրայ տեսած փոփոխութեան առջեւ : Ապաքինեալ կին մը թողուցեր էր մունջ և տխուր , այժմ առողջացեալ խօսուն և զուարթ կին մը կը դանէր : Մեղմ յանդիմանութիւնք ոչ եւս անցուկ կը թուէին այժմ : Օրհնեալ լինի սէրն՝ երբոր կեանք կուտայ սրտի և մարմնոյ : Այն կէս ժամու միջոցին , որ Պ. Մաքս կեցաւ տակաւին Վէռի դղեակին մէջ , չորսն ալ խօսակցեցան ուրախ և հանդարտ : Կարծես թէ մարքիզուհւոյն ընաւ վտանգի մէջ չէր ինկած : Օտարական մը , եթէ դահլիճէն ներս մտնէր , չէր կրնար երբէք կասկածել այն անձկութիւններն՝ որք տակաւին նախորդ օրն ամեն սիրտերը կը տազնապեցնէին : Ընդհակառակն , եթէ առաւօտուն տեսած լինէր զԱրտեմիս , այժմ չպիտի ճանչէր զայն : Պիտի կարծէր թէ նոյն կինը չէր , այլ երկու տարբեր կանայք էին , որք միմեանց չէին նմանիր բնաւ : Կը բաւէր որ սէրն իւր դիւթական թեւով դպչէր այդ կեղեքեալ արարածին , որպէս զի յանկարծ կերպարանափոխէր : Քանի մը ժամ առաջ կեանքն հրապուր մը չունէր իրեն համար , բայց այժմ անձանօթ ուրախութիւններով լի կ'երեւէր իրեն :

Երբոր Մաքսիմիլիէն մեկնեցաւ Պ. Մորէրի հետ , երկու բարեկամուհիք պահ մը լուռ կեցան : Աննա-Մարի մօտեցաւ Արտեմիսի և անոր երկու ձեռքն իւր ձեռաց մէջ առնլով .

— Մեռեալ մը թողուցի , և ողջ մը կը դանեմ , ըսաւ :

Արտեմիս կարմրեցաւ, և սիրուն գլուխն իւր բարեկամուհւոյն ուսին վրայ սահեցաւ :

— Եթէ գիտնայիր ո՞րչափ կը սիրեմ զայն, մըրմընջեց :

— Խեղճ տղայ, եթէ կը կարծես որ այսօր սկսար սիրել զայն :

— Աննա-Մարի :

Տիկին ֆէրսէն մեղմով համբուրեց զայն՝ փոքր տըղու մը պէս :

— Նա ալ ըսա՞ւ քեզ թէ կը սիրէր քեզ :

Արտեմիս փոխարինեց Աննա-Մարիի համբոյրն, և ձայնը քիչ մը ցածցնելով .

— Եթէ ըսած լինէր, այսչափ աներկբայ չէի կըրնար լինիլ :

Նոյն իրիկունը Մաքսիմիլիէն ճաշի հրաւիրուած էր Տիկին Մոպլանի դղեակն : Յիրաւի նեղութիւն կ'ըզգար երբոր Հանրիէթ միտքը կուգար : Մաքս այն հազւագիւտ մարդոց կարգէն էր, որոց յոյժ ծանր կուգայ սուտ խօսիլ կնոջ մը : Գրեթէ իւր անձին տէրը չէր : Քանի որ թրէբորի կը մօտենար, ծովէն եկած հովը կը զովացնէր իւր բոցավառ ճակատն : Իրաց իսկութիւնն աւելի յատակ կը նշմարէր : Այս կեղծ դիրքէն պատուաւորապէս ելնելու համար պէտք էր ճըշմարտութիւնն յայտնել Հանրիէթի . ոչ թէ Արտեմիսի վրայ ունեցած սէրը խոստովանելով, այլ գո՛նէ իւր ըզգացմանց վրայ երկար ժամանակ չխաբելու համար զայն :

Ամեն ժամանակ հեշտ չէ «քեզ կը սիրեմ» ըսել կնոջ մը . բայց աւելի դժուար է «քեզ չեմ սիրեր» ըսելն : Այս անկեղծութեան մէջ աւերելոյթ բրտու

թիւն մը կայ, որ միշտ դժնդակ է բարեկիրթ մարդու մը : Եւ սակայն պատիւը պարտք կը դնէր Մաքսի վրայ որ անկեղծ լինէր : Չէր կրնար Հանրիէթի տարւփաւոր մնալ, երբոր իւր սիրտն ուրիշի մը տուած էր վասն զի միշտ այս եզրակացութեան կը հասնէր, յարաբերութիւնը խզելու հնարը խորհելով : Թերեւս Հանրիէթ պիտի դժկամակէր . թերեւս նաեւ իւր նախանձոտ սրամտութեամբ պիտի գուշակէր իւր հակառակորդին անունը : Մաքս պարտաւորեցաւ իրաւախոհ լինիլ ինքնիրեն հետ : Որոշեց մօտ ժամանակէն ուղեւորութիւն պատրուակել : Այս ալ ստել էր, բայց գո՛նէ Տիկին Ռոշէզի գոռոզութեանը դպած չէր լիներ :

Երբոր Տիկին Մոպլանի ապարանը մտաւ, Հանրիէթ Ֆուայէլի վրայ նայող ճեմելիքին վրայ կ'սպասէր : Մաքսի զգացումն հասկնալու համար, Հանրիէթ անոր դէմքն երկարօրէն դիտելու պէտք չունեցաւ : Արտեմիսի պէս՝ Մաքս ալ չէր գիտեր իւր զգացումը կեղծել, ինչպէս նաեւ չէր գիտեր իւր ներքին ուրախութիւնը ծածկել : Ուրախութիւն այնչափ ակներեւ, որ պաղ կատաղութեան նշոյլ մը փայլեցաւ Հանրիէթի աչաց մէջ : Քիչ մնաց որ ինքզինք պիտի մատնէր : Բայց ինքզինք զսպելու մասին ալ յոյժ ճարտար էր : Իւր տարիաւորը ժպտելով ընդունեց : Արմուկովը ճեմելիքին եզրին կրթնեցաւ անոր քով, սիրուն և խանդավառ, քաղցրութեամբ խօսակցելով, և նոյն սիրատարի նայուածքն ուղղելով անոր :

— Ես եմ, գեղեցիկս, ըսաւ ասոնց ետեւէն Տիկին Մոպլան, անհանդիստ մի լինիք :

Նա ալ եկաւ արմուկովը ճեմելիքին եզրին կրթնեցաւ, մէկ թեւն Հանրիէթի մէջքին փաթթելով, և միշտ իւր շողով ներբողներն ուղղելով օրուան կուռքին :

— Սիրեցեալդ իմ, ըսաւ, դուք միայն ճշմարտապէս վայելչազեղ էք թրէքորի մէջ: Քիչ մ'առաջ ծովեզրն իջայ: Բաղնիք մտնող կանանց ամենն ալ հագուած կապիկներու կը նմանին: Տեսէք անգամ մը մեր բարեկամահին, պարոն Տանկար, այս իրիկուան չափ գեղեցիկ ու սիրուն եղած չէր: Զինքը տեսնող սուրբն անգամ չկրնար դիմանալ:

Հանրիէթի ներքին զայրոյթը տարօրինակ կենդանութիւն մը կուտար անոր դէմքին: Սչերն աղօտ կրակով մը կը փայլէին, շրթունքին թրթռումը զսպեալ սրտայուզութիւն մը կը մատնէին: Երեք չորս հողի ալ եկան և ճաշի նստան: Սեղանէն ելած ժամանակին, Հանրիէթ Մաքսիմիլիէնի թեւէն բռնեց, և քիչ մ'անոր ծռելով ըսաւ.

— Ժամը տասնին սպասեցէք զիս ֆաղինոյին առջև: Հանրիէթ ինքզինք զուարթ ցոյց տուաւ երեկոյթին սկիզբը, բայց անդուս զուարթութեամբ մը: Մաքսիմիլիէն, եթէ ուշադրութեամբ դիտէր, կրնար բան մը կուսնել. բայց իւր սիրտն յոյժ հեռի լինելով այս դահլիճէն, այնչափ ուշադրութիւն չէր ընծայեր Տիկին Ռոչէզի: Մնաց որ, Մաքսիմիլիէն շուտով մեկնեցաւ ներում խնդրելով Տիկին Մոպլանէն և ըսելով թէ գործ մ'ունէր աւարտելիք: Կ'ուզէր ինքնիրեն մնալ, որպէս զի մէկ կողմէ Արտեմիսի վրայ խորհի և միւս կողմէ Հանրիէթի ըսելիքներուն պատրաստուի: Ինչո՞ւ հետեւեալ աւուր թողուլ անհրաժեշտ բացատրութիւն մը:

Երբոր դուրս ելաւ, Տիկին Ռոչէզ դեռ քիչ մը ժամանակ հոն կեցաւ, բայց լռին և խօսողադէմ, որուն չղարմացաւ Տիկին Մոպլան: Բարի տիկինը դիտէր կամ գրեթէ դիտէր իւր գեղեցիկ բարեկամահայն գաղտնիքն: Այս պատճառաւ տարօրէն չերեւաց իրեն, երբոր ժամը տասնին քառորդ մնացած, Հանրի-

էթ իմացուց թէ ծովեզրին վրայ պտըտելու դիտաւ և որութիւն ունէր: Հոն գտնուող պարոններէն երկուերեքն յօժարակամ կ'ընդունէին Մաքսիմիլիէնի յաջորդութիւնն, իրենք զիրենք ընկեր առաջարկեցին, բայց Հանրիէթ չընդունեց, և Տիկին Մոպլան ալ իւր նազելուհւոյն օգնեց՝ հաստատելով թէ առանձնութիւն կը սիրէր:

— Ես ալ այնպէս եմ, աւելցուց Տիկին Մոպլան առջեւը նայելով. փափուկ հոգիները կը սիրեն առանձնանալ և ամփոփ մտքով խորհրդածել:

Սակայն Հանրիէթ արագապէս Ֆուլայէլի ծովեզրէն վար իջաւ: Քալուածքն և ծովուն զով օդը քիչ մը հանդարտեցուցին զայն. իւր պատրաստած ծրագիրն աւելի յստակապէս կը նկարուէր իւր մտքին առջև:

Երբոր ծովեզրը հասաւ, ծով մտնողներէն շատեր տակաւին կը ճեմէին հոն: Քովի ֆաղինոյին մէջ ալ կը պարէին մոլեգնաբար, շուժակներուն ալխազուր ձայները միայն կը վրդովէին այս զմայլելի դիշերին զըւարթութիւնը: Աստղերը կարծես վար կը տեղային երկինքէն, այնչափ բազմաթիւ էին և շողշողուն: Լուսինն արծաթափայլ լոյս մը ծաւալած էր տուներուն և ծառերուն վրայ, և անհաւասար նշոյններով կը լուսաւորէր ծովեզրին վրայ կուտուած խիճերը: Ծովը գրեթէ բոլորովին հանդարտ, մանր կոհակներ միայն կը բերէր, որք կուգային խաղաղութեամբ կը մեռնէին ծովեզրին վրայ: Տեղ տեղ փոսփորափայլ պիսակներ կը ցայտէին ստուերին մէջէն, մինչդեռ հեռին՝ ուրիշ աւելի դեղին լոյսեր, ոսկի կէտերու նման, մութին անհունութիւնը ծակելով կ'անցնէին ու կը գառնային: Ասոնք ձկնորսաց նաւակներն էին, որ ձուկ որսալու կ'երթային ծովուն բացը:

Մաքսիմիլիէն կ'սպասէր նշանակեալ տեղն, այն աստիճան մտածութեանց մէջ սուղեալ, որ Հանրիէթի

ոտնաձայնը չսեց: Սա՛ ձեռքը Մաքսի ուսին վրայ դը-  
րաւ:

— Ներեցէք, ըսաւ Մաքս, ձեզ չկրցի տեսնել:

— Դուք չքմեղացած էք, գեղեցիկ խաւարածէր:  
Տուէք ինձ այժմ ձեր թեւն, որպէս զի ձեզ քիչ մ'ա-  
ւելի հեռին տանիմ: Հոս բազմութիւն կայ, չենք կըր-  
նար հանգիստ խօսակցիլ:

— Ըսել է թէ յոյժ ծանր բաներ ունիք ինձ հա-  
ղորդելու, հարցուց Մաքսիմիլիէն ժպտելով:

— Յոյժ ծանր:

— Ա՛:

— Մի՛ վախնաք: Հոս գրեթէ առանձին ենք հի-  
մա: Նստինք սա բլրակին ստորոտն, որ խիստ յարմար  
տեղ է:

Հանրիէթ այն կերպիւ նստաւ որ լուսնին շողն իւր  
տարփաւորին երեսին զարնէ, իսկ ինք մութին մէջ  
նստաւ: Կ'ուզէր որ Մաքսիմիլիէնի դէմքը զննէր, իսկ  
իւր գործին բնաւ չէր գար որ Մաքսիմիլիէն ալ կարե-  
նար իւր դէմքը դիտել: Արդէն որոշած էր ընելիքն՝  
երբոր ծովեզրին վրայ տեսակցելու ժամադիր եղած  
էր՝ առանց հետեւեալ աւուր սպասելու: Յերեկն,  
արեւուն պայծառ և անխորհրդապահ լուսոյն տակ  
դիւրին չէ կեղծել մտքին խորհուրդն. ուստի կ'ուզէր  
որ ինք ինչ որ հաւատացնել ուզէր, Մաքս պարզապէս  
հաւատար:

— Սիրելի՛ս, ըսաւ Հանրիէթ կարճ լռութենէ մը  
յետոյ, հաճեցէք բացորոշապէս պատասխանել իմ  
հարցմանց: Ես երբէք պչրող եղած եմ ձեզ հետ:

— Երբէք, պատասխանեց Մաքս, քիչ մը զարման-  
քով:

— Լաւ: Եւ մեր յարաբերութեան սկիզբէն ի վեր  
ինձմէ դժգոհելու բան մ'ունեցած էք:

— Բնաւ: Բայց . . .

— Մի՛ ընդմիջէք զիս, կ'աղաչեմ: Կը տեսնեմ որ  
դեռ չէք հասկնար զիս: Քիչ մը համբերութիւն, հի-  
մա պիտի հասկնաք:

— Գաղտնիքով լի էք՝ Սիրիլեան պատգամի մը պէս:

— Սիրիլեան պատգամները լաւ բաներ ունէին: Կը  
չարունակեմ: Յաճախ սիրոյ վրայ խօսեցանք, դու և  
ես, և երկուքս ալ համաձայնեցանք թէ անպատաս-  
խանատու զգացում մ'է: Դուք ըսիք ինձ քանիցս ան-  
գամ թէ սիրուելէ դադրելով կրնայ վշտակրիլ մարդ,  
բայց պէտք չէ ոխալ այդ վշտակրութեան հեղինակին  
դէմ:

— Կատարելապէս իրաւ է, այս պայմանաւ սակայն  
թէ՛ խոստովանելու համարձակութիւնն ունենալէ յե-  
տոյ, խզման անկեղծութիւնն ալ ունենայ մարդ:

— Շատ աղէկ, ես անկեղծ պիտի լինիմ ինչպէս որ  
համարձակ եղայ: Չեղ ոչ եւս կը սիրեմ:

Մաքսիմիլիէն այնչափ չէր սպասեր այս խօսքերուն,  
որ չկրցաւ ոչ իւր դէմքը կեղծել, ոչ ալ իւր շարժու-  
մը զսպել, Շարժումը զարմանք միայն մատնեց, բայց  
երեսն ուրախութիւն յայտնեց: Հանրիէթ տեսաւ մին  
և գուշակեց միւսը: Չայրոյթը նորէն բորբոքեցաւ,  
սիրան ուռեցնող լեղին շրթունքն ելնել սկսաւ: Թէ և  
ապահով էր որ մութը զինքը կը պաշտպանէր, բայց և  
այնպէս իւր գլուխը պատող ժանեակը ճակտէն վար  
իջուց:

— Ձիս ո՛չ եւս կը սիրէք, Հանրիէթ:

— Ոչ:

Հանրիէթ դիտէր ըրածն ու ըսածը: Ամեն բան  
հաշուով էր: Ճշշէն առաջ յոյժ քաղցր և սիրալիր ե-  
ղած էր, որպէս զի տարփաւորը բան մը չկուահէր:  
Այժմ բրտաբար կըսէր անոր թէ յարաբերութիւնը  
կը խզէր իրեն հետ. որպէս զի այս յայտարարութեան  
ազդեցութիւնը կարդայ անոր աչաց մէջ: Այժմ գի-

տէր : Խզումը Մաքսիմիլիէնի համար ազատում մ'էր : Բայց Հանրիէթ աւելի բան հասկնալ կ'ուզէր : Այս պատճառաւ իւր խօսքերուն մէջ հնար եղածին չափ քաղցրութիւն ու տխրութիւն դրաւ , որպէս զի խոստովանութիւն մ'ընել տայ իւր տարփաւորին :

— Եթէ դուք ուզէիք , Մաքս , ես միշտ ձերը կը լինէի : Բայց ապահով էք զիս այնպէս սիրած լինելնուդ , ինչպէս որ արժանի էի : Ինչ , դուք շարունակ այն ուղեւորութեան վրայ կը խօսէիք , որ ձեզ տարիներով կը հեռացնէ ինձմէ : Ես խորհեցայ և մտածեցի որ ձեր սէրը մինչեւ իսկ փափաք չէր ներշնչեր ձեզ՝ ձեր փառքն ինձ զոհելու :

Մաքսիմիլիէն ցնցուեցաւ : Հանրիէթի ըսածը ճշմարիտ էր : Միթէ քանի մը ժամ առաջ նոյն փառքն Արտեմիսի չէր զոհեր : Տիկին Հ. Ռոշէզ շարունակեց քաղցր և տխուր ձայնիւ .

— Ես մեծ առաքինութիւն մ'ունիմ : այն է կամացս ուժը : Երբոր բան մ'ուզեմ , այն բանը կը կատարուի : Ես որոշեցի բժշկել զիս ձեզնէ , որչափ և ծանր գայ ինձ : Ես զիս վարժեցուցի այն գաղափարին թէ դուք պիտի երթաք և ես ալ ձեզ պիտի կորսնցնեմ : Այս բժշկութիւն , ձեզ ամեն օր տեսնելուս պատճառաւ աւելի դիւրին եղաւ ինձ : Ամեն օր կը կրկնէի ես ինձ թէ հարկ էր մոռնալ ձեզ , կամ շատ ժամանակ անցնելէ յետոյ վշտակրութիւն յանձն առնուլ : Արդ քանի որ առանց ձեզ օպրելու գաղափարը կ'ընդունէի , ճանբուն կէսն առնուած էր . . . : Եւ սակայն , եթէ դուք հաճէիք ձեր ուղեւորութենէն իսպառ հրաժարիլ , ուրախութեամբ զիս ձեզ կուտայի մշտնջենապէս . . . :

Հանրիէթի ոչ միայն ձայնը կեղծ կը հնչէր այս բանախօսութեան մէջ , այլ և քիչ մը խառնաչփոթ գաղափարներն ալ զուրկ էին ճշմարտութենէ : Բայց ինչ փոյթ Հանրիէթի : Նա որոշեալ ծրագրի մը կը հետեւէր

ճշդիւ : Ամենապարզ հաշուոյ մը կը հնազանդէր : Կա՛մ Մաքսիմիլիէն պիտի պատասխանէր թէ « կը կենամ , իրարմէ չբաժնուինք » , և այն ժամանակ ինք կը յաղթէր Արտեմիսի , կա՛մ պիտի պատասխանէր թէ՛ « լաւ , բաժնուինք » , և այն ժամանակ խզումն իւր կողմէ կը լինէր և ոչ անոր : Շատ կանայք և շատ մարդիկ կան որք թողուելու գաղափարէն կը խռովին : Տիկին Ռոշէզ՝ սնտափառութիւնն ալ իւր շահուն կը գործածէր : Կը յուսար որ իւր տարփաւորին սնտափառութիւնը կը խայթէր ըսելով թէ « Ձեզ չեմ սիրեր , մնաք բարեաւ » : Թերեւս Մաքսիմիլիէնի ինքնասիրութիւնը վիրաւորելով , զինքը պահել ուզէր , թերեւս ինչ ինչ զիջումներ ընէր , զորս մինչեւ ցարդ չէր ուղած ընել : Թերեւս նաեւ իւր տարփաւորին կեղծանուշ երեւոյթէն խառուելով՝ որոգայթին մէջ իյնար և Արտեմիսի վրայ սէր ունենալը միամտաբար խոստովանէր : Բայց Մաքսիմիլիէն գոռոզ էր և ոչ ինքնասէր : Ինքը բոլորովին պարզ կը գտնէր որ Հանրիէթ զինքը սիրելէ դադրած լինէր , որովհետեւ ինքը չէր սիրեր զայն : Եւ ի՞նչպէս կրնար խոստովանիլ Հանրիէթի թէ կը սիրէր զԱրտեմիս , երբոր նոյն ինքն Արտեմիսի ըսելու չէր համարձակեր : Ասկէ զատ , ինչպէս որ յաճախ կը պատահէր իրեն , Տիկին Ռոշէզ նուրբ դատողութիւն չունէր : Ինչպէս ենթադրէր թէ Մաքսիմիլիէնի պէս մարդ մը՝ տարփաւորի դերէն անմիջապէս մտերիմ բարեկամի դերը պիտի սահէր անցնէր :

— Սիրելի՛ Հանրիէթ , ըսաւ Մաքս Տիկին Ռոշէզի . ես ձեզ չեմ մեղադրեր բնաւ : Դուք առանց պչրանաց տուիք ինքզինքնիդ , և այժմ ալ անկեղծաբար ետ կ'առնուք : Թող ձեր ուղածին պէս լինի : Ձիս ոչ եւս կը սիրէք : Ըսել է թէ այդ պատուոյն արժանի չեմ եղեր : Սիրեցի՞ք զիս : Այդ բաւական է որ յաւիտեան ձեր հաւատարիմ բարեկամը լինիմ : Դուք իմ ա-

մեծէն դորովասիրտ բարեկամուհիս պիտի լինիք, ես ալ ձեր ամենէն անձնուէր ծառան : Վաղը կամ քսան տարի յետոյ, երբ և կոչէք զիս, կրնաք վստահ լինիլ անձնուիրութեանս վրայ :

Ահա այս պատասխանը տուաւ Մաքս : Ոչ միայն կ'ընդունէր խղումն, այլ և իւր բռնելիք ընթացքն ալ կ'որոշէր : Հանրիէթ ոչ եւս միտքը բերաւ այն խոհական ստուերն որ իւր դէմքը կը պահպանէր : Ելաւ կանգնեցաւ, իւր ջղոտ ոտքով ծովափին կակուղ աւազը փորելով : Այն ժամանակ Մաքսիմիլիէն տեսաւ անոր լուսաւորեալ դէմքը : Հանրիէթ անշարժ կեցաւ, երեսը մոմի պէս սպիտակ, աչերը բարկացայտ : Կատաղութիւնը բովանդակապէս տիրած էր իրեն : Քանի մը արագ քայլեր առաւ ծովեզրին վրայ, ձեռամբն ի բաց մղելով զՄաքս, որ հետ երթալ կ'ուզէր : Երիտասարդն այս լուին զայրոյթը տրտմութիւն, և զինքն ետ մղելու շարժումն ալ հրածեշտի հրաման կարծելով՝ Հանրիէթի մօտեցաւ :

— Մնաք բարեաւ, ըսաւ, որովհետեւ այսպէս կը պահանջէք :

— Երթաք բարեաւ, պատասխանեց Հանրիէթ յոյժ ցած ձայնիւ, վախնալով որ իւր ձայնին հնչումը կը մատնէր զինք :

Մաքսիմիլիէն յարգանօք ողջունեց զայն և մեկնեցաւ դնաց՝ տարտամ խղճի խայթով մը թէ չարաչար վարուեցաւ իւր տարփուհւոյն հետ : Կը վախնար որ անկեղծ սէր մը կ'անգոսնէր և կին մը կը շարշարէր : Մարդկութիւնը դիմապատկերներէ շինուած է : Ամենէն խելացիներն երբեմն ամենէն պարզամիտներն են, ինչպէս որ ամենէն լաւագոյնները շատ անգամ ամենէն դադանամիտներն են :

Հանրիէթ նոյն տեղը կեցած էր, աչքն անթարթ, Մաքսիմիլիէնի ետեւէն յառած, որ զիշերուան մու-

թին մէջ սուզուելով անհետացաւ : Կատաղութեան ճիչ մը փախաւ իւր նուրբ շրթունքէն : Իւր գոց կըռուփը դատարկութեան մէջ երկնցնելով՝ ըսաւ դըժնեայ ձայնիւ .

— Կը տեսնեն ի՞նչպէս վրէժս պիտի առնում :

Սրտէն վիրաւորեալ մարդկեղէն էակը կը վըշտակրի և կը համբերէ . բայց իւր գոռոզութեան մէջ վիրաւորուողը՝ կը վշտակրի և կը զայրանայ : Իւր սըրտին գորովովը սիրող կին մը թողուն՝ անագորուն գործ մ'ընել է . իւր սնափառութեամբը սիրող կին մը թողուլը վտանգաւոր գործ մ'ընել է : Առաջինը թերեւս անտարբեր լինի ի վերջոյ, բայց երկրորդն անպատճառ թշնամի կը լինի :

Հետեւեալ առաւօտ Հանրիէթ իմացուց Տիկին Մոպլանի թէ անմիջապէս պիտի մեկնէր : Տիկին Մոպլան ապշեցաւ .

— Ի՞նչ կ'ըսէք, ամենագեղեցիկ նազելուհիս, ամենասիրուն բարեկամուհիս, անհնար բան է այդ :

Ամենագեղեցիկ և ամենասիրուն բարեկամուհին յայտնեց ցամաք կերպիւ թէ թրէբորէն ոչ եւս կ'ախորժէր :

Պարզ մարդավարութիւնը կը պահանջէր Տիկին Ռոչէզէն, որ փարիզ վերադառնալէ առաջ վէռ երթար : Տիկին Ռոչէզ չհամարձակեցաւ : Թերեւս կը վախնար նաեւ որ չէր կրնար ինքզինք ըստ բաւականի բռնել : Ուստի պարզապէս նամակ մը գրեց առ Արտեմիս, ըսելով իբր չքմեղանք թէ բաւական ծանր խօթութիւն մը զինք շուտով փարիզ երթալու կը հարկադրէր :

Ի՞նչ փոյթն էր Արտեմիսի : Նա բնաւ չէր խորհեր Հանրիէթի վրայ, եթէ՛ ընդհակառակն՝ Հանրիէթ շատ կը խորհէր Արտեմիսի վրայ : Կեանքն երջանկութեան հետ կը վերադառնար Արտեմիսի վրայ : Այժմ

Մաքսիմիլիէն ամեն օր դղեակը կուգար : Առաջին անգամ տունէն դուրս ելած Ժամանակ Մաքսիմիլիէնի թեւին կրթնեցաւ , նախ աւազայատակ բակին մէջ , և ապա սօսերու ծառուղոյն տակ : Հովուերգութեան հեշտալի նիւթ մը սեպտեմբերի վերջին օրերն , ուր հրաժարելու վրայ եզոզ ամառը դեռ կը վարանի իւր տեղն աշունին տալու : Ուժն աւելնալուն պէս բժիշկն հրաման տուաւ շրջագայելու : Այն ժամանակ դաշտերը պտըտիլ սկսան երկուքն ի միասին , կամ ծովուն եզերքը , մինչդեռ համատարածին սղոխը , շատ անգամ բռնաշունչ , մարքիզուհւոյն երեսը կը ձաղկէր : Կեանքը կը վերածնէր , երջանկութիւնը կը ժպտէր իւր երեսին և երկնային յոյսերով կ'որդէր : Դեռ սիրոյ խօսք մը չէին փոխանակած , բայց քաջ գիտէին թէ կը սիրէին զիրար : Երիտասարդն իւր շրթանց վրայ կ'արգելուր սիրոյ յայտարարութիւնն՝ այդ դեռատի կնոջ վատահ անմեղութենէն սանձուելով . իսկ Սրտեմիս կը գուշակէր օր բարձր զգացում մը միայն կրնար զինքը լռելու բռնադատել : Ծաբաթներն այսպէս կանցնէին յաջորդելով միմեանց . հոկտեմբերը կը հասնէր՝ բերելով նուազ գաղջ ցերեկներ և աւելի զով երեկոյներ :

Մարդ չէր կրնար հաւատալ թէ Տիկին Թանտրէ հիւանդութենէ ելած էր : Բաց օգի մէջ անցուցած այս կեանքը կը գունաւորէր անոր այտերն , և արիւնն առաւել կենդանութեամբ կը վազէր երակներուն մէջ : Իւր գեղեցկութիւնն ակնախառն տիպ մը կ'առնուր . խօսքերը կ'ողբերէին . ձայնն իսկ , այն անուշ ձայնը , կը թրթուար նորանոր աւաչներով և շերմ ու կրքոտ հնչիւններով , զորս չունէր առաջ :

Քովանդակապէս բռնուելով այն յամր արբեցութենէն՝ որ իրենց վրայ կը տիրէր , չէին նշմարեր իրենց շուրջն անցած բաները : Քաթիկէրին փարիզ վերադարձած էր . Աննա-Մարի պիտի չուէր հոկտեմբեր

րի առաջին շաբթուն : Գիշ քիչ Մաքսիմիլիէն սովորութիւն ըրաւ օրն երկու անգամ գալ : Կէս օրէն ետքը պտոյտի կ'եղնէին : Իրիկուան երիտասարդը վէճի դղեակը կը վերադառնար , շատ անգամ իւր հաւուն և Ժէմնայի հետ :

Այս պաշտելի կեանքն ինչո՞ւ մշտատեւ չլինէր : Անագորուն և միանգամայն հեշտալի անձկութիւն մը կը յուզէր զՍրտեմիս : Առաւօտուն՝ զինքը Մաքսիմիլիէնի գալու պահէն բաժնող ժամերը կը համբեր . գիշերն ալ , երբոր իւր սենեակը կը քաշուէր , Մաքսի հետ անցուցած ժամերուն յիշատակովը կը բերկրէր : Օր մը ձիով պաքտելու խորհուրդ ըրին : Պզն յոյժ գեղեցիկ էր . գաղջ հովեր օգին մէջէն կ'անցնէին օդային հոսանքներու պէս՝ թեւի հարուածով մը տաքցընելով աչնան երկինքը : Հինաւուրց մերկ ծառեր՝ իւրենց մեռեալ տերեւները կ'ողբային , որ փոթորկելով կը թափառէին գետնին երեսը : Խենդի պէս ճանբայ ելան՝ արշաւասոյր ձիավարելով գեղնորակ ծառուղիներուն մէջէն , բլուրներն ու լեռնակներն անցնելով , և այս յախուռն արշաւանաց վրայ բարձրաձայն ծիծաղելով : Ժամը տասնին միջոցները կանգ առին հողմաղօրի մ'առջեւ , որ բլրոյ մը վրայ շինուած էր , և որոյ թեւերն՝ հսկայ չղջիկներու մաշկաթեւերուն նման հորիզոնը կը կտրատէին :

— Գաւաթ մը կաթ կը խմէ՞ք , Ժողիէթ :  
 — Յօժարութեամբ , Մաքս : Տուէք ձեր ձեռքը վար իջնեմ :

Եւ տղայ մը կոչեց , որ հողմաղօրիին գրանը մէջ կեցած՝ ասոնց կը նայէր :  
 — Բռնէ քիչ մը մեր ձիերն , ըսաւ , ներս պիտի մտնենք :

Նորմանտացի պատանին խկոյն հնազանդեցաւ , գեղեցիկ արծաթ դրամ մը նշմարելով գործին ծայրը :



Զողացականուհին դռհուծեամբ ընդունեց զասոնք, և  
ինքնին դնաց կաթը կթելու: Շատ չանցած՝ բերաւ  
պարտէզին ծայրը դալարազարդ հովանոցի մը ներքեւ:  
Հեշտալի առանձնարան մը, ուր ոչ ոք կրնար տեսնել  
զիրենք, վասն զի պարտէզն իւր վրայ կը դառնար և  
ետեւի կողմն ալ պատ էր: Զուարթ քաղցրութիւն մը  
կը շրջապատէր զիրենք: Հողմաղօրիին միօրինակ թիւր  
-թաքն և հեւին աշխատող հողագործներուն իրար  
կոչելու ձայները միայն կը վրդովէին այս խորին հան-  
դարտութիւն:

— Ա՛հ, Ժողիէ՛թ, Ժողիէ՛թ, մրմնջեց Մաքսիմիլիէն,  
ինչո՞ւ այսպիսի վայրկեանները չեն մշտատեւեր:

Իրենց հայեացքն իրարու հանդիպեցան: Երիտա-  
սարդն իւր թեւը մեղմով Արտեմիսի մէջքի շուրջն ան-  
ցուց: Նա ալ իւր գլուխը թողուց, որ իւր բարեկա-  
մին լանջին վրայ ինկաւ: Մաքս դէպ անոր ծռած էր  
դողալով, յաղթուած այն մարմնոյ նուազումէն, որ  
երակաց արիւնը կ'այրէ: Արտեմիս փակեց աչերն, ե-  
րեսին գոյնը բոլորովին նետած էր:

— Կը սիրե՞մք քեզ . . . թո՞թովեց Մաքս:

Եւ խոր լռութիւն տիրեց: Արտեմիս նախ դլուխը  
վեր առաւ: Տեսակ մ'արբեցութիւն եկած էր վրան:  
Երբոր ոտքի վրայ ելաւ, դողդոջեց. Մաքս պարտա-  
ւորեցաւ բռնել զայն վայրկեան մը: Անցան պարտէ-  
զին մէջէն յամրաքայլ, առանց խօսակցելու, երիտա-  
սարդն իւր աչքն Արտեմիսի վրայ ուղղած. Արտեմիս  
ալ, ակնկառոյց, ամազոնը ձախ թեւին վրայ ձգած:  
Նորէն ձիերն հեծան և դղեակին ճանբան բռնեցին:  
Ալ ի՞նչ կրնային ըսել միմեանց: Կը սիրէին զիրար:  
Մաքս Արտեմիսի տարփաւորը չէր. բայց այն երկար  
համբոյր զանոնք մշտնջենապէս իրարու կը կապէր:  
Արտեմիս եթէ ինքզինք Մաքսիմիլիէնի տար, ասկէց  
աւելի չէր կրնար անոր լինել:

Դղեակն հասնելէ յետոյ բաժնուեցան իրարմէ:  
Մաքսիմիլիէն խոստացաւ իրիկուան ճաշի դալ ժէմմա-  
յի հետ, և կանուխ դալ: Իւր հաւն հետ չպիտի կըր-  
նար դալ, ոտնառութիւնը սենեակէն դուրս չելնելու  
հարկադրած էր զայն:

Երբոր երիտասարդն և արարուհին վէտի դղեակն  
եկան ժամ հինգին, վերջալոյսն իւր թխորակ վերար-  
կուն դաշտին վրայ կը ձգէր: Պ. Մորէր՝ Մաքսիմիլի-  
էնի դէմն ելնելով, բռնեց զայն և կ'ուզէր խորհուրդ  
հարցնել անոր իւր աշխատութեանց վրայ: Ժէմմա մի-  
այնակ մտաւ դահլիճն, ուր մարքիզուհին խոր մտա-  
ծութեան մէջ ընկղմած էր: Արտեմիս կը սիրէր այդ  
սեւամորթ աղջիկն այն օրէն ի վեր, որ գորովոյ մի-  
ամիտ ցոյց մ'ըրած էր իրեն: Ասկէց զատ՝ Ժէմմա՝  
Մաքսիմիլիէնի մէկ բանն էր:

— Եկ համբուրէ զիս, աղջիկս, և քովս նիստ, ը-  
սաւ:

Բայց Ժէմմա, փոխանակ համբուրելու մարքիզու-  
հին, անշարժ կը կենար Արտեմիսի առջեւ, անոր վը-  
րայ տնկելով իւր խոժոռ և խորունկ աչերն, որք բոց  
կը փայլատակէին:

— Շնորհակալ եմ քեզ, քոյր իմ, պատասխանեց  
իւր կոկորդային և եղանակաւոր ձայնիւ: Բարեկամս  
երջանիկ է այժմ, և ոչ եւս կը տանջուի:

Արտեմիս ապշած մնաց: Ի՞նչ կը նշանակէր այս  
տարօրինակ խօսքն, և ի՞նչ բանի համար Ժէմմա չը-  
նորհակալութիւն կը յայտնէր իրեն: Նշմարեց նաեւ  
որ արարուհին եղակի կը խօսէր իրեն հետ այժմ, և  
առաջուան պէս «Դուք» չէր ըսեր: Սեռուհին յարեց  
ժպտելով:

— Բարեկամս բան մը չպատմեց ինձ, բայց ես հա-  
ւաստի եմ որ կապոյտ երկինքը սրտին մէջն է: Հաս-  
կըցայ որ քեզ կը սիրէր՝ բու իսկ գիտնալէդ առաջ:

Եւ յամբարար, միշտ նոյն հանդարտ և դաշնակա-  
 ւոր ձայնիւ պատմեց Մաքսիմիլիէնի կրած տառա-  
 պանքն երբոր ինք (Սրտեմիս) կը մեռնէր անկէ հե-  
 ուի : Պատմեց թէ ինչպէս գիշերներն ուշ, խիստ ուշ,  
 կը դառնար տուն, անդադար կը քաղէր իւր սենեակին  
 մէջ, երբեմն կը հեծէր, և յաճախ կուլար, այն խոր  
 լուսթեան մէջ, զոր ծովուն մանչիւնը միայն կը վեր-  
 դովէր : Պատմեց նաեւ թէ ինչպէս ուրախութիւնը  
 տակաւ կը վերադառնար անոր վրայ, և թէ, վերջա-  
 պէս, այսօր, տեսնելով զայն ուրախ զուարթ և եր-  
 ջանկութեամբ յուզեալ, հասկցեր էր որ զիրար կը  
 սիրէին և սիրելին ալ յայտնած էին միմեանց : Այս  
 միամիտ խոստովանութեան մէջ արարուհւոյն դիտող  
 և լռին բնաւորութիւնը կը հասկցուէր : Ժէմմա կը պաշ-  
 տէր զՄաքսիմիլիէն, ինչպէս որ ստրուկ մ'իւր տէրը  
 կը պաշտէ : Անոր կեանքը կը դիտէր, քունին կը հսկէր :  
 Գիտէր որ երջանկութիւնը միմիայն Սրտեմիսէն կրնար  
 գալ անոր, և շնորհակալ էր Սրտեմիսի որ տուեր էր  
 անոր զայդ երջանկութիւն : Մարքիզուհին մտիկ կ'ը-  
 նէր զմայրելով : Կը բաւէր իրեն՝ թուականներն յիշել՝  
 հասկնալու համար թէ Մաքսիմիլիէն առաջին օրէն  
 կը սիրէր զինքն :

Երբոր երիտասարդն երեւցաւ, Ժէմմա քանի մը  
 վայրկեան անոր նայեցաւ ուշադրութեամբ . յետոյ  
 դուրս ելաւ : Եւ ինչո՞ւ հասկցնէր : Սրտեմիս և Մաքս  
 կը հասկնային : Ժէմմա մինակ կը թողուր զանոնք, և  
 ինք կ'երթար հսկել անոնց վրայ : Մաքս և Սրտեմիս  
 միմեանց թեւերուն մէջ ինկան, և քանի մը վայրկեան  
 ճաշակեցին անյադուրդ բաղձանաց վսեմ հեշտութիւնն :  
 Քայլերու խոշիւն մը զանոնք արթնցուց այն երկնային  
 երազէն : Ժէմմա կը վերադառնար, և քանի մը քալ  
 ետեւէն կուգար Պ. Մորէր : Մաքսի համար պաշ-  
 տելի երեկոյթ մ'եղաւ : Մինչեւ կէս գիշեր Սրտեմիս

դաշնակ զարկաւ, և իւր սիրած բոլոր երգերն երգեց,  
 իւր ոսկեղէն ձայնին մարգարիտները մի առ մի երե-  
 ւան հանելով : Երբոր Մաքսի կը նայէր, իւր սքողեալ  
 և տամկ աչերը սիրոյ կատարեալ բանաստեղծութիւն  
 մը կը պարունակէին : Կը սիրէր զայն . անոր կը վերա-  
 բերէր, անոր պիտի լինէր : Երբոր բաժնուեցան իրար-  
 մէ, այս երկու սիրաբերուն միացումը կատարեալ էր :  
 Կը մեկնէին իրարմէ և սակայն երբէք այսչափ իրարու  
 մօտ եղած չէին :

Մաքսիմիլիէն իւր տունը մտնելու քաջութիւն չու-  
 նեցաւ : Իւր միտքն դբաղեցնելու, իւր բոցակէզ ճա-  
 կատը գիշերուան ցուրտ օդով զովացնելու պէտք կ'ըղ-  
 գար : Երկար ժամեր թափառեցաւ ծովեզրին վրայ,  
 բաղձալով որ իւր երջանկութիւնը բարձրաձայն քա-  
 ըողէ ծովուն փրփրադէզ կոհակներուն, համբ ժայռե-  
 լուն, լուսափայլ աստղերուն : Երբոր տուն վերադար-  
 ձաւ, արշալուսոյ առաջին նշոյլներն արդէն ճերմկցնել  
 սկսած էին ծովուն հորիզոնը : Քնացաւ օրորուելով  
 ամենաքաղցր մտածութիւններէ, որք զինքը շուտով  
 յափշտակեցին տարին անհունութեան մէջ : Երբոր  
 արթնցաւ, առաջին մտածութիւնն Սրտեմիսի վրայ  
 եղաւ : Ժամ մէկին զինքը կ'սպասէր վէռի դղեակին  
 մէջ : Ինչպէս պիտի դորժածէր այս առաւօտն որ զինք  
 իւր երջանկութիւնէն կը բաժնէր : Անվախճան երեւցաւ  
 իրեն :

Վերջապէս ցանկալի ժամն հնչեց : Մաքս երազ  
 քայլերով վէռի դղեակն հասաւ : Սրտեմիս ճարճաւ  
 կան ներքնասենեակն էր : Հոն կրնային առանձին մնալ,  
 և ոչ որ կրնար խռովել իրենց հեշտալի տեսակցու-  
 թիւնը : Վայրկեան մ'իրարու երես նայեցան, լու-  
 թեամբ, իրարու ձեռք բռնած : Յետոյ Սրտեմիս նըս-  
 տաւ . Մաքսիմիլիէն ալ ծունդի վրայ եկաւ անոր առջև :  
 — Կը սիրեմ զձեզ, Ժովիէթ, ըսաւ, զի գեղեցիկ

էք, բարի էք. կը սիրեմ զձեզ : Եթէ կարդայիք սրտիս մէջ, չպիտի գտնայիք մտածութիւն մը որ ձեր վրայ չլինի : Դուք իմ արեւս էք, ուրախութիւնս էք, երջանկութիւնս էք, յոյս էք : Առանց ձեզ կեանքը դատարկ և դժգոյն կ'երեւի ինձ . իսկ ձեզ հետ արքայութիւն է, սխրանք է : Եւ մեր ապրեցանք առանց զիրար գտնելու : Եւ ես ձեր մօտէն անցայ առանց ձեզ ճանչելու : Ամեն մարդ իդէական արարած մը կ'երազէ, զոր ամեն գեղեցկութեամբք և հրապոյրներով կը դարդարէ իրեն անմահ ընկեր մ'ընելու համար . . . : Դուք այն երազին իրացումս էք : Գեղեցիկ էք, բարի էք . . . կը սիրեմ զձեզ, Ժողիէ՛թ :

Արտեմիս մտիկ կ'ընէր, մունջ, զմայլեալ, օրորեալ այս սէրէն, որ բացատրուելու համար եթերային և նուագերգական ձեւ մը կ'զգենուր : Ինքն ալ պատասխանեց մեղմով .

— կը սիրեմ զձեզ Մաքսիմիլիէն : Ես ալ ձեզ առաջին անգամ տեսնելուս պէս սիրեցի : կը յիշէ՞ք այն զուարթ և արեւու լուսէն ողողեալ խօսարանը : Հոն զգացած սրտայուզութիւնս՝ սէր էր, և տակաւին չէի գիտեր : Բայց միշտ սիրեցի ձեզ : Այն սրտայուզութիւն՝ անգիտակցական յիշատակութիւն մ'էր : Չեզ ի մանկութենէ կը սիրէի Լա Պիրոյէտ եղած ժամանակնիս : Չեզ նորէն տեսնելուս, ընդհատեալ դորովոյ մը կապերը միայն նորոգեցի : Ամեն կին ալ նոյնպէս իդէական արարած մը կ'երազէ. մարդ մը, զոր ամեն ձիրքերով կը զարդարէ՝ իւր անմահ ընկերն ընելու համար . . . : Դուք այն երազին իրականութիւնն էք : կը սիրեմ զձեզ Մաքսիմիլիէն :

Ամեն բան մոռցած էին, թէ՛ դուրսի աշխարհն և թէ՛ իրաց իսկութիւնն : Տարփաւոր պիտի լինէին. Բող մ'իջաւ անոնց շփոթեալ աչերուն վրայ . . . :

— կը սիրեմ զքեզ . . . ըսաւ դարձեալ Մաքս :

— կը սիրեմ զքեզ . . . թոթովեց Արտեմիս : Բայց յանկարծ իրականութեան փայլակ մ'անցան ուղեղին մէջէն : Կամաց մը ետ քշեց զՄաքսիմիլիէն մրմնջելով .

— Թող աուր զիս, թող տուր . . . :

Այս ընդդիմութիւն կէս յաղթուած ամօթխածութեան մը վերջին ընդդիմութիւնը չէր : Ոչ : Մաքս այդ յուսահատական հրաւերի մէջ՝ յանկարծական ցաւակրութիւն մ'զգաց, դառնապէս կսկծագին : Արտեմիս ոտքի վրայ ելած էր, աչքն անշարժ յառած, ձեռքը ճակտին վրայ, դատարկութեան մէջ ծփող աներեւոյթ մտածութեանց մէջ ուղեալ : Այս մտային մոլորման մէջ ամեն բան կայ : Մինչեւ ցարդ, արբեալ իւր երազով, գրաւեալ իւր կիրքով, առանց խորհրդաճեղու կը կրէր : Իւր սէրը միայն կը տեսնէր, առանց վաղը մտածելու : Բայց հիմա կը տեսնէր սխալը : կը տեսնէր որ իւր տէրն ինք չլինելով, իրաւունք չունէր ինքզինք ուրիշ տալու : Ոչ թէ իւր ամուսնոյն համար, որ թշուառական մ'էր, այլ ինքն իրեն համար անարատ պարտէր մնալ :

Իւր մայրը . . . : Արտեմիս չէր ուզեր իւր մօր աղջիկը լինիլ . չէր ուզեր անոր պէս իւր կեանքն աղտեղել : Աշխարհ չէր գիտեր որ երբէք կին մ'իրեն չափ անմեղադրելի չէր կրնար լինել : Բայց աշխարհ բան մը միայն պիտի տեսնէր . այսինքն, եթէ մայրը տարփաւորներ ունեցեր էր, աղջիկն ալ ունեցեր էր :

Այս ամեն սոսկմունք Արտեմիսի վիզէն կը բռնէին, մեռցնելով անոր բաղձանքն, և անարատութեան անուղորդ պէտք մը տալով անոր : կրկնապատիկ անարատ պիտի լինէր, թէ՛ իրեն և թէ՛ անոր համար, յորմէ ծնած էր : Պէտք էր որ միայն կեանքը միւսին կեանքը գնէր, ամբռութիւնը մօրն աղտեղութիւնը ջնջէր : Մաքս անթարթ աչօք անոր կը նայէր՝ յապուշ կրթելով

անոր յանկարծական փոփոխման վրայ : Յետոյ քայլ մ'առաջ երթալով դէպ Արտեմիս՝ արտասուալից աչօք անոր նայեցաւ :

— Կ'աղաչեմ զքեզ , սիրելիս , գթա՛ ինձ . . . : Ես ինքզինք սուղ վաճառել ուզող պչրասէր մը չեմ . . . : Ձիս մի՛ ամբաստաներ , մի՛ անիծեր , թէ որ վիշտ մը կը պատճառեմ քեզ . . . :

Արտեմիս կուլար , կը խորհէր թէ Մաքս չէր կրնար իւր միտքը հասկնալ : Վարանման նշող մը տեսաւ անոր աչերուն մէջ :

— Գթա՛ ինձ , կ'աղաչեմ , մի՛ դատապարտեր զիս . . . : Եթէ գիտնայիր : Բայց չեմ կրնար բան մ'ըսել քեզ . . . : Պատասխանէ ինձ . այդ լռութիւն կ'սպաննէ զիս :

Արտեմիս Մաքսիմիլիէնի մօտեցաւ , ձեռքն երկընցընելով այն մարդուն՝ յորմէ գթութիւն կը հայցէր .

— Ուժեղ եղիր երկուքիս համար ալ , ըսաւ , կը բաւէ քեզ թեւերդ բանալ , որպէս զի մէջն իյնամ ես : Կը կարծե՞ս որ ես ալ ինքզինքս չզոհեմ , և զոհողութիւնը միայն քեզ համար լինի :

Եւ մինչ Մաքս կը կենար ընկճեալ , գլուխն իւր բոցակէզ ձեռաց մէջ ծածկած , յարեց Արտեմիս .

— Մի՛ ամբաստաներ զիս իբրեւ ստախօս և խաբերայ . մի՛ ամբաստաներ զիս թէ այդ սէրն ուզեցի վառել որպէս զի քեզ լափէ : Կ'երգնում քեզ յանուն մեր երկուքին աղայութեան , յանուն այն անցելոյն որ մեզ կը միացնէ . կ'երգնում թէ նուիրական պարտականութիւն մը միայն կ'արդեւու զիս քուկդ լինելէ : Քիչ մ'առաջ , երբոր զիս քու գգուանացդ կը յանձնէի , յանկարծ ճշմարտութեան անգութ տեսիլն երեւցաւ ինձ : Պէտք է որ ես կրկնապատիկ անարատ լինիմ ինձ համար և ուրիշի մը համար . . . : Հասկցի՛ր՝ եթէ կրնաս հասկնալ : Բայց խօսէ՛ ինձ , պատասխանէ՛

ինձ , և գիտցի՛ր որ եթէ ես այսպիսի զոհողութիւն մը կը խնդրեմ քեզնէ , պատճառն այս է որ դու միայն աշխարհիս մէջ բաւական մեծ մարդ մը լինելով կըրնաս ընդունիլ :

Մաքսիմիլիէն շարունակ անոր կը նայէր դժգոյն դէմքով , աղերսաւոր աչօք և ձեռնամած : Հասարակ մարդ մը կրնար ծաղրելի լինել վախնալով ուրիշ կերպ վարուիլ : Բայց Մաքսիմիլիէն , ընդհակառակն խորիտ յուզում մ'ղգաց սրտին մէջ : Արտեմիս անկեղծ էր . աչերը չէին կրնար խաբել . շրթունքը չէին կրնար ստել : Կը գուշակէր որ խօսքերուն մէջ խորհրդաւոր դադանիք մը կար . բայց մանաւանդ կը հասկնար որ գրեթէ գերմարդկային զոհողութիւն մը կը խնդրէր իրմէ , և ազնիւ գոռողութեամբ ընդունեց անոր խնդիրը : Մէկէն բռնեց Արտեմիսի ձեռքն իւր ձեռաց մէջ :

— Մնաս բարե՛ւ , ըսաւ :

— Պիտի երթա՞ս , մինակ պիտի թողուս զիս , որ միակ վստահելի գորով մ'ունիմ աշխարհիս վրայ , և այն ալ քու գործովդ է :

Այս գոչիւն տակնիվրայ ըրաւ զՄաքսիմիլիէն : Յուսահատելոյ մը վերջին նեցուկը կ'ղգար անոր մէջ :

— Ոչ միայն զիս խնայել կը խնդրեմ քեզնէ , այլ և պաշտպանել ինձ և քեզ դէ՛մ : Տառապանաց ամենէն դժնդակն է բաժնուած ապրիլ և երբէք զիրար չտեսնել : Եթէ դու հոս լինիս , ինձ մօտ , քեզ զոհելով՝ զիս ալ զոհելու դառն քաջութիւնը պիտի տաս ինձ :

— Ա՛հ , անգո՛ւլթ , ի՞նչ կը պահանջես ինձմէ . մի՛ թէ բաւական չէ՞ քեզ կորուսանել : Պէ՛տք է տեսնել քեզ , խօսակցել քեզ հետ : Բայց եթէ մոռնամ խոստումս , եթէ՛ իմ կիրքս և քու կիրքդ մեր կամքէն աւելի հզօր են :

Արտեմիս վեր առաւ իւր հիանալի ճակատն , և գոռոզ քաղցրութեամբ .

— Ես կը վախնամ իմ տկարութենէս, բայց չեմ վախնար քու կինէդ: Ես վստահութիւն ունիմ քու քաջութեանդ վրայ. ուր ես իյնամ, դու զիս կը բռնես. ուր ես յաղթուիմ, դու կը յաղթես: Իմ քեզնէ խընդրածս դիւցազնական գործ մ'է: Ո՛վ գիտէ թէ պիտի սիրէի՞ քեզ՝ եթէ ուրիշ մարդոց նմանէիր:

Մաքս ոչ եւս կը վարանէր. իւր սրտին բոլոր վեհ զգացումներն ի նպաստ Արտեմիսի կը խօսէին: Ո՛րչափ անոր սպասածը գերմարդկային էր, այնչափ ինք ալ անոր համարման արժանի պարտէր ցուցնել ինքզինք: Նա երկար վշտակրութիւն մը կը պահանջէր իրմէ. ոչ թէ միանգամ ընդունուած ցաւ մը, այլ ամենօրեայ և անդադար նորոգուող վիշտ մը: Պիտի պարտաւորուէր թէ՛ իրեն և թէ՛ անոր համար մաքառիլ. փախչիլ անոր շրթունքէն՝ եթէ նա երկնցնէր, և ոչ եւս ճաշակել փոխանակեալ համբոյրներու անհուն արբեցութիւնը: Սիրած կնոջմէն հեռանալ՝ դժնդակ բան է. բայց զինքը սիրող կնոջ քով ապրիլ և զայն չվայելել, դժնդակագոյն: Ընդունեց սակայն: Միայն հասկցուց անոր թէ պէտք էր որ երկուքն ալ զգոյշ կենային անդիմադրելի փորձութեան առիթներէ: Հանապազօրեայ մտերմութիւնը՝ շատ շանցած՝ կրնայ յաղթել իրենց կարողութեան: Ինչո՞ւ փարիզ չվերադառնային:

Հետեւեալ օրը, բաւական ծանր իրողութիւն մը վերջնապէս համոզեց երիտասարդը թէ շուտով մեկնիլ հարկ էր: Ժէմմա միշտ դրանը մէջ կը կենար երբոր Մաքս դուրս ելնէր կամ ներս մտնէր: Արդ՝ ժամանակէ մ'ի վեր տեսակ մը մուրացիկ կը տեսնէր, գազինոյին պատին կը թնած: Երբոր Մաքսիմիլիէն վէռի կողմը կ'երթար, մուրացիկն ալ իսկոյն կ'աներեւութանար: Այդ մարդ յոյժ գձուձ երեւոյթ մ'ունէր, ցնցոտիները կը թափթփէին վրայէն, և պատառատուն վեղար մը կ'իստով կը ծածկէր խռուած մազերը: Ժէմմա

իւր բարեկամին ցուցուց այս տարօրէն աղքատն: Ինչո՞ւ համար նոյն տեղը կրկենար միշտ: Մաքսիմիլիէն ողորմութիւն տալու պատրուակաւ կեցաւ անոր մօտ, և կրցաւ ուղածին պէս քննել. աչերուն տարօրինակ վիճակն աչքին զարկաւ, կանաչորակ, անհանդարտ և խորամանկ էին:

Հետեւեալ օրն ոչ եւս տեսնուեցաւ մուրացիկն: Բայց երկու օր յետոյ, Ժէմմա, միշտ հսկող, իւր ցեղին յատուկ եղող նուրբ հոտառութեան օգնութեամբ՝ Մաքսիմիլիէնի ուշադրութիւնն հրաւիրեց առեւտրական գործակատարի մը վրայ, որոյ աչերը զարմանալի նմանութիւն մ'ունէին մուրացիկին աչերուն: Այս անգամ Պ. Մաքս Տանկար՝ տեղեկութիւն ստանալու ելնելով իմացաւ որ այդ առեւտրական գործակատարն առջի իրիկունը \* \* \* ի օթեւանն եկած էր: Ըսել է որ ասոր գալը մուրացիկն աներեւութանալուն հետ զուգադիպութիւն ունէր: Երկու երեք անգամ Մաքս իւր ճանբուն վրայ պատահեցաւ անոր, և կը թուէր թէ իւր ետեւէն երթալու փոյթ մ'ունէր: Այս ամենը կը բաւէին երկիւղ արթնցնել իւր սրտին մէջ, ոչ թէ իրեն՝ այլ Արտեմիսի համար: Մարբիզուհին բան մը չէր յայտնած իրեն, բայց Տիկին Թանտրէի բերնէն փախած քանի մը խօսք ամեն ինչ գուշակել կուտային իրեն: Միւս կողմէ Քաթերինի բացակայութիւնը, Պապիէնի երկար ուղեւորութիւնն ալ յայտնի իրողութիւններ էին: Արդարեւ մարբիզն ու իւր կինը բարեկամաբար բաժնուած էին իրարմէ: Այս բանն ընդունուելէ յետոյ, մնացեալն ինքնին կ'երթար: Մարբիզն հեռիէն կը հսկէր Արտեմիսի վրայ: Իւր վէռի դիւեակն ըրած այցելութեան յաճախութիւնը կը նըշմարուէր, և լրտեսը մի առ մի կը նշանակէր զանոնք:

Մաքս չիմացուց զայս մարբիզուհւոյն: Ի՞նչ հարկ անհանդիստ ընել զայն: Միայն պնդեց որ փարիզ վե-

րադառնայ . այնչափ որ Արտեմիս և Պ. Մորէր՝ հոկտեմբերի վերջին օրերը մեկնեցան դղեակէն : Սոքա միայնակ չէին . ժէմմա ալ ուղեկից էր : Մաքսիմիլիէն աղաչեր էր մարքիզուհւոյն որ հետը տանի և քանի մ'ամիս իւր քով պահէ զայն : Այս բան մեծ ուրախութիւն պատճառեց Արտեմիսի : Ընկեր մը պիտի ունենար , որոյ հետ կրնար խօսիլ Մաքսի վրայ . և կարծեց իսկ թէ այս դիտաւորութեամբ կուտար զայն իրեն . բայց այնպէս չէր : Ժէմմայի պաշտօնն էր հրակել փարիզի մէջ , երբոր ինք թրէբորի մէջ հսկէր : Կասկածելի դէմք մը տեսնելուն պէս՝ պիտի խմացնէր իւր բարեկամին :

Հակառակ թախանձանաց Արտեմիսի, Մաքսիմիլիէն տակաւին չաբաթ մը ծովուն վրայ մնաց : Ասոր համար չէր կրնար զուարճութիւն պատճառ ցուցնել , վասն զի կոհակները՝ ծովուն սառուցիչ հովերէն բաղխելով կատաղաբար նաւուն վրայ կը յարձակէին : Մաքս աշխատելու պէտքը պատճառ ցուցուց . յիշատակագիր մը պիտի աւարտէր , որուն կ'սպասէր Աշխարհագրական ընկերութիւնը : Եւ սակայն շատ քաջասրտութիւն պէտք էր իրեն , որպէս զի թողուր զայն միայնակ ուղեւորիլ : Բայց կը հաշուէր թէ չաբաթն ընդունայն պիտի չանցնէր :

Յոյժ քաղաքավարական , բայց ըստ բաւականի յուրտ և կանոնաւոր հրաժեշտի ողջոյն մը փոխանակեցին կայարանին մէջ՝ շրջապատեալ լողացողաց ամբոխէ մը , որք բաղանեաց եղանակն աւարտած լինելով կը մեկնէին : Բայց իրենց աչերը դորովանաց աշխարհ մը կը զսպէին : Մաքս խոկուն մնաց ծովափին վրայ , ակնապիշ նայելով կառախմբին , որ կը սրանար դէպ Ապանքուռ . . . իւր բովանդակ կեանքը կը թռչէր իրմէ . . . :

Հետեւեալ օրը դործի ձեռնարկեց . երեք օր շա-

րունակ պտրտեցաւ թրէբորի մէջ և Էօի օթեւաններն , իւր լրտեսը փնտռելով : Ամեն հիւրատուններն աչքէ անցուց . գեղեցիկ օթեւաններէն սկսեալ մինչեւ սայլորդներու պառկած նկուղները : Ամեն մարդէ տեղեկութիւն հարցուց , կայարանի գործաւորներէն ըսկըսեալ մինչեւ բաղանեաց սպասաւորներուն , որք իրենց անպէտ օթեակները կը ժողվոտէին տխրութեամբ : Ուր որ դիմեց՝ ձեռնունայն ելաւ . ոչ ոք կրցաւ տեղեկութիւն մը տալ իրեն : Մուրացիկ և առեւտրական գործակատար անհետ եղած էին Տիկին Թանտրէի հետ :

Այս բան Մաքսի համար նոր նիւթ մ'եղաւ սրտատանջութեան : Եւ արդարեւ չէր սխալեր : Լրտեսը մարքիզուհւոյն ետեւէն ինկած էր : Չինքը լրտեսած էր մի միայն անոր տունն երթալուն համար : Ուստի որոշեց մէկ կամ երկու օր առաջ երթալ փարիզ : Խանդավառ գորովն աշխարհի բոլոր լրտեսներէն խորամանկէ : Երիտասարդը կը հասկնար որ , եթէ վտանգ մը կար , Արտեմիսի կ'սպաննար . ուրեմն պէտք էր անոր քով գտնուէր , որպէս զի պաշտպանէր :

Իւր հաւուն հետ ճանքայ ելաւ նոյեմբերի ցուրտ առաւօտ մը : Ստուարախիտ գորշ ամպեր կը ծածկէին անձրեւոտ երկինքն : Այն դաշտերը , մարգագետիններն ու անտառներն , ուր երբեմն կը ճեմէր անոր հետ , իրենց ձմրան վերարկուն հագնիլ կ'սկսէին : Մաքս կը ախրէր , վասն զի հովուերգականն իւր ետին կը թողուր , և եղերերդին մերձեցումը կ'զգար իւր առջեւ :

Տիկին Հ. Ռոշէզ գեղեցիկ բնակարան մ'ունէր Ռիւ  
 Բրոնի փողոցին մէջ : Այրերը միշտ օգտակարութիւն  
 ունին . առանց անոնց՝ սիրուն այրիներ չեն կրնար գըտ-  
 նուիլ : Մինչեւ իսկ մեռնելէ յետոյ անօգուտ չեն ,  
 երբոր իրենց յաջորդները կատղեցնել պէտք լինի :  
 Հանրիէթ յատկապէս իւր դերը կը խաղար : Միայն  
 թէ , յոյժ հակընդդէմ առաքինութեամբ կը յորդորէր  
 զայն , ըստ պարագային : Օրինակի համար , մի և նոյն  
 աւուր մէջ , մերթ առաւել զգայական էր քան զգա-  
 յուն , և փոխադարձաբար . մերթ հանճարաբան էր ,  
 մերթ բնաւ չէր խօսեր : Եւ ո՞րչափ սիրած էր իւր  
 այրն : Եւ արտասուալից հայեաց մը կը նետէր դատար-  
 կութեան մէջ , երբոր անոր վրայ խօսէր : Այս ամենը  
 կատակերգութիւն խաղալու պարզ հաճոյից համար  
 էր : Ճշմարտութիւնը կ'ատէր :

Իւր ընդունելութեան օրն էր : Այցելութիւններ  
 կ'սպասէր : Դեկտեմբերի տխուր և անձրեւոտ կէս օր  
 մ'էր : Փողոցէն հագիւ երբեմն կառք մը կ'անցնէր՝  
 հեռաւոր թաղերու բնակիչներն իրենց տունը տանե-  
 լով : Անձրեւը ցելի շեղջեր կը կուտէր , որք ճեմող-  
 ներուն յուսահատութիւն կը պատճառէին : Մինչեւ  
 ժամ չորս դեռաւաթի կինը շատ հիւր չունէր : Աստից  
 օգուտ քաղելով երազել չսկսաւ ընդարձակ դահլճին  
 մէջ , որ երկու բարձր կանդեղներով աղօտապէս լու-  
 սաւորուած էր : Հանրիէթ կը սիրէր դիւրին և արժան  
 պերճութիւնը : Իւր դահլճին մէջ չէին գտնուեր այն  
 մանր մունր գեղեցիկ զարդերն որ գեղարուեստականի  
 ճաշակ կը ծանուցանեն . ոչ մի պատկեր , ոչ մի թրծեալ  
 անօթ , ոչ մի պղնձի արձան կամ զարդ :

— Կը թուի ինձ թէ ձեզ խոր երազներու մէջ կը  
 գտնեմ , ըսաւ զուարթ ձայն մը դահլճին դրան մէջէն :

Թանտրէ մարքիզուհին էր : Հանրիէթ ոտքի վրայ  
 ելաւ , և ժպտադէմ , ձեռներն երկնցուցած , գնաց  
 այն կնոջ քով զոր մահու չափ կ'ատէր , և համբուրեց  
 զայն : Յետոյ , երբոր նստան իրարու դէմ , վառարանին  
 մօտ , ուր պայծառ հուր մը կը վառէր , խօսակցու-  
 թիւնն սկսաւ : Հանրիէթ չէր յագենար գովելէ . ո՞ր-  
 չափ կը գեղեցկանար իւր սիրելին Արտեմիս : Ճշմարիտ  
 էր , այդ դեռաւաթիթ կինն , որ արդէն գեղեցիկ էր ,  
 հիանալի կը լինէր :

— Ձեր ուղեղային տենդն յաջող եկաւ ձեզ , կ'ը-  
 սէին իրեն երբեմն ծիծաղելով :

Նա ալ շառագնելով խօսակցութիւնը կը փոխէր :  
 Ի՞նչպէս կրնային գիտնալ թէ հոգւոյն անսահման եր-  
 ջանկութեան արդիւնքն էր դէմքին պայծառաշուք  
 գեղեցկութիւնն :

— Եւ մարքիզը միտք ունի՞ , տակաւին երկար մնալ  
 ի Մոնթէ-Քարլոյ , հարցուց յանկարծ Տիկին Հ. Ռոշէզ ,  
 կատարեալ անտարբերութիւն կեղծելով :

— Այս առաւօտ վերադարձաւ :

Տիկին Հ. Ռոշէզ թեթեւ մը ցնցուեցաւ , զոր չնըշ-  
 մարեց Թանտրէ մարքիզուհին , կամ եթէ նշմարեց  
 իսկ , կարեւորութիւն չընծայեց : Վասն զի՝ արդարեւ՝  
 ինչ փոյթ կար Տիկին Ռոշէզի համար : Արտեմիս խօ-  
 սակցութիւնը փոխեց : Եւ սկսան խօսիլ անձրեւի և  
 պարզ օդի վրայ , Օբէրայի մէջ կրկնուած պարին վը-  
 լայ , ժիմնազի թատրոնը խաղցուած թատրերգին  
 վրայ : Վերջապէս , Արտեմիս ոտքի վրայ ելաւ , և Հան-  
 ըիէթ Ռոշէզ՝ նոյն գորովանաց յայտարարութիւնները  
 տեղաց անոր գլխուն , զորս եկած ժամանակ շուայ-  
 ւած էր :

— Եւ ձեր մայրն , ըսաւ : Քիչ մնաց պիտի մոռ-  
 նայի լուր հարցնել անոր վրայ :

— Տիկին Տը Մորէր յոյժ լաւ է . շնորհակալ եմ :

— Ինչո՞ւ համար բնաւ տեղ չերթար :

— Յոյժ քաջուած կ'ապրի : Իւր բարեկամները ներողամիտ պէտք է լինին , իւր առողջութիւնը լաւ չէ : Ընդհուպ , այնպէս չէ՞ , սիրելի Հանրիէթս :

Երբոր Արտեմիս կը մեկնէր , Տիկին վէրնիէ երեւան ելաւ , միշտ աշխոյժ , իւր սիրուն դէմքով , հետաքրքիր և ակնդէտ նոր բաներ իմանալու և պատմութիւններ լսելու :

— Ի՞նչ , մարքիզուհի՛ , կը մեկնի՞ք երբոր ես կուգամ , գոչեց . հաճելի բան չէ այդ . հինգ վայրկեան եւս նստեցէք :

— Ո՛չ , անհնար է , պէտք է որ ժամ հինգին տունըս գտնուիմ :

Եւ երբ իւր մետաքսեայ շրջազգեստին սոսափիւնն ոչ եւս լսուեցաւ , երբ դահլճին դռները գոցուեցան , Տիկին վէրնիէ քրքիջ վերցուց ըսելով .

— Պէտք է որ ամեն օր ժամ հինգին տո՛ւնը գըտնուի :

Տիկին Ռէբ , Լուի Մարէշալ , Պ. Փօրէ , որ վերջին օրերս հանրապետութեան ընդհանուր դատախազ անուանած էր ի փարիզ , իրարու ետեւէ ներս մտան : Եւ այն ժամանակ լեզուները բացուեցան , ոչ ընդհանրապէս չարամիտ , այլ մերթ ընդ մերթ Հանրիէթի մէկ դիտողութեամբ թունաւորեալ : Անշուշտ բան մը կար Տիկին Արտեմիս Թանարէի և Մաքսիմիլիէն Տանկլարի միջեւ : Զանոնք յաճախ անտառին մէջ կը տեսնեն եղեր առաւօտները ձիով . իրիկուններն ալ ժամ հինգին անպատճառ սուռը կը գտնուի եղեր զայն ընդունելու համար : Տիկին Ռէբ պատմեց թէ Թրէբորէն սկսած էր այդ : Միւս կողմէ ամեն մարդ կը նշմարէր Ֆապիէնի երկար բացակայութիւնն : Ինչպէս ընդունել թէ իւր կնոջ վրայ բուռն սէր ունեցող նոր փեսայ մը կրնար Մոնթէ-Քարլոյ բնակիլ իւր հաճոյից

համար : Միայն մերթ ընդ մերթ կուգար անհաճոյ զրոյցները լռեցնելու : Բայց ի՞նչ բանի համար կրնար լինիլ այդ դժտութիւն : Հոս կը փայլատակէր Փարիզցւոց քրանչելի երեւակայութիւնը : Տիկին վէրնիէ , որ առաւել հանճարամիտ էր քան չարամիտ , բնաւ ըութեանց պարզ անյարմարութեան կը վերագրէր : Դիւրին խօսք մը : Տիկին Ռէբ կը կարծէր մանաւանդ թէ Արտեմիս իւր մօրն ընդ մարքիզին ունեցած հին կապակցութիւնն իմացած էր : Բայց այս մեկնութիւն յոյժ պատուաւոր լինելով մարքիզուհւոյն համար , Հանրիէթի գործին չէր գար , ուստի նա ալ ուրիշ բան հնարեց : Տիկին Մոպլանէն իմացեր էր թէ մարքիզը կը նախանձէր Մաքսիմիլիէնի դէմ : Կնոջը հետ բաւական մրկալից պայքարէ մը յետոյ՝ յանկարծ մեկնեց էր : Լուի Մարէշալ դիտողութիւն ըրաւ թէ Ֆապիէնի բնաւորութիւնը ճանչողները գիտեն որ նա պղատունական փախուստով մը գոհ չէր կրնար լինիլ : Այսպէս կէս ժամու չափ Արտեմիս և Մաքսիմիլիէն ծամոց եղան այս անտարբերներուն ու յափրացեալներուն բերնին : Իրենց ազնիւ և անարատ սէրը նիւթ եղաւ տեսակ տեսակ բարբանջանաց , որք իրենց ամբիժ և պաշտելի մտերմութեան ամեն քողերը կը պատռէին : Մարքիզուհին կը կարծէր ինքզինք անարատ պահել չաղտեղելով իւր սուրբ գորովը : Ո՛չ : Կը զրպարտէին իւր կեանքը . կ'արատաւորէին իւր մաքրութիւնը : Իւր մանկական վստահութիւնը կը խաբէր զինք հոն , վէ՛ռի դղեակին մէջ , երբոր կ'ըսէր Մաքսիմիլիէնի .

— Զիրար տեսնենք ամեն օր և ոչ ոք կրնայ բան մ'ըսել , բանի որ անմեղ պիտի մնանք :

Եթէ աւելի տարիք և փորձառութիւն ունեցած լինէր , պիտի հասկնար թէ աշխարհի տեսակետով աւելի լաւ է մեղանչել ի ծածուկ , քան թէ բամբասանաց առիթ ընծայել յայտնապէս :



Մակայն, որովհետեւ ամեն բանէ կը ձանձրանայ մարդ մինչեւ իսկ իւր ընկերը կեղեքելէ, Տիկին վէրնիէ մեկնեցաւ, և շատ չանցած՝ մնացեալք ալ անոր հետեւեցան, Տիկին Հ. Ռոչէզ մինակ մնաց։ Այն ժամանակ փոփոխութիւն մ'եղաւ իւր վրայ։ Դէմքին խստութիւնն աւելցաւ։

— Մարքիզը փարիզ է, ըսաւ ինքնիրեն. ինչո՞ւ չը տեսայ զայն։

Եւ ժամացոյցին նայեցաւ։

— Վեց . . . : Տակաւին կրնայ գալ։

Վառարանին մտանալով զանգակը քաշեց։

— Ով որ գայ՝ հոս չէ ըսէք, ըսաւ սենեկապան ծառային, ի բաց առեալ թանարէ մարքիզն, եթէ գիտուածով գայ։

Երբոր ծառան դուրս ելաւ, Հանրիէթ պահարանի մը քով գնաց, և դարակ մը քաշելով, այծի մորթէ թղթապանակ մը հանեց բանալիով գոցուած։ Բացաւ և ուշադրութեամբ կարդաց։ Եւ քանի որ թերթերը կը դարձունէր, ժպտաւ մը կը փայլէր շրթանց անկիւններուն վրայ։ Յանկարծ դահլճին դուռը բացուեցաւ և սենեկապան ծառան ծանոյց։

— Պ. թանարէ Մարքիզ։

Մագ մնաց որ ուրախութեան ճիչ մը պիտի արձակէր։ Իսկոյն թղթապանակն իւր շրջազգեստին դըրպանը խօթելով դէպ ի դուռը դարձաւ այն կեղծանոյշ շարժմամբ որոյ մէջ կը գերազանցէր։ Յետոյ մարքիզին դէմ գնաց, և քանի մ'երկվայրկեան լուծեամբ գննեց։

Փոխուած չէր գեղանին Ֆապիէն։ Թերեւս մազերը քիչ մ'աւելի գորշացած էին քունքերուն մօտ. — թերեւս աչերն ալ առաջուանէն աւելի անհանգիստ նայուածք մ'ունէին. յամբ տենդի պէս բան մը կ'զգացուէր իւր վրայ։

— Դիմացս նստէք, ըսաւ Հանրիէթ, և խօսակցինք, եթէ կ'ուզէք։ Մի վախնաք բնաւ, ոչ որ կրնայ անհանգիստ ընել մեզ։ Ես նախատեսելով ձեր այցը, քիչ մ'առաջ պատուիրեցի որ ձեզնէ զատ մարդ չընդունին. Բիչ մ'առաջ ձեր կինը տեսայ։

Մարքիզը թեթեւ ցնցում մ'զգաց Արտեմիսի խօսքը լսելով։ Հանրիէթ չնչմարել կեղծեց, և նորէն խօսքն յառաջ տանիլ սկսաւ մեղմով, ծանրութեամբ, ճարտարաբար շեշտելով այն բառերն՝ որք Ֆապիէնի մտքին զարնելու սահմանուած էին։

— Ե՞րբ ստացաք նամակս։ Տասն օրի չափ կայ, այնպէս չէ։ Եւ դեռ այս առաւօտ վերադարձաք։ Դիտէ՞ք որ իմ խորհրդոցս անսպու փոյթ չունիք։ Մակայն նամակս ճիշդ և բացորոշ էր։ Ես շատ բարեկամութիւն ունիմ ձեր վրայ, սիրելի՛ մարքիզս. կը կարծեմ որ փորձով հաստատած եմ զայս։ Ձեր երկար բացակայութիւնն աչքի զարնել սկսած էր. վէռի դղեակէն ձեր յանկարծ մեկնելն այլ և այլ մեկնութեանց նիւթ եղած էր. ինչ ինչ մանրամասնութիւններ կը պտըտէին բերնէ բերան, բայց ես կ'երդնում որ անոնց ոչ միոյն հաւտացի։ Կարճ խօսելով, ես մտածեցի թէ . . . ձեր պատուոյն համար, լաւ էր որ վերադառնայիք, ուստի անկեղծաբար գրեցի ձեզ։ Լաւ չըրի՞, իբրեւ անկեղծ բարեկամ չվարուեցա՞յ. այո՛ կամ ոչ։

— Հազար անգամ շնորհակալ եմ, սիրելի՛ Տիկին։ Կը տեսնէք որ ձեր ազգարարութիւնն ի հաշիւ առի։ Կը հաճի՞ք ըսել ինձ բարեկամաբար, թէ ի՞նչ էին այն դիտողութիւններն ու մեկնութիւնները։

Այս վերջին խօսքն արտասանած ժամանակ Ֆապիէնի դոյնը նետեց։ Արդարեւ մտքն կ'անցնէր քիչ մը. այս պատճառաւ էր որ Տիկին Ռոչէզի նամակը կը տանջէր զայն՝ առանց զարմացնելու։ Անշուշտ վէռի

դղեակին մէջ անցած տխուր անցքը դուրս ելեր էր .  
անշուշտ իմացուեր էր որ այն սարսափելի յայտնու-  
թեան վրայ Արտեմիս ծանրապէս հիւանդացեր էր .  
կ'սպասէր որ Հանրիէթ քաթէրինի վրայ խօսէր . բայց  
ակնկալութիւնն ի դերեւ ելաւ :

— Հաւատացէք ինձ , ըսաւ Հանրիէթ , ամեն մարդ  
կը զարմանայ որ ձեր կինն այդպէս առանձին կը թո-  
ղուք : կ'ըսուէր թէ շատ սէր ունիք վրան : Եւ յան-  
կարծ աներեւոյթ կը լինիք առանց մէկու մ'իմացնե-  
լու ձեր ո՛ւր երթալը : Մեծ սխալ մ'էր այդ որ ըրիք ,  
սիրելի՛ մարքիզս , և ինձ ալ զարմանք կը պատճառէ  
ձեզ պէս մարդու մը համար , որ քսան տարիէ ի վեր  
Փարիզեան կենաց ժայռերուն մէջ նաւարկելու վար-  
ժուած էք : Չեր կինն յոյժ դեռահաս է , չկրնար մի-  
նակ թողուիլ : Իսկոյն անդոյ բաներ հնարելու կամ  
. . . եղած բաներ երեւան հանելու ձեռնարկեցին :  
Փարիզ կէրքերի կը նմանի , քաջ գիտէք , պէտք է միշտ  
մեղրալից կարկանդակն անոր հետաքրքրութեան առ-  
ջեւ նետել : Բաւական է հանդիպում մը . . . անտա-  
ռի մը մէջ , թրէքորի չրջականերն , օրինակի համար ,  
որպէս զի աւելի ուշադրութեամբ դիտեն զՊ. Բ . . .  
և զՏիկին Օ . . . : Եւ երբ զանոնք դիտեն , իսկոյն ա-  
մեն բան կը հասկնան . . . :

Եթէ Փապիէն իւր կնոջ վրայ նախանձ ունենար ,  
իսկոյն կը հասկնար որ Տիկին Ռոշէզ անոր և ուրիշ  
անձի մը վրայ կը խօսէր : Բայց համոզուած լինելով ,  
թէ ամեն մարդ իւր և Տիկին Մորէրի վրայ կը խօ-  
սէին , այս ամենուն մէջ մի միայն քաթէրինի վրայ  
ակնարկներ կը տեսնէր : Ուստի պատասխանեց միշտ  
շփոթելով .

— Մտոյզն ըսելով , սիրելի՛ Տիկին , իմ վրայ խօս-  
ուածներէն բնաւ տեղեկութիւն չունիմ : Կան այնպի-  
սի զրպարտութիւնք , զորս մարդ ոչ կրնայ արդեւուլ՝

և ոչ նախատեսել : Ես աներեւոյթ չեղայ՝ ո՛ւր երթաւ  
լըս մարդու չըսելով , այլ պարզապէս ուղեւորութիւն  
մ'ըրի Ֆրանսայի հարաւային կողմը :

Հանրիէթի համբերութիւնը կ'սպառէր : Արդարև ,  
մարքիզին վրայ խօսուածներուն անտարբեր չէր , բայց  
ըստ բաւականին չէր ճշդեր :

— Գիտէք օրչափ կը սիրեմ զԱրտեմիս , ըսաւ : Ա-  
նոր վրայ ունեցած դորովս այնչափ մեծ է որ չէր կըր-  
նար զիս ամբաստանել թէ առանց պատճառի կը յուզ-  
ուիմ : Արդ , ճշմարիտն ըսելով , այդ սիրելի աղջիկն  
անհանգիստ կ'ընէ զիս : Չափազանց յախուռն ձե-  
ւեր , կասկած աղդող խօսքեր , պարզմտութիւններ  
ունի . . . չափազանց միամիտ է :

Մարքիզը դարձեալ չէր հասկնար : Այն յախուռն  
ձեւերը , կասկածելի խօսքերն և պարզմտութիւնները ,  
զորս Հանրիէթ Տիկին Թանտրէի կը վերագրէր , Ֆա-  
պիէնի մտքին մէջ՝ միշտ այն սարսափելի յայտնու-  
թեան կ'ընծայուէին : Արդեօք Արտեմիս անխորհրդ-  
դապահութի՞ւն ըրած էր . արդեօք ուրիշի մը յայտ-  
նելու տկարութի՞ւնն ունեցած էր :

— Չեմ գիտեր ինչ կրնայ ըսել Արտեմիս , պատաս-  
խանեց մարքիզը . բայց . . .

Հանրիէթ մէկէն ընդմիջեց անոր խօսքը .

— Է՛հ , սիրելի՛ս , ձեր կնոջ ըսածին վրայ չէ խօս-  
քըս , այլ ըրածին :

— Ըրածի՞ն :

Տակաւին չէր հասկնար : Հանրիէթ բարկանալ սկը-  
սաւ : Արդեօք այրական ապուշ վստահութեան մը դէմ  
պիտի բախէր , որ բան մը չտեսներ , և երբէք չհաս-  
կընար :

— Կը կարծեմ թէ , շարունակեց Հանրիէթ չօք ձայ-  
նիւ , դուք և ես ընդհատ խօսքերով կը խաղանք :  
Որովհետեւ չէք ուզեր կէս խօսքով ըսածներս հաս-

կընալ, բաց խօսինք : Նամակ գրեցի ձեզ, սիրելի՛ մարքիզս, վասն զի խորհեցայ որ ձեր վերադարձն հարկաւոր էր : Արտեմիս ինքզինք բամբասանաց կը մատնէ : Չինքն առաւօտուն անտառին մէջ կը տեսնեն Մաքսիմիլիէն Տանկլարի հետ, ինչպէս որ կը տեսնէին զինքն անոր հետ Թրէբորի դաշտերուն մէջ : Կը տեսնէք որ վերապահութեամբ չեմ խօսիր . իրողութիւններ ու անուններ կը յայտնեմ ձեզ : Եւ այս միջոցիս ո՛ւր էք դուք : Ուղեւորութիւն կ'ընէք : Մտուգիւ՛ յոյժ յարմար ժամանակ ուղեւորելու :

Մարքիզն ոտքի վրայ ելաւ կը հասկնար : Բայց ո՛չ, տակաւին նախանձութիւն չունէր, Հանրիէթի պատմածն իւր կասկածը չէր գրգռեր : Պարզ զրպարտութիւն մը կը տեսնէր գործին մէջ և ոչ ճշմարտութիւն : Հակառակ իւր բարոյական նուաստացման, այլոց մեծութիւնը կը յարգէր : Արտեմիս մեղապարտ : Թեթեւութիւն թերեւս, բայց ոչ այլ ինչ :

— Շնորհակալ եմ ձեր բարի դիտաւորութենէն, ըսաւ պաղութեամբ Հանրիէթի : Բայց երբէք չեմ հաւատար որ մարքիզուհին կրնայ գէշութիւն ընել : Աշխարհ չճանչելով կրնայ առիթ տուած լինել չարախօսութեան . . . :

Տիկին Ռոչէզ ծիծաղիլ սկսաւ, այն պաղ ծիծաղով, որ օձի չչելուն կը նմանէր :

— Չարախօսութեան, ըսաւ :  
Յետոյ, ուսերը թոթովելով, աւելցուց գրգռիչ արհամարհանօք .

— Այո՛ այրերն . . . ամենն ալ նոյն են :

— Չրպարտութիւն ըսենք, եթէ չարախօսութիւն բառն անհաճոյ է ձեզ, պատասխանեց մարքիզը չորութեամբ :

Նորէն Հանրիէթ ուսերը թոթովեց, քանի մը քայլ առաւ դահլճին մէջ, և Ֆապիէնի քով վերադառնա-

լով բացորոշապէս ըսաւ այն նողկալի հանդարտութեամբ, զոր իրենց տկարութեան զգացումը կը ներշնչէ դաս մը կանանց :

— Պ. Տանկլար կը սիրէ զԱրտեմիս :

— Տիկինն :

— Ե՛հ, ես աներկբայ եմ . . . որովհետեւ առաջ իմ տարիաւորս էր : Եւ որովհետեւ Ֆապիէն կ'ընկերակէր այս անպատկառ խոստովանութեան առջեւ, Հանրիէթ շարունակեց կարճ ձայնիւ, հազիւ շեշտելով այն աւելի բուռն խօսքերուն վրայ, զորս իւր պաղ զայրոյթն ոչ եւս կրնար հաշուել :

— Անկեղծ խօսինք, աւելի լաւ է այս թէ՛ ձեզ և թէ՛ ինձ համար : Ես ձանձրացայ վերջապէս քառորդէ մ'ի վեր ըրած դիւանագիտութենէս : Ես կը սիրէի զՊ. Տանկլար . նա թողուց զիս և ձեր կնոջ յարեցաւ . . . : Դուք կը կարծէք թէ ես առ նախանձու կը խօսիմ : Կը սխալիք : Ես նախանձութիւն չունիմ . միայն թէ պէտք չէ իմ դռնօղութիւնս վիրաւորել : Այս պահուս ես վրէժս կ'առնում, և իրաւունք ունիմ : Մի՛ կծկէք ուրեմն ձեր ձեռքը թիկնաթոռին յենարանին վրայ : Դուք ձեր բոլոր հանդարտամտութեան պէտք պիտի ունենաք : Պաղարիւնութիւնը կորսնցնելու ժամանակ չէ՛ :

Արդարեւ Ֆապիէնի դէմքը կապարի գոյն ստացած էր : Մէկէն բռնեց Հանրիէթի ձեռքն, և ուժգնութեամբ սեղմելով .

— Չեր այդ ըսածը սոսկալի բան է :

Հանրիէթ արհամարհոտ դէմքով մը պատասխանեց .

— Թատրերդ պէտք չէ, կ'ողաչեմ . թող տուէք ձեռքս, կը ցաւցնէք :

— Ապացոյց, օ՛ն, ապացոյց, ըսաւ Ֆապիէն հետըհետէ զայրանալով : Դուք լաւ կը հասկնաք թէ ամբաստանութիւնը կան, զորս կարելի չէ ընել ա-

ուանց հաստատելու . . . մինչեւ իսկ եթէ կին լինի ոք : Եթէ այր լինի՝ կ'ապտակեն զայն և կը լմնայ . բայց կի՛ն մը . . . : Ապացոյց կ'ուզեմ :

Հանրիէթ երկու քայլ նահանջեց առանց խռովելու , և ըսաւ .

— Ապացոյց կ'ուզէք . պիտի տրուի ձեզ , անհոգ եղիք : Բայց նախ քանի մը խօսք : Ասկէ զատ , ոտքի վրայ մի՛ կենաք , կ'աղաչեմ . այդ կը յոգնեցնէ զիս , ինչպէս ձեզ ալ : Տակաւին խօսելիքներ ունինք . աւելի լաւ է որ նստիք :

Ֆապիէն հնազանդեցաւ : Ծունգերը կը դողային և չէին կրնար զինքը բռնել : Հանրիէթի անամթութիւնը կ'իշխէր իւր վրայ :

— Գիտէի՞ք թէ Պ. Տանկլար և ձեր կիներ մանկութեան բարեկամներ էին : Այո՛ . ժամանակաւ ճանչած էին զիրար Պրըթայնի ծովեզերքն աննշան տեղ մը : Ո՞չ . չէ՞իք գիտեր : Չեմ գարմանար ադոր : Այրերը միշտ ամենէն վերջը կ'իմանան այս բաները : Գեղջկական հովուերգ մը . . . սրտաշարժ է , այնպէս չէ՞ : Կը հասկնաք անոնց ուրախութիւնն երբոր զիրար գըտան : « Կը յիշէ՞ք , սիրելիս , կ'ըսէր Արտեմիս անոր : — Ի՞նչպէս չեմ յիշեր , նազելիս » կը պատասխանէր երիտասարդն ալ : Ես զիրենք մտիկ ըրի դղեակին մէջ . . . : Աչերս արնասուօք կը լցուէին : Ափսո՛ս որ դուք ալ հոն քովս չէիք . միասին կը լսէինք :

Այս լրբենի հեգնութիւնը կը մտրակէին Ֆապիէնի սրտմտութիւնն : Իւր դէմ՝ Տիկին Ռոշէզ մը կը տեսնէր , զոր չէր ճանչեր : Այս կին , որ իւր վատութիւնն այսչափ լրբութեամբ ի գործ կը դնէր , կ'ապշեցնէր զինքը : Բարկացայտ աչօք զայն կը դիտէր անթարթ :

— Այո՛ , կը հասկնամ ձեզ . ապացոյցներուս կ'ըսպասէք : Ես սակայն արդէն կ'սկսիք համոզուիլ : Ինչո՞ւ համար ձեր կիներ . . . անարատն Արտեմիս . . .

չիմացուց ձեզ թէ Պ. Տանկլար իւր մանկութեան բարեկամն էր : Ասկէ զատ , իմ աներկբայութիւնս ձեզ ալ կը գրաւէ : Կը խորհիք թէ ես այսպէս չէի խօսեր՝ եթէ բան մը չգիտնայի : Դուք գոհ պիտի լինիք : Դուք հին փարիզցի մ'էք , մարքի՛զ . յաճախ տեսած կամ ստացած էք այն տպեալ շրջաբերականներն , ուր կը կարդացուին . « Գրասէնի Գ . . . — Արտեմիս . Իր հըրդոհոհոհիւն : » Ես ալ ստացած եմ՝ աղոնցմէ , ձեզ պէս , ամեն մարդոց պէս : Այդ մարդիկ իրենց թըղթեակներն ըստ դիպաց կ'արձակեն ըսելով թէ բազմութեան մէջ կրնան հարիւրի չափ մարդ գտնել որ ուրիշներ լրտեսել ուզեն : Ես հասցէն պահեր էի խորշ մը . որովհետեւ մարդ չգիտեր ի՞նչ կրնայ պատահիլ ապագային մէջ : Փարիզէն լրտես մը կոչեցի երբոր ասոնց տարփանքն սկսաւ : Այս բան շատ սուղ եղաւ ինձ : Աւասիկ կարդացէք :

Եւ այժի մորթէ փոքրիկ թղթապանակը զոր պահարանին մէջ պահած էր : անոր տուաւ : Թղթապանակին կղպանքը բացուած էր : Ուրիշ մարդ մը թերեւս չուզէր վատութիւնը մինչեւ ծայրը մղել , բայց իմանալու կատաղութիւնը գրաւած էր զայն : Ֆապիէն կարդաց : Լրտեսն իւր պաշտօնը լաւ կատարած էր : Մաքսիմիլիէնի բոլոր այցելութիւններն ի դղեակն Վէռի՛ նշանակուած էին մի առ մի : Ֆապիէն տեսաւ որ իւր բացակայութեան ժամանակ Պ. Տանկլար ամեն օր հոն կ'երթար : Շատ չանցած , այնչափը բաւական չէր եղեր , և օրն երկու անգամ երթալ սկսեր էր . յետոյ երկար ճեմեր , աջ ու ձախ պտոյտներ դաշտերուն ու անտառներուն մէջ : Ծանօթութիւնները կարճ , որոշ և ճիշդ էին . « Այս ինչ ժամուն եկաւ . . . այս ինչ ժամուն ելաւ . . . » նոյնպէս ճեմերուն համար : Մերթ Մաքսիմիլիէն կէս օրէն ետքն ամբողջ դղեակին մէջ կ'անցունէր , մերթ նորէն կուգար ճաշելու : Այն ժամանակ

մինչեւ կէս գիշերն անցած հոն կը կենար: Նոյեմբեր ամսէն սկսեալ լրտեսութիւնը նորէն սկսած էր փարիզի մէջ: Բայց հոն աւելի դժուար էր: Փարիզ քիչ մը ծովու կը նմանի, ուր ամեն ինչ կ'ընկելուզի: Լրտեսն արդարեւ քանի մ'անգամ ձիով պտըտելին գիտած էր Պուլոյնի ծառաստանին մէջ առաւօտուն. բայց առաւել մարքիզուհւոյն տունը տրուած այցելութիւնները նշանակելով կը փայլէր: Եւ Ֆապիէն տեսաւ որ մտերմութիւնը փարիզի մէջ ալ կը շարունակէր: Ամեն օր Մաքսիմիլիէն ժամ հինգին կուգար և մինչեւ եօթը կը կենար: Իրիկուններն ալ, անշուշտ դահլիճներու կամ թատրոնի մէջ կը տեսակցէին:

Մարքիզը դետնահար մնաց: Տեղեկութեանց բացորոշութիւնը երկբայութիւն չէր ներեր իրեն: Ի՞նչպէս կրնար ընդունուիլ որ Տիկին Ռոչէզ այսպիսի ամենածանր սուտ մը հնարելու յանդգնէր: Արտեմիսի հետ պարզ բացատրութիւն մը կրնար խոստառակել անոր սուտը: Ոչ, սուտ չէր ըսեր: Կը բաւէր տեսնել անոր արհամարհոտ դէմքը, դուռող նայուածքը: Ապահովապէս զարնելու ճանքան գիտէր: Հանրիէթ աւելցուց սակայն.

— Եթէ տակաւին չէք համոզուած, ինքզինքնիդ մի՛ նեղէք, սիրելիս: Դուք ալ տեղեկութիւն ստացէք: Այժմ ձեզ վար չեմ՝ դներ: Ծնորհակալ չէ՞ք լինիլ ինձ՝ ձեզ կոչելուս համար: Ապերա՛խտ:

Պ. Թանտրէ դուրս ելաւ դահլիճէն, առանձնասենեակէն և նախասենեակէն, և օթեւանին սանդուղին առջեւ գտաւ ինքզինք: Երբոր փողոցն ելաւ, երեկոյեան պաղ հովն երեսին զարնելով ապշեցուց զինք. առջեւն իրած առաջին ծառուղին մտաւ և ուղղակի դնաց՝ առանց ուր երթալը գիտնալու: Մաքսիմիլիէն Տանկար, տարփաւոր իւր կնո՛ջ: Արդարեւ, դղեակին մէջ ինք զատուեր էր անկէ: Այն սարսափելի դէպքէն

յետոյ, երբոր կը փախչէր, ոչ եւս կը սիրէր զԱռտեմիս: Իւր ուղեւորութեան միջոցին ամուսնութեան սովորութիւնները նորէն ձեռք առնոյ՛ Նիսի և Մոնթէֆորրոյի խառն ընկերութեանց մէջ, ոչ եւս կը խորհէր իւր կնո՛ջ վրայ: Եւ ահա, ճշմարտութիւնն իմանալով, դժնեայ նախանձ մը կը գրաւէր զինք: Ապշութեան առաջին շարժումն անցնելէն յետոյ, ինքզինք դուրս համոզել սկսաւ: Ասկէց աւելի բնական բան չկար: Տոն Ժուանի պատիժը՝ կանանց ոչ եւս չհաւատալ է: Միշտափ այրեր խորած էր: Միշտափ քաջ գիտէր այն խորամանկութիւնները զորս իւր տարփուհիները կը գործածէին ժամանակաւ: Իւր այնչափ սիրած Քութերինի վրայ այլ եւս համարում չունէր: Վերջապէս Արտեմիս ալ անոր աղջիկն էր: Եւ այս դառն մտածութեանց մէջ ընկզմեալ, չէր նշմարեր որ ժամերը կ'անցնէին:

Յանկարծ փարիզի ամուսնութիւններն հասաւ: Այլ ու ձախ տեսակ մ'ամայի ճեմելիք ազազուն ծառերով, տեղ տեղ ցանցառ կազի կանգեղներով լուսաւորուած: Իւր դէմը զինուորական պահականոց մը կար, որոյ առջեւ պահակ զորականը կը ճեմէր կանոնաւոր քայլերով իւր գորշ վերարկուին փաթթուած: Ինչպէս մարքիզը կը գտնուէր հոն: Զարմացմամբ կանգ առաւ: Հեռաւոր ժամացոյցի մը հնչիւնն ինն հարուած բերաւ իւր ականջին: Մերենաբար իւր շուրջը նայեցաւ կառք մը գտնելու համար. բայց դեկտեմբեր ամսոյ մէջ և գիշերուան այն ժամուն կառք չէր կրնար գտնուիլ այն ամայի թաղերուն մէջ: Կրցածին չափ իւր երթալիք ճանքան որոշեց և վիլիէի ծառուղին մտնելով մինչեւ Սէնթ-Օկիւսթէն իջաւ քալելով, և քանի որ հնչուն մայթին վրայ կը քալէր, քանի որ քաղաքին սիրալ կը մտնէր, ուր անցորդք աւելի բազմութիւն էին, իւր հին մտածութիւնները կը յիշէր մի առ մի:

Արտեմիս տարփաւոր մ'ունէր : Բնաւ իւր չրթունքին վրայ չեկաւ խաբուած այրերու այն սովորական խօսքն որ կ'ըսէ . « Պատուոյս նախատի'նք եղած է » : Ֆապիէն իւր ժամանակին մարդն էր . սկեպտիկտեան մը կրկնապատկեալ անտարբերով : Ժէ դարուն մէջ Մոլիէր կը ծիծաղէր խաբուած ամուսիններուն վրայ : Ասկէց երսուն տարի առաջ ողջմտութեան դպրոցը դիւցազնացուց զանոնք : Այսօր ոչ կը ծաղրեն և ոչ մեղքնան դանոնք : Պատիւն յոյժ բեկանուտ բան մը պիտի լինէր՝ եթէ կնոջ մը հաճոյքէն կախեալ լինէր : Ֆապիէն ծաղրելի լինելու մտածութեան վրայ հոգ չէր ընէր . ի՞նչ բանով կին մը ծաղրելի կ'ընէ իւր խաբած ամուսինը : Ֆապիէնի սրտին ծանր եկածն ուրիշ բան էր , աւելի մտորկային ցաւ մ'էր , աւելի անկեղծ նախանձութիւն մ'էր : Ի՞նչ , այն կինն , որ իւր համբոյրներէն հաճոյք չէր գգար և պաղ կը կենար , ուրիշի մը գգուանքէն արթննա՞յ : Ի՞նչ , իւր վրայ ուղղած անբոց աչերն ուրիշի մը վրայ ուղղուած ժամանակ պայծառանան . կանանց սիրտ գրաւելու վարժուած մարդու մը սնափառութեան ծանրապէս կը դպչէր այս :

Ֆապիէն որոշեց ընելիքը : Նախ իւր տունը մտաւ . յետոյ սկսաւ հսկել , որպէս զի իւր ոսոխը դռնէն դուրս նետէ , և ի հարկին մենամարտի իսկ անոր հետ :

Յոյժ քիչ կը պատահի որ սաստիկ զայրացած մարդ մը , երբոր որոշում մ'ընէ , շուտով չամօքի : Մարքիզը գրեթէ բոլորովին հանդարտած էր հիմա : Իւր ամուսնութեան ժամանակ բնակարան մը վարձած էր Մէսինի ծառուղւոյն վրայ վերջին ժամանակներս շինուած ճոխապանծ տուներէն միոյն մէջ : Հոն հասած առաւօտուն հազիւ ծանօթ էր այն ընդարձակ բնակարանին , որ նոր էր իրեն համար , և ուր քանի մը ժամ միայն կեցած էր վէռի դղեակէն մեկնելէն յետոյ :

Այժմ կը յիշէր իւր առաջին տեսակցութիւնն Արտեմիսի հետ , առաւօտուն , նախաճաշէն քիչ մ'առաջ , երբոր իմացեր էր անոր վերադարձը : Քանի մը տարտամ և սովորական խօսքեր . շատ պաղուծիւն անոր կողմէ , բազում յարգանք իւր կողմէ : Յարգանք :

Ժամը տասն էր երբոր տունէն ներս մտաւ :

— Աողեօք Տիկին մարքիզուհին դ՞ուրս ելաւ , հարցուց սենեկապան ծառային :

Ծառան պատասխանեց թէ Տիկին մարքիզուհին Օբէռա գնացած էր Պ. Մորէրի և օրիորդ Ժէմմայի հետ :

— Հագուիմ , ըսաւ . կառքը լծուի :

Կէս ժամ յետոյ կառքը թաւալի սկսաւ դէպ Օբէրա : Ֆապիէն բուռն սրտայուզութեան մ'ազգեցութեամբ անխորհրդաբար կը գործէր : Բայց այս սրտայուզութեան մէջ խորհրդածութեան վայրկեաններ ունէր : Այն ժամանակ այս մարդն , որ արտաքին վարքը բարոյականի՝ և զգայականութիւնը սիրոյ տեղ կը դնէր , չէր կրնար մեկնութիւն մը տալ իւր բրած գործերուն : Տարփուհիէն խաբուած դպրոցականի պէս փողոցներուն մէջ երկար թափառելէ յետոյ , այժմ Արտեմիսի ետեւէն կը վազէր առանց գիտնալու թէ ինչո՞ւ , առանց կանխակալ խորհրդոյ : Անոր օթեակը պիտի երթար : Ո՛չ անշուշտ . ուրեմն ի՞նչ օգուտ ունէր այսպէս անոր ետեւէն իյնալ : Ուրեմն հեռիէն տեսնելով գո՞հ պիտի լինէր :

Հոգեբանական աշխատութիւն մը կը կատարուէր այս սկեպտիկեանին ուղեղին մէջ : Իւր հին սէրը ջերմ գոլորշիներու պէս կը վերադառնար կուգար . . . սէրն , ինչպէս որ ինք կը հասկնար : ՉԱրտեմիս սիրեր էր , վասն զի ցանկացեր էր անոր . ցանկութիւնն անցնելուն պէս՝ դադրած էր սիրելէ : Եւ յագուրդը չէր որ կ'սպաննէր իւր ցանկութիւնը . ոչ , այլ այն գաղափարը

Թէ ինք միայն կը ճաշակէր համբոյրներուն արբեցու-  
թիւնը : Այժմ իւր ցանկութիւնը վերստին կը ծնէր ,  
առանց հասկնալու այս ուղեղային շրջման նողկալիու-  
թիւնը : Այս տեսակ բնութիւնք իրենց զգայական կրից  
աղղեցութիւնը կը կրեն առանց երբէք խորհրդածելու :

Ֆապիէն երաժշտաց թիկնաթռուներուն տանող  
նրբանցքին ստուերին մէջ կէս պահուրած , օթեակ-  
ները կը դիտէր ուշադրութեամբ : Յանկարծ ցնցուե-  
ցաւ իւր փնտռածը տեսնելով : Արտեմիս հոն էր ,  
յառաջակողմը , յէմմայի հետ : Ամեն մարդ դիտակ-  
ներն այն օթեակին վրայ ուղղած՝ փոքրիկ արարուհին  
կը դիտէին : Առաջին անգամ էր որ այսպէս հրապա-  
րակաւ կ'երեւէր , և իւր տարօրինակ գեղեցկութիւնն  
հաւնողներ կը գտնէր : Իսկ մարքիզուհւոյն հիւսքանչ  
գոյնը՝ յէմմայի թխորակ գէմքին քով՝ աւելի պայծառ  
կը փայլէր , նման այն կնոջական գլուխներուն , զորս  
Ռամպրանտ կը նկարէր սեւ կտաւի վրայ : Երկու կա-  
նանց ետեւը Պ. Մորէր և Մաքսիմիլիէն ոտքի վրայ  
կեցած էին օթեակին մէջ տեղը :

Ֆապիէն մարքիզուհին կը դիտէր : Երբէք այնչափ  
գեղեցիկ երեւցած չէր իրեն : Աչօքը կը լափէր զայն՝  
դիտելով անոր ճապուկ հասակին ծածանումներն , և  
ուսերուն մարդարաափայլ սպիտակութիւնը : Յանկարծ  
Արտեմիս ետին դարձաւ Մաքսիմիլիէնի հետ խօսելու  
համար , և այն ժամանակ միայն Պ. Թանտրէ նշմարեց  
երիտասարդը : Նախանձով և բարկութեամբ լի շար-  
ժում մ'ըրաւ , և դուրս ելնել ուղեց , այնպէս թուե-  
լով իրեն թէ ծաղրական գեր մը կը խաղար ինքն , ա-  
մուսին , մինչդեռ իւր կինն օթեակին մէջ հանդարտ  
կը խօսակցէր սիրած մարդուն հետ : Յետոյ իւր գրգռու-  
եալ կիրքը զինք բռնեց : Մեկնելու քաջութիւն չու-  
նեցաւ :

Երբոր վարագոյրն ինկաւ Ֆապիէն վերջին արարուա-

ծին վրայ , Ֆապիէն փութաց դուրս ելաւ , վախնալով  
որ ամեն կողմէ հարցումներ պիտի լինէին իրեն : Բայց  
դարձեալ չկրցաւ ազատիլ « Օ՛ , վերադարձե՛ր էք ,  
բարեկամ » և « ձեր կինն յոյժ գեղեցիկ էր այս իրի-  
կուն » ըսողներէ : Իւր ընկերական մարդու բոլոր ճար-  
տարութիւնն հարկ եղաւ ինքզինք զսպելու և այս գո-  
վեստներուն մէկ մէկ չոր խօսքով պատասխանելու  
համար :

Երբոր թատրոնէն դուրս ելաւ , կառքը ճանբեց և  
սկսաւ արագապէս քայլել : Ստուգիւ չպիտի կրնար ա-  
ւելի երկար ժամանակ հանդուրժել այս վիճակին :  
Արտեմիս իւր կինն էր վերջապէս . կրնար ստիպել որ  
իւր հետ երթայ , ուղեւորութիւն ընէ : Բայց եթէ  
յանձն չառնուր , ի՞նչ միջոցներով պիտի բռնադատէր  
իրեն հնազանդելու : Դատի մը դայթակղութիւնը  
կրնար ցայտել իւր վրայ : Աշխարհք քաջ դիտէր թէ  
ինք տասն և հինգ տարի մօրը տարփածուն լինելէ  
յետոյ աղջիկը կնութեան տուած էր : Թուականները  
պիտի մերձեցնէին , իւր մեկնելուն և Արտեմիսի յան-  
կարծական հիւանդութեան , ինչպէս նաեւ իւր անա-  
կընկալ վերադարձին և Մաքսիմիլիէնի հանապազորդ-  
ման զուգադիպութիւնները պիտի հաշուէին :

Ոչ , իւր առաջին գաղափարին կը վերադառնար :  
Պ. Տանկարն իւր տունէն դուրս ընել : Այս պարա-  
գայի մէջ խայտառակութենէ չէր վախնար , մանաւանդ  
որ սուր և ատրճանակ գործածելու մասին յոյժ ճար-  
տար էր . իւր կնոջ տարփածուն կ'սպաննէր . այս ալ  
եղանակ մ'էր դժուարին կացութիւն մը կարգադրե-  
լու , և արդի ընկերութենէն հաճութեամբ անսնուելու  
արժանիքն ունէր : Գիշերուան օդը քիչ քիչ կը փարա-  
տէր այն զգիլումը որ իւր ուղեղը կ'երնէր Տիկին Ռո-  
չէղի այցելութենէն ի վեր : Բայց և այնպէս իւր միտքն  
ուրիշ բանով զբաղեցնելու պէտքն զգալով , գիշերային

ճաշարան մը մտաւ ճաշեց . յետոյ Օբէրային շուրջը գտնուած խաղատուներէն մին մտաւ , ուր երբեմն կ'երթար իւր ամուրիութեան ժամանակ : Չինքը կը ճանչէին : Հոն կանանչ սեղանի մ' առջեւ նստած կոյր զկուրայն կը խաղար , ծխալից մթնոլորտէ մը շրջապատեալ , հազիւ բռնուելով այն դիպուածական մոլութենէն , որ փայլուն լուիներու շեղակոյտեր կը թաւալէր իւր առջեւ : Դադրեցաւ խաղալէ , երբոր գրեթէ մինակ ինք մնաց սեղանին առջեւ : Ծանր խոնջութիւն մը կը տիրէր իւր վրայ , որ իւր ուղեղին գաղափարները կը կապկպէր և իւր սրունքներուն զսպանակները կը խորտակէր : Կը յուսար որ քալելով կրնար հանդարտիլ , բայց կարողութիւն չունէր քալելու : Պարտաւորեցաւ կառք մը բռնել :

Երբոր իւր տան առջեւ հասաւ , փարիզ արլոննալ կ'սկսէր դեկտեմբերի աղտոտ և գորշ առաւօտու մը ցուրտ թմբիրէն : Ֆապլէն հազիւ ուժ ունեցաւ իւր բնակարանն ելնելու . իւր սենեակը մտնելով՝ վայրկեան մը նայեցաւ մեծ հայելոյն մէջ : Դէմքը բոլորովին կապոյտ էր , տեղ տեղ կարմիր պիսակներով : Գաշեց հանեց փողպատը : Խօսքերը կը խեղդուէին կոկորդին մէջ : Այս մարդ պիտի գար ցերեկը . պիտի վռնտէր զայն , պիտի ապտակէր , պիտի սպաններ : Բայց Ֆապլէնի ուժը կ'երթար : Հազիւ անկողնին քով երթալով՝ մէջն ինկաւ առանց հանուելու , ծանր քունէ մ'ընկճեալ :

Տիկին Ռոշէզի լրտեսին տեղեկագիրը սուտ չէր խօսեր : Մաքսիմիլիէն և Արտեմիս կը վերսկսէին փարիզի մէջ թրէբորի քաղցր կեանքը : Տիկին վէրնիէի գուշակութիւնը ճիշդ էր : Զիրար ամեն օր կը տեսնէին ժամ հինգիս , և երկուքն ալ իրօք այդ արագա-

սահ վայրկեաններուն մէջ միայն կ'ապրէին : Դրեակին ճարտնական առանձնասենեկին մէջի անցքէն ի վեր , երբէք իրենց համբոյրներուն գրգռիչ ազդեցութեան չէին ենթարկեր զիրենք . Այս երկու էակներն յատուկ մեծութիւն մ'ունէին : Իրենց զոհողութենէն կ'արբենային , որպէս թէ վշտակրութեան դիւցազնութիւնն ունեցած լինէին : Մաքս յիշեալ ժամուն կուգար և զԱրտեմիս փոքր առանձնասենեկի մը մէջ կը գտնէր , ուր կ'ապաստանէր նա իրեն սպասելով : Այն ժամանակ կ'սկսէին քաղցր խօսակցութիւնը , երկար մտերմութիւնք՝ երկիւղալի լուսութիւններով խառն : Իրենց տկարութեան վրայ կը կասկածէին : Երկուքն ալ անկեղծ էին երբոր կ'ենթադրէին թէ այսպիսի վիճակ մը կրնար տեսիլ . բայց երկուքն ալ կը դողային : Արտեմիս իւր տկարութենէն կը վախնար . Մաքս ալ իւր տկարութենէն : Չէին ըսեր իրարու թէ արտամարդկային վիճակներն հնարաւոր են՝ ցորչափ տեսէ զանոնք արտադրող ուղեղային գրգռուը . բայց ի վերջոյ կը հասնի անպատճառ ժամ մը , ուր այդ գըրդիուն իյնալով , մարդկութիւնն իւր իրաւունքը վերըստին կը գտնէ :

Երկու ամսէ ի վեր որ այսպէս զիրար կը տեսնէին , Արտեմիս և Մաքսիմիլիէն իրենք իրենցմէ կ'զգուշանային իրենց հանապազօրեայ մտերմական ժամերուն մէջ : Անցեալը չէին յիշեր երբէք . բայց թէ որ իրենց շրթունքն համր կը կենային , աչերը կը խօսէին : Արտեմիս իւր աշխատութեանց , իւր ընթերցուածոց վրայ հարցումներ կ'ընէր Մաքսի : Երիասասարդն իւր միտքն զբաղեցնելու համար ինքզինք մոլեղին աշխատութեան կուտար : Յետոյ լուսութիւնը կուգար կը կտրէր անոնց խօսակցութիւնը : Այն ժամանակ քանի մը վայրկեան իրարու երես կը նայէին , մունջ , և կարճ բոցեր կը փայլէին անոնց աչերուն մէջ : Թերեւս իրենք զիրենք



աւելի առանձին, աւելի ազատ կ'զգային երբոր ժէմնա իրենց միջեւ կը գտնուէր. կամ, երբեմն, իրիկունն, երբոր Պ. Մորէր և Մաքսիմիլիէն հոն կը ճաշէին: Այն ժամանակ բնաւ երկիւղ չունենալով, առաւել ազատութեամբ և նուազ զգուշաւորութեամբ կը խօսակցէին: Գրեթէ միշտ Արաեմիս դաշնակ ամելու կը նըստէր, և լուսութեամբ երազած սիրոյ խօսքերն՝ երաժշտապետաց ներշնչեալ եղանակներով բարձրաձայն կը գեղգեղէր:

Կէս օրէն յետոյ, քանի մ'այցելութիւններէ յետոյ, Արաեմիս իւր բնակարանը վերադարձաւ ժամ հնգին ըստ սովորութեան: Մաքսիմիլիէն քանի մը վայրկեան կանխած էր դայն: Արաեմիս տեսնելուն պէս, վազելով քովը գնաց.

— Ի՞նչ ունիք ժողիէ՛թ. երէկ գիշեր մտահոգութիւն մ'ունէիք Օրէրայի թատրոնին մէջ:

— Մտահոգութիւն. ամենեւին. բայց . . .

Արաեմիս կանգ առաւ. յետոյ, կարճ լուսթենէ մը յետոյ.

— Ի՞նչ շքեղ դահլիճ էր, ըսաւ անտարբեր ձայնիւ:

— Այո, շքեղ . . .

— Ընդհակառակն, երէկ իրիկուն դուք նեղացած կ'երեւէիք, սիրելիս, երբոր Պ. Թանտրէի գալն խմացուցի ձեզ: Ի՞նչ էր պատճառը:

— Վասն զի . . . ստոյգն ըսելով, գէշ նախազգացումներ ունիմ. կը թուի ինձ թէ դժբաղդութիւն մը կ'սպառնայ մեզ, դժբաղդութիւն մը յորմէ չպիտի կրնանք պրծիլ: Այս կասկածս տղայական է . . . թե՛րեւս. բայց ես երբէք տղայական չեմ գտներ ինչ որ մեզ երկուքիս կը վերաբերի: Որովհետեւ շատ երջանիկ եմ՝ ամեն օր ձեզ տեսնելու համար. յոյժ երջանիկ . . . այս կէս երջանկութեան մէջ:

— Եւ ինչո՞ւ չշարունակենք այսուհետեւ ալ, պատասխանեց Արաեմիս իւր քաղցր հաստատամտութեամբ: Պ. Թանտրէ ինձ համար օտարէ մը քիչ տարբեր է. բնաւ իրաւունք չունի իմ կենացս զբաղելու, ինչպէս որ ես փափաք չունիմ իրենին զբաղելու:

Կարճ լուսթիւն մը տիրեց: Տեսակ մը նեղութիւն կը ծանրանար իրենց վրայ երբոր հեռաւոր իսկ ակնարկութիւն մը լինէր Պ. Թանտրէի կամ տիկին Մորէրի վրայ: Արաեմիս քաջ կ'զգար որ Մաքսիմիլիէն գիտէր կամ կը կասկածէր ճշմարտութիւնը. բայց թէ՛ իւր մօրն և թէ՛ իրեն համար, իւր կենաց այս դառն կողմն ստուերի մէջ կը թողուր միշտ: Սակայն այս անգամ հասկցաւ որ երիտասարդին տարտամ երկիւղին ներքեւ համր հարցում մը կար ծածկուած: Ուստի գնաց քովը նստաւ:

— Մտիկ ըրէք, սիրելիս, բաներ կան, որոց վրայ պէտք չէ բնաւ խօսինք: Ի՞նչ գիտէք դուք իմ կենացըս վրայ: Չեմ գիտեր. նմանապէս չեմ գիտեր թէ ի՞նչ կրնայ խօսուիլ ինձ համար ձեր առջեւ: Բայց ես կը հաստատեմ թէ ոչ ոք իրաւունք ունի մեր մէջ մտնելու: Մեր այսպէս ենք, այսպէս պիտի մնանք: Ես իմ խորհրդոցս ու գործոցս համար մի միայն ձեզ և իմ խղճիս հաշիւ տալու պարտական եմ:

Արաեմիս Մաքսիմիլիէնի ձեռքը բռնած էր: Երիտասարդն այս աղնի կնոջ զօրեղ և անյողդող կամքն իւր խրոխտ աչերուն մէջ կը կարդար: Որովհետեւ Արաեմիս կ'ըսէր, ճշմարիտ էր. ոչ իրերն, ոչ մարդիկ չէին կրնար զիրենք զատել: Երկուքն ալ այս մունջ հայեցողութեան մէջ կ'ընկղմէին . . .: Յանկարծ կակուղ գորգերէն խեղդուած ոտնաձայն մ'եկաւ արթնցուց զիրենք: Եկողը մարքիզն էր, դժգոյն, դողահար, որ սրտին մէջ որոտացող դայրուցը զսպել կը փորձէր: Արաեմիս թող սուաւ Մաքսիմիլիէնի ձեռ-

քը . յետոյ պաղութեամբ իւր ամուսնոյն դառնալով , գոռոզ հանդարտութեամբ մ'անոր նայեցաւ :

— Գոհ եմ ձեզ տեսնելուս վրայ , պարո՛ն , ըսաւ Ֆապիէն Մաքսի . ճշդիւ կը փափաքէի ձեզ տեսնել ու խօսիլ : Տիկին թանարէի ներկայութիւնն ալ լաւ հանդիպեցաւ : Թերեւս օգտակար է որ ներկայ գտնուի այն կարճ բացատրութեան զոր կ'ուզեմ խնդրել ձեզնէ :

Մաքսիմիլիէն ոտքի վրայ ելած էր : Հազիւ բերանը բացած էր որ պատասխանէ , Արտեմիս կանխեց զայն .

— Ոչ դեռ , սիրելիս , ըսաւ . Պ . Թանարէ բացատրութիւն մը լսելու կը փափաքի : Լա՛ւ , թող խօսի :

Միանգամայն Ֆապիէնի վրայ ուղղեց իւր հանդարտ աչքերը , լի ցուրտ արհամարհանօք , որ թշնամանաց ամենէն ծանրն է : Մարքիզը ցնցուեցաւ , բարկացայտ շարժում մ'ըրաւ , և բուռն ձայնիւ մը .

— Ձեզնէ հաշիւ պիտի խնդրեմ իմ տունս հանապաղորդելու վրայ , պարո՛ն . հանապաղորդութիւն մը , որ անհաճոյ է ինձ , և կ'աղաչեմ որ դարձնէք : Ես բարեկիրթ մարդու մը հետ կը խօսիմ և բաւական յստակ , որպէս զի հասկնայ զիս , կարծեմ :

Մաքսիմիլիէնի գոյնը նետեց . Արտեմիսի ներկայութիւնը մեծապէս կը շփոթեցնէր զինքը :

— Ինձ կ'իյնայ պատասխանել , Մա՛քս , գոչեց մարքիզուհին իւր գոռոզ վստահութեամբ : Ես բաւական հոգածութիւն ունիմ ձեր պատուոյն , գուշակելու համար այդ խօսքերուն ներքեւ պահուած գրգիւռը : Առ այժմ Պ . Թանարէ բացատրութիւն մը կը խնդրէ . ես կուտամ իրեն :

Եւ յառաջ քալեց դէպի իւր ամուսինն ամենայն հանդարտութեամբ :

— Ըսել կուզէք թէ Պ . Տանկար յաճախ իմ տունս եկած է ձեր բացակայութեան ժամանակ , այնպէս չէ՞ ,

ըսաւ , բացորոշապէս : Ճշմարիտ է : Պ . Տանկար այսուհետեւ ալ պիտի գայ ուղածին չափ յաճախ . և ոչ որ աշխարհի վրայ իրաւունք ունի իմ կամացս իշխելու կամ անոր կամաց վրայ ծանրանալու :

Արտեմիս կը խիզախէր իւր ամուսնոյն դէմ , և Մաքսիմիլիէնի առջեւ : Արդարեւ Ֆապիէն կ'սպասէր որ բուռն վէճ մը կրնար ծագիլ իւր կնոջ հետ . բայց մտքէն չէր անցնէր որ նոյն իսկ տարփաւորին առջեւ իրեն ասպարէզ կարդալու խրոխտ համարձակութիւնը պիտի ունենար : Այսպիսի քաջութիւն մը չէր յուսար անոր երկչուութենէն , կը կարծէր թէ սարսափահար պիտի դողար իւր ժամանակաւ ունեցած տարփուհիներուն պէս , երբոր իրենց այրը դիպուածով վրայ գար : Այսչափ քաջութիւն կը շփոթեցնէր զինք : Սակայն վերջին ճիգ մ'ընելով կրցաւ ինքզինք զսպել , և հեզնական ձայնիւ մ'ըսաւ .

— Իրաւունք չունիք , տիկին , թող չտալու Պ . Տանկարի որ պատասխանէ : Նա եւ ես , հաւատացէ՛ք , անմիջապէս կրնայինք համաձայնիլ :

— Պատրաստ եմ ձեր հրամանին , պարո՛ն , գոչեց իսկոյն Մաքսիմիլիէն , փափաքելով ազատել զԱրտեմիս կուռէն , զոր կը նախատեսէր :

— Կեցէ՛ք , հրամայեց Արտեմիս , տեսնելով որ երիտասարդը դէպի դուռը կը դիմէր :

Եւ սէգ վստահութեամբ մը .

— Ստուգիւ , լսողը պիտի կարծէ թէ մեղապա՛րտ ենք :

Մարքիզին բարկութիւնը վերջին կէտն հասաւ . արիւնն երեսը կ'ելնէր , ալ չկրցաւ ինքզինք զսպել . յարձակեցաւ Մաքսիմիլիէնի վրայ և բրտաբար .

— Դուք կնոջս տարփածուն էք , պիտի սպաննեմ ձեզ :

— Ահա այդ խօսքին կ'սպասէի ես ալ , գոչեց Ար-

տեմիս . Պ. Տանկար իմ տարփածուս չէ : Մի կարծէք որ ես ինքզինքս պաշտպանելու կը խոնարհիմ : Ես կը սիրեմ զայն . նա ալ զիս կը սիրէ : Ես անոր տարփուհին չեմ . բայց ես ինձ համար կ'ուզեմ անարատ մնալ , ոչ թէ ձեզ համար , զի կ'արհամարհեմ ձեզ :

Մարքիզը խեղդուկ ձայն մ'արձակելով՝ ա'յն աստիճան կատաղի շարժում մ'ըրաւ որ Մաքս անոր առջեւ նետուեցաւ :

— Կնո՞ջ կ'սպառնաք , ըսաւ , վա՛տ էք դուք :

— Օ՛ն , ուզած տեղս եկաք . և կարծեմ թէ զիս այդպէս թշնամանելէ յետոյ չէք հրաժարիր մենամարտէ :

— Ես բանէ մը չեմ հրաժարիր , պարո՛ն . կը կրկնեմ . պատրաստ եմ ձեր հրամանին :

Արտեմիս Մաքսիմիլիէնի վրայ վազեց բուռն ցամաք .

— Մենամարտի՛լ ասոր հետ . կ'արգելում քեզ : Քեզի պէս մարդ մը չչափուիր այսպիսի մարդու մը հետ : Ադոր սուրն արժանի չէ քու սուրիդ հետ դարնուելու : Մտիկ ըրէ , Մա՛քս : Այս մարդ միայն աշխարհի մէջ իրաւունք չունէր զիս սիրելու , և համարձակեցաւ սիրոյ խօսք ընել ինձ : Այս մարդ միայն իրաւունք չունէր զիս ամուսնութեան առնելու , և համարձակեցաւ կնութեան խնդրել զիս : Ի՞նչ կրնայի ընել ես : Տղայ մ'էի , զոր ոչ ոք կը սիրէր , ոչ ոք կը պաշտպանէր : Կենաց և իրաց վրայ բան մը չէի գիտեր : Յանձն առի փախչիլ տունէ մը , ուր զիս կ'ատէին : Եւ մէկը չազդարարեց ինձ : Թողուեցայ , մատնուեցայ , վաճառուեցայ այս մարդուն , այնպէս որ նողկանք կուգայ ինձ երբոր միտքս կը բերեմ այս բաները : Ամօթ կ'զգամ այս մարդուն անունը կրելու : Ամօթ կ'զգամ մինչեւ իսկ յիշողութենէս , վասն զի լի է այն համայններով , որովք ալ տեղե՛ց զիս :

Այս վրէժ խնդրական զայրութիւն արտայայտութեան մէջ ա'յն աստիճան հրաշալի գեղեցնութիւն մ'ունէր Արտեմիս , որ Պ. Թանտրէ ընկրկեցաւ յաղթեալ , դարհուրեալ անոր արտասանած սարսափելի խօսքերէն : Արտեմիս կը ջախջախէր զայն : Արհամարհանքը ողբուորուած էր ի նմա , և անով կ'ապտակէր թշուառականը : Ուղղաբերձ , աչերը բոցավառ , համակ սպիտակ , նորէն շարունակեց .

— Վերջապէս անդէտ էի անցելոյն . իւր կիկն էի . . . : Թեւ զինքը չէի սիրեր , կրնայի գոնէ խաղաղ և պատուաւոր կեանք մ'ունենալ . . . առանց իւր խայտառակութեան : Մա՛քս , կրնայի սիրել քեզ . . . և դու չէիր կրնար երբէք գիտնալ : Մինչեւ իսկ չը թողուց ինձ ունենալ ինչ որ ունին այլ կանայք . ընտանեկան յարկ մը , ընտանիք մը , ուր՝ եթէ ոչ երջանկութիւն՝ գոնէ անդորրութիւն գանուէր . . . : Զիս թշնամանեց իմ ամենէն ներքին էութեանս մէջ , զիս անարգեց , անպատուեց ու նուաստացուց մինչեւ այն աստիճան որ մազ մնաց մեռնէի յուսահատութենէս . . .

Արտեմիս կը դողար զայրութէն՝ ընելիք սարսափելի խոստովանութեան առջեւ : Պարտասեալ , ծունդի վրայ ինկաւ , կարծես ներում խնդրելով ինքիրմէ՝ որ քիչ մնաց պիտի խօսէր : Բայց Մաքս կը հասկնար ամեն բան : Տեսիլքի մը մէջ տեսած էր այս նահատակին կեանքն , և անոր կրած շարչարանքովն ինք ալ վշտակրած : Անդիմազրելի պէտք մ'զգաց Արտեմիսի շարչարանաց վրէժն առնելու շարչարողէն : Խոյսցաւ մարքիզին վրայ որպէս զի ապտակէ . բայց յանկարծ ձեռք մ'արգելից իւր ձեռքը : Պ. Մորէրի ձեռքն էր , զոր ժէմմա գնացեր կոչեր էր :

— Այդ իմ գործս է , Մա՛քս , ըսաւ Պ. Մորէր : Ես միայն իրաւունք ունիմ այս մարդը պատժելու :

Մարքիզը նորէն ընկրկեցաւ : Պ. Մորէր անշարժ

կեցաւ, խոժոռ աչօք, ձեռքերը թեթեւ մը դողդոջելով, որ ներքին բուռն ցնցմանց նշանակ էր : Մարքիզուհին ոտքի վրայ ելած էր իւր հօրուին հրաւերովն :

Պ. Մորէր անոր քով գնաց և գորովանօք համբուրեց ճակատը . յետոյ անպատմելի ազնուութեամբ մը մարքիզին նայելով .

— Այս իմ աղջիկս է, ըսաւ . ով որ ասոր դպչի, ինձ կը դպչի . ով որ ասոր սպառնայ, զիս կը թշնամանէ : Ես չեմ սպաններ ձեզ ինձ ըրած շարութեան համար . հոգ չեմ ըներ իմ կրած վիշտս : Ես անձնական շահ չունիմ : Ես հին սխալի մը բեռը կը կրեմ : Իմ առաջին տկարութիւնս աւելի վնասաբեր եղաւ ինձ քան ուրիշի մը շարութիւնը : Բայց դուք կը համարձակիք դպչիլ այս աղօ՛ւն, այս անմեղ աղօ՛ւն, ադոր չեմ կրնար հանդուրժել, և պիտի սպաննեմ ձեզ : Ասոր բնատարակոյս չունիմ, Աստուած արդար է երբեմն : Մըտիկ ըրէք ինձ և մի մոռնաք որ ինձ հնազանդիլ կը հրամայեմ ձեզ : Գնացէք ձեր ակումբն, իմ վկաներս կուգան հոն կը գտնեն ձեզ մէկ ժամէն : Մենամարտի համար պատրուակ մը հնարեցէք : Վաղը կէս օրին կը մենամարտինք : Գնացէք :

Պ. Մորէր պաղութեամբ կը խօսէր : Չայնն անողոք խստութիւն մ'ունէր, զոր Մաքսիմիլիէն չէր ճանչեր : Մինչեւ այն ժամանակ հպարտ մարդ մը կարծած էր զայն, մարդոց հետ քիչ յարաբերութիւն ունեցող, լուին և հանդարտ : Եւ ահա այս ինք իր մէջ փակուած բնութիւնը բոլորովին նոր կերպով կը յայտնուէր իրեն : Նոյն կերպարանափոխութեան ներկայ կը գտնուէր, որուն ժամանակաւ Արտեմիս ներկայ գտնուած էր իւր հարսնախօսութեան պարահանդէսէն յետոյ, երբոր հեռիէն սարսափելի վէճին մէկ մասը կը լսէր : Իսկ մարքիզն յամրաբար կ'սթափէր իւր առաջին ապ-

շումէն : Մենամարտիլ Պ. Մորէրի հետ, ճշմարտութիւնը բարձրաձայն հռչակել էր համայն Փարիզի մէջ : Ուստի կակաղեց,

— Բայց անհնարին է . . . անհնարին . . . :

Այս անգամ Պ. Մորէր չկրցաւ ինքզինք զսպել : Յատկեց Ֆապիէնի վրայ և վայրագ զայրութիւնով մը .

— Անհնարի՛ն . . .

Յետոյ, նորէն ինքզինք զսպելով, աւելցուց հանդարտութեամբ .

— Աւասիկ տանուհինք տարի է որ կը կլնեմ ինձ եղած ամօթալի նախատինքը : Օ՛ն կորի՛ք . . . հիմա կը ջախջախեմ ձեզ :

Մարքիզն արբեալ մարդու մը պէս դեղեւելով կը քալէր : Դեռ այն ապշեցուցիչ տպաւորութեան ներքեւ էր, զոր Պ. Մորէրի յանկարծական երեւումը պատճառած էր իրեն : Այն ժամուն, իւր գաղափարաց վրդովին մէջ, իրականութիւնն յատկապէս կը նշմարէր : Գայթակղութիւնն անդարմանելի պիտի լինէր : կը յիշէր այն երկար ժամանակ համբերող ամուսինն, որոյ տխմարութիւնը կը հեզնէր յաճախ, եղերական զայրութիւնով կանգնած իւր դէմ : Ի՛նչ պիտի ըսեն ամեն մարդ երբօր լսեն այս երկու մարդոց մենամարտ : Ահա այս մտահոգութիւնն էր որ կը տիրէր այս սկեպկիկեան փարիզցիին վրայ : Ֆապիէն թանտուրէ թշնամանք մը կրած էր առանց համարձակելու բառ մ'արտասանել : Ո՛չ, կը խորհէր թէ ի՛նչ պիտի ըսէ ամեն մարդ : Ինք արդէն բաւական ճանչելով զաշխարհ, գիտէր որ կարծիքներն իրեն դէմ պիտի լինէին : Փարիզցիին աճապարող է . ժամանակ չունի երկար խորհրդածելու, այլ ամեն բան շտապաւ դատելով գոհ կը լինի : Ամեն մարդ գիտէր Մարքիզին և Քաթերինի յարաբերութիւնը : Յանկարծ Արտեմիսի հետ

ամուսնութեան ծանուցումը կը հրատարակուէր : Եւ այն ժամանակ որչափ ծաղրաբանութիւնք չեղան խեղճ Պ. Մորէրի վրայ : Յետոյ յանկարծ այնպիսի անհասկընալի և անբացատրելի դէպքեր ետեւէ ետեւ պատահեցան , որք ամենէն անփոյթ անձանց ուշադրութիւնը գրաւելու արժանի էին : Արտեմիս կը հիւանդանար ծանրապէս , և այրն այդ առիթէն օգուտ քաղելով ուղեւորութեան կ'երնէր : Քաթիլէրին ալ կը փախչէր վէճի դղեակէն և փարիզ կը վերադառնար , ուր նորէն բարձր ջերմեանդութեան մէջ կը սուզուէր : վերջապէս , այժմ ալ , աներոջն և փեսին մէջ այս անակնկալ մենամարտն , որոյ վրայ ամեն մարդ պիտի խօսէր , իրողութիւնները իրարու պիտի մօտեցնէին , ճշմարտանմանները պիտի համախմբէին :

Սակայն Ֆապիէն քաջ էր . բայց , ինչպէս ամեն մոլի մարդոց , անոր քով ալ կը պակսէր բարոյական արիւնթիւն : Իրական վտանգի մը դիմագրաւելու կարող , երնելիք ահադին աղմուկին առջեւ կ'ընկրկէր : Ասոր համար էր որ գլխակոր կ'ընդունէր Պ. Մորէրի թշնամանքները : Ո՛ր կողմ և դառնար , կեզժ ու երկդիմի վիճակի մէջ էր , և ցած դեր մը խաղալու պատրաստուած էր : Իւր քով Պ. Մորէր գրեթէ ձերունի կ'երեւէր : Եւ սակայն մենամարտն անխուսելի էր . եթէ հրաժարէր , իւր աներոջմէն հրապարակաւ նախատինք կրելու հարկին մէջ կ'իյնար :

Ուրեմն պէտք էր մենամարտէր : Բայց աշխարհ : Ութ օր , տասնեւհինգ օր խօսակցութեան նիւթ պիտի ընէր , և յետոյ լուէր : Փարիզ յանդուգներուն ու տնամօթներուն է : Երբոր վախնան իրմէ , առաւել կը խրոխտայ և վրայ կը յարձակի . իսկ երբոր խիզախեն , գլուխ կը ծռէ : Պ. Մորէրի գալով , դիւրաւ կրնար սպաննել զայն . բայց պէտք էր որ խնայէր , բաւական յայտնապէս , որպէս զի իւր վկայները նշմարէին և

ամեն մարդ ալ իմանար : Սուրի թեթեւ հարուածով մը կը լմննար գործը :

Նախ պէտք էր հասարակաց կարծիքը պատրաստել : Ասոր համար կ'ուզէր նախ ինք հուշակել մենամարտի լուրը , քաջ մարդու մը վստահութեամբ , որ բանէ մը չվախնար : Ֆապիէն այս դերը խաղալ միտքը դնելով , ոչ եւս վարանեցաւ : Սրճարան մը մտաւ և գաւաթ մը ջուր ուզեց . սրտին կրակէն կը խեղդուէր : Իւր գիմացն հայելի մը կար , անոր մէջ դէմքը տեսնելով զարհուրեցաւ : Բողորովին կապոյտ էր : Շրթունքը կը կծկէին ջղային ճիգով մը : Խիզախ շարժում մ'ըրաւ . ճակատը բարձր , անվեհեր , անխիղճ , պահ մը վաղանցիկ ընկճումէ մը յաղթուելէ յետոյ ուղղակի իւր ակնբանոցն ելաւ վկաներ գտնելու : Առաջին դահլիճը մտնելուն պէս՝ այնպիսի խօսք մը լսեց , որ քիչ մնաց զինքը շփոթէր :

— Օ՛ , բարեկամ , ի՞նչ ունիք այս իրիկուն :

Ֆապիէն ժպտեցաւ : Զօրեղ ձայնիւ մ'ըսաւ թէ քիչ մը ձանձրութիւն կ'զգար : Յետոյ հարցուց թէ իւր բարեկամներէն երկուքը հո՞ն էին : Եւ որովհետեւ անուանի զինաշարժներու անուն կուտար , խկոյն լուր տարածուեցաւ թէ թանտրէ մարքիզը պիտի մենամարտէր : Իւր վկայներուն խորհրդապահութիւն պատուիրած չլինելով , ամենուն խօսեցան : Յետոյ պահ մը լուութիւն տիրեց : Մենամարտ ընդ մէջ թանտրէ մարքիզին և Պ. Մորէրի՛ , ընդ մէջ աներոջն և փեսի՛ն . բնականաբար զարմանք կը պատճառէր : Եւ ամեն մարդ սկսան յոյժ հետաքրքրական բաներ փափսալ իրարու : Մինչեւ իսկ խաղացողներէն ոմանք , Պաքարայի հըրապոյրները զոհելով , ապագայ գայթակղութեան դիւցաղնը դիտել սկսան : Կայսրութեան հին պետական խորհրդական մը , որ երբէք իւր ուշադրութիւնը չէր վրիպեցնէր Ուխտէն , միտքն այս տարօրինակ

դէպքին տալով իւր ընկերին երկու առնող թուղթը կտարեց :

Կէս գիշեր չեղած լուրն ամեն կողմ հուշակուած էր : Պ. Մորէր և թանտրէ մարքիզը վաղը պիտի մե նամարտէին սրով փարիզի շրջակաները : Մեծ լրագրի մը լրատուն, որ ակումբին ներկայ էր, խենդի պէս սանդուղէն վար վազեց, որպէս զի երթայ լրագրին տպագրութիւնն արգելու և այս լուրը դնել տայ . վասն զի հարկ էր որ փարիզ առաւօտուն արթննալուն պէս այս եղերակատակ լուրն խմանար, երկդիմի խորհրդածութիւններով համեմեալ : Գալով Ֆապիէնի, քիչ քիչ իւր կորովը կը գտնէր այս ընդհանուր սրտայուզութեան մէջ : Ինքնիրեն մնացած ժամանակ կը շփոթէր . իսկ այսոց առջեւ իւր աներկեւանութիւնը կը գտնէր : Թղթախաղի սեղանի մը առջեւ նստաւ և քանի մը ժամ խաղաց : Կէս գիշերը կէս ժամ անցած, քաշուեցաւ այն սենեակներէն մին, զորս մեծ ակմբանոցներն իրենց անդամոց համար կը պահէն :

Մարդիկ իրենք իրենց տուած շինծու ձեւերն ու շարժումներն իբրեւ լուրջ նկատելու դիւրամէտ են : Այժմ Ֆապիէն քիչ մը կը ծիծաղէր իւր առջի սարսափին վրայ : Ինչո՞ւ այն աստիճան խռովի և ամեն բան կորսուած համարիլ, գայթակղութենէ վախնալով : Միթէ փարիզի մէջ ուրիշ գայթակղութիւնք չկա՞ն : Միթէ ամեն ձեռք դէպի նա չէի՞ն ձգուիր : Այս աշխարհի մէջ մարդիկ իրենց յարգն ու համարումն այն անձանց միայն կը զլանան, որք անոնց արժանի չլինելէ կը վախնան : Ուստի մինչեւ առաւօտեան ժամ ինք խաղաղ ննջեց : Իւր վկայները պարտաւորեցան զինքն արթնցնել :

Մենամարտը փարիզի շրջակաները պիտի կատարուէր, Նոժան-Սիւս-Մարն ըսուած տեղը, մասնաւորի

մը կալուածին մէջ : Կառքով մէկ ժամ կը տեւեր . ուստի ժամանակ կար : Մարքիզն և բարեկամներն ուղածնուն պէս նախաճաշ մ'ըրին, և այսպիսի արկածից վարժուած պուլվառականներու պէս հանդարտ ճանբայ ելան զուարթութեամբ, իրենց մուշտակներուն մէջ փաթթուած, ծխախոտ ի շրթունս : Ֆապիէն կ'ուզէր որ իւր մտաց կատարեալ զուարթութիւնն հասկցուի, ուստի հանճարաբան լինիլ ջանաց և յաջողեցաւ : Մէկ երկու ծիծաղաշարժ պատմութիւններ ըրաւ . և ընդհակառակն չհասկնալ ձեւացուց երբոր իւր վկայներէն մին մենամարտին բուն պատճառն իմանալու փորձ փորձեց : Պ. թանտրէ կրկնեց իւր յառաջ քշած առասպելն, այն է քաղաքական վիճարանութիւն մը : Եւ աստից օգուտ քաղելով խստիւ դատապարտեց կուսակցական օձտումներն, որք այսպէս ատելութիւն կը սերմանէին ամենէն լաւ միացեալ ընտանեաց մէջ : Վկայն խաբուիլ կեղծեց, ինչպէս առջի իրիկունն, և ուրիշ բանի վրայ խօսեցաւ, վստահ լինելով որ վաղ կամ անագան պիտի իմանար ճշմարտութիւնը : Մնաց որ, ոչ ինքն եւ ոչ ընկերները տարակոյս չունէին մենամարտին ելից վրայ . մարքիզն առաջին կարգի սուսերամարտ մ'էր :

Սակայն կառքը վէսսէնի ճանբէն կը սրանար : Մենամարտին կատարուելու տեղը բլուր մ'էր մերկ ծառերէ շրջապատեալ, Սէնի դիմացը : Առաւօտէն ի վեր պարտիզպանն յարմար տեղ մը կը պատրաստէր : Մարքիզն և իւր վկայք իրենց ճաշակին յարմար գտան զայն : Որոշեալ ժամանակէն կէս ժամ առաջ հասած էին : Ֆապիէն պարտիզին ծայրն հողաբլուրի մը կըրթընեցաւ, ուստից բովանդակ փարիզ կը տեսնուէր, ննջող առիւծի մը պէս պառկած : Հոն անշարժ կեցաւ իւր շնջրի մուշտակին մէջ, անզգայ սաստիկ ցուրտին, մինչդեռ իւր վկաները կը տաքնային պարտիզ

պանին սենեկին մէջ : Կը դիտէր այն քաղաքն ուր ծընած էր , ապրած ու մեծցած՝ զոմանս չլացնելու և զայս ապշեցնելու համար : Իւր խղճին դարձերուն միոյն մէջ , որ ամենէն չար հոգիներու իսկ ընդել է , կը ցաւէր որ իւր կեանքն այսպէս յեղաշրջեցաւ : Կը հարցնէր ինքն իրեն զարմանօք թէ արդեօք չէ՞ր մօտենար այն ժամուն , ուր մարդկեպէն արարածն իւր անցելոյն բարոյական պարտքերը կը վճարէ : Բայց այս ջղային տկարութիւնն երկար չտեւեց : Յապիէնի քով խղճմտանքը ճարտարախօս չէր :

— Բէ՛հ , մրմնաց անփոյթ շարժմամբ մը :

Նոյն միջոցին իւր վկայներէն մին եկաւ իմացնելու թէ իւր հակառակորդը կուգար : Պ. Թանտրէ անոր հետ գնաց : Իւր առաջին նայուածքն իւր աներոջ վրայ ուղղեց : Պ. Մորէր դժգոյն էր , բայց հանդարտ : Նայուածքն անողոք խստութեան երեւոյթ մ'ունէր : Վիճակ ձգուեցաւ սուրբն ու տեղերն ընտրելու համար . և երկու հակառակորդք մարտնչելու պատրաստուեցան :

Տիկին վէրնիէ չէր չափազանցեր : Փարիզ վերադառնալէն ի վեր՝ Քաթէրին նորէն ինքզինք ջերմ բարեպաշտութեան տուած էր : Յաճախ կ'աղօթէր , երբոր այլք կ'զբօսնուին՝ իրենց միտքն զբաղեցնելու համար :

Եւ ի՛նչ գեղեցիկ զբաղում իւր նանրահաւատ հոգւոյն համար : Կրօնի մէջ ապաստան մը կը գտնէր այն ձանձրոյթին դէմ , որ կը լափէր իւր միօրինակ և դատարկ կեանքն : Այ չէր կրնար սիրուիլ : Իւր հասակին մէջ հին կապակցութիւն մը կրնայ շարունակիլ , բայց նոր կապակցութիւն չկրնար կազմուիլ : Բարեկամներ չունէր , ընտանիք չունէր , իւր և աղջկանը միջեւ վիհ .

գալով Պ. Մորէրի , ոչ եւս պիտի կրնար տեսնել ապագային մէջ , ինչպէս որ չէր տեսներ անցելոյն մէջ : Անշուշտ գայթակղութիւն մը չէր կրնար տեղի ունենալ : Արտեմիս ալ իւր ամուսնէն դատուած պիտի ապրէր : Այս էր եղածն ու լինելիքը : Քաթէրին բաւական ճանչելով մարքիզը , գիտէր որ դեռատի կինն երբէք չպիտի ուզեր անպատուել իւր մայրն հրապարակաւ . և ի՛նչպէս կարելի էր հատուցում ձեռք բերել դատական ատեաններէն՝ առանց ճշմարիտն ըսելու :

Եւ որովհետեւ առանձին էր , ուրիշ միջոց չէր մընար իրեն՝ բայց միայն բարեպաշտութեան չափազանցութիւն . այսինքն այն աշխարհային ողորմութեան գործերն որոցմէ սուտ աղքատք ճշմարիտ աղքատներէն աւելի օգուտ կը քաղեն , այն երկար դեգերումներն եկեղեցեաց մէջ ժամերգութեանց ժամանակ , սպասելով խոստովանահօր գալուն : Միաբանութիւնք կան , ուր ամենէն հակընդդէմ բնութիւնք իրարու կը հանդիպին զանազան պատճառներով ոգեւորեալ : Մեծագոյն մասը խստակրօն քահանայք են , որք միշտ բարեգործութիւն ըրած են . հաւատոյ վսեմութիւնները կը մխիթարեն զանոնք կենաց տխրութիւններէն : Ոմանք , նուազ մտացի , կը կարծեն արքայութիւն երթալ ամենէն կարճ ճանքով , երբոր ջերմեռանդական գործեր ընեն : Ոմանք ալ ծայրայեղ մոլեռանդ կամ խենդ են : Վերջապէս կան ալ , ինչպէս Տիկին Մորէր , որք մարդու մը դիրկն իյնալէ յուսահատած՝ Աստուծոյ դիրկը կ'իյնան :

Բաց աստի իւր առողջութիւնն ալ , որ քիչ մը վընասուած էր վէճի դղեակն եղած ժամանակ , գինքը վախցնել կ'սկսէր : Գլխու պտոյտ , աչաց մթազնում ունէր , երբեմն ալ ուղեղին մէջ դատարկութիւն կ'ըզգար , որպէս թէ կեանքն յանկարծ կը քաշուէր իրմէ :

Մեռնելէ սաստիկ վախնալով, շարունակ իւր բժշկին կը դիմէր : Սա ալ, խորամանկ և ճարպիկ մարդ, որ միշտ վերջին նորաձեւութեամբ կը հագուէր, իւր յաճախողաց այս խօթութիւնները քիչ մ'արհամարհանօք կը նայէր : Անունը Տոբթօր Ֆրանսէն էր : Երբէք հոգ չէր ընել և յոյժ տարօրէն ու ծիծաղաշարժ պատմութիւններ կ'ընէր իւր հիւանդաց, և միշտ լաւատես էր : Կը հաւանէր, կը զննէր, կը հարցաքննէր արագապէս, յետոյ կ'ըսէր. — բան մը չէ, Ղլային տկարութիւն է : — Վերջապէս կատարեալ սկեպտիկեան մ'էր, որ բժշկութեան չէր հաւտար :

Տոբթօր Ֆրանսէն փութաց անդորրել Տիկին Մորէր, նոյն զրաբանութեամբք, զորս հիւանդ տղայքը շողքորթելու կը գործածեն. կարճ խօսելով ջրաբուժութիւն պատուիրեց : Մեկնելէ առաջ, սիրալիր և գրաւիչ ժպտով մ'ըսաւ .

— Մի՛ վախնաք, սիրելի տիկին, Ղլային տկարութիւն է :

Եւ մեկնեցաւ յոյժ գոհ ինքրմէ, — և այլոցմէ : Քաթերին քիչ մը քաջալերուելով Տոբթօր Ֆրանսէնի խօսքերէն, իւր ձանձրոյթը փարատել փորձեց վերջապէս վերապատուելի հայր Պրէմոնի դիմելով, որ յոյժ քաղցրաբարոյ, քիչ մը միսթիք, և բարեպաշտական գեղեցիկ գէմքով կրօնաւոր մ'էր, և որոյ քարոզները շատ ազդեցութիւն կ'ընէին իւր ջերմեռանդներուն : Յատուկ ընթերցուածներ պարտք կը զննէր իւր ջերմեռանդներուն վրայ, փափուկ և կակղիչ ընթերցուածներ. զանոնք կը զբօսցնէր խղճատական արարողութեամբք, որ զանոնք կ'սքանչացնէր, անոնց ձանձրոյթը կը փարատէր. գոհարեղէն զարդեր և մետաքսեղէններ կրելը կ'արդելուր անոնց. վերջապէս շաբաթն երկու անգամ իւր վանքին խօսարանը կը գումարէր զանոնք « հագեւոր խօսակցութեանց » համար :

Այս կեանք քաթերինի ձանձրոյթը թմրեցնելով՝ միտքը կ'զբաղեցնէր : Նոյն մոլութիւնն ունէր այս նոր տեսակ կենաց համար, ինչպէս որ ժամանակաւ ունէր տարփանաց համար : Այն տարփասէր անձանց պէս, որ տարիքնին առնլով բարեպաշտութեան կը դառնան, քաթերին ալ շատ լաւ չէր զանազաներ կրօնաւորը մարդէն : Դաս մը կանանց քահանայի մը վրայ ունեցած գորովանաց մէջ անխոստովանելի միսթիք և զըսպեալ իղձեր կան միշտ :

Արտեմիս շաբաթ անգամ մ'այցելութիւն կուտար իւր մօր : Ասով պարտականութիւն մը կը կատարէր և ոչ աւելի բան : Պէտք չէր որ աշխարհ կարենար ըսել թէ « Մայր ու աղջիկ զիրար չեն տեսներ : » Քաթերին ալ իւր կողմէ նոյնը կ'ընէր : Յուրտ տեսակցութիւն մը մինչեւ իսկ օտարաց առջեւ : Որչափ և կը փափաքէին երեւոյթներն ազատել, երկուքն ալ չէին ուզեր զիրենք բաժնող սառոյցէ պատն անցնիլ : Ընդհակառակն Տիկին Մորէր յոյժ լաւ կը նշմարէր որ իւր ամուսնոյն և մարքիզուհւոյն միջեւ մտերմութիւնն օր քան զօր կը մեծնար : Այս բանիս վրայ մինչեւ իսկ կատակ կ'ընէին իրեն : Արդարեւ Պ. Մորէր յաճախ իւր ուրջուին տունը կը ճաչէր, և թատրոն կը տանէր զայն : Երբէք Արտեմիսի վրայ խօսք չէր ընել քաթերինի :

Իրերն այսպէս կը շարունակէին երկու ամսէ ի վեր : Իրիկուն մը քաթերին տեսաւ որ իւր այրն յոյժ կանուխ վերադարձաւ ի տուն : Հազիւ քանի մը խօսք փոխանակեցին միմեանց հետ : Պ. Մորէր փոքր դահլիճէն անցնելով իւր խուցը քաջուեցաւ : Կէս ժամ յետոյ երկու բարեկամ եկան և անմիջապէս իւր սենեակը մուծուեցան : Պ. Մորէր այնչափ քիչ այցելութիւն կ'ընդունէր, որ քաթերին զարմացաւ : Փոքր դահլիճէն ձայներու խառնաշփոթ շուրջ մը կը լսուէր : Քա-



Թէրին՝ կարեւորութիւն չընծայեց՝ կարծելով թէ Աշխարհագրական ընկերութեան ուղղեալ յիշատակագրի մ'ընթերցման վրայ էր : Սակայն նշմարեց զարմացմամբ որ նոյն անձինք հետեւեալ առաւօտուն նորէն եկան կէս օրէն գրեթէ մէկ ժամ առաջ : Պ. Մորէր հրամայեց կառքը լծել, և երեքն ի միասին գնացին : Այս կին չպիտի գիտնար երբէք իւր չհասկցած բաներն : Ուստի զաղբեցաւ խորհելէ այս երկու միջադէպերու վրայ, վասն զի ուրիշ աւելի կարեւոր գործ ունէր ընելիք : « Հոգեւոր խօսակցութեան օր » էր : Վերապատուելի Հայր Պրէմին առաւել արժանի էր ուշադրութեան քան իւր ամուսնոյն գործերն : Աղքատախնամ քերց տուած քանի մ'այցելութիւնք իւր օրը կ'աւարտէին, իրիկունը, ժամ հինգին միջոցները տուն վերադառնալով՝ երկու փոխադրական կառք նշմարեց, որ բակին մէջ կեցած էին : Տանը մէջ անսովոր երթեւեկ մը կար : Ծառաներն յոյժ զբաղած կը թուէին, աջ ու ձախ կը դիմէին, և բռնակիրներ ծանր արկղներ կը քաշէին : Քաթէրին չէր հասկնար :

— Ի՞նչ կայ, հարցուց սպասաւորներէն միոյն, որ այս պատրաստութեանց կը հսկէր՝ վստահութեան պաշտօն ստանձնող մարդու մը լրջութեամբ :

— Չէք գիտեր թերեւս, տիկին, թէ տէրս հըրամաններ տուած է ինձ :

Ինչ կը նշանակէր այս : Արդեօք իւր այրը դիպուածով տեղափոխութիւն կ'ընէր առանց իրեն իմացընելու : Վայրկեան մը վարանեցաւ . յետոյ ուղղակի Պ. Մորէրի աշխատութեան խուցն ելաւ : Պ. Մորէր իւր թղթերու ծրարները կարգաւ կը դետեղէր մեծ սնտուկի մը մէջ : Խուցին մէջ ստուարաթուղթէ տուփեր և ուղեւորութեան գիրքեր կեցած էին, զատ տարուելու համար . վառարանին մէջ սեւորակ մխարի կոյս մը . քանի մը գոհարեղէն զարդեր խնամով իրենց

տուփերուն մէջ փակուած : Պ. Մորէր գլուխն ետին դարձուց քաթէրինի ներս մտնելուն ոտնաձայնն առնելով, թեթեւապէս ողունեց զայն և իւր գործը շարունակեց առանց բան մ'ըսելու : Քաթէրին անշարժ և մունջ կը կենար, ծանր բան մ'զգալով :

— Ուղեւորութիւն կ'ընէք, պարո՞ն, հարցուց :

— Ոչ :

— Ուրեմն բարեհաճեցէք բացատրել ինձ այս պատրաստութիւնները, զորս ես չեմ հասկնար :

Պ. Մորէր վայրկեան մը զաղբեցուց իւր աշխատութիւնն, և հանդարտ ու պաղ աչօք քաթէրինի նայելով .

— Խորհեցայ որ լաւագոյն էր իսկապէս բաժնուիլ իրարմէ . միթէ իրօք բաժնուած չե՞նք արդէն : Այս գործ նոր բան մը չպիտի իմացնէ աշխարհի, և գուցէ նախամեծար է թէ՛ ձեզ և թէ՛ ինձ համար : Տարակոյս չկայ որ Արտեմիսի համար ալ լաւ է այս : Պէտք է որ այժմ ես հսկեմ անոր վրայ . միտքս անոր մօտ բնակարան մը վարձել է : Այժմ որ նա առանձին է, նեցուկի մը պէտք ունի, արգ՝ ես անոր բնական պաշտպանն եմ մինչեւ ի նոր տնօրէնութիւն :

Քաթէրին առեղծուած մը կը տեսնէր այս խօսքերուն մէջ : Աւելի ուշադրութեամբ դիտեց իւր ամուսինը : Պ. Մորէր դժգոյն էր . անողոքելի կամք մը կը կարդացուէր անոր աչաց մէջ : Թեթեւ սարսուռ մ'ըզգաց : Սակայն կ'ուղէր գիտնալ . ուստի ձայնի թեթեւ թրթումամբ մը պատասխանեց .

— Արտեմիս . . . առանձին . . .

— Այո՞ :

— Բայց այրը պիտի վերադառնայ : Անոր և Արտեմիսի միջեւ ծագած գժտութիւնն յաւիտեան չկրնար տեւել :

Պ. Մորէր շեշտակի անոր երեսը նայեցաւ, քա

Թէրին խոնարհեցուց աչերն : Եւ սակայն բան մը չէր գիտէր տակաւին , ոչ մարքիզին վերադառնալը , ոչ ալ Մէսին փողոցի բնակարանին մէջ խաղացուած եղերերդն : Պ. Մորէր ծանրութեամբ ըսաւ . միշտ անոր երեսը նայելով .

— Թանտրէ մարքիզն երբէք չպիտի վերադառնայ . նա մեռած է :

— Մեռած :

— Ես սպաննեցի զայն այս առաւօտ մենամարտի մէջ :

Քաթէրին սարսափահար ընկրկեցաւ խուլ ճիչ մ'արձակելով : Կը հարցնէր ինքնիրեն թէ արդեօք երա՞զ կը տեսնէր թէ սոսկալի մղձաւանջի մը խաղալիկ կը լինէր : Ֆապիէն մեռած լինի՞ , սպաննուելով իւր ամուսնէ՞ն : Կանգ առաւ դողդողալով , քունքերը կարմրեցան ջերմութեամբ , հեղձման պէս բան մ'եկաւ վրան և միանգամայն սաստիկ գլխու ցաւ մը : Դողդօջ ձայնիւ մը կակաղեց . « Մեռած . . . մեռած . . . » Յետոյ ձեռքը ճակտին վրայ դրաւ՝ կարծես ցաւ մը վանելու համար : Եւ ապշած , մունջ և անշարժ մնաց ընկճեալ , և առանց մտածութեան : Պ. Մորէր ոտքի վրայ ելաւ , և նորէն խօսիլ սկսաւ անողոր պաղութեամբ .

— Դուք չէք կրնար ամբաստանել զիս թէ համբերութիւն չունեցայ : Տասնեւհինգ տարի սպասեցի ձեր տարփածուն սպաննելու համար : Անիծեա՛լ լինի այն օրն ուր ես թող տուի որ ձեր աղջիկը կնութեան առնու : Կը կարծէի որ այն խեղճ տղան կը սիրէր զայն : Ահա իմ չքմեղանքս : Չայս յաճախ կրկնելու պէտք ունիմ : Պիտի ներէի այդ մարդուն ինձ ըրած չարիքը : Թող իւր կինն երջանիկ ընէր , և ես կը մոռնայի կրած նախատինքս : Ի՞նչ փոյթս էր այսօր՝ ժամանակաւ կրած ֆրասս : Յաւը կամ կսկիծն յաւիտեան տեւող ունակութիւն մը չէ . . . :

Քաթէրին հազիւ կը լսէր . . . : Տակաւին երկու անգամ կրկնեց .

— Մեռած , մեռած :

— Այս կապացուցանէ թէ ամեն հասակի մէջ պատիր յոյսեր կրնայ ունենալ մարդ : Կը մոռնայի ձեր երկուքին քիչ արժէք ունենալը : Այլ մի վախնար , ես բարկութիւն իսկ չունիմ , այլ միայն զղուանք , արհաւմարհանք , որ ատելութեան հանգիստն է : Դուք ինձ համար հիւանդ մ'էք , խելագար մ'էք , յորմէ հեռի կենալ պէտք է : Այս պատճառաւ կը մեկնիմ : Այժմ կրնաք դուրս ելնել : Ես լմնցուցի ըսելիքս :

Ամուսնոյն զարհուրելի հանդարտութիւնն՝ առաւել սարսափելի էր քան կատաղի բարկութիւն մը որ ամեն բան կը խորտակէ : Պ. Մորէր ամեն բանի տեղեակ էր . գիտէր որ իւր կին նորոգած էր իւր ամօթալի տարփանքներն , և ասոր համար էր որ Ֆապիէն սպաննուած էր : Քաթէրին բնաւ չպատասխանեց : Կամաց զսպանակը կը թուլնար : Գաղափարներ խառն ի խուռն կը խոռնէին այս կնոջ վրդովեալ ուղեղին մէջ : Երբոր իւր սենեակը դարձաւ , խորին պարտասում մ'զգաց . կը թուէր իրեն թէ հեռի էր իւր տունէն , հեռի էր Փարիզէն , լքեալ և տխուր առանձնութեան մը մէջ : Ոչ ոք կար իւր քով : Իւր գլխու պտոյտները կը նորոգուէին , բարոյական ցաւեր իսկ չէր զգար : Ֆապիէնի մահը զղային ազդեցութիւն մը միայն կ'ընէր իրեն , ինչպէս այն հիւանդներուն որք ոչ եւս բան մը կ'զգան : Իւր սիրտը կ'անդամալուծէր :

Դուրսը , գիշերուան մութը կոխած էր փողոցին մէջ , և խորհրդածութեան ստուերներն յամբաբար կը պատէին այս կնոջ ուղեղը : Կծու ցուրտ մը տիրել կ'սկսէր իւր վրայ : Մեծ կրակ մը վառել տուաւ , և զիմացը կանգնեցաւ իւր դէմքն ու մարմինը կիզելով վառարանին բուռն բոցէն : Իւր բոլոր անցեալ յիշա-

տակներովն ապրիլ կ'սկսէր : Ինքզինք դեռատի աղջիկ կը տեսնէր մինչ ֆօա կը բնակէր . իւր առաջին այրը կը վերատեսնէր , այն այրն , որոյ խորհրդաւոր մահն առեղծուած մնացած էր ամենուն համար . յետոյ կը տեսնէր իւր տարփաւորներն որք միմեանց կը յաջորդէին իւր այրիութեան միջոցին , ժամանակէն ջնջուած դէմքեր , իւր սրտին հիւրերն , որք իւր հասարակ պանդոկի նման կեանքէն անցան դնացին : Վերջապէս իւր երկրորդ ամուսնութիւնն և անկարգ կեանքը , մինչեւ այն օրն ուր Թանտրէ մարքիզին հանդիպեցաւ : Որչափ սիրած էր զայն : Միտքը կը բերէր այն կապակցութեան ամենէն չնչին պարագաներն : Եւ ահա այժմ նա ալ կ'անհետանար միւսներուն պէս : Ահա նա ալ մեռած էր : Եւ այն մարմինը զոր երբեմն իւր համբոյրներով կը տաքցնէր , այժմ մահուան համբոյրներով կը սառէր : Ինք ալ սաստիկ պաղ կ'զգար իւր վրայ : Վառարանին տաքը կը սահէր կ'անցնէր իւր վերայէն առանց աղդելու : Զանգակը քաշելով սենեկապանուհին կոչեց , որպէս զի լոյս բերէ : Բայց երբոր կանդեղը վառեցաւ , ֆաթէրին ճիւ մ'արձակեց . կը թուէր իրեն թէ կանդեղին լոյսն իւր աչաց մէջ կը մտնէր և տեսութիւնը կը խանձէր . յամբ տենդ մը կը մաշէր զինք : Գնաց ննջել , և երբ անկողնին մէջ տարածուեցաւ , իւր բարոյական անհանգստութիւնն աւելցաւ : Մեքենաբար կը դիտէր աղօտալառ կանդեղին դողդոջ լուսոյն ցոլացումը վարագոյրներուն վրայ : Յետոյ իւր գաղափարները մոլորեցան , և տեսակ մը զառանցանք գրաւեց իւր տկար և դրդուեալ ուղեղը : Կ'երեւակայէր թէ իւր վաղեմի տարփածուաց ստուերները դէպ ինքն ծռելով կ'անիծէին զինքն : Անձկութիւն մը կը ճնշէր զինքը : Եւ այն ստուերները կը խօսէին իրեն հետ , զինքը կը սեղմէին և իրենց պաղ շրթունքն իւր բոցալառ շրթանց կը կպցնէին :

— Վերադարձու ինձ այն անբնական քաղցր յոսերս , զորս գողցար ինձմէ , կ'ըսէր մին , և իմ առբարին ունեցած հաւատքս և առ իդէականն ունեցած թռիչներս : Քեզ չճանչած , բարի և անկեղծ երիտասարդ մ'էի , դու իմ սիրտս դատարկեցիր և խըղձ մըտանքս իսպառ վրդովեցիր :

— Վերադարձու ինձ այն ուժերս , զոր ձեր համբոյրներն յափշտակեցին ինձմէ , և իմիններուս գորովանքն որք հեռացան ինձմէ , կ'ըսէր միւսը : Անպատի խորշակին պէս կենացս վրայէն անցար և չորցուցիր :

Հէք ֆաթէրին պարզապէս այն վիճակին մէջ էր , որ բժշկութեան մէջ « Հոգւոյ դանդաչմունք » կը կոչուի : Մերթ ընդ մերթ ծանր թմրութիւն մը կուգար վրան , յետոյ աչերը բանալով կը շարունակէր , զարթուցեալ վիճակի մէջ , իւր կարճ քունին երազները : Վերջապէս Ֆապիէնի դէմքն երեւցաւ իրեն , բայց երկու կերպարանքով , մերթ կենաց բոլոր գորութեան մէջ , մերթ ալ դժգոյն , կապոյտ , ծիւրեալ և մահուամբ թարշամեալ : Այս անգամ անուրջն այն աստիճան զարհուրեցուց զինքն , որ անկողնին ծայրը փախաւ որ չը տեսնէ . բայց տեսիլը կը շարունակէր յառաջանալ դէպ առ նա մնջիկ , տմոյն ժպիտ մ'ի շրթունս , այն անշարժ և պաղ ժպիտն որ ոչինչ ունի մարդկային : Քաթէրին մահացու պաղ մ'զգաց իւր երակներուն մէջ . ատամուքը կը ճտեցան : Եւ այն ժամանակ ոչ թէ դանդաչանք՝ այլ շարունակեալ անկապակից զառանցանք մը տիրեց վրան , ուր զուարթ գաղափարք տխուր մտածութեանց կը բախէին . . . : Արշալուսին , երբոր ֆարիդ կ'արթննար , անդիմադրելի քունէ մ'ընկճեցաւ , այն անհանդիստ քունէն , որ ջիղերն՝ առանց հանդարտելու՝ առաւել կը տկարացնէ : Այնպէս մնաց օրն ի բուն և գիշերուան մէկ մասն : Երբորդ օրը միայն սենեկապանուհին բժիշկը բերել տուաւ : Տոբթոր Փը-

րանժէն գլուխն երերցուց, եղունգներուն նայեցաւ, և ըսաւ խպտելով.

— Ձղային գրգռում:

Քաթէրին կ'սկսէր իւր կենաց քաւութիւնը. երկար ժամեր միայնութեան մէջ պիտի մնար, առանց գորովոյ իւր շուրջն, առանց ազգականներու, առանց բարեկամներու: Վշտակիր էակաց համար թերեւս աւելի լաւ է երեսի վրայ մնալ քան թէ վարձկան խնամոց մեղրալիր մխիթարութիւններէ շրջապատիլ:

Փարիզ զարհուրեցաւ նախ՝ երբոր մարքիզին մահը լսեց: Պապիէնի բազմութիւ բարեկամները չէին կըրնար վարժուիլ այն գաղափարին թէ Պ. Մորէր հաճոյակատար ամուսին մը չէր: Աստուած պահէ ժողովրդական վէպերու դպչելէ: Անոնք Մողոլաց մեծ լամային (քրմապետ) չափ նուիրական են: Ինչ կը լինէր աշխարհի վիճակն, Աստուած իմ, եթէ այրերն իրենց կնոջ տարփածուններէն տասնեւ հինգ տարի յետոյ վրէժ առնուն: Այ բնաւ ապահովութիւն չմնար: Եթէ երեք շահ չեն բաւեր վաւերացնելու ապօրէն կապակցութիւն մը. հասարակաց բարոյականն յոյժ հիւանդ է: Բնականաբար տասն տեսակ մեկնութիւն տրուեցաւ:

Փարիզ սքանչելի երեւակայութեամբ օժտեալ քաղաք մ'է: Հաւկիթը քսան եւ չորս ժամու մէջ կով կ'ընէ, առանց հաշուելու երկրորդական մեկնութիւնները, մէկմէկու վրայ պատուաստեալ մեկնութիւններն և ասոնցմով թունաւորեալ պատմութիւնները. Տիկին վէրնիէի ունեցած պատմութիւնը քիչ մը կը նմանէր տիկին Ռէբի պատմութեան, բայց Տիկին Ռոչէզ միայն ունէր չհրատարակուած մանրամասնու-

թիւններ: Ինչէն յառաջ եկած էր այս անակնկալ մենամարտն, ինչ պատճառաւ, ինչ առթիւ, և այլն և այլն:

Միակ ստոյգ բան՝ մենամարտին պատմութիւնն էր, վկայից ամենաճիշդ և ամենապարզ տեղեկագրին շնորհիւ: Պ. Մորէր և Թանտրէ մարքիզ սրով կուռեր էին, երեք անգամ: Երրորդ անգամուն մարքիզը սրտէն վիրաւորուեր էր ի մահ: Այս է ահա ճիշդ եղելութիւնը:

Պ. Մորէր, իւր տունը վերադառնալէ և տեղափոխութեան ձեռնարկելէ առաջ, որ այնչափ պիտի զարհուրեցնէր զՔաթէրին, Մէսինի փողոցը դնացեր էր: Հոն առանց ճարտասանական ձեւերու և առանց կեղծաւորական ծպտմանց՝ ճշմարտութիւնն իմացուցեր էր Արտեմիս: Անկեղծ էակները խղճի միամտութիւններ ունին: Փոխանակ իսկոյն ուրախանալու այս սարսափելի իրողութեան վրայ որ երկուքն ալ կ'ազատէր, Արտեմիս և Մաքսիմիլիէն ցաւ յայտնեցին թշուառականին վրայ: Յետոյ իրենց ուրախութեան անձնատուր եղան: Այլ ազատ էին: Տարի մը պիտի սպասէին և այնուհետեւ յայտնի համարձակ իրարու էին, առանց բնաւ վախնալու չարախօսութիւններէ կամ ծածկեալ նախանձութիւններէ: Միւս կողմէ երեքն ալ զուրսի կարծիքներուն կարեւորութիւն տուող չէին: Պ. Մորէր հրապարակաւ բաժնուելով իւր կնոջմէն, Արտեմիս և Մաքսիմիլիէն ալ առաջուան պէս համարձակ իրար տեսնելով:

Բարեբաղդաբար իւր արտաքին թեթեւութեան հակառակ, աշխարհ ուղղութեան խոր զգացում մը ունի: Մարդ չէր գիտեր մենամարտին ճշմարիտ պատճառները, բայց ոչ ոք ծուռ նայեցաւ Պ. Մորէրի: Երկու դեռատիներուն ապագայ ամուսնութիւնը ծանուցուած չէր, բայց ոչ ոք կ'երկրայէր թէ սգոյ պայմա-

նաժամէն յետոյ պիտի կնքուէր : Եւ այս երեք էակաց կեանքը վերսկսաւ երջանիկ , հանդարտ և յուսով ոսկեղօծեալ : Մարքիզուհին (Արտեմիս) քիչ դուրս կ'ելնէր : Ո՞վ պիտի զարմանար ասոր : Բայց Մարքիմիլիէն ամեն իրիկուն անոր հետ ժամանակ կ'անցունէր : Պ. Մորէր սովորաբար ժամը տասնին միջոցները (կէս քիչերէն երկու ժամ առաջ) կը մեկնէր անոնցմէ , քաջ զգալով որ այնպիսի բաներ ունէին միմեանց ըսելու , զոր մտերմական թուութեան մէջ միայն կրնային մրմնջել : Եւ այն ժամանակ Մարքիմիլիէն ծունդի վրայ դալով , Արտեմիսի ձեռքէն կը բռնէր , և գորովալից քաղցրութեամբ .

— Արեմն վերջացա՞ն դժուարութիւններն ու վիշտերն : Իրարու պիտի լինինք . ոչինչ պիտի կրնայ մեզ բաժնել այսուհետեւ . երջանկութիւնը մշտնջենապէս խոստացուած է մեզ :

— Ո՞վ կրնար ըսել մեզ երբեմն թէ մեր անձկութիւնները վերջ մը պիտի ունենային , և թէ մեր սէրը պիտի ծաղկէր ամենուն առջեւ : Աստուած ուրախութեան երկար կեանք մը կուտայ մեզ :

Եւ երկու կողմէ այսպիսի քաղցր խօսքեր կը փոխանակուէին խաղաղ դորովանաց յատուկ եղող այն զուարթութեամբ , որ մտրդոցմէ երկիւղ և վաղիւէն ալ բնաւ կասկած չունի : Արտեմիս ոչ եւս ժամ մը կ'ապրէր առանց իւր նշանածը տեսնելու , առանց անոր վրայ զբաղելու կամ անոր վրայ խօսելու : Երբոր Մարքիմիլիէն հոն չէր , ժէմմա հոն էր , որ միշտ Արտեմիսի հետ կը կենար , և որոյ միամիտ պատմութիւնները կ'ըմայլեցնէին զայն : Գրեթէ քսաներորդ անգամ կը պատմէր Մարքիմիլիէնի վարած կեանքն անապատին մէջ , ըրած կռիւններն ու քաջասրտութիւնը . . . :

Երբոր Մարքիմիլիէն Արտեմիսի հետ լինէր , ապա-

զային համար ծրագրեր կը յօրինէին : Չմեռը Նարպի կամ Բալէրմոյ պիտի երթային՝ եթէ Մարքիմիլիէն իւր փառաւոր ուղեւորութիւնները վերսկսի չուզէր : Ինչո՞ւ հրաժարէր գիւտեր ընելէ : Արտեմիս ալ կրնար ընկերակցիլ անոր հնար եղածին չափ հեռու տեղ , թէև հարկ լինէր սպասել զայն Պլոթէրիի խորերը , մինչդեռ Մարքիմիլիէն Ուփրիկէի անձամբ կողմերը դիմէր : Իսկ առաւել վէճի դղեակը պիտի բնակէին ուր սիրած էին զիրար : Եւ իրենց ապագայ ծրագիրը գգուած ժամանակ՝ իրենց ձեռքերն ալ աւելի ուժով կը սեղմէին զիրար :

Տարօրէն բա՛ն . իրենց ցանկութիւնն , առաջուանին չափ ջերմ , նուազ ստիպողական կը լինէր : Պատճառն այս էր որ այժմ վստահութիւն ունէին իրենց բաղձանաց հասնելու : Բնաւ արգելք մը չէր կանգներ իրենց միջեւ . ոչ ինչ կրնար իրենց երջանկութիւնը խանգարել : Կը նմանէին այն էակաց , որք կը սիրեն զիրար , իրարու կը ցանկան , բայց , առանց խոստովանելու կը յապաղեն միմեանց տէր լինելու ժամը : Սպասուած հեշտութիւնք այնպիսի խստութիւն մ'ունին , զոր ճաշակուած հեշտութիւնք ոչ եւս կ'ունենան : Ասկէց զատ կ'ուզէին որ իրենց սէրը կնքուի (գագում) մարութիւնը պահէ : Ինչո՞ւ համար կիսով ճաշակել այն հեշտութիւնները , զոր քիչ ժամանակէն լիովին պիտի վայելէին :

Ասկէց զատ , աշխարհային դաշինք զգուշութիւններ պարտք կը գնէին իրենց վրայ . կ'ուզէին յարգել զանոնք : Իրենց ժամագրութիւնները կէս մտերմութիւնք միայն կրնային լինիլ : Արտեմիսի տան մէջ ծառաներուն հետաքրքիր աչերէն պիտի վախնային . և նողկանք կ'դրային երբոր մտածէին թէ իրենց խորխոր դորովանքը պիտի պղծուէր ծառաներու խօսքերով : Իսկ Մարքիմիլիէնի տան մէջ , հաւուն ներկայութիւնը

նեղիչ խոհեմութիւն մը պարտք կը դնէր անոր վրայ : Այն ժամանակ պիտի հարկադրէին այն տարփաւորաց ընթացքը բռնել , գորս կենաց արկածները կը բաժնեն իրարմէ : Պէտք պիտի լինէր փոքրիկ յարկ մը կահաւորել հեռաւոր և մեկուսի թաղի մը մէջ , և առանձնակի հոն երթալով զիրար տեսնել ծածկաբար : Ըսել է քանի մը ժամու հեշտութիւն , որպէս զի իրենց շուրջը չգտնուին իրենց քաղցր մտերմութեանց համր վկայներ : Արդ , իրենք , որ քիչ ժամանակէն ամուսին պիտի լինէին , իրենք որ իրենց սիրոյ հանդուրանները պիտի ընտրէին , յանձն կ'առնուի՞ն անոր հեշտալի յիշատակները գանել հասարակ խցիկի մը որմերուն միջեւ : Այն ժամանակ ի՞նչպէս կրնային անոր յիշատակը միշտ կենդանի գտնել իրենց մօտ :

Այս բաներուն վրայ բնաւ չէին խօսեր իրարու հետ . առանց խօսելու կը հասկնային զիրար և համամիտ էին : Նրբամիտ բնաւորութիւնք այս ազնիւ բանն ունին որ մէկ նայուած քով իրենց մտքին խորհուրդը կը հաղորդեն իրարու : Մտուդիւ շատ պիտի պարմացնէին զՏիկին Վէրնիէ կամ Տիկին Ռէբ և կամ Տիկին Ռոշէզ՝ ճշմարտութիւնը խոստովանելով անոնց : Ամենն ալ կը կարծէին թէ Մաքսիմիլիէն երկար ժամանակէ ի վեր Արտեմիսի տարփաւորն էր : Հանրիէթ բնականաբար չէր քաշուեր այդ բանն ամեն տեղ հռչակելէ . իւր զայրոյթն իջած չէր . բայց իւր վրէժխնդրութիւնն հակառակ արդիւնք կ'արտադրէր : Փոխանակ հեռացընելու՝ առաւել եւս իրարու կը մօտեցնէր երկու դեռահասակները :

Հանրիէթի խօսքին նայելով , Մաքսիմիլիէն ամուսնութեան չպիտի առնուր մարքիզուհին : Թէ կնոջ մը հետ այն ժամանակ միայն կ'ամուսնանան , երբոր զայն ձեռք անցունելու համար ամուսնութենէ զատ ուրիշ միջոց չկենայ : Իսկ երբոր մէկն այն կնոջ տարփա-

ծուն եղած է , ինչո՞ւ ամուսնանայ անոր հետ : Ասկէ զատ Արտեմիս այնչափ պարզամիտ չէ որ իւր ազատութիւնը վաճառէ : Այս միջոցիս կը սիրէր զՄաքսիմիլիէն . բայց ասկէց վեց ամիս կամ տարի մը ետքն ալ պիտի սիրէ՞ր : Ինք զԱրտեմիս երկար ժամանակէ ի վեր ճանչելով՝ յոյժ լաւ կրնար դատել զայն : Ասով ինք ո՛չ թէ բամբասել կուղէր զայն , այլ միայն հասկցնել կուղէր թէ մարդ ամեն բանէ կը ճանձրանայ : Ճըշմարիտ չէ՞ այս : Ասոնք ըսելէ յետոյ Հանրիէթ գթաւ լիւր եղանակ մը կուտար իւր ճայնին թանտրէ մարքիզին վրայ խօսելու համար , « խեղճ Ֆապիէն » կոչելով զայն , ինքն՝ որ անոր մահուան առաջին պատճառն էր : Ինքզինք կը չքմեղացնէր : Ստոյգ է որ Ֆապիէն ֆաթերինի տարփածուն եղած էր : Է՛հ , թող անմեղն առաջին քարը նետէ : Բայց ո՞րչափ մեղապարտ է Արտեմիս , որ անհաւատալի նենգաժետութիւն մ'ի գործ կը դնէր :

Ասոնք լսողները բնականաբար կը զարմանային , բայց չէին ուղեր հաւատալ . իսկ Հանրիէթ , ծանր դէմքով մը կը հաստատէր թէ ապացոյցներ ունէր ի ձեռին , բայց իւր ծանուցեալ խորհրդապահութեամբ . . . : Կ'ստիպէին զինքը , կը պնդէին , այն ժամանակ , պատշաճ ընդդիմութենէ մը յետոյ , Հանրիէթ վերջապէս կը դրժէր իւր ծանուցեալ խորհրդապահութեան : Թուականներ կը յիշէր , մին շեշտելով , միւսն ստորագծելով : Վանքէն ելած ժամանակ , Արտեմիս՝ մարքիզն առաջին անգամ տեսնելուն՝ սիրահարեր էր անոր , և ուղղակի մօրը դիմելով՝ ստիպեր էր որ իրեն թողու զայն : Տիկին Ռոշէզ (Հանրիէթ) մինչեւ իսկ մեծ կուլ մը կ'երեւակայէր մօրն ու աղջկան միջեւ . և ամուսնութիւնը կը կնքուէր : Յետոյ մարքիզուհին (Արտեմիս) Մաքսիմիլիէնի կը սիրահարէր նոյնչափ դիւրութեամբ , որով երբեմն սիրահարած էր Ֆապիէնի :

Անշուշտ այս փոքրիկ վիպասանութիւնը չէր կրնար կանգուն կենալ . քիչ մը մօտէն քննուածին պէս, անտեղութիւնը կը տեսնուէր : Զրպարտութիւնը սա աղէկութիւնն ունի, որ ոչ ստուգութեան պէտք ունի, ոչ տրամախոհութեան . միշտ կը հաստատէ և երբէք չապացուցանէր : Հանրիէթի փոյթը չէր որ հաւատային իրեն . բաւական էր իրեն որ լսողներն հաւատալ ձեւ լաղնէին . տասն հոգւոյ մէջ գոնէ չորս ապուշ կրնար գտնել . արդ՝ ապուշները դիւրաւ կը համոզուին, և իւր ալ ուզածն այս էր : Վերջապէս իւր փոքրիկ ճառախօսութիւնը կ'ուարտէր յայտնելով թէ այս ամուսնութիւն չպիտի կատարուէր :

Արտեմիս բնաւ հոգ չէր ընէր այս ամենը : Նա կատարեալ երջանկութեան մէջ կ'ապրէր :

— Ես յոյժ երջանիկ եմ, կ'ըսէր օր մը Տիկին Քէրսէնի . այս չկրնար տեսել :

— Ինչո՞ւ համար :

— Գիտե՞մ ես :

— Բանաւոր չէ այդ ըսածդ :

— Այս առաւօտէն ի վեր շիղերս ոտք ելած են . ամենափոքր ձայն մը լսելուս՝ վեր կը ցատկեմ : Եւ սակայն վշտակրութեան պարտքս լիովին հատուցած եմ . ինձմէ պահանջելիք բան մը չունի այլ ես :

— Մաքսիմիլիէն ուշացաւ այսօր, և ասոր համար է որ անհանգիստ ես, պատասխանեց Աննա-Մարի (Տիկին Քէրսէն) ժպտելով :

— Զարամիտ . ոչ, ուշացած չէ . երէկ իմացուց ինձ թէ սովորականէն քիչ մ'ուշ պիտի գայ : Իւր հաւուն հետ պիտի գայ ճաշելու : Ասկէց զատ, ըսաւ ձայնը քիչ մը ցածցնելով, մայրս զիս տեսնելու պիտի գայ այսօր, և Մաքսիմիլիէն չուզեր անոր հետ գտնուիլ :

Քաթերին իմացուցած էր իւր տալիք այցը : Ժամանակէ մ'ի վեր Արտեմիս սիրով վարուիլ կը ջանար

անոր հետ : Աննա-Մարի յոյժ փոխուած գտաւ զայն : Գեղանին Քաթերին խուզ, ինչպէս կը կոչէին զայն երբեմն, իւր ստուերը միայն մնացած էր : Դէմքը մեղրամամի գոյն ունէր, շրթունքը՝ գունաթափ՝ առաւել նուրբ կը թուէին :

— Կը թողում քեզ, ըսաւ Տիկին Քէրսէն ոտքի վրայ ելնելով և ողջունելով զՏիկին Մորէր :

Որովհետեւ առաւօտէն ծանուցած էր իւր այցն, ըսել էր որ անշուշտ առանձնակի տեսակցիլ կ'ուզէր մարքիզուհւոյն հետ : Բարեպաշտական գործի մը համար էր, որուն Տիկին Մորէր կը փափաքէր որ իւր աղջիկն ալ մասնակցէր : Նոր մատուռ մը պիտի շինուէր : Բոլոր բարեպաշտուհի տիկնայք ոգեւորուած էին այդ գործին համար . մէջերնին բուն և հաղիւ ծածկուած նախանձութիւն մը կար միմեանց դէմ : Ամենն ալ մեծազումար դրամ և թանկագին ընծաներ բերել կ'երազէին : Մէջերնէն մին միայն հարիւր հազար ֆրանք կուտար, և յայտնապէս ատելի էր ամենուն, զի քրիստոնէութեան դարձած հրէուհի մ'էր : Դայթակղական, յոյժ գայթակղական կը գտնէին որ այդ նորադարձն այդպէս ընկճէր կաթոլիկ ծնեալ խեղճ տիկնայքն :

Արտեմիս իւր նուէրն յանձնած էր Քաթերինի, երբոր Մաքսիմիլիէն ներս մտաւ իւր հաւուն հետ : Օրն իրիկուն եղած էր . փոքր դահլիճը կէս մթնցած էր . հաղիւ նստողներուն դէմքերը կրնային որոշուիլ : Մընչու այն օրը Պ. Տանկլար և Տիկին Մորէր տեսած չէին զիրար : Թրէբորի մէջ ծերունին յոյժ քաջուած կ'ապրէր, և շատ դուրս չէր ելնէր իւր սենեակէն : Ասկէց զատ, Քաթերին հոշակաւոր նախաճաշին իրիկունը միայն հասած էր վէռի դղեակը : Հաղիւ նուրբկները քանի մը քաղաքավարական խօսքեր փոխանակեցին երկու կանանց հետ, սպասաւորը ներս բե-

բաւ կանգեղներն, որք պայծառ լոյս մը ծաւալեցին  
 դահլճին մէջ : Տիկին Մորէր ոտքի վրայ ելած էր,  
 դուրս ելնելու պատրաստուած, երեսին քողը վեր ա-  
 ռած . Պ. Տանկլար տեսաւ զայն : Իսկոյն ծերունին  
 դժգունեցաւ, և աչերուն մէջ հուր վայլեցաւ : Քանի  
 մը վայրկեան անոր երեսը նայեցաւ ուշադրութեամբ :  
 Քաթէրին կարծես թէ անցեալէն այլանդակ յիշատա-  
 կութիւն մը կը գուշակէր իրեն համար : Ծերունին  
 ձեռքը դէպ անոր երկնցուց, խեղդուկ ձայնիւ մը կա-  
 կաղելով .

— Այդ կի՛ն . . . այդ կի՛ն . . .

Եւ անշարժ կը կենար նոյն տեղը, աչքն անթարթ,  
 թեւերը միշտ երկնցուցած, և ձեռքը ջղային շարժ-  
 մամբ ցնցելով : Քաթէրին ալ ճանչեր էր զայն, և սար-  
 սափահար ընկրկիլ սկսեր էր . մարմինը կը դողար,  
 չրթունքը կը կապուտնային : Վերջապէս սարսափն ա-  
 ւելի մեծցաւ, և դէպի դուռը դիմեց որպէս զի փախ-  
 չի : Բայց ծերունին տնկուեցաւ անոր առջեւ, և ուժ-  
 գնութեամբ թեւէն բռնելով .

— Ի՛նչ բան ունիք դուք հոս : Որո՞ն ուրախու-  
 թիւնը քանդելու եկած էք : Եւ ես վերստին կը դըռ-  
 նեմ՝ ձեզ քսանուերկու տարուոյ մոռացումէ մը յետոյ,  
 Դուք մաշեցուցիք իմ՝ կեանքս, մաղերս ճերմկուցիք  
 երիտասարդ հասակիս մէջ և յոյսերս ոչնչացուցիք :  
 Կրն՝ մ'է սա՛ : Եւ երբոր մէկն այս օրինակ ճիւղի մը  
 պատահի, չկրնար ջախջախել զայն ինչպէս որ կը ջախ-  
 ջախէ իւր ճանբուն վրայ տեսած իժ մը :

Այս անսարան այն աստիճան անակնկալ, այն աս-  
 տիճան բուռն եղած էր որ Արտեմիս և Մաքսիմիլիէն  
 կը հարցնէին իրարու թէ երա՞զ կը տեսնէին արդեօք,  
 թէ Պ. Տանկլար կը զառանցէր : Ի՛նչ յարաբերու-  
 թիւն կար Տիկին Մորէրի և անոր միջեւ : Ո՛ւր ճանչած  
 էր զայն : Արդեօք անտեղի սխալ մը չէ՞ր ըրածը :

Բայց ո՛չ բաւական էր Քաթէրինի երեսը նայիլ որ դաւ-  
 կահար գոյն մ'առած էր : Ծերունւոյն բուռն ձեռքէն  
 ազատած՝ ետ ետ գնաց մինչեւ պատն, ուր փակած  
 մնաց աննկարագրելի զարհուրանաց հարուածի ներքեւ :

Սակայն խորհրդածութիւնն իւր գործը կը կատա-  
 ըէր Պ. Տանկլարի գլխուն մէջ : Դողդո՞ղ ձեռք մ'ան-  
 ցուց ճակտին վրայէն . յետոյ դարձաւ առ Արտեմիս,  
 աչերը խանդաղատեցան գորովով, և անհուն գուժ մը  
 տիրեց վրան :

— Ձեր մայրը . . . ձեր մայրն է դա՛ . . . միմուսց-  
 Պէտք է սակայն որ խօսիմ . պէտք է որ Մաքսիմիլիէն  
 գիտնայ . . . չեմ կրնար լուել, ոչ, չեմ կրնար :

Քաթէրին տկար հեծութիւն մ'արձակեց : Ալ չէր  
 կրնար ոտքի վրայ կենալ . հազիւ ուժ ունեցաւ դէպի  
 դուռը քիչ մը յառաջանալու : Տակաւին կը յուսար  
 այս սոսկալի տեսարանէն խուսափել, կը յուսար մա-  
 նաւանդ հեռանալ յաղթահասակ խստահայեաց և անու-  
 զոր ծերունւոյն առջեւէն, որ իւր առջեւ կանգուն կը  
 կենար իբրեւ արդարութեան կենդանի արձան : Բայց  
 նա հոն էր, զինքը կը հարկադրէր կենալու, աղջկանն  
 առջեւ պատժուելու, դառնութեան բաժակը մինչեւ  
 ցմբուր քամելու : Պ. Տանկլար այժմ իւր թոռան երե-  
 սը կը դիտէր :

— Միտ դիր, Մաքսիմիլիէն, որպէս զի իմանաս  
 ինչ որ մինչեւ ցարդ ծածկեցի : Երբեմն հարցուցած  
 էիր ինձ թէ ինչո՞ւ համար քեզ ինձ որդի ըրած էի,  
 ես, քու հաւդ, մօրդ հայրը : Պատասխանեցի քեզ թէ  
 ես միակ կենդանի ազգականդ էի, և թէ կ'ուզէի  
 կապ մ'աւելի դնել մեր մէջ, այն է մի և նոյն անուան  
 հզօր համերաշխութիւնը : Արդ՝ ես սուտ կը խօսէի,  
 քեզ ինձ զաւակ ընդունեցի որովհետեւ չէի ուզեր որ  
 քու հօրդ անունը կրես :

— Աստուած իմ, գոչեց Մաքսիմիլիէն :



— Մի ամբաստաններ զայն, ըսաւ ծերունին խորխտարար : Աղջկանս այրն ազնիւ սիրտ մ'աւ քաջ զօրական մ'էր : Հարցու այսօրուան զօրավարներէն մի քունիին թէ ինչպէս մարդ էր Սորպիէ հարկւրապետը : Կը պատասխանեն քեզ թէ անոր կեանքը մաքուր էր իւր սրոյն պէս : Մէկ սխալ մը գործեց, այն է երկրորդ ամուսնութեամբ կնութեան առնուլ սա' կինը : Այն անունը, զոր մայրդ սրբութեամբ կրած էր, թշուառականի մը տուաւ, որ պիտի անպատուէր զայն :

Այս եղբերդին չորս դերասաններն հակընդդէմ զգացմամբ կը յուզուէին : Արտեմիս և Մաքսիմիլիէն մանաւանդ սարսափախառն ապշութիւն մը կը կրէին : Տարտամ կերպիւ կ'զգային թէ զիբենք միացնող կապերէն մին մէկէն ի մէկ խզուեցաւ : Իսկ Քաթերին կորագլուխ կը դողար Պ. Տանկլարի առջեւ, որ խրոխտ և անողորբելի էր արդարութեան պէս :

— Հինգ տարեկան էիր դու, Մաքսիմիլիէն, շարունակեց ծերունին : Հայրդ Ծօա կը բնակէր : Օր մը գրեց ինձ ի Պրըթայն, և վերստին ամուսնանալու հըրաման խնդրեց : Աշխարհի մէջ վտանգաւոր արտարածներ կան : Հայրդ տեսեր էր այս կին, որ այն ժամանակ «Գեղանին Քաթերին Ժուլ» կը կոչուէր : Այն անխորհուրդ ցանկութեամբ բռնկեր էր որ սիրտը կը տոչորէ և ուզեղը կը հրդեհէ : Մոռցայ, Աստուած ներէ ինձ, զակիս յիշատակն. և միայն քեզ մտածեցի : Արդեօք դաժան և չար մօրո՞ւ մը պիտի ելնէր դէմդ : Ծօա գնացի, հարցուցի, տեղեկացայ : Ոչ ոք դէշ կը խօսէր անոր վրայ. միայն թէ քիչ մը պըրատէր էր և տարօրէն վարք մ'ունէր : Բայց կ'երեւի թէ ներողամիտ պէտք էր լինիլ այդ դրսեցի աղջկանց համար : Զերմ սէր ցոյց կուտար հօրդ վրայ. իսկ նա, տարաբան զբն, յիմարարար կը սիրէր զսա : Մնաց որ, աղքատ, իւր լսիլը գեղեցկութիւնը միայն ունենալով

օժիտ, շքասիրութեան վարժուած, ամուսնութիւն կ'երազէր որպէս զի ազատ լինի :

Պ. Տանկլար լռեց վայրկեան մը : Աչերը կը փակէր որպէս զի անհետացեալ օրերուն եղբերքն իւր յիշուութեան առջեւ բերէ :

— Զիս տակաւին կը տեսնեմ Սէն-Վոլիւզիէնի հին եկեղեցւոյն մէջ, զարնան պայծառագեղ առաւօտ մը : Զեռքէդ բռնած՝ կ'աղօթէի մօրդ, որպէս զի իւր տեղըն եկողը քեզ սիրէ, խեղճ լքեալս : Երգեհոնը կը նուագէին, և այս կին իւր ճակատը կը խոնարհեցնէր կարմրելով . . . :

Տիկին Մորէր հեծութիւն մ'արձակեց : Ծերունին չլսել ձեւացուց .

— Կը համառօտեմ խօսքս, Մաքսիմիլիէն : Այն ամօթալի գործերուն յիշատակը նողկանք կը բերէ սրտիս : Կը կարմրէր ամօթխածութենէն, այնպէս չէ, ինչպէս դեռատի օրիորդ մը որ իւր ամուսնոյն անձնատուր կը լինի : Արդ, իրիկունն ամուսնական սենեակը մտած ժամանակ, կուսի հեղնական պսակը դեռ ճակտին վրայ, հարսանեկան ճերմակ շրջազգեստը վըրսն, կ'ըսէ հօրդ պաղութեամբ. « Ես յղի եմ. ձեզ հետ ամուսնանալուս պատճառն այս է որ տարիածուս ամուսնացաւ, և ես կ'ուզէի անուն մը տալ ծընանելիք զակիս : »

Քաթերին այժմ ծունդի վրայ եկած էր, գլուխը խոնարհած, հեկեկելով, անցելոյն այս յիշատակութեան ներքեւ ընկճեալ :

— Այժմ կը հասկնաս ամեն բան, այնպէս չէ, շարունակեց Պ. Տանկլար : Հայրդ, սաստիկ կատղելով, ուզեց սպաննել այս թշուառականն : Այն ժամանակ սա ալ սարսափելով գրեց այն խոստովանութիւն, զոր մեր տունը պահած եմ, և կը ցօւցնեմ քեզ որ կարգաս : Բայց ի՞նչ հարկ այն գրութեան. երեսը նայէ :

Բաթէրին գետինը փռուած էր գրեթէ անզգայ : Եւ այս սոսկալի տեսարանը կը կրէր իւր աղջկան առջեւ , որոյ աչքին առաջ կը պարզուէին իւր ամեն խայտառակութիւնը : Խեղճ Արտեմիս , խռոված , մունջ , հանդիսատես կը լինէր իւր մօր կենդանի քարուականներուն : Կեանքն անողոր անգթութիւններ ունի : Այս անագորուն իրականութեան ժամը միայն բաւական էր թերեւս քաւելու այդ կնոջ ամեն ոճիրները : Եւ տակաւին հարկ եղաւ իրեն լսել մնացեալը : Երկու ամուսնոց իրարու տուած բացատրութեանց պատմութիւնը , նոյն իսկ հետեւեալ օրն իրարմէ բաժնուիլն և բոլոր քաղաքին առջեւ մերկ դրուած գայթակղութիւնը . վերջապէս , ինչ որ ժամանակաւ Պ. Ֆօրէ կը պատմէր Տիկին Վէրնիէի և Մորիս Ժանտրոնի : Մորպիէ հարիւրապետին անունը խառնուած էր այն ամեն պատմութեանց հետ որք այս արկածներուն կ'ընկերակցին : Խեղճ մարդուն անունը ցեխերու մէջ կը քաշքշուէր . հազիւ քանի մը ձայներ կը բարձրանային լուութեան մէջ զայն պաշտպանելու համար : Ենթադրութիւններ , մտացածին վէպեր , սուտեր չմնացին որ հնարուեցան և բերնէ բերան պտրտեցան : Վերջապէս քանի մ'ամիս այդ բարոյական նահատակութիւնը կրելէ յետոյ , Մորպիէ հարիւրապետը չկրցաւ դիմանալ : Կը մտածէր թէ իւր տնունը ծաղր ու ծանակ եղած էր ամբօխին բերանը . կը մտածէր թէ տղայ մը պիտի ծնէր և իւր անունը կրէր . կը մտածէր թէ այս ապօրինութեան առաջքն առնուլ միակ միջոցն էր այս մեղապարտ կնոջ գրաւոր խոստովանութիւնն ի ձեռին դատ բանալ , և նոր ու աւելի ծանր գայթակղութիւն մը հրապարակ հանել :

Պ. Տանկլարի ձայնը խզեցաւ , կարողութիւնն ըստպառած էր վերջապէս :

— Այժմ ամեն բան գիտես , որդեակ : Յաճախ

կը խօսէիր ինձ այն չարագոյժ տպաւորութեան վրայ զոր հայրդ թողած էր քեզ , երբոր գլուխը ջախջախած գտար զինքն իւր անկողնին մէջ : Ահա այս կինն սպաննեց զայն :

Արտեմիս ոչ եւս կրցաւ տոկալ . գլուխը ձեռուրներուն մէջ ծածկելով թիկնաթուին մէջ ինկաւ ընկճեալ , խորտակեալ : Իւր մայրն . . . իւր մայրն ըրած էր այս ամե՛նը : Դառն նողկանք մը կ'երէր կոկորդը . սոսկմամբ կը մտածէր թէ այդ կին ծնած էր զինք , և թէ նոյն արիւնը կը հոսէր իւր երակաց մէջ , և ինքն , ո՛հ ինքն , իւր մօրմէն սպանեալ մարդուն որդին կը սիրէր : Արտեմիս ոչ եւս կը համարձակէր որդին կը սիրէր : Արտեմիս ոչ եւս կը համարձակէր նայիլ Մաքսիմիլիէնի , որ անշարժ , սոսկումէն պաղած ու շուարած կեցած էր այս խայտառակութեանց առջեւ : Վերջին յոյս մը կը մնար երիտասարդին . վասն զի ոչ միայն իրեն , այլ և Արտեմիսի համար ցաւ կ'ըզգար : Տիկին Մորէրի նայեցաւ , որ իւր ընկճման մէջ անզգայացած էր : Մեծանձնութեան զգացում մը գրգռուեց զինքը .

— Բայց գո՛նէ պաշտպանեցէք ինքզինքնիդ , ըսաւ Բաթէրինի . ըսէք ինձ թէ չքմեղանք մ'ունիք , ըսէք ինձ թէ դուք յօժարակամ չխորտակեցիք աշուարարոյ անձի մը կեանքը : Խնդիրն հօրս վրայ է , կը հասկնա՞ք : Խօսք մը , բառ մը կը խնդրեմ ձեզնէ , միակ բառ մը . . . : կը լռէ . . . : Ես գտայ զայն , իմ հայրս , գլուխը ջախջախած , անկողնին վրայ դիտապատտ : Հինգ տարեկան էի , և այժմ աչքս գոցածիս պէս այն քստմնելի տեսարանն առջեւս կուգայ : Արտեմիս , Արտեմիս , քու մայրդ սպաննած էր զայն :

Եւ սիրող էակաց յատուկ եղող միամիտ վստահութեամբ գնաց դողդոջելով ինկաւ մանկամարդու հօշոյն բազկաց մէջ . . . : կը խնդրէր անկէ որ զինքը մխիթարէ այն հարուածին դէմ , որ երկուքն ալ մշտնջենապէս

կը վիրաւորէր : Իսկ Քաթերին , ինքզինք քաչքչելով  
 դուրս ելաւ , չհամարձակելով մէկու մ'երես նայիլ ,  
 տեսնելով ինքզինք լմնցած , ճակոէն դրոշմուած , աղ-  
 ջիկնէն ուրացուած , ինչպէս նաեւ այն մարդէն , զոր  
 իւր աղջիկը կը սիրէր : Յիմարութիւն մ'եկած էր վրան .  
 Մաքսիմիլիէնն ու հայրն իրարու հետ կը շփոթէր : Կը  
 թուէր իրեն թէ իւր դէմ խօսական մը կանգնած՝ զին-  
 քը կը դառեր , զինքը կը հարածէր և զսրհուրելի ա-  
 նէճքներ կը կարդար իւր վրայ :

Արտեմիս ալ հեկեկելով կը կակաղէր .

— Ես ոչ եւս արժանի եմ քու կինդ լինելու : Ո՛ր  
 ամենասիրելիս . պէտք է որ դատուի՛ք իրարմէ այն  
 պահուն , ուր երջանիկ պիտի լինէինք : Բայց ի՞նչ ըրած  
 եմ ես Աստուծոյ դէմ որ միշտ կը հարուածիմ . արդ-  
 եօք զիս անիծած է մինչեւ մօրս արդանդի՛ն մէջ :

— Եւ ինչո՞ւ չսիրէ քեզ , աղջիկս , ըսաւ հաւուն  
 լուրջ ձայնը : Ի՞նչ յանցանք գործած ես դու . ի՞նչ  
 սճրով մեղապարտ ես : Երբէ՛ն ի վեր տղայք իրենց ծը-  
 նողաց գործերուն ծանրութիւնը կը կրեն : Ես , իւր  
 հաւը , քեզ անո՛ր կուտամ . . . :

Ծերունուոյն կորովը վերջապէս կը լքանէր զինքն ,  
 իւր յեղյեղեալ սրտայուզութեանց ծանրութեան ներ-  
 քեւ կ'ընկճէր : Հազիւ կարողութիւն ունեցաւ զանոնք  
 իւր թեւերուն մէջ միացնելու :

— Ո՞ր գիտէ , ըսաւ . Աստուծոյ խորհուրդը թերեւ  
 ձեզ միացուց որպէս զի ձերայնոց գործած յանցանք-  
 ները սրբուին : Աստուած ծաղիկներ կը բուսցնէ գե-  
 րեզմաններուն վրայ . կրնայ կամիլ որ տառելութեանց  
 միջեւ ալ սէր բողբոջէ :

— Կը սիրեմ քեզ , ո՞վ նազելիս , ըսաւ Մաքսիմի-  
 լիէն մեղմով : Ձիս այնչափ վատ կը կարծես որ քեզ  
 թողում երբոր կեանքն այսպէս կատաղաբար կը հա-  
 լածէ քեզ : Միթէ դու կանանց ամենէն անկեղծն ,

ամենէն ազնիւն և ամենէն մեծանձնը չե՞ս : Մայրդ . . .  
 էհ , դու կը ճանչէ՛ր զայն : Ե՞րբ սիրած էր քեզ : Ար-  
 զանդներ կան որք ամուլ պէտք էր մնային , անար-  
 ժան լինելով բեղնաւորութեան : Ի՞նչ միաբանութիւն  
 կայ այդ կնոջ և քու միջեւ : Դա քու մարմինդ ծնաւ  
 որ կորստական է , բայց Աստուած տուաւ հոգիդ որ  
 անմահ է :

Արտեմիս չէր լսեր զայն : Մունջ և սառած կը կե-  
 նար անոր համբոյրներուն ներքեւ : Մաքսիմիլիէն կ'ըզ-  
 գար անոր դժգոյն և պաղ դէմքն իւր շրթանց ներքեւ,  
 իբրեւ մեւելոյ մը դէմք : Արտեմիսի աչերը մոլոր նայ-  
 ուած մ'ունէին : Անթարթ յառած էին դատարկու-  
 թեան մէջ : Ի դուր երիտասարդը կը ջանար ոգեւորեր  
 տաքցնել և մխիթարել զայն . առաջին անգամ , զայն  
 սիրելէն ի վեր , առանց աղդեցութեան կը մնար անոր  
 վրայ : Անոր նայուածքին մէջ խորին վհատութիւն մը  
 կար . կը թուէր թէ մեծ պատ մը կը տնկուէր յան-  
 կարծ իւր առջեւ և իւր ճակատն անոր զարնելով կը  
 ջախջախէր :

— Բայց խօսէ՛ հետս , ըսաւ նորէն . խղէ՛ այդ լը-  
 ութիւն որ կը յուսահատեցնէ զիս : Տակաւին գեղե-  
 ցիկ օրեր կան քեզ համար , ինձ համար , և մեր սի-  
 րելեաց համար : Մայրդ . էհ , ի՞նչ փոյթ : Անո՞ւնդ ,  
 միթէ իմ անուանս հետ չպիտի՞ միոխես : Այո ընտա-  
 նեկան եղերերդն ոչ ոք գիտէ . վերջապէս բնաւ պա-  
 տասխանատուութիւն մը չծանրանար քու վրայ : Աս-  
 կէց դատ , ի՞նչ հարկ կայ այսչափ խօսքերու : Ի՞նչ  
 պէտք ունի՛ք վիճաբանութեան : Դու զիս կը սիրես ,  
 ես քեզ կը սիրեմ . ահա իմ բոլոր գիտցածս և գիտ-  
 նալ ուղածս : Դու իմ ընտանիքս ես , ինչպէս ես ալ  
 քու : Ճշմարիտ հայրենիքն այն է ուր զիրար կը սիրեն .  
 և ես քու համբոյրներուդ արբեցութենէն մեծ երջան-  
 կութիւն չեմ ճանչեր :

Արտեմիս լուռ կը կենար միշտ : Բնաւ մէկ խօսք չէր ելներ իւր գունատ շրթունքէն : Տեսակ մը սարսափ տիրած էր վրան : Կարճ սարսուռներ ունէր և մերթ ընդ մերթ ալ բուռն բոց մը կ'անցնէր անշարժ աչք-րուն մէջէն : Մաքսիմիլիէն, անոր փաթթուած, կը գրկէր, կը սեղմէր, և անոր կեանք ներշնչելու կ'աշխատէր : Արտեմիս ոչ ետ կը մղէր զայն և ոչ առ ինքն կը քաշէր : Կարծես թէ կեանքն յանկարծ կանգ առած էր այս արարածին մէջ : Արդեօք վերջին բուռն տեսարանին հակահարուածն էր, կամ թէ մահառիթ խորհուրդներ կը ծնանէին յանկարծ անոր մտաց մէջ : Քիչ քիչ սարսափ կ'սկսէր տիրել Մաքսիմիլիէնի վրայ : Այս վիճակ պիտի տեւէր արդեօք . Արտեմիս պիտի շարունակէր այսպէս մնալ : Կը հարցնէր ինքնիրեն թէ արդեօք Քաթէրինի կրած խայտառակութիւնը չէ՞ր ցայտեր Արտեմիսի վրայ . արդեօք աղջիկն անգամ մ'ալ մօրը համար չպիտի վճարէր :

— Սիրելիս, լսէ՛ զիս, պատասխանէ՛ ինձ, ըսաւ նորէն սարսափահար : Խղէ՛ այդ լուռութիւնդ որ կը յուսահատեցնէ զիս : Քու ցաւդ իմս է . ինչ վիշտ որ դու կրնաս կրել, նոյնն ես կը կրեմ, Արտեմիս . . . Արտեմիս . . .

Այս խօսքերը Մաքսիմիլիէն այն աստիճան յուսահատական ձայնիւ մ'ըսաւ, որ Արտեմիս կարծես խոր քունէ մ'արթնցաւ գերեզմանէն կորզուած ժիւլիէթին պէս : Քիչ մ'արիւն աւելի ջերմութեամբ հոսիլ սկսաւ երեսին դժգոյն սպիտակութեան ներքեւ : Աչերը դէպ անոր դարձուց, և նայուածքն աղիողորմ և վշտահար երեւոյթ մ'առաւ : Կարծես թէ Մաքսիմիլիէն մեռած էր իրեն համար, թէ ինք ոչ եւս պիտի տեսնէր զայն, և թէ զիրենք կապող վերջին կապն յաւիտենապէս խզուած էր : Եւ յանկարծ արասուք ցայտեց աչերէն, ամենասուր կակիծով մ'իւր քաջասրտութենէն կոր-

զուած : Յետոյ ոտքի վրայ ելաւ, և նուաղելու վրայ եղող ուժերու գէժ մաքառող էից ինքնաշարժական ձգտումով քալել սկսաւ . ինքզինք քչեց տարաւ գզրոցի մը քով ուր իւր թուղթերն ու գոհարները կը պահէր : Անոր մէջ փնտռեց գտաւ արկղիկ մը, որոյ մէջ թուղթի խուրճեր կային : Անոնց մէջէն տպեալ թերթ մը քաշեց հանեց, ժամանակէն կէս դեղնած, և Մաքսիմիլիէնի երկնցուց : Իւր ծննդեան վկայագիրն էր : Մաքսիմիլիէն զարմանօք այն թուղթին նայեցաւ և չէր հասկնար ինչ լինիլը : Վերջապէս առաւ, և իւր աչերը սա պաղ և անտարբեր տողերը կարդացին, ուր անդուժ ճակատագիրն իրենց բաղդը կը անօրինէր .

« Հազար ութ հարիւր վաթսուն փետրուար 12 կէս օր . վկայագիր ծննդեան Լուիզ-Արտեմիս Սորպիէի, իգական սեռէ, ծնեալ ներկայ փետրուար 11ին, առաւօտեան ժամ տասնին, իւր մօր ամս մէջ, դուստր Ժան-Օկիլսի Սորպիէի, երեսուն և հինգ ամաց, վաղեմի հարիւրապետ որսորդ զօրաց, մեռեալ, և Մարի Քաթէրին Ժուլի, քսան և հինգ ամաց, առանց արհեստի, ամուսին . . . և այլն և այլն : »

Ինքն էր, ինք, Արտեմիս, այն տղան զոր Քաթէրին Ժուլի կը կրէր արգանդին մէջ երբոր անամօթաբար կ'ամուսնանար Պ. Սորպիէի հետ : Արեամբ իրարու օտար, Արտեմիս և Մաքսիմիլիէն, ըստ օրինի եղբայր և քոյր էին : Այս ժամուս իսկ ուր միմեանց հետ պիտի միանային մշտնջենապէս, անանցանելի պատուար մը կը տնկուէր իրենց միջեւ : Օրէնքը մեղապարտներ պաշտպանելով այս երկու անմեղները կը շախջախէ՛ր :

Մաքսիմիլիէն կը կարդար ու կը կարդար այն թուղթի կտորն, որ սարսափելի էր իւր պարզութեան մէջ : Եւ կը մնար հոն մունջ, ապշած, շուարած . իւր բոլոր կեանքն այն քանի մը չոր տողերէն կախեալ էր, այն

անշուք թղթի կտորէն , ուր երսունի չափ բառեր  
 ցանուած էին դժգունած մելանով մը , քաղաքա-  
 պետութեան անտարբեր պաշտօնէի մը ձեռք գըր-  
 ուած : Իւր քոյրն : Արտեմիս իւր քոյրն էր : Բայց  
 հնարաւոր են եղեր այս բաներ : Այսպիսի դէպքեր  
 կրնան եղեր պատահիլ : Իւր քոյրը : Եւ մեքենաբար  
 նորէն կ'սկսէր կարգալ :

« Յամի հազար ութ հարիւր վաթսուն փետր. 12 ,  
 կէս օրին . . . » տառերը կարծես դուրս կ'ելնէին  
 թուղթէն և կուգային հեգնական և ծաղրածու դէմ-  
 քով մ'իւր առջեւ կը պարէին : Բաւական էր թշուա-  
 ռականի մը կողմէ արտասանուած անպատկառ սուտ  
 մը , որպէս զի օրէնքը զայն ընդունի , նուիրագործէ ,  
 պաշտպանէ , մշտնջենաւորէ , և երկու անարատ ,  
 աննենգ , անմեղ և բարի էակներ կեղեքէ : Մաքսի-  
 միլիէն ամեն բան կրնար ընել իւր սէրը պաշտպանե-  
 լու համար , կրնար մենամարտիլ , կեանքը վտանգի  
 մէջ դնել , ծովերն անցնիլ , գերմարդկային գործեր ը-  
 նել : Կրնար ամենի գազանի մը հետ կռուիլ , նիւթա-  
 կան արդէլք մը տապալել , մի առ մի կորզել իւր ե-  
 դունգներով շէնքի մը քարերն , իւր մարմնոյն առող-  
 ջութիւնն և հողւոյն հաւատքը մաշեցնել օգտակար  
 գործի մը ծառայելու համար . . . :

Ամեն բան կրնար :

Ամեն բան , բայց այս թուղթը չէր կրնար ջնջել ,  
 որ ստութիւն մ'էր , զրպարտութիւն մ'էր , բարոյա-  
 կան խարդախութիւն մ'էր , խղճի դէմ նախատինք  
 մ'էր : Վեց անպիտան տողեր երկու կեանք կը ջնջէին .  
 ճերմակ թուղթի կտորի մը վրայ քիչ մը սեւ մելան՝  
 երկու մարդկեղէն արարած յուսահատութեան մէջ  
 կը սուղէր : Եւ անգամ մ'ալ անմեղները մեղաւորնե-  
 րուն համար կը վճարէին : Անգամ մ'ալ որդիք իրենց  
 ծնողաց գործած մեղքերուն բե՛ռը կը կրէին :

Սոսկալի կերպիւ կը ճմուէր երիտասարդին սիրտը ,  
 բան մը կը խորտակէր անոր մէջ : Ամենազօր ճակա-  
 տագիր մը կը ծանրանար իւր գլխուն վրայ . սուր  
 ճանկերը կը մխէր իւր գանկին մէջ , նման այն մրտա-  
 ցածին թռչնոց՝ զորս մեր երազներուն մէջ կը տես-  
 նենք : Մինչեւ իսկ խօսելու զօրութիւն չունէր : Հե-  
 կեկանք կը խեղդուէին իւր ցամքած կոկորդին մէջ :  
 Վերջին անգամ մ'ալ նայեցաւ Արտեմիսի ծննդեան  
 վկայագրին , վերջին անգամ մ'ալ կարդաց այն չարա-  
 շուք տողերն՝ որք իւր ապագայն կը խորտակէին : Եւ ,  
 առանց բան մ'ըսելու , առանց գլուխը դարձնելու ,  
 շուտրեար , խուճապեար , յուսահատութենէն պաշարեալ  
 ձգեց փախաւ , կարծելով լսել հեգնական ձայն մը , որ  
 ծաղու քրքիջով մը կը կրկնէր իւր ականջն ի վար .  
 « Յամի հազար ութ հարիւր վաթսուն , փետրվար 12 ,  
 կէս օրին . . . »

Փարիզի ընդհանուր դատախազ անուանելէն ի վեր  
 Պ. Յօրէ քիչ դուրս կ'ելնէր : Պաշտօն մը կազմաւորե-  
 լու պէտքերը , դատական գլխաւոր պաշտօնէից և տ-  
 տենակալաց տուած քաղաքավարական այցելութիւնք՝  
 իւր ժամանակին ամենէն յստակ մասը կը դրաւէին :  
 Սակայն ընդունեց իրիկուն մը իւր քեռորդւոյն՝ Տիկին  
 Ժան Վէրնիէի՝ կողմէ եղած ճաշի հրաւեր մը : Այս  
 ազնուաբարոյ անձն այն սիրուն դատաւորաց կարգէն  
 էր՝ որք գիտեն իրենց պարտականութիւնը քաղաքա-  
 վարութեան հետ հաշտեցնել : Մնաց որ զինքն զբաղե-  
 ցընող գործի մը վրայ փարիզի ընկերութեանց տպաւո-  
 րութիւններն իմանալ կ'ուզէր : Մերինին՝ պէս ընկերու-  
 թեան մը մէջ մենամարտին նորաձեւութիւնը չկրնար  
 երբէք արդելուի . վասն զի պատուոյ միակ ապաստանն

է : Ինդրեցէք դատարաններէն որ տեսակ մը պատառուածներ կարկտեն օրինագրքին նենգաժէտ ասեղով : Տասնէն ինն պարագայից մէջ դատարանը տեղէն չշարժիր : Տեղեկագիրք սահմանագլխէն թուագրքեալ են : Իրարու թեւ վիրաւորեցին թեթեւապէս : Դատաւորը կը ժպտի , գլխովը խոնարհութիւն կ'ընէ ու կ'անցնի : Իսկ երբ մարդ մեռած է , գործը ծանր է : Պատժական պարզ իրողութիւն մը չէ , այլ ոճրագատ ատենին առջեւ պէտք է դատուի : Սէնի երգուեալ դատաւորք պիտի արտասանէին ուրեմն վերջին խօսքը Մորէր-Թանտրէի մենամարտին վրայ : Պ. Ֆորէ պիտի խօսէր իբրեւ ներկայիչ կառավարութեան : Բայց մենամարտին ներքին ծածուկ պատճառները գիտէր . ինչպէս նաեւ գիտէր թէ ո՞վ էր և ի՞նչ ըրած էր ժամանակաւ գեղանին ֆաթէրին Ժուվ , Ֆօայի մէջ , և ապա փեսին հետ ունեցած ապօրէն կապակցութիւնը . գիտէր թէ ո՞րչափ պատուաւոր մարդ էր Պ. Մորէր , և ո՞րչափ վշտագնած էր իւր կնոջ բռնած ամսթալի ընթացքին վրայ : Եթէ չգիտնար մենամարտին բուն պատճառները , կրնար գուշակել փարիզեան կենաց այն եղբրերգներէն մին , զոր ծածկելու կ'աշխատին : Բայց ի՞նչ կ'ըսէր աշխարհ : Ի՞նչ կը խորհէր : Միոյ՝ բարբանջանաց , միւսին շաղակրատանաց , նորաձեւական երիտասարդի մը ծեքաբանութեանց , և դահլճի թանկագին զարդն եղող տիկնոջ մը հանճարաբանութեանց մէջէն կրնար բան մը քաղել :

Տիկին Վէրնիէի ճաշը կրնար իւր փնտռածն ընծայել իրեն : Համայն փարիզ լաւ ներկայացուած էր հոն . Մորիս Ժանտրոն , Լուի Մարէշալ , Տիկին Ռէբ , Տիկին Թրաքոֆ , սա , նա , հոն էին . Տիկին Թրաքոֆ և Տիկին Վէրնիէ չէին բաժնուեր իրարմէ : Այս վերջինն այժմ կը պաշտպանէր ռուսուհին : Երբոր մէկը շատ խելք ունի , արտակերտութիւնը փնաս չունի :

— Շատ խելացի է , սիրելիս , կ'ըսէր գեղանի կանանց , իբր թէ անոր մէկ պակասութիւնը չքմեղացընելու համար :

— Շատ գեղեցիկ է , կ'ըսէր խելացի կանանց , իբր թէ անոր մէկ բարեմասնութիւնը չքմեղացնելու համար :

Տիկին Վէրնիէ իւր հիւրերը պատշաճօրէն դասած էր . Լուի Մարէշալ Տիկին Ռէբի քով : Ինչո՞ւ համար . . . : Ոչ ոք գիտէր : Արդեօք . . . քանի որ չէ տեսնուած , ոչինչ տեսնուած է : Պէտք չէ վստահիլ երեւոյթին , և մինչեւ իսկ պէտք չէ հաւատալ իրականութեան : Եւ երբոր մէկն ապահով չէ բանի մը վերայ , բան մը չգիտեր : Սակայն կը նշմարուէր որ Վէրնի գղեական երթալնէն ի վեր՝ Լուի Մարէշալ և Տիկին Ռէբ զիրար ստէպ կը տեսնէին : Առաջինն յաճախ երկրորդին կը պատահէր դիպուածով , և երկրորդը կը սիրէր առաջնոյն վրայ խօսիլ դիպուածով :

Եւ նոյն ինքն Տիկին Վէրնիէ՞ : Արդեօք Մորիս . . . : Ո՞րչափ չարամիտ են մարդիկ : Ճաշին սկիզբէն չարամտութեան փորձերը տեսնուեցան : Բնականաբար առաջին նշանը տուաւ Տիկին Ռոշէզ . վառօդին կրակ տուաւ : Ամենէն առաջ՝ օրուան գայթակղութեան վրայ խօսուեցաւ : Պատիւ ըստ արժանեաց : «Կապոյտ կոմսուհի» մականունեալ մեծ տիկնոջ մը պատմութիւնն , որ առաւօտուն խարաղանով ձաղկեր էր իւր հակառակորդուհին , Աքասիայից ծառուղւոյն մէջ : Հակառակորդուհին , ձաղկուելէն յետոյ , նոյն իրիկունն ուրիշ տարիւածու մը գտած էր : Թերեւս ասկից պարտէր սկսել : Յետոյ՝ աղուն Հանրիէթ՝ զԱրտեմիս ձգեց մէջ տեղ , և իւր բոլոր ճարտարութիւնն ի գործ դրաւ իւր թշնամին արուեստագիտաբար յօշոտելու համար . բնականաբար պնդեց դարձեալ թէ Արտեմիս և Մաքսիմիլիէն չպիտի ամուսնանային միմեանց հետ : Յետոյ

ուրիշ բաներու վրայ խօսուեցաւ : Ամեն նիւթոյ վրայէն անցան այն նորր Զեգնութեամբ, որ ճշմարիտ փարիզցոց յատուկ է : Էւ ճաշն աւարտելէ յետոյ երեկոյթն սկսաւ և շարունակեց՝ առանց թանտրէ մարքիզին անունն արտասանուելու, որում կ'սպասէր Պ. Ֆորէ : Միայն լուի Մարէշալ պահ մ'ըսաւ՝ ձիարչաւի մտած երիվարի մ'առթիւ :

— Ֆրայիէնի երիվարն յիշեցուց ինձ :

Եւ Տիկին թրաքոֆ ալ անհոգութեամբ պատասխանեց իւր գեղեցիկ ատամունքոյ ցունցներով :

— Աղէկ յիշեցիք : Ո՛ւր մնաց այդ սիրելի մարքիզը բաւական ժամանակ է որ չենք տեսած զինքը :

Կը մտնար որ թանտրէ մարքիզն ելած էր այս աշխարհէ : Ճշմարիտ է որ գրեթէ իսկոյն սա փարիզական Զեգնից տրամախօսութիւնը փոխանակուեցաւ :

— Բայց մարքիզը մեռաւ, սիրելիս :

— Ճշմարիտ է, որովհետեւ կինն այրիացած է :

— Միթէ չէ՞ր արդէն :

— Այդ սիրելի մարքիզը շատ չկսկծացին :

— Ի՞նչ կ'ըսէք, բարեկամ, բացարձակապէս կը սխալիք : Մեր ամենուս կսկիծն հետը տարաւ :

— Ճշմարիտ է, որովհետեւ բնաւ կսկիծ չթողուց մեզ :

Պ. Ֆորէ խնամով մտիկ կ'ընէր, առանց բնաւ խօսք մը կորսնցնելու, և քիչ քիչ յստակ գաղափար մը կազմեց : Աշխարհ այնչափ կ'ըբարէր թանտրէ մարքիզին, որչափ Մոնկոլաց խանին վրայ : Մենամարտի մէջ ըսպաննուած էր՝ թէ Սէն-Ֆիաքը փողոցին բարի քաղաքացեաց միոյն պէս իւր անկողնին մէջ մեռած էր : Աւելի բան մը չէին գիտեր : Այո, արդարեւ ժամանակաւ թանտրէ մարքիզ մը կար, որ կը դիւթէր զոմանս և կը յափշտակէր զայս : Բայց այսօր . . . թըռած, անյայտացած, ոչնչացած է . . . ծուխի պէս

. . . թանտրէ՞. ո՞վ է այդ մարդ, թանտրէ, թանտրէ՞, չեմ ճանչեր, կ'ըսուի : Մուռացումն առաւել կը ծանրանար անոր յիշատակին վրայ՝ քան թէ գերեզմանին վեց ոտնաչափ հողը մարմնոյն վրայ :

Պ. Ֆորէի գաղափարը կազմուած էր : Այսպէս ամեն կերպիւ լաւ և շուտով թաղուած մարդ մը կ'արժէր որ մոռցուէր : Իւր ետին պատուաւոր այրի մ'և հակառակորդ մը կը թողուր : Ի՞նչ հարկ կար նոր գայթակղութիւն մը յարուցանելու այդ բարի մարդոց շուրջը : Մէկ կողմէ, օրէնքը կը հրամայէր դատաւորաց՝ որպէս զի չսիրուած անձի մը վրէժն առնուն . միւս կողմէ խղճատութիւնը կը հրամայէր նոյն դատաւորաց, որ համակրելի անձանց հետ ակնածութեամբ վարուին : Պ. Ֆորէ ոչ եւս վարանեցաւ : Գրեց Պ. Մորէրի որ առաւօտ մը իւր սենեակը գայ :

— Պարո՛ն, ըսաւ, կը կարծեմ որ այդ պատմութեան հռչակուելը չէք ուզեր : Ադոր համար ես սա միջոցը կ'առաջարկեմ : Ես ձեր այդ գործն եղեւնանադատ ատենին յառաջիկայ նստին համար կ'արձանագրեմ : Ատենին նախադահն իմ խնդրանօք կ'արգելու դատական վիճաբանութեանց հրատարակումը : Ես ալ յոյժ մեղմ կը ներկայացնեմ՝ դատախազութիւնս, և երգուեալ դատաւորը կը յուսամ՝ որ անպարտ կը վճռեն ձեզ և չորս վկայներն և ամեն բան կը լմնայ :

Այս առաջարկ ուժ գնապէս շարժեց Պ. Մորէրի սիրտը : Խորին շնորհակալութիւն զգաց այս աշխուհաբարոյ մարդուն նկատմամբ, որ ազմկալից դատաստանի մը տագնապներէն զինքը կ'ազատէր : Ուստի երբոր իմացաւ Մաքսիմիլիէնի և Արտեմիսի միջեւ անցածն, իւր ընկերն իսկոյն սրոյնց : Ի՞նչ, այդ երկու սիրակիցք յաւիտեան պիտի դատուին օրինական ստութեան մը պատճառաւ : Ի՞նչ, երկու կեանք

մշտնջենապէս պիտի խորտակի՝ նա՛յ՝ Նարկաւ միջոց մը կենալու էր այս գորգեան հանգոյցը կտրելու : Ինչ որ ինքն՝ աշխարհային մարդ՝ չէր գիտեր , օրէնագէտ մը գիտէր անշուշտ : Բայց որո՞ւ յանձնել այս գործ . փաստաբանի՞ , իրաւաբանի՞ , նօտարի՞ : Ընտրելու դժուարութիւնն չկար : Բայց նոր մարդոց՝ նոր գաղտնայայտութիւնք : Պ. Յօրէ , ընդհակառակն , պատմութեան մէկ մասը գիտէր : Պ. Տանկլարի մէկ այցելութիւնն հաստատեց իւր այս որոշում :

Հետեւեալ օրն այն անիծեալ աւուր , յորում Մաքսիմիլիէն խելայեղեալ փախած էր Արաբմիսի տունէն , ծերունին Պ. Մօրէրի բնակարանը գնաց , և իւր ստույիկեան անխռովութեամբ .

— Պարո՛ն , ըսաւ , աւասիկ մեք , դուք և ես , ընտանեաց գլուխ եղանք վերստին . դուք գորովասւրբ տութեամբ , ես պարտապանութեամբ : Մեք ներկայիչ ենք երկու խեղճ էակաց , որք ինքզինքնին պաշտպանելու անկարող են : Կիրքը կը մոլորէ զանոնք . յուսահատութիւնը կը շփոթէ : Ո՛չ ևս կրնան յստակ տեսնել իրենց գտնուած խաւարին մէջ : Իրօք այդ երկուքն օտար են իրարու . բայց օրինաց առչել , քաղաքուպետութեան ո և է պաշտօնեայ յանձն չառնուր զանոնք միաւորել : Մեք որ մեր պալարիւնութիւնը չենք կորուսած , կրնանք և պարտինք պաշտպանել զանոնք :

— Իրաւունք ունիք , Պարո՛ն , պատասխանեց Պ. Մօրէր . ինչ որ մարդկօրէն հնարաւոր է , պիտի ընենք :

— Ես զէնք մ՛ ունիմ , ըսաւ ծերունին պարզապէս . զէնք մը , զոր ձեր կինը գրած և ստորագրած է . կրնանք գործածել զայն . կը ներէ՞ք :

Ձայս ըսելով Պ. Տանկլար Պ. Մօրէրի երկնցուց թուղթ մը , որ ժամանակէն դեղնած էր : Քանի մը տողեր էին միայն , բայց սարսափելի իրենց ճարտարախօս պարզութեան մէջ . քանի մը տողեր , դող-

դոջուն ձեռքով գրուած , ուր ֆաթէրին ժուվ կը խոստովանէր թէ ուրիշ մարդէ մը յղի լինելով՝ Սորպիէ հարիւրապետին հետ ամուսնացած էր : Եւ այս առաջին ապացոյցին հետ Պ. Տանկլար ուրիշ մ՛ալ ունէր . նամակներու տրցակ մը՝ զորս ֆաթէրին ժուվի տարիածուն գրած էր ժամանակաւ իւր տարփուհոյն : Անոր մէջ մի ըստ միովէ կը տեսնուէին այն գարշելի մեքենայութիւնք , որոց մէջ ընկղմած էր Սորպիէ հարիւրապետին երջանկութիւնն ու կեանքն , և ֆաթէրին ժուվի սրտատանջութիւնն իւր յղի լինելուն վրայ , և առաջին դէմն ելնողին հետ ամուսնանալու խորհուրդն , որպէս զի այդ սուտ հայրութիւնն անոր կրնակը բեռցնէ , և տարիածուին նախանձութիւնն , որ չէր ուղեր որ իւր տարփուհին իւր ամուսնոյն լինի :

— Այս ամենով հանդերձ , շարունակեց Պ. Տանկլար , անհնար է որ օրէնքը միջոց մը մատակարարէ այս խաւարը լուսաւորելու : Բայց կը կրկնեմ ձեզ , խնդիրն այն անձին վրայ է որ այսօր Տիկին Մօրէր կը կոչուի : Մեք անցեալը պիտի թոթովենք . մէջէն շատ ամօթալի բաներ դուրս պիտի ելնեն , ցելս պիտի խառնենք , և ձեր անուան վրայ պիտի ցայտէ : Այս պատճառաւ ձեզ կը դիմեմ . ձեր պատուոյն կը վերաբերի գործը . նոր գայթակղութիւնք պիտի ծագին . ըսէք , այժմ կամ ո՛չ :

Պ. Մօրէր գլուխը վեր վերցուց , և սէգ ու արհամարհոտ ժպիտով մը .

— Պարո՛ն , պատասխանեց , ես այնչափ իրաւունք չունիմ իմ վրայ խորհելու , ո՛րչափ դուք չունիք ձեր վրայ խորհելու : Մեք համակրելի չենք . մեր կեանքը վերջանալու մօտ է . իսկ այս երկու տղայոց կեանքը նոր կ'սկսի : Իմ պատիւս վտանգի մէջ է եղեր . չեմ կարծեր : Պատիւն անձնական է . ոչ որ կրնայ իմ



պատուոյս քնասել : Մեղապարտն իմ անո՞ւնս կը կրէ : Պէտք չէր որ տայի անոր : Այդ թշուառական ամուսնութեան առնչէս ի վեր, սխալանացս և անմտութեանս պատիժը կը կրեմ : Այդ ալ աւելի պատիժ մը կը լինի ինձ . իսկ աշխարհը . էհ , փոյթս չէ . ես իմ խղճմբտանքէս կախում ունիմ և ոչ այլոց կարծիքէն :

Վայրկեան մը կանգ առաւ՝ սիրտը մորմոքէն յուզուելով .

— Եթէ գիտնայիք իմ կրած ցաւս : Իմ անունս հօրս անունն է զոր տղմի մէջ պիտի քաշքշեմ, ծանականաց մէջ քաշքշելէ յետոյ . . . :

Վառարանին մէջ պայծառ կրակ մը կը վառէր : Պ. Տանկլար վայրկեան մը Պ. Մորէրի նայեցաւ , որոյ դէմքը մեղրամամի գոյն առած էր : Չեռքն առաւ այն թուղթերն՝ որք Քաթերին յուսկի խոստովանութիւններն և անոր տարփածուին նամակները կը պարունակէին , և միակ նիւթական ապացոյցներն էին . Եթէ զանոնք ջնջէր , բան մը չէր մնար : Կը դիտէր այս յիսնամեայ մարդն , որոյ բոլոր կեանքը չարաբաստիկ եղած էր միակ տկարութեան մը պատճառաւ : Անոր կրած անցեալ ցաւերը կը մտածէր , ապագայ ցաւերը կը մտածէր , և խորին արգահատանք կ'զգար : Քայլ մ'առաւ դէպի վառարանն որպէս զի անոր մէջ նետէ այն սարսափելի թուղթերուն ծրարն՝ որ իւր թոռան երջանկութիւնը կը պարունակէր : Բայց Պ. Մորէր անոր դէմ վազելով՝ արգիւցեց : Երկուքն ալ զսհողութեան մի և նոյն աստիճանը կը բարձրանային :

— Շնորհակալ եմ, Պարոն , ըսաւ Պ. Մորէր , բայց իմ վիշտս բան մը չէ մեր երկու սիրելիներուն երջանկութեան քով : Ես մինչեւ ծայրը զիս մտնալ կ'ուզեմ . թող ես անարգուիմ , այսպանուիմ , բայց Արտեմիս երջանիկ լինի , Մաքսիմիլիէն երջանիկ լինի : Անոնց երազած ուրախութիւնները պէտք չէ ջնջուին : Անոնց սէրն

իմ ամեն վիշտերս կ'արժէ , և անոնց ժպիտն իմ բուրբ քաջած տառապանքս կը հատուցանէ :

Պ. Տանկլար զգաց որ իւր սրտայուզութիւնը կը կրկնապատկէր : Աչերէն արտաւր ցայտեց : Ծերունւոյն լացը զսհողութեան վարձատրութիւնն եղաւ :

Այն ժամանակ խորհրդակցելով որոշեցին իրենց բռնելիք ընթացքին ծրագիրը : Պ. Ֆորէի դիմելու դաղափարը լաւ էր : Իւր դատաւորական իշխանութեամբ կրնար օգնել իրենց , իբրեւ աննենդ և ուղիղ մտրդ և իբրեւ փորձ օրէնսգէտ : Պ. Տանկլար գնաց տեսաւ զայն : Պ. Ֆորէ ամեն բան գիտէր երկար ժամանակէ ի վեր : Միթէ ժամանակաւ նա չէ՞ր որ իւր եղբորորդւոյն , Տիկին Վէրնիէի , յայտնել չուզեց այս բան . զոր իւր արհեստին դաղտնիքը կը համարէր : Մինչեւ իսկ ժամանակաւ քննութիւն մ'սկսած էր Սորպիէ հարիւրապետին անձնատպանութեան վրայ . բայց յետոյ կանգ առեր էր այս ընտանեկան սոսկալի եղերերգին առջեւ : Դատարանն անդէն կը մնար՝ պարկեշտ մարդու մը դիւրահաւանութեան դէմ լարուած հրէշային որոգայթին առջեւ : Ուստի գոնէ լռութեան միջթարութիւնը պարտ էր ընծայել անոր յիշատակին :

— Իմ քով թողէք այդ թուղթերն ըսաւ Պ. Ֆորէ Մաքսիմիլիէնի հաւուն . իմ քով թողէք մեղապարտին խոստովանութիւնն , որպէս զի խնամով քննեմ զադոնք : Թերեւս օրինական դիմում մը հնարաւոր լինի : Բայց ամեն պարագայի մէջ՝ ձեր թոռան կը վերաբերի որոշում մ'ընել :

Համաձայնութեամբ որոշուեցաւ որ հետեւեալ օրը Պ. Ֆորէ մարքիզուհւոյն տունն երթայ , Մէսիսի ծառուղին , կէս օրէն երկու ժամ յետոյ : Պ. Ֆորէ յուսալից խօսք մը չէր ըսեր Պ. Տանկլարի , ոչ ալ «անհնարին» բառը կ'արտասանէր : Վշտակիր մարդ մը

բորորովին յուսահատեցնել չէր վայրեր : Պ. Տանկլար՝  
 իւր տունը վերահառնարուն պէս՝ Պ. Ֆորէի հետ ը-  
 րած ժամադրութիւնը գրով իմացուց Պ. Մորէրի :  
 Յետոյ Մաքսիմիլիէնի սենեակն երթալով տեսաւ որ  
 հոն չէր :

Երիտասարդը փողոցները կը թափառէր, առանց  
 զգալու գիշերուան ցուրտն, իւր դժբաղդութեան մը-  
 տածումէն հալածեալ, որ չէր բաժնուէր իրմէ, անու-  
 դոք և հաւատարիմ իւր ստուերին պէս : Արտեմիս  
 երբէք չպիտի կրնար իւր կինը լինիլ : Այս եօթն բա-  
 ռերը կը հնչէին իւր գլխուն մէջ՝ կանոնաւոր երգա-  
 յանդիմը պէս : Կը նմանէր Ֆրանսական հին բանա-  
 ստեղծութեանց մէջի մտացածին ձիաւորին, որ, երբ  
 իւր դեւը զինքը կը հալածէ, ինքն անոր ձեռքէն պըր-  
 ծելու համար թաւուտները, անտառներն ու հեղեղատ-  
 ները կը վաղէ կ'անցնի : Արտեմիս երբէք չպիտի լի-  
 նի իրեն : Ի՞նչ բանի կը ծառայէր, սէգ, ազնիւ և  
 ասպետաբարոյ լինելն, ինչո՞ւ ինքզինքնին կը զոհէին  
 մարդիկ պատուոյ սին գաղափարաց : Ո՞ւր է կորուս-  
 եալ այնչափ ճգանց և կրեալ այնչափ ցաւոց վարձքը :  
 Զիրար կը սիրէին և անարատ կը մնային : Միմեանց  
 կը ցանկային և սուրբ կը կենային : Մարդ չէր գի-  
 տեր դայս . ընդհակառակն, աշխարհ, որ միշտ չարին  
 հակամէտ է, անշուշտ կ'ամբաստանէր զանոնք այն  
 ամեն բաներու համար զորս չէին բնաւ ըրած : Ո՞ր-  
 չափ պատրանք է բարին : Աւելի լաւ է գէշ վարուիլ,  
 կենդանական մարմնոյ խրատներուն միայն ունկն դը-  
 նելով :

Արտեմիս երբէք չպիտի լինէր իրեն : Ինչո՞ւ համար,  
 Ո՞վ կը գատէր զիրենք : Իւր կամքը : Ո՞չ : Արտեմիսի  
 կամքը : Ոչ : Այլ ամենազօր չարաբաղդութիւն մը որ  
 կ'իշխէր իրենց վրայ : Անակնկալ, արտասովոր, և  
 մարդկային անցից սովորաբար շարժած շրջանակէն

դուրս դէպքի մը պատճառաւ . որովհետեւ իւր հայ-  
 րը՝ փոխանակ խելքին ունկն դնելու՝ իւր տարփանաց  
 ունկն դրած էր . որովհետեւ Արտեմիսի մայրն ալ  
 պժգալի կեանք մ'անցուցած էր . այս ամեն միացեալ  
 պատճառներով չէին կրնար իրարու հետ ամուսնանալ :  
 Պատուար մը կը կանգնէր իրենց միջեւ : Արդ միթէ  
 ամուսնութենէ դուրս բան չկայ : Կանոնաւոր միա-  
 ցում մը կ'երազէին, շրջապատեալ ամենուն յարգա-  
 նօք . ակներեւ սէր մը, առանց ստութեան և առանց  
 նենդութեան : Արդ՝ այսպիսի միացում մ'անհնարին  
 էր : Կը մնար անկանոն միացումը, թաքուն կամ չի-  
 մացուած սէրը : Այս վերջին ընթացքը բռնելով՝ ի  
 հարկէ բռնադատեալ մեղապարտ պիտի լինէին, և ոչ  
 յօժար կամօք : Արտեմիս իւր տարփուհին պիտի լինէր՝  
 և աշխարհ բան մը չպիտի գիտնար : Եթէ բան մը  
 գիտնար, աչք պիտի գոցէր : Միթէ ամեն օր այդպի-  
 սի ներեալ կապակցութիւնը չե՞ն տեսնուիր . միթէ Պ.  
 Ք . . . ի և Տիկին Ք . . . ի յարաբերութեանց վրայ  
 արձակ չի՞ խօսուիր, և ոչ ոք մտքէն կ'անցունէ զար-  
 մանալ կամ զանոնք մեղադրել : Հազիւ ժպիտ մը կամ  
 հեգնական ակնարկութիւն մը կը տեսնուի երբեմն :  
 Տան տիրուհիք մեծ փոյթ ունին ի միասին հրաւիրելու  
 զանոնք, զորս աշխարհային զրոյցք միմեանց հետ կը  
 միացնեն կեղծ բարեօրտութեամբ : Եւ Արտեմիս իւ-  
 րայնոց իսկ պարսաւին չպիտի հանդուրժէր : Պ. Մորէր  
 և Պ. Տանկլար՝ կեանքն իւր արժէքին համեմատ կը  
 գնահատէին : Գիտէին այս երկու խանդավառ և ան-  
 կեղծ տարփաւորաց հոգւոյ պայքարներն : Ուստի և  
 իրաւունք պիտի տային անոնց վտարանջմանն . ընդդէմ  
 անիրաւ ճակատագրին :

Այս գաղափարաց ժխորին մէջ Մաքսիմիլիէն գլուխն  
 առած կ'երթար, ձմրան գիշեր, իւր դառն մտածու-  
 թեանց ամենազօր ազդեցութենէն յափշտակեալ :

Մերթ ընդ մերթ կանգ կ'առնուր՝ պատի մը կրթնելով, բարոյական խոնջութենէն պարտասեալ, առանց զգալու այն սառնաշունչ հոյն, որ փողոցներուն մէջէն կը փչէր: Բուռնընթաց արշաւը կը մտորակէր անոր արիւնն: Առաւօտուն կանգ առաւ իւր շուրջը նայելով տարտամօրէն: Մոնմարթրի շրջակայ պարապ հողերուն մէջն էր: Առաւօտեան լոյսը ծագիլ սկսած էր: Գորշ մէգ մը կը տատանէր տուններուն վրայ, և անոնց մէջէն խուլ և շփոթ շշուէջ մը վեր կ'ելնէր: Բունէն ընդհատեալ կեանքն յամրաբար կը նորոգուէր անոր շուրջը: Մօտակայ նեղ փողոցներուն մէջէն գործաւորք իրենց օրական աշխատութեանց կ'երթային: Մեծ ուղին կը լցուէր շահնդով, և սայլորդաց կողերը, ձիերուն վրնջիւնն և կառքերուն որոտմունքն իրար կը խառնուէին: Պարտիզպանաց խոշոր սայլեր, անոնց ետեւէն մնալաճառք՝ եղներու և ոչխարներու հօտեր վարելով ի սպանդանոց, յետոյ գինւոյ տակառակներով լի տափակ սայլեր, քիչ մը հեռուն ալիւրի պարկեր խոշոր կառքերու մէջ բեռցած, նուրբ և թափանցիկ փոշի մը ծաւալելով, որ կառքերուն անիւները, լիսեռներն և կառածիգ հուժկու ձիերուն դաւակները կը ճերմկցնէր: Փարիզի բոլոր կենդանական կեանքն անկէ կ'անցնէր:

Մաքսիմիլիէն իւր տխուր աչօք կը դիտէր մեծ քաղաքին մարմինը սնուցանող տարերքը:

Նոյն միջոցին գորշ մէգը տակաւ կը փարատէր տուներն հետզհետէ երեւան կ'ելնէին՝ զիրենք ծածկող մառախլային պատանքին մէջէն: Այն բարձունքէն Մաքսիմիլիէն կը տեսնէր քաղաքին մէկ մեծ մասը պարզուած իւր առջեւ: Փողոցներն իրար կը կտրէին բարակ ցանցի մը պէս իրարու մէջ խառնուած: Տեղ տեղ հսկայաճեւ կոյտին մէջէն աւելի յստակաճեւ շէնքեր կը բարձրանային: Աւելի հեռին ոլորսպտոյտ գլիծ մը

կը տեսնուէր գալարեալ օձի նման, այն էր Պուլվառներն, այս հզօր մեքենային բունը:

Եւ խորհրդածութիւնը կը յուզուէր այս ուշիմ մարդուն ուղեղին մէջ, որ բուռն վշտակրութեամբ առաւել եւս նրբացած էր. փարիզի մարմինը սնուցանող ամեն բաները տեսնելով, կը հարցնէր ինքնիրեն թէ իւր հոգւոյն սնունդն ո՞ւր էր:

Բարուց մէջ՝ ապականութիւն, հաւատոց մէջ՝ սկեպտիկութիւն, գաղափարաց մէջ՝ ցածութիւն: Ինչոր երբեմն կը յարգուէր, այժմ կ'անարգուի, ինչ որ ժամանակաւ կը պաշտուէր, այժմ կը թշնամանուի: Կենաց ուղին լի է մացառներով, և աշխարհս աւերակներով ծածկուած Բալմիրի մը կը նմանի: Մարդն առաւ խաչը ձեռքն և մոլեգնաբար ցնցեց մինչեւ որ կորզեց: Եւ երբոր մինակ մնաց, շտեմնելով այլ եւս զԱստուած, սկսաւ վախնալ, ինչպէս մութի մէջ մնացած տղան:

Մաքսիմիլիէն տակաւ կը հանդարտէր բանի որ իւր աւելի բարձր գաղափարները կը վերականգնէին իւր միտքն և ուղեղը կ'ամրապնդէին: Այժմ ինքզինք կը կշտամբէր իւր իրեն գէմ ըրած վատութեան համար: Քիչ մ'առաջ իւր կորուսեալ ջանից և կրած ցաւոց վարձքը կը փնտռէր: Այդ վարձք իւր կատարած պարտուց գոհացման մէջ էր: Բարին՝ պատրանք մ'է, պատիւը՝ սին գաղափար մը: Երբոր ինք միայն և Արտեմիս հասկնան իրենց զոհողութեան ընդարձակութիւնն, այս բաւական է որպէս զի իրաւունք ունենան այդ զոհողութիւնն ընելու: Ի՞նչ բանի կը ծառայէ ազնիւ, մեծանձն և ասպետաբարոյ լինիլն: — Ինքիրմէ գոհ խղճմանքի մը երկնային անդորրութիւնն և ամենաբազր հանգստութիւնը ճաշակելու:

Եւ երիտասարդին աչերն այժմ՝ փարիզի վրայ կը դառնային, որ առաւօտեան արեւով լուսաւորուած

էր : Չմեռնային արեգակի մը ցուրտ ճառագայթները կը փայլէին ամեն տեղ : Կեանքը կը վերածնէր ամեն կողմ . . . և աշխարհի այս մայրաքաղաքին հողին բուծանող բան մը չկա՞ր : Կը սխալէր դարձեալ : Իարքերը կրնան աւրուիլ , հաւատքը տկարանալ և գաղափարները ցածնալ : Ասոնք առժամեայ հիւանդութիւններ են : Մարդկութիւնը կը հսկէ : Որո՞ւ հող զուարճութեանց սիրահար , արծաթսիրութեամբ մոլեգնած և իրէականը լքանող սերունդք : Ընտրելոց տուած օրինակը կը բաւէ բազմութիւնն ուսուցանելու : Ճշմարտութիւնը յամր կը թափանցեն ժողովրդոց հոգւոյն մէջ , բայց ոչինչ կ'արգելու զանոնք լուսաւորելէ : Կուգայ միշտ ժամ մը , ուր բռնաբար կը հաստատուին : Արդարեւ , այս անհուն քաղաքին մէջ հազարք հազարաց մարդիկ կենդանականին համար միայն կ'ապրին . արգ , ինքն Մաքսիմիլիէն հոգւոյն համար պիտի ապրէր : Տուներու այս տձեւ կոյտը շատ մը մոլորեալ խելքեր , բազում անպատիւ արարածներ , վաճառեալ խղճմտանքներ կը պարունակէր : Արդարեւ այդ մարդակոյտէն շատեր ուրիշ սանձ չէին ճանչեր՝ բաց իրենց հաճոյքէն , և ուրիշ Աստուած՝ բաց ոսկի հորթէն : Արգ , ինքն Մաքսիմիլիէն անոնց վրայ պիտի բարձրանար իւր առաքինութեամբ , ինչպէս արդէն բարձրացած էր իւր խելքով : Արտեմիս ուսուցած էր անոր քալելու ճանբան : Է՛հ , ի՛նչ . այդ անարատ , այդ մեծանձն արարածն հեզնական մեկնութիւններո՞ւ պիտի մատնէր :

Աշխարհ կրնար զիրենք երկուքն ալ զուգորդել անպարկեշտ մտածութեան մը մէջ . իրենց ազնիւ սէրն աղտեղել նախատական մեկնութեամբ : Ուստի բարկութենէն կրակ կը կտրէր : Ինքզինք կը մեղադրէր որ ամեն բանէ աւելի սիրած անձն ըստ արժանւոյն չյարգեց : Ենթադրելով որ իրենց կրից բռնութեան չդի-

մանալով՝ երկուքն ալ տեղի տային փորձութեան , բայց ինք Մաքսիմիլիէն արգելուր Արտեմիսի անկման ժամն : Ենթադրելով իսկ թէ մարդ բան մը չիմանար , ենթադրելով իսկ թէ աշխարհ անգիտանար ամեն բան , այս հետաքրքիր , անխորհրդապահ և գայթակղութեանց սիրահար աշխարհ , միթէ այդ անծանօթ կապակցութիւն չէ՞ր կրնար տակաւին ուրիշ ծանր հետեւանքներ ունենալ : Եթէ իրենց թաքուն սէրէն զաւակ մը ծնէր , ի՞նչ պիտի լինէր այն դժբաղդ էակին բաղդք : Դեռ քիչ մ'առաջ կ'ըսէր իրեն . Արտեմիս և ինք մշտնջենապէս տարաբաղդ պիտի լինէին , վասն զի իրենց ծնողաց սխալներուն բեռն իրենց վրայ կը ծանրանար . վասն զի իւր հայրն իւր սիրոյն ականջ դրած էր և ոչ խելքին . վասն զի Արտեմիսի մայրը վատ կեանք մը վարած էր : Իրենք որ կեղծ վիճակի մը դառն հետեւանքը կը կրէին , էակի մը ծնունդ տային , որ իրենց պէս տառապէր : Չոհերն իրենք ալ դահիճ լինէի՛ն : Ո՛չ . չկայ բնաւ ճշմարիտ բան ուղիղ ճանբէ դուրս , պարտականութենէ դուրս , պատուէ դուրս :

Մօնմարթրի բարձուն վրայ կանգուն կեցած՝ Մաքսիմիլիէն քանի մը վայրկեան ալ դիտեց զՓարիզ . իւր որոշումը կ'ամրանար : Պիտի վշտակրէր , այս էր մարդկային օրէնքը . ասով գոնէ ինք Արտեմիսի արժանի կը մնար , Արտեմիս ալ իրեն : Ամենէն գեղեցիկ յաղթութիւնք մարդուս իւր վրայ տարած յաղթութիւններն են : Խորխտաբար իւր ձեռքն երկնցուց դէպի մեծ քաղաքն , իբր ասպարէզ կարդալու համար անոր , իբրեւ պարկեշտ մարդ մը , որ տէր եղած է իւր անձին և կամաց :

Իւր հաւն իրեն կ'սպասէր սրտատանջ . բայց այս սրտատանջութիւն մասամբ անհետացաւ երբոր Պ. Տանկլար իւր թոռան երեսն աւելի հանդարտ տեսաւ : Ներքին անդորրն այրական զօրեղ որոշումէ կը ծնանի

միշտ : Ծերունին իւր առջի իրիկուան դիմումը պատմեց անոր : Մաքսիմիլիէն ժպտեցաւ տխրաբար .

— Շնորհակալ եմ ըրածէդ , հայր իմ , բայց ես անյոյս եմ :

— Կը սխալիս :

— Ինչո՞ւ համար :

— Վասն զի Պ. Ֆօրէ կը յուսայ տակաւին :

— Ես ձանձրացած եմ անանցանելի պատուարներու զարնուելով միշտ : Վեց ամսէ ի վեր իմ կեանքս իմն չէ : Ես իմ ազատ կաճքէս կախում չունիմ , այլ դէպքերուն քմահաճոյքէն : Արդիլեալ է ինձ առջի իրիկունը հաւատալ վաղուան , և արդէն ունեցած երջանկութեան մէջ իսկ սպասուելեաց ենթակայ է : Ի՞նչպէս կրնամ յուսալ երբոր իմ առջեւ ունիմ այն ահագին արգելքն՝ որ օրէնք կը կոչուի : Անոր շուրջէն դառնալն այնչափ անիրանալի է՝ որչափ անոր յաղթելն : Անհնարին դէմ դիմում չկրնար լինիլ :

Որոչեալ ժամուն , այս ընտանեկան եղբերդին դերասանները Մէսինի ծառուղւոյն տունը գումարեցան : Արտեմիս և Մաքսիմիլիէն , անչարժ , իրենց սրտին անձկութեան կենդանի նշանները կը կրէին իրենց դայկահար դիմաց վրայ : Չէին իշխեր իրարու երեսնայիլ , երկուքն ալ տկարութենէ վախնալով . մին միւսին կ'ապաւինէր միշտ՝ իւր քաջասրտութիւնը չկորսընցնելու համար : Եւ սակայն յուսոյ վերջին նշոյլ մը կը փայլէր անոնց աչաց մէջ՝ այն հաւատարիմ կանգեղներուն պէս որ կը վառին միշտ մայր եկեղեցեաց խորանին առջեւ : Ի՞նչ զօրեղ զգացում : Մարդիկ չեն հրաժարիր անկէ՝ մինչեւ իսկ իրենց մեռնելու վայրկեանն : Ասկէց զատ , ոչ միայն խօսքեր պիտի լսէին , այլ և իրողութիւններ . իրենց օգնող օրէնսդէտն ոչ միայն հնարաւորութիւն մը պիտի ցուցնէր իրենց , այլ

ստուգութիւն մը : Այն է օրինաց տրամադրութիւն մը , յորմէ կախեալ էր այժմ իրենց բաղձն :

— Գիտէք անշուշտ , Տիկին , ըսաւ Պ. Ֆօրէ , ես օրինական խորհրդական մ'եմ , և ոչ այլ ինչ : Իմ օրինական կացութիւնս գործ մը չունի այս բաներու մէջ : Ամեն դատական խնդրոյ մէջ , մարդկային տեսակէտ կայ , դատական տեսակէտ կայ . ձեզ կը վերաբերի առաջինն ուսումնասիրել , ես՝ երկրորդը կը ներկայեմ ձեզ : Պ. Մորէր և Պ. Տանկլար պատմեցին ինձ ձեր տարօրէն պատմութիւնն , և այս հարցումն ուղղեցին ինձ . երկու էակք կը սիրեն զիրար . օրէնքը պատուար մը կը կանգնէ անոնց միջև . այդ պատուարն անանցանելի է : Իմ պատասխանս յոյժ բացորոյ է . Ո՛չ :

Մաքսիմիլիէն ուրախութեան ազդակ մ'արձակեց , մինչդեռ Արտեմիս աչերը կը փակէր , նուազելու մօտ : Ի՞նչ կ'ըսէր Պ. Ֆօրէ : Հնարաւոր էր ըսածն : Երկուքն ալ կը վախնային որ երազ կը տեսնէին , սխալ կը լսէին , իրենց յիմար յոյսն իրականութիւն կը կարծէին : Պ. Ֆօրէ շարունակեց .

— Օրէնքը չնախատեսեր երբէք բացառութիւններն . Հանրականութեանց միայն կ'ըբաղի : Արդ , եթէ ամեն բանէ առաջ մասնաւոր պարագայ մը կայ , ձերն է այն : Ի՞նչ կ'ըսէ օրէնքն . Ամուսնութեան միջոցին ծնած ամեն տղայ իրեն հայր ունի ծնող կնոջ այրն : Արդ , Սորպիէ հարիւրապետն 1859 օգոստոս 2 ին ամուսնացաւ . դուք , Տիկին , ծնաք 1860 յունվար 27 ին : Ուրեմն դուք Սորպիէ հարիւրապետին և ֆաթէրին ժուլի օրինաւոր դուստրն էք : Ահա այս պիտի պատասխանէ ամեն օրէնսդէտ առաջին տեսութեամբ , յետ բաղդատելոյ ծննդեան և ամուսնութեան վկայագրերն : Այժմ , ձեր ծննդեան հետեւեալ օրն , հարիւրապետը կրնա՞ր դատ բանալ և կնոջը ծնած դուկին իրմէ չլինիլը հաստատել : — Այո՛ , որովհետեւ ամուսնութենէն

հարիւր եօթանասուն և ինն օր յետոյ ծնած էիք :  
 Կրնա՞ր չահիլ դատն : — Այո՛ . որովհետեւ քաթէրին  
 ժուլի հետ ամուսնանալէն առաջ անոր յղի լինելէն տե-  
 ղեկութիւն չունէր : Այդ . օրինագրքին 314 յօդուածը  
 բացորոշ է : Ապացոյցք չեն պակսիր : Նախ նոյն ինքն  
 մօր խոստովանութիւնն իւր ձեռամբ գրուած, եթէ ա-  
 ռարկուի թէ այն խոստովանութիւն բռնութեամբ կոր-  
 զուած է, որ հաւանական է, իւր և ճշմարիտ հօրը  
 միջեւ փոխանակուած թղթակցութիւնը կեցած է :

Մաքսիմիլիէն և Արտեմիս մտիկ կ'ընէին այն տեն-  
 դոտ ուշադրութեամբ, որով մահապարտ մ'իւր կեան-  
 քը շնորհող գրին ընթերցումը կը լսէ : Այս բացորոշ,  
 պարզ և տրամաբանական բացատրութիւնն անոնց  
 մտքին կը զարնէր իւր հակիրճութեամբն իսկ : Ոչ եւս  
 մարդն էր որ կը խօսէր, այլ օրէնքն :

— Այր մը կրնա՞յ միշտ չճանչել իւր կնոջմէն ծնած  
 մանուկը, շարունակեց Պ. Ֆօրէ : Ոչ . մինչեւ իսկ ե-  
 թէ նախընթաց պարագային մէջ գտնուի : Պարտի  
 նոյն ամսոյ մէջ բողոքել եթէ տղուն ծնած տեղը կը  
 գտնուի . իսկ եթէ բացակայ լինի, վերադարձէն յե-  
 տոյ մինչեւ երկու ամիս պարտի բողոքել . եթէ ման-  
 կան ծնանիլն այրէն պահուած լինի, խարդախութեան  
 երեւան ելնելէն յետոյ մինչեւ երկու ամիս :

Պ. Ֆօրէ քանի մը վայրկեան լռեց : Այս տեսարա-  
 նը պատմեալ եղերերգի մը շայեկանութիւն կ'ստա-  
 նար : Կացութիւնները չափազիտական յառաջատու-  
 թեամբ կը պարզուէին ունկնդրաց առջեւ : Եւ ուն-  
 կընդիրներն ինքնին դերասաններն էին այդ եղերեր-  
 գին : Պ. Ֆօրէ իւր բացատրութիւններն աւելի յամ-  
 րաբար շարունակեց, որպէս զի իւր օրինական յայ-  
 տարարութեանց մէջ նսեմ բան մը չ'մնայ :

— Ինչո՞ւ Պ. Սորպիէ ինքզինք սպաննեց : Ասոր  
 պէտք չէ իսկ հոգեբանական մեկնութիւն մը փնտռել :

Այդ անձն ինքնին տուած է մեկնութիւնը : Քանզի  
 ես ինքն էի այն ժամանակ քննութիւն բացողն ի Ֆօա :  
 Դուք հինգ տարու էիք, Պարո՛ն Մաքսիմիլիէն : Դուք  
 ամենէն առաջ երեւան հանած էիք ձեր հօր անձնաս-  
 պանութիւնն՝ առաւօտուն անոր սենեակը մտնելով :  
 Ձեր աղաղակէն ծառայներն հոն դիմեր էին . ժողովուրդն  
 այս համոզումն ունի թէ՛ երբ մեռեալ մը գտնուի,  
 իսկոյն՝ ոստիկանութեան իմացնել պէտք է : Եթէ նոր  
 կախուած մարդու մը պատահին, զայն կենդանացնե-  
 լու իսկ փորձ չեն ըներ : Ժամ մը յետոյ ես հոն հա-  
 սայ քննիչ դատաւորին հետ : Հարիւրապետին գրասե-  
 ղանին վրայ գրաւոր յայտարարութիւն մը կար ան-  
 յողդողդ ձեռքով գրուած, և գրեթէ սա խօսքերը  
 կը պարունակէր . «Կ'սպաննեմ ես զիս, վասն զի կինս  
 զաւակ մը պիտի ծնանի որ օրինաց համեմատ իմս  
 պիտի լինի : Ձեմ համարձակիր դատ բանալ, որ յե-  
 տոյ զիս ամէցնէ որդւոյս առջեւ : Ուստի լաւագոյն  
 կը համարիմ մեռնիլ : » Այս թուղթ անշուշտ Ֆօայի  
 դատարանին դիւանատան մէջ կը գտնուի :

Եւ գառնալով առ Պ. Տանկլար, ըսաւ Պ. Ֆօրէ .

— Դուք ժամանակաւ կարգացիք զայն, Պարո՛ն,  
 ճիշդ չէ՞ ըսածս :

— Այո՛, ըսաւ ծերունին պարզապէս :

Իսկ Մաքսիմիլիէն կուլար, իւր հօր մահուան ե-  
 ղերերգը վերակենդանանալով իւր մտաց առջեւ : Կը  
 փակէր աչերն, և կը տեսնէր այն չարաչուք սենեակն,  
 ուր իւր հայրը գտած էր՝ գլուխը ջախջախած : Յետոյ  
 կը յիշէր ամենուն վրայ տիրած սարսափն, երթեւե-  
 կութիւններն, իւրաքանչիւրին մեկնութիւնները, դա-  
 տական իշխանութեան պաշտօնեայներն, և իւր լքեալ  
 վիճակը, տանը մէկ խորչն ապաստանած առանձին .  
 յստակապէս կը նշմարէր, իւր յիշողութեան պայծառ  
 լուսով, իւր հաւուն հետեւեալ օրը դաշն և խեղճ մեռ-

եալն իւր վերջին բնակարանը փոխադրել տալն : Այն փոքր տղան ինքն էր : Եւ այսօր չափահաս այր եղած , այն սոսկալի անցելոյն իւր առջեւ զսրթուցումը կը տեսնէր : Միտքը կը բերէր ինչ որ այդ հասն ըրած էր իրեն համար : Պ. Տանկլար՝ հռչակաւոր ճանապարհորդին ձեռքէն բռնած էր , ինչպէս որ ժամանակաւ լքեալ որբին ձեռքէն կը բռնէր : Մին ալ միւսին պէս կը պաշտպանէր : Տղան պաշտպանելէ յետոյ՝ չափահաս այրը կը պաշտպանէր : Մաքսիմիլիէն ոտքի վրայ ելաւ և իւր հասն համբուրելով .

— Շնորհակալ եմ . . . ըսաւ :

Պ. Ֆորէ շարունակեց .

— Ներում կը խնդրեմ ձեզնէ , Պարոն , այս դըժբերակ յիշատակները դարձուցանելու համար . բայց պէտք էր : Չեր հայրը մեռած լինելով ծննդեան պահուն , ո՞վ պիտի դատ բանար կամ բողոքէր : Չեր խնամակալն , այն է Պ. Տանկլար : Ինչո՞ւ չըրաւ : Վասն զի հարիւրապետը չէր ուզեր դատի դիմել , որպէս զի դայթակղութիւնը չժանրանար : Ո՛չ , վասն զի դատն իրականութեան վրայ կը բացուի և ոչ ենթադրութեան : Ո՞ր էր ֆաթէրին ժուլ . ի՞նչ եղած էր . Ֆրանսայի ո՞ր անկիւնը կը ծածկէր իւր ծննդաբերութիւնը : Ֆրանսայի մէջ էր ինք : Եթէ հոն չէր , աշխարհի ո՞ր անկիւնն էր : Պ. Տանկլար ասոնք չգիտնալէ զատ՝ չէր գիտեր իսկ թէ ծննդաբերութիւնը գոյութիւն ունէ՞ր : Ենթադրեմք թէ դատ բանար , դատարանը պիտի պատասխանէր . « Բաղաքային վիճակի ուղղութիւն կը խնդրէք : Յոյժ լաւ . ցուցէք մեզ այդ ուղղելի քաղաքային վիճակն : » Ենթադրութիւն մը չլնջուիր . վարկած մը չոչնչացուիր :

Այս ամենը բացորոյ և կենդանի էր : Եղերբոգը մարմին կ'առնուր , ապացոյցներն ապացոյցներու վրայ կ'աւելնային մեքենայի ճշդութեամբ :

— Երբեմն Պ. Տանկլար մէկ բան մը միայն ունէր ընելիք : Սպասել : Վտանգաւոր էր այս , երբոր 317 յօդուածը կ'ըսէ . « Ժառանգներն երկու ամիս ժամանակ պիտի ունենան տղու մը հարազատութիւնը ժըխտելու համար : » Ո՛չ , վտանգաւոր չէր . վասն զի նոյն յօդուածը կ'աւելցնէ . « . . . Հաշուելով այն ժամանակէն , ուր այն տղան հօրն ինչքը ժառանգելու գէ . . . » Յոյժ լաւ : Բայց շատ երկար սպասելով կանխագրաւման կրնային բախիլ : Ոչ թէ ձեր անչափահասութեան ժամանակ , Պարոն Մաքսիմիլիէն , որովհետեւ կանխագրաւումն անչափահասներու դէմ չկրնար դործադրել : Այլ , յետոյ , երբոր դուք չափահաս լինէիք : Այսինքն այժմ : կը հասկնամ որ խնդիրը կնճռոտ է : Վասն զի վերջապէս շատ շանցած քսան տարին կը բոլորի այդ անցից անցնելէն ի վեր : Եւ այսչափ երկար ժամանակէ մը յետոյ , երբոր դուք կենաց մէջ մտաք , ձեր ժառանգի բնական իրաւունքները դործադրելու պիտի ձեռնարկէք : Անշուշտ անկեղծ էք դուք , անշուշտ չէիք գիտեր ֆաթէրին ժուլի ըրած սուտ յայտարարութիւնն : Արդարեւ հաւանականութիւն կայ որ այս դատը չահիք . բայց հաւանականութիւն ալ կայ որ կորսնցնէք :

Պ. Ֆորէ նորէն կանգ առաւ : Կարծես թէ հաճոյք կ'զգար խնդրոյն շայեկանութիւնն աստիճանաբար աւելցնելէ : Եւ սակայն իւր դիտաւորութիւնն ուրիշ բան չէր , բայց միայն իւր օրինական բացատրութիւնները բացարձակապէս յստակ և բացորոյ ընել :

— Յոյժ ծանր դործ է այսպիսի դատ մը : Անշուշտ , ներկայ պարագային մէջ երկու դատավարք պիտի համաձայնին : Երբոր Պ. Մաքսիմիլիէն Տանկլար մէկ կողմէ ըսէ թէ « Թանտրէ մարքիզուհին Սորպիէ հարիւրապետին դուստրը չէ » . Թանտրէ մարքիզուհին ալ միւս կողմէ պիտի պատասխանէ թէ « Պ. Մաքսի-

միլիէն Տանկլար իրաւունք ունի . Սորպիէ հարիւրապետն իւր հայրը չէ ։ Նոր կացութիւն մը , ուր երկու ոսոխը իրարու հակառակ չեն , ուր դատախազ և դատելի համաձիտ են , ուր օրինաւոր որդին կը բողոքէ իւր հարազատութեան դէմ և իւր անհարազատութիւնը կը պահանջէ : Բայց հաճեցէք դիտել որ երկուքդ ալ քաղաքային վիճակի ուղղութիւն կը խնդրէք : Արդ , ձեր երկուքին ալ քաղաքային վիճակը բեռնաւորեալ է : Դուք , Պարոն Մաքսիմիլիէն , Սորպիէ ծնած էք , բայց օրինական որդեգրութեամբ մը Տանկլար կը կոչուիք : Դուք ալ , Տիկին մարքիզուհի , Սորպիէ ծնած էք , և հրամանագրի մը հաճոյակատարութեամբ Մորէր կը կոչուիք : Դատաւորներուն գիտնալու բանը չէ թէ դուք այս խնդրոյ մէջ ո՞րչափ շահ ունիք : Չեն փնտռեր թէ ինչո՞ւ համար մին դատ կը բանայ և միւսը կ'ընդունի դատը : Դատաւորը զայս միայն կը տեսնեն : Այր մ' և կին մը , չկրելով այն անունը զոր պարտին կրել , քաղաքային վիճակի երրորդ փոփոխում մը կը պահանջեն : Խոստովանեցէք թէ յոյժ խառնաչփոթ գործ մ' է այս : Գիտցէք նաեւ թէ դատաւորը այս խնդիրներն յոյժ փափուկ կը համարին : Պիտի տեսնեն որ օրէնքէն փախուստ տրուած է միշտ և տակաւին փախուստ տալ կ'ուզուի : Վկայեցէք ձեր հողւոյն և խղճիւ թէ իրաւունք պիտի ունենան : Ի զուր պիտի ըսէք դուք անոնց թէ զիրար կը սիրէք և զիրար ամուսնութեան առնուլ կ'ուզէք : Չեր ամուսնութիւնն ապառնի է , և անոնց վճիռը ներկայ : Գիտե՞ն որ այդ ամուսնութիւն պիտի կատարի : Չեղնէ մին կրնայ մեռնիլ : Այն ժամանակ զուր տեղն երրորդ անգամ ուղղած կը լինին քաղաքային վիճակ մը : Ո՛չ , շօշափելի պատճառ մը պէտք է իրենց , իրական շահ մը պէտք է , որպէս զի կատարեն ձեր խնդիրը : Դուք , Մաքսիմիլիէն Տանկլար

ձեր հօրմէն հարստութիւն մը ժառանգեցիք , անոր կանոնաւոր տէրն էք : Արդ՝ դուք քոյր մ' ունիք Էմիլի , Թանտրէ մարքիզուհին : Նա դատ կը բանայ ձեզ դէմ , և այդ ժառանգութեան կէսը կը պահանջէ ձեզնէ : Ունի՞ իրաւունք : Այո՛ , քանի որ երսուն տարին անցած չէ : Այն ժամանակ դուք , Պ . Մաքսիմիլիէն Տանկլար , ինքզինքնիդ կը պաշտպանէք՝ անհարազատութեան դատ բանալով , և կը հաստատէք թէ խարդախութիւն , նենգութիւն , խաբէութիւն եղած է Արտեմիս Սորպիէի ծնած ժամանակ . յօգնութիւն կը կոչէք օրինաց 317 յօդուածը՝ զոր քիչ մ' առաջ յիշեցի ձեզ : « Եթէ այրը պայմանեալ ժամանակին մէջ իւր յայտարարութիւնն ընելէ առաջ մեռած է , ժառանգներն երկու ամիս ունին տղուն հարազատութիւնը ժխտելու համար , հաշուելով այն ժամանակէն , ուր տղան զիրենք անհանգիստ ընէ իրենց ժառանգութեան մէջ » : Այս պարագայի մէջ շահ կայ ձեզ արդարութիւն ընելու մէջ , Պ . Մաքսիմիլիէն Տանկլար : Չկայ Թրանսայի մէջ դատաւոր մը , որ իրաւունք չտայ ձեզ : Հետեւաբար , որովհետեւ երկու դատ կայ բացուած , Արտեմիս Սորպիէ կը կորսնցնէ իւր դատն և դուք կը շահիք ձերը :

Ազատած , ազատած էին : Բնաւ պատասխան չկար այսպիսի յստակ , այսպիսի տրամաբանական բացատրութեան մը : Ճշմարտութիւնը չէր կրնար վրիպել դատաւորաց աչքէն : Արդէն այսչափ պայծառ , այսչափ յստակ կ'երեւէր իրենց : Պ . Տանկլար զարնուած մնացած էր այս փաստերուն զօրութենէն և միանգամայն պարզութենէն : Անշուշտ օրէնքն , երկսայրի սուր , անմեղները զարնելով կ'սկսէր , բայց այժմ կը դառնար և մեղապարտները կը հարուածէր : Չէին գիտեր ինչպէս շնորհակալ լինէին Պ . Թորէէն , ինչպէս յայտնէին անոր իրենց շնորհակալիքը : Բայց Պ . Թորէ չէր սիրեր



չնորհակալութիւն քաղել իրմէ բարիք տեսնողներէ :  
Իւր լաւագոյն վարձքն էր երկու դեռատի և սիրուն  
էակաց երջանկութիւնն ազատելու կարող լինիլն : Ա-  
ւելի կը սիրէր ըսել անոնց . «Երջանիկ եղիք . այս է ձեր  
լաւագոյն շնորհակալութիւն» :

Պ. Մորէր և Պ. Տանկլար դուրս ելան անոր հետ՝  
զգալով որ երկու սիրակիցք մինակ մնալ կ'ուզէին :  
Ի զուր Արտեմիս ջանաց արգելու զանոնք :

— Ոչ, սիրելի՛ աղջիկս, ըսաւ հօրուն, դուք բա-  
ւական վիշտ կրեցիք, պէտք է որ քիչ մ'երջանկութիւն  
ճաշակէք :

Եւ Արտեմիս ծռելով որ համբուրէ զայն, նշմարեց  
անոր երեսին սոսկալի դժգունութիւնն, ուր աչերը  
միայն կենդանի կ'երեւէին, տենդէ ոգեւորեալ :

— Ի՞նչ ունիք, հայր իմ, հարցուց :

— Ոչինչ, զաւակս :

— Կ'աղաչեմ . . .

— Մի՛ վախճաք . քիչ մը յոգնած եմ : Քիչ վիշտ  
չկրեցինք ամենա՛ւալ : Ես երիտասարդ և կորովի չեմ՝  
ձեզ պէս :

— Բայց ձեռքդ կրակի պէս տաք է :

— Քիչ մը հիւանդ եմ արդարեւ :

— Ի՞նչ է հիւանդութիւննիդ :

Պ. Մորէր չպատասխանեց և մեկնեցաւ : Արտեմիս  
երկար անոր ետեւէն նայեցաւ յեղյեղելով ինքնիրեն .

— Ինչո՞ւ գոհ և զուարթ չէ . . . մեզ երջանիկ  
տեսնելով :

Եւ արդարեւ, երբոր միայնակ մնացին, Մաքսի-  
միլիէն անոր ձեռները բռնելով, կը գոչէր եռանդա-  
գին .

— Արտեմ՛, Արտեմ՛, ազատեցա՛նք :

Վառն զո՛ւ միմբա՞ յի տա՛ցց ան զլոմիսս Եմիլլ  
ձմբազ զի յն բաճարձազ զլոմ՝ ճառարաբն իոզմայա՛ւ  
Քաթէրին ժուվ արդէն մոռցած էր Պ. Տանկլարի  
պատահումէն կրած սարսափը : Բնութիւնը կան, որք  
բարոյական հարուածներէ չեն զգածուիր : Ամեն բան  
կը սահէր կ'անցնէր այդ կնոջ վրայէն : Այս միջու-  
ցիս Տիկին Մորէր յոյժ զբաղեալ էր : Ուազ շաբ-  
թուն մէջ էր, որ Զատիէ ետքի պարահանդէսներէն  
կամ նոր տարւոյ այցելութիւններէն աւելի կը գրաւէ  
Ներմեռանդուհեաց ժամանակն : Եկեղեցիէն դուրս չէր  
եղներ : Հաճոյք կ'զգար այն տեղի հոտաւետ եղկու-  
թենէն, հաւատացելոց ամփոփման մէջ, երթեւեկու-  
թեանց մէջ և կէս խեղդուած մրմունջներուն մէջ :  
Կանայք, ( մինչեւ իսկ ամենէն աւելի անկեղծ բարե-  
պաշտք) չեն կրնար եկեղեցւոյ մէջ ինքզինքնին արգե-  
լու խօսելէ : Ըրածնին կէս ձայնիւ ոչնչաբանութիւն-  
ներ են հառաչանօք խառն, լուութեամբ ընդհատեալ,  
որոց տեղւոյն սրբութիւնը խորհրդական կերպարանք մը  
կուտայ : Հոն բամբասանք ալ կ'ընեն, բայց աչերնին եր-  
կինք համբառնալով : Տիկին Մորէր կը սիրէր այս տար-  
տամ անուշահոտութիւնն, այս կէս լուութիւնները .  
հաճոյք կ'զգար երգեհոններուն նուազներէն : Միով  
բանիւ, կը սիրէր կրօնին այն ամեն բաներն որք շիղե-  
րու հետ կը խօսին : Իսկ փոյթ չէր ըներ կրօնին այն  
հանգամանքներէն, որք հոգւոյն հետ կը խօսին, արա-  
րածին ընդ արարիչն ունեցած վսեմ խօսակցութեանց  
մէջ :

Ժամանակակից ընկերութիւնն եկեղեցւոյ մէջ ալ  
նոյն խտրութիւնները կը պահէ ինչ որ աշխարհի մէջ :  
Շատ անգամ եկեղեցիք ազօթելու դահլիճներ են :  
Ո՛հ, այն նսեմաստուեր մատուռներն, ուր առաջին  
քրիստոնեայք կը ժողովուէին, ազնուական և ուամիկ,  
երկնաւոր փրկիչը պաշտելու համար . . .

Մեծ տիկնայք սեւ զգեստ կը հագնին, որ ժան-  
 եակներով նկարուած նուրբ բաճկոնակ մը կը ցուցնէ,  
 պարզ կառք, երկու ընտիր և արծաթասանձ երկվար-  
 ներով: Սեղանաւորի կինը միաձի թխորակ կառքով  
 կուգայ, որ արդէն նուազ աղնուապետական է. հա-  
 գուստը նոյնչափ վայելչաձեւ է: Հետեւակ սպասաւոր  
 մ'ունի ետեւէն: Պատարագի գիրքը շատ գեղեցիկ է:  
 Իսկ միջակ քաղաքացեաց տիկնայք ամականով վար-  
 ձած կառքով կ'երթան: Վաճառականին կինը աչքի  
 զարնող շրջազգեստ մը կը հագնի, ծաղկանց մեծ փունջ  
 մը պարզելով քովէն: Փեղոյրն ալ ծաղիկներով բեռ-  
 նաւորեալ է: Վերջապէս կեղծ կացուածեան մէջ գըտ-  
 նուող տարաբաղդուհին, այսինքն այն որ այլ չունի  
 զինքը թեւարկելու կամ ընտանիք մը զինքը պաշտ-  
 պանելու համար. . . . ո՛հ, ի՛նչ վեհերոտ համեստու-  
 թեամբ կը սողոսկի, մինչդեռ միւսները գոռոզ նայ-  
 ուածքով կ'ընկճեն զայն: Ներողամտութիւնը նորաձեւ  
 առաքինութիւն մ'է. . . . Աւետարանի մէջ:

Արտեմիս և մայրն երկուքն ալ մի և նոյն թեմի ծուխ  
 էին: Արդ՝ այն օրը Տիկին Մորէր սա արտառոց գաղա-  
 փարն ունեցաւ թէ իւր աղջիկն ոչ եւս կը տեսնէր յեկե-  
 ղեցին: Ի՛նչ որ յանցանք: Սակայն չէր համարձակեր  
 տունն երթալ տեսնել զայն: Դժնդակ տպաւորութիւն  
 մը մնացած էր իւր վրայ այն մեծ դահլճին յիշատակէն,  
 ուր Պ. Տանկլար իւր սարսափելի անցեալն յիշած էր:  
 Եւ սակայն առաւօտուն Ներածո՞ւթիւն Բարեպաշտական կնային  
 մէջ քանի մը խրատներ կարդացեր էր, որը զինքը բա-  
 ւական կը սրտապնդէին. այսինքն թէ մէկն այլոց մեղ-  
 քերը չափելով կամովին կը մոռնայ իւր մեղքերը:  
 Ասկէ զատ կը հարցնէր ինքն իրեն թէ մարքիզուհին  
 ի՛նչ ընդունելութիւն պիտի ընէր իրեն. վասն զի գի-  
 տէր որ աղջիկն իւր վրայ լաւ համարում մը չէր կրնար  
 ունենալ: Մէկ կողմէ ժամանակաւ վէտի դղեակին մէջ

տեսնուած սարսափելի գործը, միւս կողմէ Մաքսիմիլի-  
 էնի հաւուն յայտնած պժգալի իրողութիւններն: Արդ,  
 նոյն իրիկունը, ժամ հինգին միջոցները, ճիշդ նոյն  
 միջոցին որ Տիկին Մորէր մարքիզուհոյն վրայ կը մը-  
 տածէր, մարքիզուհին Տիկին Մորէրի տունը գնաց:

Երբոր կին մը բարի է, իւր բարութիւնը սահման  
 չունի: Արտեմիս ինքզինք երջանիկ կ'զգար. Պ. Յորէի  
 օրինական կարծիքն ստանալէ ի վեր, գուժ կ'զգար  
 իւր մօր վրայ: Կը մոռնար անոր ոճիրները: Կ'ըսէր ինքն  
 իրեն թէ մօր մ'իւր աղջկան ըրած գեշութիւնը չէր  
 կրնար պակսեցնել զաւկի մ'առ իւր մայրն ունեցած  
 որդեական պարտականութիւնները: Կը գուշակէր որ  
 Տիկին Մորէր նեղութիւն կ'զգար իրեն գալու: Ուրեմն  
 իրեն՝ Արտեմիսի կը մնար առաջին քայլն առնուլ: Ար-  
 դարեւ սրտնեղիչ ընթացք, բայց այս փորձէն յետոյ  
 քաղցր վարձատրութիւն մը կ'սպասէր իրեն: Տուն  
 վերադառնալուն հոն պիտի գտնէր Մաքսիմիլիէն, որ  
 ձեռնարկելիք օրինական գործողութեանց վրայ տե-  
 ղեկութիւններ պիտի տար իրեն: Մարքիզուհոյն  
 սիրտն ուժգին կը բաբախէր ֆաթէրինի սանդուղէն  
 վեր ելած միջոցին, ինչպէս որ ժամանակաւ վէտի  
 դղեակին մէջ անմեղութիւնը կը նեղուէր ոճրին առջև:  
 — Երկար ժամանակ է որ տեսած չեմ ձեզ, մայր  
 իմ, կուգամ տեսնելու թէ ի՛նչպէս էք:

— Շնորհակալ եմ, աղջիկս, լաւագոյն եմ:  
 Եւ արդարեւ ֆաթէրին յոյժ անհոգ կ'երեւէր:  
 Դէմքին վրայ բնաւ նեղուելու կամ ամաչելու նշան մը  
 չկար: Հանդարտ դէմքով, անխռով աչօք կը նայէր  
 Արտեմիսի:

— Չկրցի գալ ձեզ տեսնել, ըսաւ: Գիտէք որ ես  
 ազատ չեմ այս միջոցիս. . . . Սուրբ շաբաթը զիս  
 շատ կ'ըբաղեցնէ: Նոր աղօթագիրք մ'առի, ցուցնեմ  
 ձեզ:

Եւ իւր թռչնական թեթեւութեամբ և խեղճ դատարկ ուղեղին հանդարտութեամբ դնաց բերել այդ հաշկաւոր աղօթագիրքն, որոյ վրայ սքանչացնել կ'ուզէր իւր աղջիկն : Արդարեւ յոյժ գեղեցիկ տրպուած և շքեղապէս կազմուած էր : Ժպտելով վրան կը նայէր : Այսպիսի արարածի մը համար, որ կրօնին ճշմարիտ մեծութիւնը չէր հասկնար, գեղեցիկ աղօթագիրք մը բարձր բարեպաշտութեան ազատոյց էր :

— Այս առթիւ ըսեմ ձեզ, աղջիկս, թէ դուք ըստ բաւականի չէք հետեւիր բարեպաշտական դործոց. և ցաւելով կը տեսնեմ որ ձեր հոգւոյն փրկութիւնը կը վտանգէք :

Քաթէրին կանգ առաւ՝ տեսնելով որ Արտեմիսի դէմքը սոսկալի կերպիւ ճերմկցաւ : Կարծես թէ ներքին բուռն ցնցում մը կը կրէր :

— Իմ հոգւոյս փրկութիւնը, մայր իմ :

Եւ անշարժ կեցած՝ իւր կենաց դահիճը կը դիտէր :

— Չէ՞ք պատասխաներ ինձ, աղջիկս, ըսաւ քաթէրին :

— Չեմ պատասխաներ, մայր իմ, ըսաւ բացօրոշապէս մարքիզուհին, վասն զի կը վախնամ որ ձեզ դպչելու խօսք մը բերնէս կը հանեմ : Մեք կրօնքը մի և նոյն կերպիւ չենք ճանչեր : Դուք արտաքին պաշտամանց կողմը կը դնէք զայն, իսկ ես խղճիս ինձ հրամայած պարտուց կատարման մէջ կը դնեմ : Իմ պաշտած Աստուածս ներողութեան Աստուած է. բայց կ'ուզէ որ իւր արարածն ապաշաւէ : Ես չեմ հաւատար իմ մեղքերուս թողութեան՝ առանց զղջման : Այս խօսքերս յանդիմանութիւն մի համարիք. ես չեմ ներեր ինձ յանդիմանութիւն ուղղել ձեզ :

Քաթէրին կը հասկնա՞ր : Այդ անհաւասարակչիւ

ուղեղը կը հասկնա՞ր իրաց բուն իմաստն : Առանց ստրջանաց խօսք մը թոթովելու՝ թողուց զԱրտեմիս որ մեկնի : Անկեղծաբար ինքզինք քաւեալ կը կարծէր, որովհետեւ լաւ տաքցած մատուռ մը կը մոնէր. վասն զի մետաքսապատ աղօթարանի մը վրայ կը ծնրադրէր. վասն զի տասն լուինոց աղօթագրքի մը մէջէ խօսքեր կը հեզէր : Չէր հասկնար իւր բարեպաշտութեան ամբարշտութիւնն, ոչ ալ դիտէր թէ առանց խղճի խայթի Աստուծոյ մերձենալը՝ նախատել է զՍ.յն :

Սակայն Արտեմիս իւր տունը կը վերադառնար : Մաքսը վերատեսնելու մտածութիւնը միայն պէտք էր որ իւր մօր խօսքերուն պատճառած դժնդակ տպաւորութիւնը շնչէր. բայց պատրանք կ'սպասէր զինք : Փոխանակ երիտասարդը գտնելու, նամակ մը միայն գտաւ, որով Մաքս չկրնալ գալուն համար ներում կը խնդրէր : Պ. Ծօրէ զինքը կ'սպասէր օրինական բացատրութիւններ տալու համար. ուստի հետեւեալ օրն իրիկուան դէմ միայն պիտի կրնար գալ : Առանց լաւ դիտնալու թէ ինչո՞ւ այս նամակը սրտաստանջութիւն պատճառեց մարքիզուհւոյն : Օրինական բացատրութիւններ : Բայց Պ. Ծօրէ երկար և յոյժ մանրամասն բացատրութիւններ տուած էր : Ասկէ զատ, Պ. Ծօրէ անշուշտ բոլոր իրիկուներ վար չէր դնէր զՄաքսիմիլիէն. ինչո՞ւ համար սա գոնէ Ժամ մը չէր նուիրեր զինքը տեսնելու : Առաջին անգամ Մաքս քիչ փոյթ կը ցուցնէր իրեն նկատմամբ. իւր սիրոյն և ընթացքին մէջ անհամաձայնութիւն մը կար : Տարտամ կասկածներ կը խռովէին Արտեմիսի ուղեղն ու սիրտը : Չէր ըմբռնէր այս անբացատրելի բացակայութեան պատճառն : Եւ սակայն պատճառ մը կար հարկաւ : Արտեմիս այն իրիկունն անցուց վերստին կարդալով Մաքսի նամակները զորս երբեմն թրէթորէն կը գրէր իրեն՝ իրենց ութօրեայ բամբանման միջոցին : Իւր ներկայ մտահոգութեանէն

զինքը շրջելու համար, սիրոյ այս բոյրը պէտք էր : Չտեսնելով զՄաքս, կ'ուզէր բացակային մտածութեանց հետ խօսիլ : Երբոր նամակները կարդաց, յիմ մտն կոչեց և այսպէս այն տխուր երեկոյին ժամերը կարճ անցան : Մարքիզուհին դեռատի արարուհւոյն պատմութիւնները մտիկ կընէր, և այն հեռաստան երկիրներուն նկարագիրը՝ գոնէ զանոնք պտըտող քաջասիրտ ուղեւորը կը յիշեցնէր իրեն :

Վերջապէս, գիշերն և հետեւեալ առաւօտն անցան : Նշանակեալ ժամուն Մաքսիմիլիէն եկաւ Պ. Ֆորէի հետ : Արտեմիսի երկիւղները նորոգեցան : Գողարիկ յանդիմանութիւն մը դրաւ իւր նշանածին ուղղած նայուածքին մէջ . բայց իսկոյն իւր աչքին զարկաւ Մաքսիմիլիէնի դէմքին դժգունութիւնը : Պ. Ֆորէ ալ արխուր և սրտատանջ կ'երեւէր : Արտեմիս դժբաղդութիւն մը գուշակեց, ինչպէս որ թռչունն իւր գլխուն վերեւ թնամուտն ներկայութիւնը կը գուշակէ :

— Տէ՛ր Ատուած, ի՞նչ կայ տակաւին, հարցուց :  
— Բա՛ն մը չկայ, սիրելի՛ Արտեմ, պատասխանեց Մաքսիմիլիէն ժպտ կեղծելով : Ինչպէս գրած էի ձեզ, Պ. Ֆորէ կը հաճի իմացնել մեզ դատական գործողութիւններն, որոցմէ պարտինք անցնիլ :

— Ըսելիքս խիստ կարճ է, Տիկին, աւելցուց դատաւորը : Կը հասկնաք թէ իմ խորհրդատուի պաշտօնս որչափ փափուկ է՝ պաշտօնական դրիցս պատճառաւ : Իմ ըրածս պարզապէս քաղաքավարական և բարեկամական գործ մ'է : Թերեւս անպատեհութիւն մ'է օտար մարդիկ ծանօթացնել ձեր ընտանեկան գաղտնեաց . ուստի լաւ է որ այս ամենը մեր մէջ մնայ : Այս պատճառաւ է որ Պ. Մորէր և Պ. Տանկլար նախամեծար համարեցան ինձ դիմել, քան ուրիշի : Այս պատճառաւ է նաեւ որ ես ալ համարձակեցայ զբաղիլ ձեր գործին :

— Եւ ադոր համար եւս անձնապէս շնորհապարտ եմ ձեզ, ըսաւ Արտեմիս :

— Ահա, տիկին, յստակօրէն բացատրեցի ձեզ : Այս ժամուս, դուք, օրինաց առջեւ Պ. Մաքսիմիլիէն Տանկլարի քոյրն էք : Նա անիրաւաբար տէր եղած է ձեր հօրն հարստութեան կիսուն, որ ձեր իրաւունքն է : Ահա այդ կէսը պէտք է պահանջել անկէ :

— Յոյժ լաւ :

— Ուրեմն ձեր պահանջն անոր պիտի իմացնէք դատական գրով մը, և դատ պիտի բանաք քաղաքային դատարանին առջեւ : Պ. Մաքսիմիլիէն Տանկլար ալ ինքզինք պաշտպանելու համար երկրորդ դատ մը պիտի բանայ ձեր դէմ այն դատարանին առջեւ, և իւր ապացոյցները պիտի ներկայէ : Այդ կէտն ալ բացատրեմ ձեզ, տիկին : Դատարանին մէջ պիտի կարգացուին ձեր մօր և ձեր բուն հօր միջեւ փոխանակեալ նամակները . պիտի կարդացուի ժամանակաւ Ֆօայի դատարանին կողմէ իմ ըրած քննութիւնս . պիտի կարգացուի Պ. Մորպիէի իւր մահուանէն առաջ ըրած գրաւոր յայտարարութիւնը . պիտի կարդացուի Տիկին Մորէրի խոստովանութեան գիրն . այս եղերերգին ծանօթ եղող և դեռ կենդանի մնացած վկայները պիտի լսուին, որք պիտի պատմեն թէ ի՞նչ էր Մորպիէ հարիւրապետն և ի՞նչ եղաւ . . . :

Արտեմիս ոտքի վրայ ելած էր, երեսին գոյնը բոլորովին նետած : Կը հասկնար գործին ծանրութիւնը :

— Բայց անհնար է այդ, գոչեց : Ի՞նչ կ'ըսէք, Պարոն, ես Տիկին Մորէրի դուստր, մայրս անպատիւ ընեմ, անցելոյն ցեխերն առնում և անոր երեսին նետեմ : Երթամ նոյն իսկ գերեզմանէն խնդրեմ, որ բացուի և ամբաստանէ՛ զայն : Պէտք չունիմ գիտնալու թէ զիս սիրեց կամ ոչ, բարի՛ եղաւ կամ ոչ, իւր պարտքը կատարեց կամ ոչ, մեղք գործեց կամ ոչ :

ես անոր աղջիկն եմ, այս բաւական է ինձ : Ահ, ինչո՞ւ իմ աչքիս փայլեցուցիք այնպիսի յոյս մը, որ ունայն պիտի լինէր . ինչո՞ւ զիս որրեցիք երջանկութեամբ մը, որ չպիտի կրնայ իրանալ . . . : Ներեցէք ինձ, Պարոն : . . . Ահա կ'ամբաստանեմ ձեզ այժմ, որովհետեւ ցաւ կ'զգամ, դառն ցաւ կ'զգամ . . . : Ո՛հ, ես մարդ չեմ ամբաստաներ քնաւ, և ոչ իսկ մեղաւ պարտ եղողները . . . : Մեք մեր ծնողաց սխալներուն բեռը կը կրենք : Եթէ կին մը, մեղանշելէ յառաջ խորհէր թէ իւր սխալման հետեւանքն իւր զաւակը պիտի կրէր . . . : Ներեցէք ինձ լալս, բայց ես յոյժ տարաբաղդ եմ . . . :

Արտեմիս կուլար և Պ. Գորէ անոր կը նայէր խորին տրդահատանօք : Յեանոյ Արտեմիս արտասուքը սրբելով, ըսաւ կարծես ինքնիրեն խօսելով .

— Եւ ես անպատուեմ նաեւ զՊ. Մորէր, որ այնչափ բարեսրտութիւն ըրաւ ինձ . անոր անունն անխոստովանելի ամօթալեաց մէջ քաշքշեմ . . . : Այժմ կը հասկնամ թէ ինչո՞ւ այնչափ տրտում էր անցեալ օր . հասկցեր էր անշուշտ ինչ որ Մաքսիմիլիէն և ես չէինք հասկնար տակաւին :

— Տիկին, ըսաւ Պ. Գորէ թուղթերու տրցակ մը հանելով գրպանէն, այս թուղթերը Պ. Մաքսիմիլիէն յանձնեց ինձ : Ասոնց մէջ են նախ ձեր մօրը խօստովանութիւնը, զոր գրած էր իւր ամուսնութեան հետեւեալ գիշերն . երկրորդ՝ այն նամակները՝ զոր քիչ մ'առաջ յիշեցի : Առանց այս թուղթերուն, անհարգատուութեան դատ հնարաւոր չէ : Այս թուղթերը Մաքսիմիլիէն Տանկլարին են . իրեն կը դարձունեմ :

— Առէ՛ք, Արտեմիս, առէք, ըսաւ ծանրութեամբ Մաքսիմիլիէն, այդ թուղթերն իմ սեփականութիւնս են, իմ, որ հօրս ժառանգն եմ : Չեզ կուտամ դատօնք, ինչ կ'ուզէք ըրէք :

Արտեմիս առաւ զանոնք մեքենաբար, միշտ անշարժ և լռին : Օրէնսդէտը շարունակեց .

— Բիչ մ'առաջ կը մեղադրէիք զիս սին յոյսեր ձեր աչքին փայլեցուցած լինելու համար : Ամենեւի՛ն, տիկին, ի՞նչ եղան իմ առաջին խօսքերս, անցեալ օր : « Ես հոս օրինական խորհրդական մ'եմ, և ոչ այլ ինչ » : Դուք դատական խորհրդատուութիւն մը կը խնդրէիք ինձմէ, ես ալ տուի : Ամեն դատի մէջ նիւթական կողմը կայ, բարոյական կողմը կայ : Դուք նիւթական կողմին վրայ խորհուրդ կը հարցնէք ինձ . ես ալ պատասխանեցի ինչպէս որ պարտքս էր : Երէկ, Պ. Մաքսիմիլիէն, բարոյական կողմին վրայ խորհուրդ հարցուց ինձ . ես ալ լուսաւորեցի զայն, ինչպէս այժմ ձեզ : Դուք կը կարծէիք որ ձեր դատը լռութեամբ պիտի տեսնուէր անսխալական դատաւորներու ձեռամբ, իրենց վեհ ատենին բարձրէն : Այսօր կ'իմացնեմ ձեզ թէ դատ մը լռութեամբ չտեսնուիր երբէք . և թէ այս դատին ետին դայթակղութիւն կայ ձեր մօր համար : Չեզ կ'իյնայ ընտրութիւն ընել դայթակղութեան և ձեր երջանկութեան միջեւ :

Եւ խօրին յարգութեամբ խօնարհելով դեռատի տիկնոջն առջեւ, դուրս ելաւ գնաց : Մաքսիմիլիէն և Արտեմիս մինակ մնացին դէմ առ դէմ :

Պ. Գորէի խօսքերն անողորմաբար ճշմարիտ էին : Առաջին պահուն զգլխեր էին յուսով : Գիտէի՞ն այս ամենը : Կը տեսնէի՞ն իրաց անագորուն իսկութիւնն : Եւ այժմ իւր ամեհի ակներեւութեամբ կը ներկայանար իրենց :

Արտեմիս Մաքսիմիլիէնի երեսը կը նայէր :

— Դուք երէկ չեկաք, որովհետեւ Պ. Գորէ ինձ ըսածները ձեզ ըսած էր, այնպէս չէ՞ :

— Այո՛ :

— Դուք ալ անմիջապէս ինձ պէս մտածեցիք, այսինքն թէ այս դատաստան անհնարին է, այնպէս չէ՞ :

— Այո՛ :

— Եւ ինձ կուտաք այս թուղթերն, որք մեր բուրր ապագայն կը պարունակեն, գիտնալով որ պիտի ջնջեմ՝ Այնպէս չէ՞ :

— Այո՛ :

Պահ մը լուսթիւն տիրեց : Այս երկու ազնիւ էակները զոհողութեան միեւնոյն խորհրդով իրարու կը հանդիպէին :

— Ես իմ կենացս իշխելու իրաւունք ունիմ, գոչեց կիրքով, բայց ձեր կենաց իշխելու իրաւունք չունիմ : Չեմ համարձակիր ձեր երջանկութիւնն յաւիտենապէս կորսնցնել . մեք այն անձերէն ենք, որք իրենց անմահ սէրն հաւատարմութեամբ կը պահեն :

— Դուք կրնաք իշխել իմ կենաց, նա ձեզ կը վերաբերի, ըսաւ Մաքսիմիլիէն ցած ձայնիւ :

Արտեմիս առաւ թուղթերուն տրցակն և վառարանին ըով երթալով՝ կարմիր բոցերուն մէջ նետեց : Կրակը մէկէն բորբոքեցաւ, գունաւոր բոց մ'արձակեց, յետոյ քիչ մը մոխս . . . : Քիչ մը մո՛խ . զայս կը պարունակեն մարդկային ամեն երջանկութիւնք : Եւ երկու դեռատի խօսեցեալք դէմ առ դէմ կեցան մունջ, գունատ, յուսահատ, բայց խորխոր իրենց հաւասար անձնուիրութեամբ :

— Արտեմ, Արտեմ. կը գուշակեմ ձեր ամեն մը տաժումներն : Ի՞նչ պիտի ընենք այժմ : Մնաք բարեալ ըսել միմեանց և յաւիտեան բաժնուիլ իրարմէ : Երբոր պատուարը տնկուեցաւ մեր միջեւ, երբոր չարազողութիւնը ծանրացաւ մեր ճակտին վրայ, միտքըս չար խորհուրդներ եկան, որք պարտեալ կրից յաճախորդն են : Ես մարդ մ'եմ, մարդկութեան ամեն տկարութիւններն ու վատութիւնները կրեցի : Կը խօստովանիմ զայս ձեզ . ո՞վ իմ հողւոյս անմահ

ընկեր : Այո՛, կ'ուզէի փախչիլ ձեզ հետ և մեր խանդակաթ սէրը հեռուն անապատի մը մէջ ծածկել . . . : Ո՞վ սիրելի կին, անարատ էք դուք, և անարատ պարտիք մնալ . . . : Գոհութիւն Աստուծոյ, հողւոյ այս մարտին մէջ յաղթող ելայ : Սիրոյս ազնիւ մասն յաղթեց յուր մասին : Խղճմտանքիս խորն իջայ, և հոն ստուգեցի որ մարդկային ճշմարտութիւնն էր վիշտ կրել և ինքզինք զոհել : Արտեմ, գիտնանք վշտակրիլ և ինքզինքնիս զոհենք :

Արտեմիս կ'սքանչանար Մաքսիմիլիէնի այս խօսքերուն վրայ և հաղար մահ կը կրէր : Կը գուշակէր հէք երիտասարդին կրած դառն ցաւն, և կ'ուզէր ամօքել : Միանգամայն փառք կը համարէր իրեն այսպիսի մարդէ մը սիրուած լինիլն :

— Պիտի մեկնիմ, ըսաւ Մաքսիմիլիէն : Քաջ գիտցիք, սիրեցեալդ իմ, թէ միշտ ձեր վրայ պիտի խորհիմ : Նախասահմանութիւնը կրնայ բաժնել մեր մարմինները, բայց չկրնար մեր հողիները բաժնել : Անոնք անհուն արջրպետին մէջ զիրար պիտի գտնեն, պիտի տեսակցին, և պիտի խօսակցին : Եւ իմ վտանգաւոր ժամերուամէջ բաւական պիտի լինի ինձ դէպ առ ձեզ դառնալ և սրտապնդել :

Իրարու երես կը նայէին : Իրենց սէրը մարդկային ցած կիրքերէ վեր կը սաւառնէր : Մինչեւ իսկ վերջին համոյր մը փոխանակելու կամք չունեցան : Յանկուութեան ամեն հրապոյրներն զգալէ յետոյ, այժմ անարատութեան վսեմութիւնը կը ճանչէին :

— Մնաք բարեալ, ըսաւ նորէն Մաքս :

— Երթաք բարեալ, պատասխանեց Արտեմիս :

Միմեանց ձեռք բռնած էին . վերջին նայուած մ'ալ փոխանակեցին և Մաքսիմիլիէն անբեւոյթ եղաւ : Կ'երթար Ափրիկէի մէջ իւր բազմավտանգ առաքելութիւնը վերսկսել :

Իսկ Արտեմիս, ի՞նչ պիտի ընէր : Մաքսի ներկա յութիւնը մինչեւ այն ժամանակ ուժ կուտար իրեն : Մարդ մ'ինքզինք զոհելու զօրութիւն կ'ունենայ քանի որ իւր զոհակիցն իւր առջեւ կը տեսնէ : Բայց այժմ մինակ կը մնար : Ի՞նչ պիտի ընէր . . . : Թիկնաթուռի մը վրայ իյնալով լալ սկսաւ : Չգային տազնապ, որոյ մէջ շատ անգամ կնոջ մ'առաջին կսկիծը կը լուծուի : Յետոյ գաղափարներն ետեւէ ետեւ եկան և այս ազնիւ արարածին ուղեղին մէջ դասաւորեցան :

Ամեն բանի մէջ և ամեն բանի համար կ'ուղէր իւր սիրելւոյն նմանիլ : Նա, այր մարդ, կ'երթար անձնա սիրական և սպաւտական գործեր կատարել . . . ինքը, կին, չունէ՞ր միթէ ինքն ալ անձնուիրական և սպաւտական գործեր որք իրեն սպասէին, և որք իրեն հրապոյր ազդէին : Ժամանակներն այժմ ետութեան են . . . անձնականութեան հով մ'ելած է աշխարհի վրայ : Բայց կան տակաւին առանձնաշնորհեալ էակներ, որք կը հսկեն և իրենց ընկերին կը նուիրեն զիրենք : Արտեմիս անոնց քով պիտի երթար : Մաքսիմիլիէն գիտութեան կը զօհէր ինքզինք . . . ինք ալ գթութեան պիտի զօհէր : Չէ՞ր կրնար մարդ մը սիրել : — Վշտակիր մարդկութիւնը պիտի երթար սիրել : Չաւակ չպիտի ունենար — : Մայր չունեցող տղայքը պիտի որդեգրէր : Իւր սիրան իրաւունք չունէ՞ր մէկ անձի համար բաբա խելու : — Պիտի չայնցնէր զայն, որպէս զի աշխարհիս ամեն տարաբաղձներուն համար կարենայ բաբախել : Առանձնութեան մէջ թաղուիլ : — Ո՛չ . . . առանձնութիւնն հանգստութիւն է . . . ինք պայքար կը փնտռէր : Աշխարհի մէջ մայրապետի պէ՞ս ապրիլ : — Գե՞տ յոյժ ծագկահասակ էր : Կրօնաւորական զգեստը միայն կրնար իրեն տալ այն ակնածութիւնն, որում պէտք ունէր :

Ժամերը ժամերուն վրայ կ'աւելնային, մինչդեռ Արտեմիս կ'ամրապնդէր մարդոցմէ հրաժարելու այս

բարձր մտածութեանց մէջ : Եւ անյարժ կը կենար, աչերը վառարանին առկայծեալ բոցին վրայ յառած . . . : Յանկարծ գորգին վրայ թեթեւ քայլերու ոտնաձայն մը կորդեց զայն իւր մտախոհութիւններէն : Ժէմման էր : Դեռատի արաբուհին կանգուն կը կենար անոր առջեւ, նայելով այն տարօրէն հայեացքով, ուր այնչափ մտածութիւնը կը յուզուէին :

- Գնաց, այնպէս չէ՞, ըսաւ . . .
- Բայց . . .
- Ես հոս կը կենամ : Քեզ քաղցր պիտի գայ երբոր անոր վրայ խօսիմ : Բոլորովին մինակ չես լինիր :
- Եւ Արտեմիս մօտենալով, կամացուկ մ'ըսաւ : — Ես ալ կը սիրէի զայն . . . :
- Ութ օր յետոյ Արտեմիս իւր նորընծայութիւնը կ'սկսէր Ս. Վիչենցիոսի քոյրերուն վանքը . . . :

Ա. Վիրիկէի խորերն երկար ուղեւորութիւններէ յետոյ, Մաքսիմիլիէն Տանկար կը հասնէր վերջապէս իւր նպատակին . . . այն էր ֆոնկոյ գետին հետազոտութիւնը, զոր Լիվինկսթոն չէր կրցած աւարտել : Աշխարհահարկան ընկերութիւնը կարեւոր յիշատակագիր մ'ստացաւ անկէ որ ստուգապէս կը հաստատէր այդ գետին անհուն պտոյտը՝ Նիանգայի լիճէն մինչեւ Պանանա : Երբոր իւր գործն աւարտեց, Մաքս ոտքի վերայ կենալու կարողութիւն չունէր . . . ծանր ջերմ մը կը հիւծէր իւր առողջութիւնը : Վեց երկար ամիսներէ ի վեր լուր մը չէր առած Ֆրանսայէն : Ի՞նչ եղեր էին իւր սիրած անձինք : Ի՞նչ եղեր էր Արտեմիս, որոյ յիշատակը չէր բաժնուեր մտքէն : Վրանին տակ ուսման պարապած միջոցին, բնիկներու փոքրիկ բանակի մը հետ ուղեւորած միջոցին, սիրելւոյն քաղցր և սիրուն ուրուականն աչքին առջեւ էր միշտ : Կենացը մէջ

չկար վայրկեան մը, ուր այդ անագորուն և հեշտալի տեսիլը չունենար: Արդարեւ քաջ գիտէր թէ ամեն բան լմնցած էր մէջերնին, բայց և այնպէս ուրախութիւն կ'զգար մտածելով որ Ֆրանսա վերադառնար և զայն հեռիէն տեսնէր:

Իւր կուտակեալ յոգնութեանց հակառակ, Քաւինտայի ծովածոցէն հոլանտական պալէնորսակ նաւ մը նստաւ: Կ'ուզէր Սէնէկալի Սէն-Լուի նաւահանգիստն ելնել և անտի շոգենաւ նստելով Ֆրանսա վերադառնալ: Երկար և ջատիչ ուղեւորութիւն մը հըրատապ կլիմայի մը տակ, դանդաղ նաւու մը մէջ, որոյ հրամանատարն ու նաւաստիները մեծ յարգանօք կը վարուէին իրեն հետ: Իւր դիւցազնական գործերն իմացուած էին: Այդ անմշակ էակաց առջեւ գերընական բան մը կայ միշտ այն մարդուն վրայ որ Ափրիկէի ծածուկ և անձանօթ խորերը թափանցած է: Իսկ Մաքսիմիլիէն, իրիկունները ժամերով նաւուն խելքին վրայ կեցած՝ աստեղադարդ երկինքն և հարթածաւալ ծովը կը դիտէր:

Երբոր Սէն-Լուի հասան, երկիրը տխուր վիճակի մէջ գտան. դեղին տենդը կը տասանորդէր Ֆրանսական գաղթականութիւնը: Ֆրանսայէն նոր բժիշկներ և Գթութեան քոյրեր ուղուեր էին, վասն զի գտնը ուաճներուն ամենն ալ մեռած էին: Մաքս քանի մ'օր միայն պիտի կենար հոն, Մարսիլիայի շոգենաւին գալուն սպասելով:

Մեկնելուն առջի իրիկունը, նաւահանգստին վրայ կը թափառէր, Ֆրանսայէն եկող շոգենաւն երեւցաւ, առանց առաջուան պէս ուրախութեան աղաղակներով ողջունուելու: Քաղաքին մէջ տիրող թախիժը կ'արգելուր ամեն արտաքին ցոյց: Շոգենաւին տախտակամածին վրայ շորս Գթութեան քոյրեր կը տեսնուէին նաւական սպայից հետ խառնուած:

Երբոր շոգենաւին ուղեւորներն իրարու ետեւէ վայտեայ կամուրջէն անցնելով ցամաք կ'ելնէին, Մաքս մեքենաբար անոնց կը նայէր, և գաղթականը յարգանօք իրենց գլուխը կը բանային Գթութեան ազնիւքերց առջեւ, որք իրենց հայրենիքը թողլով մեռնելու կուգային: Յանկարծ երիտասարդը ցնցուելով գոչեց: Գթութեան քոյրերուն երրորդը յէմմա էր, չորրորդն Արտեմիս: Այո՛, Արտեմիս, առաջուան պէս նրբահասակ, գեղեցիկ և սիրուն: Միայն թէ երեսը նիհարցած էր վշտակրութենէ: Պահ մը Մաքսիմիլիէն կարծեց թէ երազ կը տեսնէր. ինքզինք խողական ցնորքի մը խաղալիկ եղած կ'երեւակայէր: Նոյն ի նքն է, այո՛, նոյն ի նքն է: Եւ խելայեղեալ դէպի նա վաղեց գոչելով.

— Արտե՛մ, Արտե՛մ:

Մարքիզուհին իսկոյն կանգ առաւ այս ծանօթ և սիրելի ձայնէն, որ յանկարծ իւր ականջին կը զարնէր քանի՛ ամիսներ անցնելէ յետոյ: Երկար սարսուռ մը ցնցեց զինքն. իրարմէ քանի մը քալ միայն հեռի էին: Մաքսիմիլիէն նիհարցած, սոսկայի կերպիւ փոխուած, դողալով ջերմէն ու սրտայուզումէն: Արտեմիս ալ իւր գորշ բուրդէ չըջազգեստին մէջ անշարժ, երկնային երեւոյթի մը պէս իդէական՝ իւր լայնեզր ճերմակ գըդակին տակ, որ թիթեռնիկի թեւին կը նմանէր:

— Ժողիէ՛թ . . . ըսաւ Մաքս:

Սխրալի անուն, որ իրենց մանկութիւնն և խանդակաթ սէրը կը յիշեցնէր: Այս բառին մէջ դրաւ Մաքս իւր երիտասարդութեան բոլոր զգացումներն, իւր բեկեալ կենաց բոլոր յուսահատութիւններն, և իւր շուարեալ սրտին ամեն իղձերն. . . : Արտեմիս բան մը չէր ըսեր. չըթունքը կը դողային, բայց իւր սպիտակ ձեռքը ջղաձգութեամբ կը կծկէր իւր բուրդէ չըջազգեստին վրայ. Մաքսիմիլիէնի կը նայէր և իւր նայ.



ուածքին մէջ անհուն խանդ կը փայլէր: Մաքսիմիլիէն  
հասկցաւ որ վաղեմի սէրը կենդանի էր միշտ. բայց  
աննահանջելին կը կանգնէր իրենց միջեւ յաւիտենա-  
պէս: Նա ոչ եւս իրեն միայն կը վերաբերէր, այլ այս  
աշխարհի տառապելոց:

Արտեմիսի աչերը Մաքսիմիլիէնի վրայ յառեալ էին  
արտասուալից: Երկար նայուածքէ մը յետոյ, քաղցր  
և միանգամայն անագորուն նայուածք, կրօնաւորուհին  
ձեռքը դէպ երկինք վերցուց:

Այն ժամանակ երիտասարդն ալ ըսաւ նուազեալ  
ձայնիւ.

— Գո՛ր իմ. . . :

Վ Ե Ր Ձ



1. Գործարարի անհատական կրթութիւնը

2. Գործարարի անհատական կրթութիւնը
3. Գործարարի անհատական կրթութիւնը
4. Գործարարի անհատական կրթութիւնը
5. Գործարարի անհատական կրթութիւնը
6. Գործարարի անհատական կրթութիւնը
7. Գործարարի անհատական կրթութիւնը
8. Գործարարի անհատական կրթութիւնը
9. Գործարարի անհատական կրթութիւնը
10. Գործարարի անհատական կրթութիւնը
11. Գործարարի անհատական կրթութիւնը
12. Գործարարի անհատական կրթութիւնը

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԻ ՔԱՐԿՄԱՆԶԻՆ



1. ԲԱՆՏՔ ԻՄ — ՍԻՂՎԻՈՅ ԲԷԼԼԻՔՈՅ .
2. ԵՐԷՅ ՎԷՔՅԻԼՏԻ — ԿՈԼՏՍՄԻԹ (Սպառեալ) .
3. ԳԱՂՏՆԻՔ ՀԱՒԱՏԱՔՆՆՈՒԹԵԱՆ — Մ. Վ. ՏԸ ՖԷՐԷԱԼ .
4. ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ — ԷՕԺԷՆ ՍԻԻ (Սպառեալ) .
5. ԵՐԿԱԹԷ ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴՆ ԵՒ ԱԻԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՅ — ՄԱՐԻՈՍ ԹՈՒԷՆ .
6. ՍԿԶԲՈՒՆԻՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ — ԺՈԶԷՖ ԿԱՌՆԻԷ .
7. ԱՐՇԱԻԱՆՔ ԱՐԱԲԱՅ Ի ՀԱՅԱՍՏԱՆ — ՔԱՂԵԱԼ ՅԱՐԱԲԱՅԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՅ Ի Պ. ՄՈՐԹՄԱՆԷ .
8. ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՐՄՆԱԳՐԱԿԱՆ ՈՒԹՏԻՆ .
9. ՅԵՐԿՐԷ Ի ԼՈՒՍԻՆ — ԺԻԻՂ ՎԷՐՆ .
10. ԿԱՐՄԻՐ ՄԱՐԴՈՅ ԵՐԳՈՒՄԸ — ԲՈՆՍՈՆ ՏԻԻ ԹԷՐԱՅԼ .
11. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ ՓԱՐԻԶԻ — ԷՏՄՈՆ ԱՊՈՒ .
12. ՄԱՐՔԻԶՈՒՀԻՆ — ԱԼՊԷՐ ՏԷԼԲԻ .



1816-1819

17

17

2016

